

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am


Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՆՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ



Քննարանի փոխարեն

**Չարաբաղձն ըստրդավ-ընդրդավ չի ընգրկում,
իսկը ք'անունն յա ստում**

(արցախյան առած)

**МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ РА
RA MINISTRY OF CULTURE**

**МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ И ПО ДЕЛАМ МОЛОДЕЖИ НКР
NKR MINISTRY OF CULTURE AND YOUTH AFFAIRS**

Армен Саркисян
Armen Sargsyan

**ФОЛЬКЛОР АРЦАХА
ARTSAKH FOLKLORE**

Ереван
Yerevan
2015

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼՂՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Երևան-2015

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի ու Արցախի պետական համալսարանի գիտական
խորհուրդների երաշխավորությամբ**

**Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր
Սարգիս Հարությունյան**

**Գրախոսներ՝ Արցախի պետական համալսարանի
գրականության և լրագրության ամբիոն**

ԼԴՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության՝ Ղուկասյան
եղբայրների անվան Արցախի բարբառի և ազգագրության ուսումնասիրության
կենտրոն

Աշխատանքն իրականացվել է ԼԴՀ ԿԳՆ կողմից տրամադրված ֆինանսական
աջակցության շնորհիվ՝ N SCS 12.01-003 գիտական թեմայի շրջանակներում

Տպագրվում է ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ

Ժողովածուն ընդգրկում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 163 բնակավայրերից 1992-2014թթ. հեղինակի գրառած բանահյուսական նյութերը, որոնք ներկայացված են երեք բաժիններով՝ վիպական բանահյուսություն (հեքիաթներ, ավանդություններ, առակներ, զվարճախոսություններ), քնարական բանահյուսություն (խաղիկներ, չափածո այլ սրեղծագործություններ), ասույթաբանական բանահյուսություն (առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ և բարեմաղթանքներ, հանելուկներ, գյուղերի և քաղաքների մականուններ, մարդկանց մականուններ, շուրասեղուկներ, հանգախաղեր): Ժողովածուն ունի նաև ընդարձակ առաջաբան, նյութերի գրառման հանգամանքները ներկայացնող ծանոթագրություններ, բառարան, ցանկեր: Այն նախատեսված է բանագետների, ազգագրագետների, բարբառագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ժողովածուն ընդգրկում է Արցախի ժողովրդական բանահյուսության 8078 բնագիր՝ գրառված մեր կողմից 1992-2014թթ. հանրապետության գյուղերի ու քաղաքների հարյուրավոր բանասացներից: Այն կազմված է ներածությունից, բուն ժողովածուից, ծանոթագրությունների աղյուսակից, բառարանից և ցանկերից:

Ներածության մեջ առանձին ենթաբաժիններով ներկայացվում են Արցախի համառոտ պատմությունը, բանահյուսության հավաքման ու հրատարակման պատմությունը, ժողովածուի նյութերի բանագիտական վերլուծությունը եւ Ղարաբաղի բարբառի հնչյունաբառաբերականական օրինաչափությունները:

Բուն ժողովածուն բաղկացած է երեք բաժնից, որոնցից յուրաքանչյուրը ներառում է համապատասխան ժանրերի նյութերը.

Վիպական բանահյուսություն 1. *Հեքիաթներ* (22 միավոր), 2. *Ավանդություններ* (266 միավոր), 3. *Առակներ* (86 միավոր), 4. *Զվարճախոսություններ* (592 միավոր),

Քնարական բանահյուսություն 5. *Խաղիկներ* (237 միավոր), 6. *Չափածո այլ սրեղծագործություններ* (21 միավոր),

Ասույթաբանական բանահյուսություն 7. *Առած-ասացվածքներ* (3388 միավոր), 8. *Անեծքներ* (709 միավոր), 9. *Օրհնանքներ և բարեմատքանքներ* (369 միավոր), 10. *Հանելուկներ* (734 միավոր), 11. *Գյուղերի և քաղաքների մականուններ* (119 միավոր), 12. *Մարդկանց մականուններ* (1307 միավոր), 13. *Շուրասելուկներ* (24 միավոր), 14. *Հանգախաղեր* (204 միավոր):

Ծանոթագրությունների աղյուսակում ներկայացվում են վիպական և քնարական բանահյուսության բոլոր բնագրերի համարները, վերնագրերը, բանասացի անուն-ազգանունը, ծննդավայրն ու ծննդյան թիվը, նյութի գրառման վայրն ու տարեթիվը: Ասույթաբանական բանահյուսության ժանրերի բնագրերի համար ծանոթագրություններ չեն տրվում, քանի որ դրանք գրառվել են բազմաթիվ բանասացներից, ինչպես նաև մյուս ժանրերի նյութերից, Արցախի գրողների ստեղծագործություններից, ԼՂՀ ազգային հեռուստատեսությամբ հնչած բարբառային հաղորդումներից և այլ աղբյուրներից:

Բառարանի մեջ ընդգրկվել են ժողովածուի մեջ գործածված դժվար

հասկանալի՝ հիմնականում բարբառային և փոխառյալ, բառերն ու դարձվածներն՝ իրենց բացատրություններով:

Առանձին ներկայացվել են նաև անձնանունների և տեղանունների ցանկեր:

Նյութերը բերված են առանց բնագրային փոփոխությունների: Խստորեն պահպանվել է բարբառային տառադարձությունը, իսկ վիպական և քնարական բանահյուսության ժանրերի բոլոր բնագրերում՝ նաև տվյալ խոսվածքի առանձնահատկությունները, ինչը հնարավորություն է տվել առանձին ցանկով ներկայացնելու ժողովածուի նյութերն՝ ըստ Ղարաբաղի բարբառի խոսվածքների, որտեղ յուրաքանչյուր բնակավայրի խոսվածքի անվան դիմաց տրվում են տվյալ խոսվածքով գրառված նյութերի համարները:

Ժողովածուի վերջում տրվում է մատենագիտական ցանկ, որն ընդգրկում է Արցախի բանահյուսությանը լիովին կամ մասնակիորեն առնչվող մեզ ծանոթ տպագիր և ձեռագիր բոլոր աղբյուրները:

Վիպական և քնարական բանահյուսության ժանրերի նյութերը դասավորված են ըստ խոսվածքների աշխարհագրական դիրքի՝ հարավից-հյուսիս հաջորդականությամբ, իսկ ասույթաբանական բանահյուսության ժանրերի նյութերը՝ այբբենական հերթականությամբ:

Սակավաթիվ նյութեր գրառվել են Ղարաբաղի բարբառից տարբերվող Մեհտիշենի և Չայլուի խոսվածքներով (բարբառներով), որոնց կրողները 1828-1830 թթ. Պարսկաստանի Խոյի և Ուրմիայի գավառներից Արցախ գաղթած հայերի հետնորդներն են:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արցախի Պաշտնական համառոտ ակնարկ: Արցախը, որ տարբեր արձանագրություններում եւ պատմական աղբյուրներում հիշատակվում է Արդախ, Օրխիստինե, Արցախ, Խաչեն, Արցախամուր աշխարհ, Փոքր Սյունիք, Ղարաբաղ եւ այլ անուններով, պատմական Հայաստանի 10-րդ նահանգն է, որը զբաղեցնում էր Կուր եւ Արաքս գետերի միջեւ ընկած հարթավայրի զգալի մասը ու դրանից դեպի արեւմուտք՝ Ադստե գետի ավազանից մինչեւ Արաքսի հովիտը, ձգվող լեռնային ու նախալեռնային ամբողջ տարածքը: Երկրամասը մ.թ.ա. 9-6-րդ դարերում ընդգրկվել է Ուրարտական պետության կազմում, իսկ մ.թ.ա. 6-րդ դարից կազմել Հայաստանի անբաժանելի մասը, որի մասին փաստացի տեղեկություններ կան տարբեր սեպագիր արձանագրություններում, հին հունական, հռոմեական ու հայ պատմիչների վկայություններում:

Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի» համաձայն՝ այն կազմված էր 12 գավառից՝ Մյուս Հաբանդ, Վայկունիք, Բերձոր, Մեծ Առանք, Մեծ Կվենք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պարզկանք, Բուստի, Փառես, Կողթ: Մ.թ.ա. 550-331 թվականներին երկրամասը հայկազուն Երվանդյանների թագավորության կազմում ընկնում է Աքեմենյան աշխարհակալության գերիշխանության տակ, մ.թ.ա. 189 թվականից՝ ներառվում Արտաշիսյանների, իսկ մ.թ. 66-428 թվականներին՝ Արշակունիների թագավորության մեջ: Վերջինիս անկումից եւ որպես մարզպանություն Մասանյան Պարսկաստանի իշխանության տակ անցնելուց հետո Արցախը Ուտիքի հետ միասին միացվում է պարսկահպատակ Աղվանից մարզպանությանը: Ավարայրի ճակատամարտից հետո, օգտվելով պարսկական արքունիքի՝ հայերին տված որոշ զիջումներից, Առանշահիկները Վաչագան Բ Բարեպաշտի գլխավորությամբ ստեղծում են թագավորություն, որն ընդգրկում է Ուտիքը եւ բուն Աղվանքը, իսկ հետագայում նաեւ՝ Կուր գետի ձախափնյա Կամբեճան գավառը: Վաչագան Բարեպաշտի օրոք երկիրը տնտեսական եւ մշակութային մեծ հաջողությունների է հասնում, կառուցվում են բազմաթիվ եկեղեցիներ, մեծ տարածում է ստանում հայ դպրությունը, մշակվում է «Սահմանադրութիւն կանոնական...»-ը, որը հաստատվում է Աղվանից եկեղեցական ժողովում: Սակայն երկար չի տևում արցախահայության անդորրը, եւ 7-րդ դարի սկզբից երկիր են ներխուժում խազարները: Նույն դարի կեսից մինչեւ 9-րդ դարի վերջը Արցախը ենթարկվում է արաբական գերիշխանությանը: 885 թվականին արաբական խալիֆայությունը ճանաչում է Աշոտ Բագրատունուն՝ որպես Մեծ Հայքի նահանգների գերագահ տիրակալ, եւ Արցախի իշխանական տան երկու ճյուղերը՝ խաչենցիները եւ դիզակցիները, ներառվում են Բագրատունյաց թագավորության կազմում՝ նրա ենթակայությամբ ստեղծելով Դիզակի եւ Խաչենի թագավորությունները, իսկ վերջինիս սահմաններում 10-րդ դարի սկզբին կազմավորվում են Վերին Խաչենի, Ներքին Խաչենի, Փառիսոսի եւ Կամբեճան-Շաքիի իշխանությունները: 10-րդ դարից Արցախի նահանգը կոչվում է Խաչեն, որի սահմաններն անցնում էին արեւմուտքում՝ Մեւանա լճի արեւելյան ափերով, հարավ արեւմուտքում՝ Ղարաբաղի լեռնաշղթայի հարավային լանջերով եւ Աղավնո գետի հոսանքով, հյուսիսում՝ Մռավ սարի հյուսիսային լանջերով, իսկ արեւելքում՝ Մուխանքի

արեւմտյան մասով: 11-12-րդ դարերում երկրամասը բազմիցս ենթարկվում է սելջուկյան թուրքերի ասպատակություններին, որոնց լծից վերջնականապես ազատագրվում է 12-րդ դարի 40-ական թվականներին, իսկ նույն դարի վերջին՝ ընդգրկվում Ջաքարյանների իշխանության կազմում: 13-րդ դարի սկզբին իշխանությունում լայն թափով զարգանում են տնտեսությունը, արհեստներն ու մշակույթը, կառուցվում են Դադիվանքի, Խաթրավանքի, Գանձասարի, Գտիչի նշանավոր վանքերը: Խաղաղությունը երկար չի տևում, եւ 1236 թվականից սկսած՝ իշխանությունն ընկնում է թաթար-մոնղոլական լծի տակ, չնայած նշանավոր պետական գործիչ, գահերից իշխան Հասան Ջալալ Դուլայի՝ մոնղոլ տիրակալների հետ արդյունավետ բանակցություններ վարելու շրջահայաց քաղաքականության շնորհիվ երկրամասը տասնամյակներ շարունակ գերծ է մնում ավերածություններից: Նահանգը մեծապես տուժում է 15-16-րդ դարերի թուրքական ակկոյունլու եւ կարակոյունլու ցեղերի անընդմեջ արշավանքներից, սակայն կարողանում է պահպանել կենսունակությունը, որի հիմքի վրա էլ 16-րդ դարում կազմավորվում են ավատատիրական փոքր իշխանություններ՝ մելիքություններ: 17-րդ դարի վերջին -18-րդ դարի սկզբին ստեղծվում է Խամսայի մելիքությունների զինակցությունը, որն ընդգրկում է Գյուլիստանի (Մելիք-Բեգլարյաններ), Ջրաբերդի (Մելիք-Իսրայելյաններ), Խաչենի (Հասան-Ջալալյաններ), Վարանդայի (Մելիք-Շահնազարյաններ) եւ Դիզակի (Մելիք-Եգանյաններ) մելիքությունները: Հզորանալով մելիքությունները ձեռք են բերում ռազմական մեծ նշանակություն՝ գլխավորելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը պարսկական եւ օսմանական բռնակալությունների դեմ: Սակայն նրանց ներքին երկպառակտություններն աստիճանաբար խորանում են, որի արդյունքում թրքախոս քոչվոր Ջեւանշիր ցեղի Սարուջալու տոհմի առաջնորդ Փանահ Ալի խանը Վարանդայի մելիք Մելիք-Շահնազար Բ-ի օգնությամբ հաստատվում է Շոշ բերդում՝ հիմնելով Ղարաբաղի խանությունը: Շուշիի խաներին հաջողվում է տարբեր խարդավանքների ու դավադրությունների միջոցով վերջնականապես խարխալել Խամսայի մելիքությունների միությունը: Պարսկական եւ օսմանական բռնակալությունների ու Ղարաբաղի խանության դեմ երկարատեւ պայքարից հետո Ղարաբաղը 1805 թ. ինքնական ընդունում է Ռուսաստանի տիրապետությունը, որը հաստատվում է ռուս-պարսկական պատերազմի ավարտին՝ 1813 թ. հոկտեմբերի 12-ին, կնքված Գյուլիստանի պայմանագրով: 1822 թ. վերանում է Ղարաբաղի խանությունը, 1840 թ. Ղարաբաղի գավառը մտնում է Կասպիական մարզի մեջ, իսկ 1868-1917 թթ.՝ ներառվում Ելիզավետպոլի նահանգի կազմում:

1918-20 թվականները արցախահայությանը նոր փորձություններ են բերում: 1918 թ. փետրվարի 10-ին՝ ռուսական կայսրության անկումից հետո, Թիֆլիսում ձեւավորված Անդրկովկասի սեյմը ապրիլի 9-ին հռչակում է անկախ Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետությունը, սակայն կարճ ժամանակից հետո այն կազմալուծվում է: Մայիսի 26-ին Վրաստանը հայտարարում է իր անկախությունը, մայիսի 28-ին հռչակվում է Հայաստանի Հանրապետությունը, իսկ մայիսի 27-ին պատմության մեջ առաջին անգամ ձեւավորվում է Ադրբեջանի Հանրապետությունը, որի «Մուսավաթ» կուսակցությունը Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգները հռչակում է ադրբեջանական: Այդ թվականներին Ղարաբաղում իշխանությունը գտնվում էր Ազգային խորհրդի տնօրինության տակ, որը հրաժարվում է ճանաչել Ադրբեջանի Հանրապետության իրավասությունը: 1918 թ. հուլիսի 22-26-ը Շուշիում կայացած Ղարաբաղի հայության առաջին համագումարում Լեռնային Ղարաբաղը հռչակվում է անկախ վարչաքաղա-

քական միավոր, եւ ընտրվում է Ազգային խորհուրդ ու յոթ հոգուց բաղկացած կառավարություն, իսկ 1920 թ. ապրիլի 23-ին հրավիրված 9-րդ համագումարում երկրամասը հռչակվում է Հայաստանի Հանրապետության անքակտելի մաս: 1921 թ. գարնանը Ղարաբաղում հաստատվում են խորհրդային կարգեր: Հուլիսի 4-ին ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն բաց քվեարկությամբ վճռում է Լեռնային Ղարաբաղը վերադարձնել ՀԽՍՀ-ին, սակայն հաջորդ օրը հրավիրվում է Կովբյուրոյի պլենումի արտահերթ նիստ, որտեղ առանց քննարկման որոշում է կայացվում Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն: Ադրբեջանի կենտրոնական կոմիտեի 1923թ. հուլիսի 16-ի որոշմամբ կազմվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ), որը ներառում է պատմական Ղարաբաղի ընդամենը քառորդ մասը:

Շուրջ յոթ տասնամյակ գտնվելով Ադրբեջանի գաղութատիրական ճնշման տակ՝ արցախահայությունը պայքարում է Ադրբեջանի կազմից դուրս գալու համար՝ միաժամանակ իր ստեղծարար աշխատանքով շարունակելով կառուցել ու բարեկարգել հայրենի երկրամասը: Մարզը գործում մասնակցություն է ունենում 1941-1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմում: Ռազմաճակատ գորակոչված 45 հազար զինվորներից շուրջ 23 հազարը նահատակվում է, 21-ը՝ արժանանում Խորհրդային Միության հերոսի կոչման, 15 հազարը՝ տարբեր շքանշանների եւ մեդալների, մի շարք քաջորդիներ աչքի են ընկնում հրամանատարական մեծ կարողություններով՝ ստանալով սպայական բարձր կոչումներ:

1980-ական թվականներին Խորհրդային Միությունում հռչակված վերակառուցումը նոր լիցք է հաղորդում Լեռնային Ղարաբաղի հայությանը. սկիզբ է առնում պատմության մեջ նախադեպը չունեցող Արցախյան շարժումը, որն աստիճանաբար վեր է ածվում համահայկական ազգային ազատագրական պայքարի: 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանը որոշում է ընդունում դիմել Ադրբեջանական եւ Հայկական ԽՍՀ-ների եւ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս բերելու եւ Հայկական ԽՍՀ-ին հանձնելու խնդրանքով, ինչին ադրբեջանական կողմը պատասխանում է Մումզալիթ քաղաքում կազմակերպած հայերի զանգվածային կոտորածներով: Մարտին Արցախյան շարժումը ղեկավարելու համար Երևանում ստեղծվում է «Ղարաբաղ», Ստեփանակերտում՝ «Կռունկ» կոմիտեան, իսկ հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը որոշում է ընդունում, որով իր համաձայնությունն է տալիս ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ կազմի մեջ ընդունելու վերաբերյալ: Դրան հակառակ՝ հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունում է այլ որոշում, որով անհնար է համարում Հայկական եւ Ադրբեջանական ԽՍՀ-ների սահմանների եւ սահմանադրությամբ հաստատված ազգային տարածքների փոփոխումը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. հունվարի 12-ի հրամանագրով ԼՂԻՄ-ում մտցվում է կառավարման հատուկ ձեւ. վերացվում են մարզկոմը եւ մարզխորհուրդը, եւ մարզի ամբողջ ղեկավարությունը հանձնվում է կազմավորված հատուկ կառավարման կոմիտեին, որը լուծարվում է նոյեմբերի 28-ին: 1989 թ. սեպտեմբերին մայրաքաղաք Ստեփանակերտում տեղի ունեցած մարզի աշխատավորների ներկայացուցիչների համագումարում կազմավորվում է ԼՂԻՄ Ազգային խորհուրդը, որի մասնակցությամբ դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը որոշում է ընդունում Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերամիավորման մասին, ինչը ԽՍՀՄ Գերագույն

խորհրդի նախագահության 1990թ. հունվարի 10-ի որոշմամբ հայտարարվում է հասարակականությանը:

Արդեն որերորդ անգամ հանդիպելով արտաքին աշխարհի անտարբերությանն ու խտրականությանը՝ հայ ժողովուրդը ապավինում է միայն սեփական ուժին: Թշնամու կողմից սանձազերծվող պատերազմը դառնում է անխուսափելի, հարյուր հազարավոր հայեր Ադրբեջանի տարբեր բնակավայրերից բռնում են գաղթի ճանապարհը:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումյանի շրջանի խորհուրդների համատեղ նստաշրջանում ընդունվում է հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ստեղծելու մասին, որը հաստատվում է դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեով: Գեկտեմբերի 28-ին տեղի են ունենում Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները, իսկ 1992 թ. հունվարի 6-ին օրենսդիր մարմինն ընդունում է ԼՂՀ անկախության մասին հռչակագիր: 1992 թ. մարտի 26-ին հանրապետության նախարարների խորհրդին առընթեր ստեղծվում է ինքնապաշտպանության կոմիտե, օգոստոսի 15-ին Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ՝ Պաշտպանության պետական կոմիտե, որին պատերազմի տարիներին վերապահվում էր գործադիր իշխանության եւ ռազմական դրության իրականացման լիազորությունները:

1991-92 թթ., ընդարձակելով ռազմական գործողությունները, Ադրբեջանին հաջողվում է զավթել եւ հայաթափել Գետաշենի ենթաշրջանը, Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, Հադրութի, Ասկերանի, Մարտունու, Շուշիի շրջանների տասնյակ բնակավայրեր, սակայն կարճ ժամանակից հետո Արցախի ինքնապաշտպանության ուժերը դաժան մարտերից հետո ոչ միայն ազատագրում են Շուշի քաղաքը եւ նշված տարածքների մեծ մասը, այլև պատմական Արցախի մեծ մասը՝ Լաչինի, Քելբաջարի, Ադղամի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Կուբաթուրի եւ Ջանգելանի շրջանները: Թշնամին ի վերջո ստիպված է լինում նստել բանակցությունների սեղանի շուրջ: 1994թ. մայիսից հաստատված զինադադարը, չնայած Ադրբեջանի կողմից պարբերաբար խախտումներին, առ այսօր պահպանվում է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ժողովրդավարական պետություն է, որը գլխավորում է հանրապետության նախագահը: Պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինը միապալատ Ազգային ժողովն է, գործադիր մարմինը՝ կառավարությունը: Հանրապետությունը կազմված է 7 շրջանից՝ Հադրութի, Մարտունու, Մարտակերտի, Շահումյանի, Ասկերանի, Շուշիի, Քաշաթաղի: Մայրաքաղաքն է Ստեփանակերտը: Բնակչության ընդհանուր թիվը կազմում է 146000 մարդ, ընդհանուր տարածքը՝ շուրջ 12000 քառ. կմ, որը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան եզրին՝ Փոքր Կովկասի հարավարևելյան մասում, եւ ընդգրկում է Կուր-Արաքսի դաշտավայրի արեւմտյան մասը: Ունի խիստ կտրտված լեռնային մակերեսային, միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1100 մետր: Հյուսիսային մասով ձգվում է Մոզվի, հյուսիսից հարավ՝ Ղարաբաղի լեռնաշղթան: Բարձր գագաթներն են Գոմշասարը (3724 մ), Մոզվը (3343 մ), Մեծ Քիրսը (2725 մ), Փոքր Քիրսը (2346 մ), Քառասուն կույսը (2832 մ), Դիզափայտը (2479 մ): Կլիման մեղմ է ու չափավոր: Ջրառատ գետերն են Արաքսը, Հազարին, Որոտանը, Թարթառը, Ողջին, Խաչենագետը, Կարկառը, Իշխանագետը: Ջրամբարներից խոշորն է Սարսանգը, կան փոքր լճեր, բազմաթիվ աղբյուրներ, հանքային ջրեր:

Հանրապետության ընդերքը առատ է տարբեր քարատեսակների, քարածուխի, ոսկու, պղնձի եւ մետաղական ու ոչ մետաղական այլ հանքատեսակներով:

Հարուստ է բուսական ու կենդանական աշխարհը: Տարածության շուրջ 35 տոկոսը անտառածածկ է: Բույսերից տարածված են բոխին, հաճարենին, կաղնին, լորենին, հացենին, թխկին, ընկուզենին, ընտանի եւ վայրի պտղատու ծառատեսակներ, գանազան թփաբույսեր եւ խոտաբույսեր, կենդանիներից կան գորշ արջ, գայլ, հովազ, շնագայլ, աղվես, անտառային կատու, բեզուարյան այծ, այծյամ, նապաստակ, սողուններ, ձկներ, անողնաշարավորներ, զանազան թռչնատեսակներ:

Չնայած աշխարհի կողմից ճանաչված չլինելուն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացած պետություն է: Արցախցին իրեն զգում է իր հայրենիքի լիիրավ տերը՝ նորանոր հաջողությունների հասնելով տնտեսության, կրթության, գիտության եւ մյուս բնագավառներում: Արցախահայությունն աշխարհին ներկայանում է իր պատվախնդրությամբ ու մարդկային վեհ հատկանիշներով, հարուստ պատմությամբ ու մշակույթով, որի անբաժան մասն է կազմում բազում դարերի ընթացքում ձեւավորված ժողովրդական բանահյուսությունը:

Բանահյուսությունը: Հայ ժողովրդական բանահյուսության հարուստ ժառանգության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Արցախը, որի արմատները թաղված են խոր հնադարում: Լինելով հարազատ ժողովրդի մտքի ու հոգու վառ արտահայտություններ՝ ժողովրդական տարբեր ժանրերի ստեղծագործությունները մշտապես ուղեկցել են արցախահայությանը՝ ներկայացնելով նրա նիստն ու կացը, հոգեկան ապրումներն ու երեսկայությունը, անցյալն ու ներկան՝ հաճախ լուսաբանելով մի շարք հարցեր, որոնք պատմության եւ այլ գիտությունների համար անլուծելի են: Գժբախտաբար, հազարամյակների ընթացքում ստեղծված ճոխ բանահյուսության միայն մի մասն է մեզ հասել՝ ժամանակին գրի չառնվելու պատճառով:

Արցախյան ժողովրդական ստեղծագործությունների հավաքմանն առաջին անգամ ձեռնամուխ են լինում ժամանակի շուշեցի նշանավոր մտավորականներ Առաքել Ալեքսանդր եւ Գրիգոր Բահաթրյանները, ովքեր 1860թ. մայիսի 6-ից օգոստոսի 6-ը Շուշիում գրի են առնում հեքիաթներ, գրույցներ, անեկդոտներ, խաղիկներ: Այդ գրառումներում առանձնապես արժեքավոր են հեքիաթները, որոնք ընդհանրապես հայկական հեքիաթների գրառման անդրանիկ նմուշներն են: Սակայն Բահաթրյանները որեւէ վկայություն չեն թողել բանասացների ու գրառման վայրի մասին, ինչը կասկածելի է դարձնում դրանց՝ անմիջապես բանասացից, թե հիշողությամբ վերարտադրելու միջոցով գրառվելու հանգամանքը: Հավաքածուի բնագրի մեջ պահպանված է «**Հարյաթին ընդրությունը**» խորհրդածությունը, որտեղ ասվում է. «**Հարյաթին ընդրությունը էն ա, որ մին հարյաթի մեջի փորուսպ պան ինի: Հարյաթեն ամենը սոք պաներ ա, ուրուր քցած, էրկանացրած: Ամնա կյիրիլիս վախարը հինչ ինի, պեպում ա կյիրենքյ: Բայց մունք մեր խելքին ըկորա պեպում ա փոնըցընենք, փեսաննք, որըն ա լափ շինովի, որըն ա ճշմարիտից մոփի, որըն ա լափ ճշմարիտ**»:

Իրենց պակասություններով հանդերձ՝ այս հեքիաթները բովանդակության եւ պատմելիւթի տեսակետից մեծ արժեք ունեն, մանավանդ, եթե հաշվի առնենք այդ ժամանակի բանահավաքչական աշխատանքների ընթացքը եւ մակարդակը:

Գեռես 19-րդ դարի 70-ական թվականներին, ձեռնամուխ լինելով հայ բանահյուսության գրառմանը, երիտասարդ բանահավաք, հրատարակիչ Տիգրան Նավա-

1. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երևան, 1973, էջ 706

սարդյանը հրատարակավ դիմում է հայ հասարակությանը՝ կոչ անելով փրկելու եւ հրատարակելու ժողովրդի հոգեւոր մշակույթի գանձերը²: Արձագանքելով այդ կոչին՝ Առաքել Բահաթրյանը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս(1881-1882թթ.) նրան է հանձնում վերոհիշյալ գրառումները, որոնք մասամբ տպագրվում են Տ.Նավասարդյանի կողմից³, իսկ ամբողջությամբ՝ 1973 թվականին⁴:

Ընդհանուր առմամբ, Նավասարդյանի կոչը լայն արձագանք է գտնում հայ մտավորականների շրջանում: Շուշու թեմական դպրոցի շրջանավարտ, Վարանդայի (ներկայումս՝ Մարտունու) Նոր շեն գյուղի ուսուցիչ Սիբայել Տեր-Հովհաննիսյանը գրի է առնում մի շարք հեքիաթներ, հանելուկներ, երգեր, անեծք-օրհնանքներ, առած-ասացվածքներ եւ այլ ժանրերի նմուշներ՝ ուղարկելով Տ.Նավասարդյանին, ով դրանց մեծ մասը հրատարակում է⁵, իսկ որոշ նյութեր հրատարակվում են 20-րդ դարի 70-ական թվականներին⁶: Ուշագրավ է այն փաստը, որ բանահավաքը իր նյութերին կցել է նաեւ ազգագրական բովանդակությամբ բարբառային բառերի բառարան:

Բահաթրյանների, Մ. Տեր-Հովհաննիսյանի ձեռագրերը, ինչպես նաև Հարություն Թավրիզյանի՝ Շուշու խոսվածքով Մոսկվայում գրառած հեքիաթներն ու այլ բանահավաքների որոշ գրառումներ պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի Տ. Նավասարդյանի ֆոնդում:

Այս շրջանում լայն տարածում է ստանում երգիծական ժանրի ստեղծագործությունների հավաքումը: Գալուստ Շերմազանյանը առաջին անգամ հավաքում է հրատարակում է Արցախի նշանավոր զվարճախոս Պըլը-Պուղու, ինչպես նաև Արցախում ապրած եւ գործած պատմական որոշ դեմքերի ու դեպքերի շուրջ ստեղծված գրույցները⁷, որոնք հեղինակի կողմից ենթարկվել են որոշակի մշակման եւ չունեն գրառման հանգամանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Հեղինակը մինչեւ այդ տպագրել էր նաև «Ասրի բեգ և Գիքի» պիեսը⁸՝ այն համարելով Ղարաբաղի բարբառով գրված, բայց իրականում եւ գրվածքի լեզուն, եւ բացատրությունները կիսագրական են, եղած բարբառայինն էլ՝ ավելի շուտ Ջուղայի բարբառով⁹:

Արցախի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործում նշանակալից է Մակար Բարխուդարյանի դերը: Զաջատեղյակ լինելով մայրենի բարբառին եւ շրջելով պատմական Արցախը՝ նա գրառել է տարբեր ժանրերի նմուշներ, հատկապես ավանդություններ, գրույցներ, առած-ասացվածքներ, հանելուկներ՝ դրանք ամփոփելով «**Բարոյական առածներ**» ժողովածուում¹⁰: 1883 թվականին հրատարակ-

2. «Մշակ», 1882, N 4, 222, 1883, N 79, 1884, N 10, 1890, N 109
3. Նավասարդյան Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, պրակ 8, 9, 10, Թիֆլիս, 1894, 1902, 1903
4. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973
5. Նավասարդյան Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, պրակ 1, Վաղարշապատ, 1882
6. Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական մանկական երգեր ու խաղերգեր, Երեւան, 1970, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973
7. Շերմազանյան Գ., Անեկդոտներ, զվարճալի գրույցներ, համառոտ դեպքեր եւ առակներ մեծ մասամբ ազգային կյանքից առած, Թիֆլիս, 1878
8. Շերմազանյան Գ., Ասրի բեգ եւ Գիքի, «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, 1863
9. Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երեւան, 1966, էջ 8
10. Բարխուդարյան Գ., Բարոյական առածներ, Թիֆլիս, 1898 (Մ. Բարխուդարյանը եւ Գ. Բարխուդարյանը նույն անձն են)

վում է նրա «Պըլը Պուդի» ժողովածուն, որն ընդգրկում է գվարճախոսի շուրջը ստեղծված բանահյուսությունը¹¹: Ժողովածուն ունի առաջաբան, որտեղ ներկայացվում է Պըլը-Պուդու կենսագրությունը, ինչպես նաև քերականական ծանոթագրություններ եւ բառարան: Միաժամանակ Բարխուդարյանը բարբառով գրել է նաև գեղարվեստական ստեղծագործություններ¹²: Նշանավոր է նրա «Արցախ» պատմագիտական աշխատությունը¹³, որը ներառում է բանահյուսական որոշ նմուշներ:

Արցախյան բառուբանով հարուստ ֆելիետոններով ասպարեզ եկավ Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը՝ Տմբլաչի Խաչանը: 1900-1901թթ. Բաքվում¹⁴, ապա 1907 և 1908թթ. Վաղարշապատում¹⁵ հրատարակվեցին նրա «Զուռնա-Տմբլա» ժողովածուի գրքերը, որտեղ ամփոփված են հեղինակի՝ 1879-1907թթ. «Նոր Գար» եւ այլ թերթերում տպագրած ֆելիետոնները, եւ որոնք, քաղված լինելով Շուշու ընտանեկան ու հասարակական կյանքից, որոշակի աշխուժություն են առաջացնում հայ պատմագագագրական շրջանակներում եւ խթանում բանահավաքչական աշխատանքները: «Բ» գրքի վերջում հեղինակը տվել է քերականական ծանոթագրություններ եւ դժվարիմաց բառերի բացատրություններ: Լինելով բնիկ շուշեցի, ուսանելով Շուշու քեմական դպրոցում, Էջմիածնի Գեորգյան ճեմարանում եւ ապա բարձրագույն կրթություն ստանալով Ֆրանսիայում՝ մասնագիտությամբ գյուղատնտես Կ. Մելիք-Շահնազարյանը իր ողջ կյանքում գրառում է ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր¹⁶, որոնց մի մասը հրատարակվում է¹⁷, իսկ ամբողջ հավաքածուն պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում եւ Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում:

19-րդ դարի երկրորդ կեսերին Շուշին դարձել էր գիտամշակութային, ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման խոշոր կենտրոն¹⁸, որտեղ ապրում

11. Բարխուդարյանց Ս., Պըլը Պուդի, Թիֆլիս, 1883

12. Բարխուդարյանց Գ., Արազը տարին կտարի, Շուշի, 1883, Բարխուդարյանց Գ., Չորանն ու Նշանաձը, Թիֆլիս, 1896, Բարխուդարյանց Ս., Սիրգա եւ Աննա, Զմյուռնիա, 1876

13. Բարխուդարյանց Ս., Արցախ, Բազու, 1895

14. Մելիք-Շահնազարյան Կ. (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, հ. 1-3, Բաքու, 1900-1901

15. Մելիք-Շահնազարյան Կ. (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1907-1908

16. Հայրապետյան Թ., Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան). Կյանքն ու գործը, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», հ. 24, Երեւան, 2007, գլուխ 5

17. Մելիք-Շահնազարյան Կ., Առակներ Ղարաբաղի բարբառով, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1930, 1931, Մելիք-Շահնազարյան Կ., Հանելուկներ Ղարաբաղի լեզվով, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1930, Մելիք-Շահնազարյան Կ., Ղարաբաղի բարբառեր, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1928, Մելիք-Շահնազարյան Կ., Ղըլըցե կնանց պընը-փեշակը, Թիֆլիս, 1882, Մելիք-Շահնազարյան Կ., Նյութեր Ղարաբաղի ազգագրության համար, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1932, Մելիք-Շահնազարյան Կ., Շոշվա դալին խերն ու շառը, Թիֆլիս, 1887, Ղանալանյան Ա., Առածանի, Երեւան, 1960, Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973

18. Խենյան Է., Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչեւ XX դարի 60-ական թվականները), «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովի հոդվածներ, Երեւան, 2007

եւ գործում էին բազմաթիվ նշանավոր մտավորականներ: Եվ պատահական չէ, որ հենց այստեղ հայ ազգագրության մեծ երախտավոր Երվանդ Լալայանը 1895թ. հիմնադրեց «Ազգագրական հանդեսը», որտեղ ազգագրական եւ տեղագրական նյութերը ներկայացվում էին բանահյուսականի հետ միասին՝ ընդգրկելով հատկապես ավանդություններ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, երգեր եւ այլ նմուշներ: Հանդեսի հրատարակչությունը Թիֆլիս տեղավիժվելուց հետո էլ այնտեղ շարունակվում էր արցախյան ժողովրդագրական նյութերի տպագրումը: Այստեղ է տպագրվել նաեւ Ե. Լալայանի նշանավոր «Վարանդա» աշխատությունը¹⁹, որը հազեցած է բանահյուսական նյութերով՝ հատկապես ավանդություններով:

19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին առանձին ուշադրություն է դարձվում Արցախի քնարական բանահյուսությանը: 1895թ. Խաչիկ Դադյանը՝ Վարանդայի Վերին Թաղավարդ գյուղից, լույս է ընծայում «Վարաբաղի ժողովրդական ջրօրհնյաց երգերից» խորագրով մի շարք՝ արժեքավոր ծանոթագրություններով²⁰, իսկ 1908-1910թթ. «Ազգագրական հանդեսի» տարբեր գրքերում Ա. Դադյանի հետ տպագրում 1885-1903թթ. Վարանդայի տարբեր գյուղերում գրառած խաղիկները՝ հակիրճ ծանոթագրություններով եւ բարբառային բառերի բացատրությամբ²¹:

20-րդ դարի սկզբին նվազում է հետաքրքրությունը դեպի բանահյուսությունը՝ կապված քաղաքական բարդ իրավիճակի հետ: Այս շրջանում բանահավաքչական աշխատանքներ է ծավալում Սարգիս Իսրայելյանը՝ Վարանդայի Նախիջեւանի գյուղից: Նա ոչ միայն Արցախի, այլեւ Շամշադիի եւ Ջանգեզուրի տարբեր բնակավայրերից գրառում է հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, մանրապատումներ, երգեր, խաղիկներ եւ այլ ժանրերի ստեղծագործություններ, կազմում բարբառային բառերի բացատրական բառարան: Ս. Իսրայելյանի գրառումների մի մասը տպագրվում է առանձին գրքով²², մի մասը՝ համահավաք ժողովածուներում²³, որոշներն էլ ձեռագիր վիճակում պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում:

20-րդ դարի կեսերին Արցախի բանահյուսության գրառման աշխատանքները նորից աշխուժանում են: Երախտագիտությամբ պետք է հիշել ծննդով շուշեցի, Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի անունը, որի՝ 1920-60-ական թվականներին Շուշուց եւ Արցախի տարբեր գյուղերից հավաքած նյութերը ամփոփվեցին «Հայ ժողովրդական հեքիաթներ»²⁴ եւ

19. Լալայան Ե., Վարանդա. նյութեր ապագա ուսումնասիրության համար, «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, Լալայան Ե., Վարանդա. Նշանավոր տոներ, «Ազգագրական հանդես», գիրք Գ., Թիֆլիս, 1898

20. Ղարաբաղի ժողովրդական ջրօրհնյաց երգերից, «Արարատ», Վաղարշապատ, 1895, N 12

21. Դադյան Խ., Դադյան Ա., Վարանդայի ժողովրդական գրականությունից, «Ազգագրական հանդես», գգ. 17, 18, 19, Թիֆլիս, 1908-1910

22. Իսրայելյան Ս., Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղիս, Երեւան, 1956

23. Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973

24. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, Երեւան, 1966

«**Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը**»²⁵ ժողովածուներում: Սրանցից առաջինում ընդգրկված է 156 հեքիաթ, որ ամբողջությամբ գրի է առել Մ. Գրիգորյանը 1922-56թթ. ընթացքում: Մյուս ժողովածուն աչքի է ընկնում բազմաժանրությամբ՝ ժողովրդական վիճակի երգեր (ջանգյուլումներ), հեքիաթներ, գրույցներ, ավանդություններ, բանաձեռնային բանահյուսության նյութեր: Հեղինակը, երկար տարիներ շրջագայելով պատմական Արցախի Վարանդա, Գյուլիստան, Խաչեն, Դիզակ եւ Ջրաբերդ գավառների բնակավայրերը, եռանդուն ջանասիրությամբ, անձնվեր սիրով ու հմտությամբ է գրի առել բոլոր այդ ստեղծագործությունները: Ժողովածուներին կցված են բացատրական բառարաններ եւ ծանոթագրություններ: Մ. Գրիգորյանի ձեռագրերը ներկայումս պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում:

1960-70-ական թթ. Արցախի ժողովրդական բանահյուսությունը հարստացվում է նոր բանահավաքների գրառումներով (Բ. Ղազիյան, Ա. Ղազիյան, Մ. Առաքելյան, Մ. Մխիթարյան, Մ. Օհանջանյան, Լ. Հարությունյան):

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Միքայել Առաքելյանը 1960-ական թթ. Արցախի տարբեր գյուղերից հավաքում է բանահյուսական բազմաթիվ նյութեր, որոնց մեծ մասը տպագրվում է²⁶:

1960 թ. Ստեփանակերտում բացվում է ժողովրդական ստեղծագործության մարզային տունը, որի աշխատակիցների՝ մարզի տասնյակ գյուղերից գրառած բազմաթիվ հեքիաթների, առակների, գրույցների, ավանդությունների, առած-ասացվածքների, ժողովրդական խաղիկների եւ այլ ժանրերի նյութերի մի մասը հրատարակվում է²⁷:

1983 թ. լույս է տեսնում Ալվարդ Ղազիյանի «**Արցախ**» խորագրով բանահյուսական ժողովածուն²⁸, որն ամփոփում է հիմնականում հեղինակի եւ Բարխուդար Ղազիյանի կողմից 1966, 1970-78 թթ. ընթացքում Արցախի եւ Շահումյանի շրջանի 25 բնակավայրերից գրառված նյութերը՝ հեքիաթներ, գրույցներ, առակներ, զվարճախոսություններ, ավանդություններ, երգեր, խաղերգեր, մականուններ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, երդումներ, սպառնալիքներ: Ժողովածուի վերջում կան ծանոթագրություններ եւ բարբառային բառերի բացատրություններ: Ծանոթագրություններում տրվում են բանահյուսական ստեղծագործությունների սերման ու կենցաղավարման հանգամանքները, բանասացների կենսագրական տվյալները, հայացքները, մեկնաբանություններն ու գնահատականները պատմվող նյութի վերաբերյալ, նյութերի գրանցման վայրն ու ժամանակը: Ժողովածուն ունի առաջաբան, որտեղ արժեւորվում են մինչեւ այդ հրատարակված աշխատանքները, ներկայացվում տվյալ ժողովածուն կազմելու հանգամանքները եւ սկզբունքները: Հետաքրքիր է այն փաստը, որ հեքիաթների շարքում զետեղված է նաեւ հայ ժողովրդական էպոսի առաջին ճյուղի մի պատումը՝ «**Սանասար նան Բաղդասար**»: Ալվարդ Ղազիյանը բանագետ Մվետլանա

25. *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները Մ. Գրիգորյան-Սպանդարյանի), Երեւան, 1971*

26. *Յայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, 7, Երեւան, 1973, 1979*

27. *Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից (կազմողներ՝ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան), Երեւան, 1978*

28. *Ղազիյան Ա., Արցախ, «Յայ ազգագրություն եւ բանահյուսություն», հ. 15, Երեւան, 1983*

Վարդանյանի հետ կազմել է նաև «**Բաքվի հայոց բանահյուսությունը**» ժողովածուն²⁹, որի նյութերի զգալի մասը գրառված է Բաքվում բնակվող արցախցի բանասացներից:

Արցախի բանահյուսության հավաքման գործընթացին նոր թափ հաղորդեց Մարտունու շրջանի Աշան գյուղի վաստակաշատ ուսուցիչ, բանահավաք Լեոն Հարությունյանի՝ 1991թ. հրատարակած «**Նշխարներ Արցախի բանահյուսության**» ժողովածուն³⁰, որտեղ բացի բանահյուսական վերոհիշյալ ժանրերից, հեղինակն ուշադրություն է դարձրել նաև ասույթաբանական բանահյուսության ամենատարբեր տեսակների՝ կենացներ, խրատ, սուգ, ծիսական արտահայտություններ, դարձվածքներ, անձնանուններ եւ այլն: Միաժամանակ տրվում են տեղեկություններ ժողովրդական որոշ խաղատեսակների, բուսական եւ կենդանական աշխարհի, ուտեստի, սովորությունների, ծիսական երգերի, պարերի վերաբերյալ: Ընդարձակ առաջաբանում ներկայացվում է արցախյան բանահյուսության էությունը՝ որպես արցախցու հոգու եւ մտքի արտահայտություն: Ժողովածուն ունի բացատրական բառարան եւ ծանոթագրություններ: Բանահյուսական եւ ազգագրական բազմաթիվ նյութեր են ընդգրկված հեղինակի՝ նույն խորագիրը կրող հաջորդ³¹, ինչպես նաև «Կաթնակորեկ» ժողովածուներում³²:

Արցախի տարածքից նյութեր են գրառվել ու հրատարակվել նաև այլ հեղինակների կողմից, մի շարք նմուշներ ընդգրկված են Ղարաբաղի պատմությանն ու բարբառին նվիրված աշխատություններում: Դրանց զուգընթաց Արցախի բանահյուսության տարբեր ժանրերի վերաբերյալ տպագրվել են բանագիտական ու լեզվաբանական մի շարք ուսումնասիրություններ³³:

Նշված բոլոր բանահավաքների գործունեությունը, անշուշտ, լուրջ ներդրում է Արցախի բանահյուսական ժառանգությունը կորստից փրկելու գործում, սակայն, դժբախտաբար, պետք է ասել, որ նրանք հաճախ են անտեսել Ղարաբաղի բարբառի, հատկապես կոնկրետ խոսվածքների յուրահատկությունները՝ հավաքած նյութերը եւ հրատարակած ժողովածուները բարբառի ուսումնասիրման համար հաճախ դարձնելով ոչ հուսալի աղբյուր³⁴: Եվ եթե որոշ աշխատանքներ տպագրվել են գրական կամ ժողովրդախոսակցական լեզվով, ապա մյուսների մեջ էլ ակնհայտ են բարբառային օրինաչափությունների աղավաղումներ, որոնք հանդես են գալիս լեզվական տարբեր

29. *Բաքվի հայոց բանահյուսությունը (կազմել, ներածությունը գրել եւ ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը)*, Երեւան, 2004

30. *Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, 1-ին մաս, Երեւան, 1991*

31. *Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, 2-րդ մաս, Ստեփանակերտ, 2004, 3-րդ մաս, Ստեփանակերտ, 2007, 4-րդ մաս, Ստեփանակերտ, 2009, 5-րդ մաս, Ստեփանակերտ, 2011*

32. *Հարությունյան Լ., Կաթնակորեկ, Երեւան, 1998*

33. *Տեն «Մատենագիտական ցանկը»*

34. *Սարգսյան Ա., Տառադարձության կարեւորությունը բանահյուսության մեջ, «Միջազգային գիտաժողովի կյութեր. Մեսրոպ Մաշտոց համալսարան», Ստեփանակերտ, 2007, Սարգսյան Ա., Բարբառային օրինաչափությունների պահպանման կարեւորությունը բանահյուսական ժողովածուներում (Ղարաբաղի բարբառի օրինակով), «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, № 1*

մակարդակներում³⁵: Հնչյունաբանական մակարդակում բանահավաքները հաճախ են անտեսել քմային ձայնավորների ու բաղաձայների, *ը՛, ը՛* երկբարբառակերպերի, ինչպես նաև գաղտնավանկի *ը*-ի տառադարձումը: Որոշ դեպքերում հանդիպում ենք Դարաբաղի բարբառին խորթ *Ֆ*բաղաձայնի գործածությանը, հաճախակի են բառասկզբի դիրքում գրաբարյան ձայնեղ պայթյականների եւ կիսաշփականների պահպանման դեպքերը, չնայած բարբառում դրանք հիմնականում խլանում են: Բառապաշարային մակարդակում բարբառային օրինաչափությունների աղավաղումները պայմանավորված են բարբառին ոչ հատուկ գրական հայերենի բազմաթիվ բառերի գործածությամբ, ինչպես **անգամ, բոլորովին, գուցե, երկրասարդ, քեկուզ, չկնորս, սրամիտ**: Զիչ չեն նաև քերականական օրինաչափությունների խախտումները. ժողովածուների մեծ մասում նկատելի են բացառական եւ գործիական հոլովածների, դասական թվականների, օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի եւ մի շարք այլ գրականաձեւ կազմություններ: Ընդհանուր առմամբ բոլոր ժողովածուներում անտեսված է բարբառագիտության մեջ ընդունված ուղղագրության միասնական կանոնը՝ գրել այնպես, ինչպես արտասանվում է: Նման աղավաղումները, մեր կարծիքով, պայմանավորված են հետեւյալ գործոններով.

1. Բանահավաքները, կարեւորելով բանահյուսական նմուշների բովանդակային կողմը եւ բարբառի գիտական քննումը նպատակ չհամարելով, առաջնորդվել են բանահյուսական ժառանգությունը ընթերցող լայն շրջաններին հասու դարձնելու սկզբունքով: Այդ մասին նշված է որոշ ժողովածուների առաջաբաններում եւ ծանոթագրություններում:

2. Բանահավաքները, բավարար չափով չտիրապետելով տվյալ խոսվածքի նրբություններին, դրանք հարմարեցրել են գրական հայերենի կամ մայրենի խոսվածքի առանձնահատկություններին: Չի բացառվում, որ բազմաթիվ նյութեր գրառվել են վերհիշելով, որի դեպքում գրառողը հանդես է եկել նաև որպես բանասաց:

3. Հաճախ նյութը հնչյունաքերականական օրինաչափությունների խախտումներով են ներկայացնում նաև բանասացները՝ ձգտելով այն գրականացնել:

4. Որոշ դեպքերում էլ, կարծում ենք, խախտումների պատճառները տեխնիկական են՝ պայմանավորված բարբառային տառադարձությամբ նյութերի տպագրության դժվարություններով:

Թերեւս այդ թերությունները հաշվի առնելով՝ մեր նախորդ³⁶ եւ սույն ժողովածուում, որի մեջ ներառված են նաև նախորդ բոլոր նյութերը, խստորեն պահպանել ենք բարբառային գիտական տառադարձությունը՝ յուրաքանչյուր նմուշ ներկայացնելով բանասացի մայրենի խոսվածքով, չնայած հարկ է նշել, որ երբեմն նույն բնակավայրի տարբեր բանասացների, անգամ նույն բանասացի հաղորդած տարբեր նյութերում նկատվում են արտասանական զուգաձեւություններ:

Սույն ժողովածուում ընդգրկված են մեր կողմից 1992-2014թթ. ընթացքում հավաքված բանահյուսական նյութերը, որոնց ժանրային նկարագիրը ներկայացնում է հետեւյալ վիճակը:

35. Մարգարյան Լ., Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011, էջ 118
36. Մարգարյան Ա., Արցախյան հանելուկներ, Ստեփանակերտ, 2002, Մարգարյան Ա., Արցախյան ավանդություններ, Ստեփանակերտ, 2007, Մարգարյան Ա., Արցախի բանաձեւային բանահյուսությունը, Ստեփանակերտ, 2009, Մարգարյան Ա., Արցախյան առակներ, Ստեփանակերտ, 2011, Մարգարյան Ա., Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, 2014

Հեքիաթները, կապված հասարակական եւ տնտեսական պայմանների փոփոխության հետ, զարգացման հեռանկարներ չունեն եւ աստիճանաբար մոռացության են տրվում: Ի տարբերություն նախորդ տասնամյակներում հավաքված մման նյութերի՝ դրանք ավելի սեղմ են եւ բովանդակային մանրամասներով ոչ հարուստ: Թերեւս դա է պատճառը, որ գրառած 113 նմուշներից զետեղել ենք ընդամենը 22-ը: Նկատվում է նաեւ մեկ կարեւոր այլ հանգամանք. բանասացները, հիմնականում լինելով գրագետ, հաճախ պատմում են ոչ թե երբեւէ իրենց լսած, այլ կարդացած հեքիաթները:

Ավանդություններն ու առակները եւս լայն կենցաղավարում չունեն, դրանց բանասացները նույնպես հիմնականում տարեցներն են:

Վիպական բանահյուսության ժանրերից անենից կենսունակը զվարճախոսություններն են: Գրառված 1234 պատումներից, որոնց բանասացները տարբեր սերունդների ներկայացուցիչներ են, ներկայացրել ենք 592-ը:

Վերացման եզրին է քնարական բանահյուսությունը: Գրեթե վերացել են սիրերգերը, պարերգերը, ծիսական երգերը, հորովելները: Ժողովածուի 258 մման նյութերից 237-ը ժողովրդական խաղիկներ են՝ գրառված հիմնականում հին սերնդի բանասացներից:

Ասույթաբանական բանահյուսության ժանրերից դեռեւս լայն կիրառություն ունեն առած-ասացվածքները, անեծքներն ու օրհնանքները, առավել տարածված են մականունները: Գրառված՝ մարդկանց 3946 մականուններից ներկայացված են 1300-ը: Ի տարբերություն դրանց՝ հանելուկները, շուտասելուկները եւ հանգախաղերը, որոնք նախկինում լայն տարածում ունեին, աստիճանաբար տեղի են տալիս, չնայած մեզ հաջողվել է գրառել բավականաչափ նյութ:

Նշված ժամանակաընթացքում հավաքված նյութերը հանդես են գալիս իրենց ժանրային եւ իմաստային առանձնահատկություններով, որոնց հակիրճ նկարագրությունը ներկայացնում ենք ստորեւ:

Արցախյան ժողովրդական հեքիաթները (*բաթ*), լինելով ժողովրդական ամենասիրված ստեղծագործություններից, առանձնանում են իրենց գեղարվեստական արժեքներով: Դրանց մեջ արտահայտված են ժողովրդի դարավոր ձգտումներն ու երազանքները, համառ պայքարը բնության տարերային ուժերի ու անարդարությունների դեմ, ձեւավորված կարծիքն ու վերաբերմունքն այս կամ այն դեպքի ու երեւույթի, ստեղծված իրավիճակի հանդեպ: Սկսած 19-րդ դարի 60-ական թվականների սկզբից, երբ Բահաբրյանները Շուշիում հայ իրականության մեջ առաջին անգամ նախաձեռնեցին ժողովրդական բանահյուսության հույժ կարեւոր այդ ժանրի նմուշների գրառումը, առ այսօր հավաքված նյութերն ընդգրկում են հեքիաթների հիմնական տիպերը: Նոր գրառումներում բացակայում են կենդանիների մասին հեքիաթները, որոնք հիմնականում վեր են ածվել առակների:

Հրաշապատում եւ իրապատում հեքիաթներում այլեւս չի գործածվում ներկայումս որպես հանելուկ հանդես եկող «*Քա՛թ, քա՛թ, մին չուվալ ցակապ, վէ՛չ կօթ օնէ, վէ՛չ արկաթ...*» չափածո նախաբանը [10(692)], որն «օգնել է ստեղծելու հեքիաթ ունկնդրելու միջավայր ու տրամադրություն եւ ասվել է ամեն անգամ՝ հեքիաթ պատմելու ժամանակ»³⁷: Շարունակվում են գործածվել ավանդական սկսվածքները՝ «*Իլնիւ ա, չիլնիւ...*», «*Իննիւ*

37. Ղազիյան Ա., *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-73թթ. գրառումների հիման վրա*, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1974, № 4, էջ 237

ա, չինձև...» «Ինձև ա, ինձև չի...» «Շար ստաչ մին քաքավեր ա իլմլ...» «Բուննան մվմլմլ քարդ՛դերք մին քաքավեր ա իլմլ...» «Էրկու ախայեր ըն ինձև...»:

Հիմնականում ավանդական են նաեւ վերջաբան բանաձեւները՝ *«Յիրգ՛իւնք՛ան իրէ՛ք խրնձծր ա վեր ընգրնէս. մինը՛ էս քաքը ըսողէն, մինը՛ ըսկընողէն, մինըն էլ լինս ախշարք փնս ընողէն»*, *«Աստուծ էլ փիյերան մին մը՛ծ խրնձծր ա վեր քըցնլն, կրպօրում ըն լուխձին պիժէնում»*, *«Յիրգ՛իւնք՛ան իրէք խրնձծր ա վեր ընգում. մինը փամ ընք պրպնողէն, մինը՛ կ՛իրծղէն, մինըն էլ շրղրոճ-շրղարճ ընք անում, պիժը՛նում էս քաքը ըսկընողներէն»*, *«Յիրգ՛իւնք՛ան իրէք մը՛ծ նօնն ա վեր ընգում. մինը՛ ինձ, մինը՛ ք՛ը՛գ, մինն էլ էս քաքը փրպօղէն»*, *«Նըստում ըն օտում-խրմում, փրհէնց հաշփ մինպէղ ապրում»*, *«Օխպը օր, օխպը քըշէր հըրսանէք ըն անում, յերգ՛իրը խաղաղ դէկավարում»*, *«Ըփի էլ չարը վիրանում ա, պարին հախպում ա, իւրմնք հրսէն իւրմնց մուրազէն, փուր էլ հըսնիք՛ ծէր մուրազէն»*, *«Ըստուծանա հինչ կօ՛ղիւ. մին մը՛ծ յմշիգ՛ վեր ընգէ, մաչան մին բլլնիկ սիպպակ յըօնէգ՛նէ փնս փը՛ննան, քրշին սաղ ըշխարքավըս մին ինին, ամէն փէղ խըղըղօթուն փանին, մեր ջմհիյ-ջնիհիւրն էլ փըսակվէ, խուխապար-թունապար, ծունապար-կունապար փը՛ննա, էն փըղէն ու էն ըխճըգ՛անը նըման իւրմն մուրազէն հըսնէ»*, *«Էս ա մեր քաթէն վերջը, մապաղ ինին, դէ միհէնգ՛ քարքըննէն մեր էն պը՛ծըպաժ՛ի ընէս քօթէն ըրաղան ըժէ՛ցէք՛, խըմինք՛ մեր վը՛ղէն-ճիրին, մեր ժուղուվուրթէն, ըշխարքէս փակէն հինչքան էլ լ՛ալ, հըրէյին հըսնող մարք կա, լօխձին կէնացը»* եւ այլն, որոնց մեծ մասը յուրահատուկ մաղթանքներ են բանասացների կողմից: Մի շարք հեքիաթների հատուկ են նաեւ միջամասային բանաձեւները, որոնց միջոցով սկիզբ է առնում նոր գործողությունների պատումը կամ անդրադարձ կատարվում նախորդ գործողություններին՝ *«Վէրջը, շար ա ք՛իս, խըրէգ՛ ա ք՛իս, հըսնէս ա մի խօր ծծը...»* *«Ախըրը էս խաքարը էրնիշ յերգ՛իրնէ յէլ ա հըսնում, հըրէվան քաքավէրթննումը մին անըմը ըշխարքավը մին փը՛նած իմաստուն ա ինձև, ըսկանում ա կ՛ամ...»* *«Միհէնգ՛ ըփըրանց քօղիք՛ ըփը՛ղ, փը՛սնաք՛ հինչ փը՛նալ քաքավէրին կիճի փըղան...»* *«Միհէնգ՛ էս օշափ ըխճըգանը քօղիք՛ ըսփը՛ղ, խաքար փանը ախայօրը անա...»*:

Ժողովածուի հեքիաթները բնույթով, սյուժեներով ու քեմաներով բազմազան են: Հրաշապատում հեքիաթներն իրենց կառուցվածքով համընկնում են ինչպես Արցախում նախկինում գրառված ու հրատարակված, այնպես էլ հայ ազգագրական մյուս շրջաններից հավաքված հեքիաթներին: Դրանցում ներկայացված հիմնական սյուժեներն ու մոտիվներն են.

1) Թագավորի կրտսեր որդին, սպանելով հոր այգու ոսկե խնձորները հափշտակած դեւերին, ազատում է գեղեցկուհի երեք քույրերին, սակայն հարազատ եղբայրների նենգության պատճառով հայտնվում է «մութ աշխարհում»: Այստեղ նոր սխրագործություններ կատարելով՝ Չնմբը՛նը՛նտ դուշի օգնությամբ ի վերջո դուրս է գալիս «լույս աշխարհ» ու կրտսեր գեղեցկուհու նվիրած մատանու շնորհիվ անելով անհնարինը՝ ամուսնանում հարսնացուի հետ ու դառնում թագավոր՝ միաժամանակ կախարդական թռչունի ձագի ու փետուրի միջոցով կենդանացնելով չորացած այգին եւ վերադարձնելով հոր տեսողությունը [1(2)]:

2) Թագավորի միմուճար որդին մեծահոգությամբ ծովն է նետում մահամերձ հոր փրկության միջոցը հանդիսացող ձուկը, որի պատճառով վտարվում է թագավորության սահմաններից: Դանապարհին ընկերանալով անծանոթ ծերունու հետ՝ վերջինիս

կախարդական միջոցներով ամուսնանում է մեկ այլ թագավորի աղջկա հետ, որի բերանից ընկած օձի արյունով բուժում է հորը: Վերջում պարզվում է, որ կախարդ ծերունին տղայի ազատած ձուկն է [1(3)]:

3) Շնորհալի պատանին, աշակերտելով կախարդ Ուխային, կարճ ժամանակում տիրապետում է նրա «արհեստին»՝ ցանկության դեպքում կերպարանափոխվելով տարբեր կենդանիների: Չար վարպետը, իմանալով այդ մասին, փորձում է սպանել նրան, բայց ինքն է կործանվում: Հետագայում տիրապետելով արտասովոր բժշկի հմտություններին՝ պատանին պատրաստում է մարդկանց կենդանացնող եւ երիտասարդացնող դեղը, բայց սատանայի ձեռքով դառնում է դրա զոհը [1(4)]:

4) Մարդակեր քրոջից փախած երիտասարդը ապաստան է գտնում չար դեի կուրացրած ծեր ամուսինների մոտ եւ սպանելով դեին ու թռչունի խորհուրդով ճարելով կույրերի աչքերը՝ դեի կախարդական մագի միջոցով վերականգնում է նրանց տեսողությունը: Այնուհետեւ տեսակցության գնալով քրոջը՝ հետապնդվում է վերջինիս կողմից: Օրհասական պահին օգնության են գալիս երկու հավատարիմ գամփռները՝ հոշոտելով քրոջը, որից մնացած մի կաթիլ արյունը հուշում է տղային քարավանապետի առաջադրած հարցի պատասխանը: Արդյունքում տղան ամուսնանում է քարավանապետի գեղեցկուհի աղջկա հետ՝ արժանանալով նաեւ մեծ հարստության [1(6)]:

5) Թագավորի ժլատության պատճառով աղքատ կնոջ անեծքից չորանում է այգին, որը ծերունու ուրվականի գուշակությամբ կարող է կանաչել միայն Հագարան բլրուլի երգի շնորհիվ: Կախարդական թռչունին ծեր կնոջ խորհրդով եւ կախարդական ձիու ու կրակե թրի օգնությամբ Սալտակ դեի պալատից կարողանում է փախցնել թագավորի կրտսեր որդին՝ նախորոք սպանելով Կարմիր եւ Սեւ դեերին: Սակայն ավագ եւ միջնեկ եղբայրները, կուրացնելով նրան, հափշտակում են Հագարան բլրուլին ու երեք գեղեցկուհիներին՝ գնալով հոր պալատը եւ բոլոր քաջագործությունները վերագրելով իրենց: Շուտով կրտսեր արքայազնը, ծեր կնոջ կախարդանքով բուժվելով, սպանում է նաեւ Սալտակ դեին եւ վերադառնում պալատ: Նրան տեսնելով՝ թռչունը սկսում է երգել, եւ չորացած այգին իսկույն կենդանանում է: Բացվում է կեղծիքը, սակայն վեհանձն տղան ներում է եղբայրներին [1(7)]:

6) Արքայազնը, տեսնելով գեղեցկուհու նկարը, սիրահարվում եւ ամեն կերպ ձգտում է փնտրել ու ճարել նրան: Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ բարի ծերունու, մրջյունների, ձկների, թռչունների թագավորների տված կախարդական առարկաների եւ իր հնարամտության շնորհիվ նա հասնում է աղջկա մոտ ու կատարում նրա հոր առաջադրած պայմանները: Ի վերջո հանդիպելով թագավորի խաբեությանը՝ տղան փախցնում է սիրածին [1(8)]:

7) Կուրացած հոր բուժման միջոցը փնտրող թագավորի կրտսեր որդին, կախարդական ձիու օգնությամբ մեծ փորձություններ հաղթահարելով, հանդիպում է համաշխարհային գեղեցկուհուն եւ փախցնում նրան՝ չնայած հակառակորդների, այդ թվում էւ հոր խորդավանքներին [1(13)]:

8) Աղքատ գյուղացու կրտսեր աղջիկն ամուսնանում է իր ընտանիքին ապրուստի միջոցներ պարգեւած օձի հետ, որը կերպարանափոխվում եւ դառնում է գեղեցիկ տղա: Աղջկա ավագ քույրը նախանձից սպանում է քրոջը, որի դիակի տեղում աճած ծառի տաշեղից կենդանանում է աղջիկը՝ երեսն հանելով քրոջ խարդախությունը: Վերջինս արժանանում է դաժան պատժի [1(14)]:

9) Թագավորի պայմանը կատարելու համար անմահական ջուրը փնտրող երեք եղբայրները ծեր կնոջից իմանում են տեղը եւ այն ձեռք բերելու միջոցները: Սպանելով վիշապին եւ սրտի միջից հանելով անմահական ջրով լի տարան՝ նրանք կախարդական հայելու մեջ տեսնում են մահամերձ թագավորին ու բարի կնոջ նվիրած թռչող գորգի շնորհիվ հասնում իրենց երկիրը: Վերակենդանացած թագավորն իր երեք աղջիկներին ամուսնացնում է երեք եղբայրների հետ [1(15)]:

10) Աստված երեք աղքատ եղբայրներից յուրաքանչյուրին մեծ հարստություն է պարգևում եւ որոշ ժամանակից հետո աղքատ մարդու կերպարանքով ներկայանում նրանց: Ավագ ու միջնեկ եղբայրների կողմից արժանանալով արհամարհանքի՝ Աստված մեկին շնագայլ է դարձնում, մյուսին՝ արջ, իսկ կրտսերի առատ հյուրասիրությունը վայելելով՝ նրա հարստությունը բազմապատկում է [1(17)]:

11) Հովվի որդին, ծեր կնոջ խորհուրդներին հետեւելով, սպանում է Սպիտակ դեմին եւ ազատում թագավորի մինուճար աղջկան, սակայն վեզիրի նենգ տղան, կարծելով, թե սպանել է նրան, աղջկա հետ վերադառնում է պալատ եւ պատրաստվում դառնալ թագավորի փեսան: Հարսանիքի ժամանակ ծեր կինը պատմում է եղելությունը, ինչը հաստատում է հարսնացուն: Թագավորի հրամանով հրապարակավ խայտառակում են խաբեբային, իսկ հովվի տղան կնության է առնում արքայադստերը եւ դառնում թագավոր [1(18)]:

12) Երիտասարդ Գագիկ թագավորը, կատարելով հանգուցյալ հոր պատգամը, երեք քույրերին կնության է տալիս երեք դերվիշների, որոնց նվիրած երեք կախարդական մատանիների շնորհիվ հասնում է նկարում տեսած գեղեցկուհուն եւ արժանանում նրա սիրուն: Աղջկա տված կախարդական մատանիների եւ խորհուրդների միջոցով նա կարողանում է կատարել նրա հոր երեք պայմանները եւ ամուսնանում գեղեցկուհի արքայադստեր հետ [1(19)]:

13) Աղքատ ամուսինները խնամում են Աստծո կողմից իրենց պարգևած զավակին՝ օձին: Վերջինս, կախարդական միջոցներով կատարելով թագավորի անհնարին պայմանները, ամուսնանում է նրա կրտսեր աղջկա հետ՝ գիշերները կերպարանափոխվելով գեղեցիկ երիտասարդի: Չնայած տղան խնդրում է գաղտնիքը ոչ ոքի չասել, սակայն կինը պատմում է դրա մասին, ինչի արդյունքում ամուսինն անհետանում է: Լինելով անկտորում կամքի տեր՝ թագավորի աղջիկը, երկար փնտրելով եւ բազում դժվարություններ ու փորձություններ հաղթահարելով, պատահաբար ձեռք բերած կախարդական երեք առարկների՝ մարդուն անտեսանելի դարձնող ակնոցի, թռչող գորգի ու բոլոր կողպեքները բացող բանալու շնորհիվ ի վերջո հասնում է Սպիտակ վիշապի պալատը եւ փախցնում այնտեղ բանտարկված ամուսնուն [1(21)]:

14) Յոթ եղբայրները, չար հարեւանի նենգության հետեւանքով կարծելով, թե իրենց ոչ թե քույր, այլ եղբայր է ծնվել, տնից հեռանում են՝ այլեւս չվերադառնալու պայմանով: Պատահաբար իմանալով եղբայրների գոյության մասին՝ համարձակ աղջիկը մեծ դժվարություններով ճարում է նրանց, սակայն հանդիպում է չար վիշապին: Եղբայրները, վերջինիս սպանելով, քրոջ հետ վերադառնում են տուն՝ ճանապարհին հանդիպելով նաեւ տարիներ շարունակ իրենց փնտրող հորը [1(22)]:

Այդ տիպի գրեթե բոլոր հեքիաթներում ներկայացվում են մարդակերներ, դեւեր, վիշապներ, կախարդական տարբեր առարկաներ, թռչուններ, կենդանիներ:

Հրաշապատում հեքիաթները միշտ ավարտվում են բարու հաղթանակով եւ չարի պարտությամբ, մի հանգամանք, որ սովորաբար հատուկ է նաեւ իրապատում հեքիաթներին, որոնք հանդես են գալիս ներքոհիշյալ սյուժեներով եւ մոտիվներով.

1) Աստված հնարավորություն է տալիս աղքատ մարդուն հարստանալու՝ խորհուրդ տալով գաղտնիքը ոչ մեկին չհայտնել: Չհետևելով խորհրդին՝ նա գաղտնիքն ասում է կնոջը, որի անգաղտնապահության պատճառով սնանկանում է: Օգտվելով Աստծո առատաձեռնությունից՝ աղքատ մարդը կրկին կարողության տեր է դառնում՝ վտարելով կնոջը [1(1)]:

2) Անսովոր ոսկորի փոշուց հղիացած վեզիրի աղջիկն ունենում է հնարամիտ որդի, ով, տեղի տալով թագավորի հրամանին, բացահայտում է ձկների ծիծաղի պատճառը. պարզվում է՝ թագուհու բոլոր քառասուն սպասուհիները, որոնք իրականում կանացի շորերով տղաներ են, նրա սիրելեկաններն են [1(5)]:

3) Համբերատար տղան միշտ հիշում է հոր խոսքերը եւ չընկրկելով դժվարությունների ու ձախորդությունների առաջ՝ ձգտում է հասնել իր նպատակին, ինչը հաջողվում է: Գնահատելով տղայի անզիջում կամքը՝ թագավորը նրան ամուսնացնում է իր գեղեցկուհի աղջկա հետ [1(9)]:

4) Կատարվում է թագավորի երազը. երիտասարդ տարիքում սնանկանալով եւ կորցնելով կնոջն ու երկու տղաներին՝ ծեր հասակում գտնում է նրանց եւ ժողովրդի կողմից կարգվելով նոր երկրի թագավոր՝ ընտանիքի հետ բախտավոր ապրում [1(10)]:

5) Մոր մահից հետո սիրահետվելով հոր կողմից՝ աղջիկը հագնում է փայտե շորեր եւ հեռանում տնից՝ հայտնվելով թագավորական պալատում, որտեղ նրան *Փէլրի ծ'նլ ծ'նլն* մականունն են տալիս: Թագավորի տղան, տեսնելով փայտե շորերի մեջ քողարկված գեղեցկուհուն, սիրահարվում եւ կնության է առնում նրան: Իմանալով այդ մասին՝ աղջկա հայրը հանկարծամահ է լինում [1(11)]:

6) Ավագ եղբոր անարդար վերաբերմունքի արդյունքում կրտսեր եղբայրը հայրական տնից իրեն բաժին հասած ծեր հոր հետ տեղափոխվում է օտար քաղաք, որտեղ իր ազնիվ արարքներով արժանանում է տեղի թագավորի ուշադրությանը եւ ամուսնանում նրա աղջկա հետ: Վեհանձն տղան ներում է եղբորը եւ բարեկեցիկ կյանք ստեղծում նաեւ նրա ու նրա ընտանիքի համար [1(12)]:

7) Աղքատ գյուղացի երիտասարդը կնության է առնում թագավորի ծույլ աղջկան եւ ստիպում նրան աշխատել: Աղջիկն իրեն տեսակցության գնացած հորն ու մորն առաջարկում է աշխատել, քանի որ ըստ ամուսնու տան սովորույթի՝ ով չի աշխատում, նրան չեն կերակրում: Թագավորը, գնահատելով փեսայի կամքը, նրան է նվիրում իր հարստության կեսը [1(16)]:

8) Խորթ մորից հալածված երեք քույրերը, մեծ դժվարություններ հաղթահարելով, ի վերջո հայտնվում են թագավորական պալատում, որտեղ կրտսեր քույրն ամուսնանում է արքայազնի հետ՝ ունենալով գույգ ոսկեզանգուր որդի: Մակայն կաշառվելով խորթ մոր կողմից՝ տատները նորածիններին թաքցնում է ջրադացում՝ նրանց տեղը շան լակոտներ դնելով: Գազազած թագավորը հրամայում է շան լակոտները մորթել, իսկ հարսին մերկացնել եւ գյուղեգյուղ շրջելով՝ խայտառակել: Խարդախությունը բացահայտվում է: Արդյունքում խորթ մայրն ու տատները դաժանորեն սպանվում են, թագավորը հանկարծամահ է լինում, իսկ արքայազնը դառնում է թագավոր, նրա կինը՝ թագուհի [1(20)]:

Ավանդությունները վիպական ժանրի ժողովրդական ստեղծագործություններ են, որոնք ստուգաբանում, բացատրում, ներկայացնում են անցյալում եղած և տեղի ունեցած իրերն ու դեմքերը, դեպքերն ու երևույթները: Հիմք ընդունելով ավանդությունների էությունը՝ Ա.Ղանալանյանը դրանք բաժանում է երեք հիմնական տեսակների³⁸.

1. **Մտուգաբանական ավանդություններ**, որտեղ մեկնվում, ստուգաբանվում և իմաստավորվում են անհասկանալի բառերը:

2. **Քացադրական ավանդություններ**, որոնք ընդգրկում են երկնային և երկրային տարրեր մարմինների առաջացումը, կենդանիների ու բույսերի տարրեր հատկություններ, մարդկային ամենատարրեր հարաբերություններ, զանազան երևույթներ, սովորություններ, հավատալիքներ, հանգամանքներ:

3. **Վարքաբանական ավանդազրույցներ**, որտեղ կենսագրական տեղեկություններ և միջադեպեր են պատմվում իրական և մտացածին, հայտնի և անհայտ անհատների կյանքի ու գործունեության վերաբերյալ:

Արցախի բանահյուսության մեջ ըստ քանակի գերակշռում են ստուգաբանական ավանդությունները: Քիչ չեն նաև քացադրական ստեղծագործությունները, իսկ վարքաբանական ավանդազրույցները զգալիորեն զիջում են այդ երկուսին: Որոշ ստեղծագործություններ էլ իրենց էությանը կարող են դասվել և՛ առաջին, և՛ երկրորդ խմբերի մեջ:

Արցախյան ավանդությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն հայրենի բնաշխարհն ու նրա հետ կապված հավատալիքներն ու պաշտամունքի առարկաները: Արցախում ևս ժամանակին մեծ հավատ կար ոգիների գոյության վերաբերյալ, որի մնացուկները առայսօր պահպանվում են: Ահա թե ինչու ոգեղինացվել ու անձնավորվել են հայրենի լեռներն ու քարերը, ջրերը, բույսերն ու կենդանիները, առանց որոնց անհնար է արցախցու գոյությունը:

Լեռներից հատկապես պաշտամունքի առարկա են դարձել Քիրսը, Մռավն ու Դիզափայտը, որոնց վրա գտնվող ուխտատեղիները իրենց արտացոլումն են գտել մի շարք ավանդություններում: Այժմ էլ արցախցի կանայք, ձեռքերը կարկառելով դեպի այդ լեռները, խնդրում են կատարել իրենց իղձը՝ մեկին պահպանելու, երկար կյանք պարգևելու, փորձանքներից հեռու պահելու կամ պատժելու: Այսպես. չար կեսուրից ազատվելու համար թշվառ կինը խնդրում է Քիրսին իրեն քար դարձնել, որը և իսկույն կատարվում է [2(96.ա)], բաքվեցի հայ կինը հեռու-հեռվից դիմում է Դիզափայտին իր մահամերձ որդու կյանքը փրկելու խնդրանքով՝ խոստանալով մատաղ անել, և հիվանդը, որի մահը բժիշկները համարում էին անխուսափելի, կազդուրվում է [2(81.բ)], բնակիչները խնդրում են Մռավին՝ փրկելու իրենց Քափասից, որը, անչափ բարձրանալով, ստվերի տակ է թողել ողջ շրջակայքը, Մռավը լսում է խնդիրքը և թրով ջարդում ըմբոստ լեռան գլուխը [2(103)]:

Հայրենի լեռների հետ պաշտվում են նաև մի շարք քարեր և ժայռեր, որոնք դարձել են ուխտատեղիներ: Դրանց մոտ աղոթում են, մոմ վառում, մատաղ կտրում: Առանձնակի պաշտամունքի առարկա են ծառաքարերը, որոնցից իր գործությամբ հայտնի է Խերխան գյուղի մերձակայքում գտնվողը: Այն հեռվից ծծկեր երեխային կերակրող կնոջ տեսք ունի, որի ծծերից կաթ-կաթ ջուր է հոսում: Սակավակաթ կանայք այդտեղ աղոթում էին, մոմ վառում, այդ ջրից քսում իրենց կրծքերին, և կաթը իսկույն առատանում էր:

38. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երեւան, 1969, էջ ԻԸ-ԻԹ

Ավանդության համաձայն՝ մի անխիղճ մայր այս ժառի մոտ արձակել է իր ծծկեր երեխային և փախել: Աստված ժայռին ծծեր ու կաթ տալու շնորհք է պարգևել, որ երեխան սովից չմեռնի [2(96.բ)]: Իրենց շուրջը հյուսված պատմություններով հայտնի են նաև մի շարք այլ քարեր ու ժայռեր, ինչպես նաև սարեր, բլուրներ, ձորեր, դաշտեր, կամուրջներ, տեղամասեր, ճանապարհներ [2(82-128)]:

Դեռես պահպանվում են ջրի պաշտամունքի մնացուկները. մի քանի աղբյուրներ, սուրբ համարվելով, շարունակում են մնալ հիվանդությունների բժշկող: Դրանցից մի քանիսն ամենայն տեսակ, իսկ մյուսները միայն որոշ հիվանդությունների բուժիչ սրբատեղիներ են համարվում: Որպես ամեն տեսակի հիվանդությունների բժշկող՝ հայտնի է Հաղորտի գյուղի **Ջրբավոր ախպճուրը**, որին այցելելով՝ հիվանդները այդ ջրից խմում և քսում են իրենց մարմնին ու կազդուրվում [2(165)]: Դիզաբայախ լեռան ստորոտի գյուղերում մեծ համբավ ունի լեռան վրա գտնվող **Արչին ախպճուրը**: Ավանդությունը, ըստ որի՝ աղբյուրը բխել է ծարավից տոչորվող արջի՝ երկնքին ուղղված խնդրանքի արդյունքում, հիմա էլ պատմվում է այդ գյուղերում: Պաշտվում է նաև աղբյուրից վերև գտնվող քարայրը, որտեղ կայծակը խոցել է արջին [2(161)]:

Բազմաթիվ են այն աղբյուրները, որոնք չեն պաշտվում, բայց նրանց մասին հյուսվել են գեղեցիկ ավանդություններ [2(156-181)]: Որոշ պատումներ են պահպանվել նաև այլ ջրերի մասին [2 (176), 2(180)]:

Արցախում յուրահատուկ է բույսերի և կենդանիների պաշտամունքը: Ծառապաշտության մեջ նախապատվությունը տրվում է **սլորըշնի** (բռնչենի) ծառին, որին կարելի է հանդիպել կալատեղերում, գերեզմանոցներում, սրբավայրերում: Հատկապես պաշտվում են այս վերջինները, քանի որ ժողովրդի մտածողությամբ Աստծու զորությունը տված է սրբերին և նրանց մոտ գտնվող ծառերին: Գրեթե յուրաքանչյուր գյուղ ու սրբավայր ունի նման ծառեր, որոնց հանդեպ խոր հավատով են լցված բոլոր բնակիչները: Մեծ մեղք է համարվում սրբազան ծառերը կամ նույնիսկ նրանց փոքր ճյուղերը կտրելը. հանդգնողը ժողովրդի դատողությամբ անպայման պատժվում է:

Հաղորտի շրջանի Պլեթանց գյուղի եկեղեցու բակի մեծ պռնու մասին ասում են, որ մի անգամ գյուղի պատանիներից մեկը համարձակվել է բարձրանալ ծառը և պարսատիկի համար երկճյուղ կտրել, սակայն իջնելուց ընկել է ժայռի վրա և իսկույն մահացել: Հետագայում մահացել են նաև նրա եղբայրները և քույրերը: Պատահական չէ, որ մինչև հիմա ոչ ոք չի համարձակվում օգտագործել անգամ ծառի չորացած և թափված ճյուղերը, դրանցով միայն մատաղ են եփում, կամ ծերունիները աչքի ուլունքներ են պատրաստում նորածինների համար [2(130)]: Նույն գյուղի մեկ այլ սրբավայրի՝ **Նրհապակի** մասին պատմում են, որ գյուղի՝ գավակ չունեցող բնակիչներից մեկը Աստծու պատվերով մի գերեզմանաքար է տարել և կանգնեցրել այդտեղի թքեռնի սուրբ ծառի տակ, և ինը ամիս հետո նրա ընտանիքում տղա է ծնվել: Մի գյուղացի՝ համագյուղացիների բնորոշմամբ խելքը հացի հետ կերած մի հայ, անտեսելով պաշտամունքը, սուրբ ծառի՝ կայծակից չորացած և ընկած ճյուղը կտրտել և օգտագործել է տան կարիքների համար, որի պատճառով էլ նրա աջ ձեռքը չորացել է [2(131)]:

Բացի պռնուց և թքեռնուց պաշտվում են կաղնին, սոսին, ընկուզենին, տանձենին և այլ ծառեր: Այդ ծառերի տակ մատաղ են անում, մորթված անասունի կամ աքլորի գլուխն ու ոտքերը դնում ծառի փչակում, մոմ վառում, թաշկինակ կամ հագուստի մի կտոր կապում ծառի ճյուղին և վերադառնում: Նման ծառերը չորանալուց հետո էլ մնում

են՝ որպես պաշտամունքի առարկա: Դրանց փտած ճյուղերի փոշին, որ կոչվում է **խրևօրուն**, ջրի մեջ լուծում և խմում են հիվանդություններից զերծ մնալու համար:

Ավանդություններ կան նաև սովորական բույսերի մասին [2 (182-185)]:

Թռչուններից ամենից տարածվածը ծիծեռնակի պաշտամունքն է, որի մասին եղած պատմություններն այժմ էլ տարածված են տարբեր գյուղերում [2(186 ա, բ)]: Մեծ մեղք է համարվում ծիծեռնակին սպանելը, անգամ նրա բույնը քանդելը, թեկուզ այն լինի տան մեջ կամ նույնիսկ օջախի գլխին: Ժողովրդի կարծիքով՝ ծիծեռնակի բույնը քանդողի տունը անպայման կավերվի:

Ավանդություններ են պահպանվել ուրիշ թռչունների մասին [2(187-206)]:

Սողուններից պաշտվում է լորտուն (լօկը): Ժողովրդի հավաստմամբ լորտուն հայ է, իսկ օձը՝ թուրք: Պատահական չէ, որ լորտուն միշտ սպանում է հանդիպած օձին, որպեսզի վերջինս հայերին չխայթի: Պաշտվում է նաև տան օձը, որը համարվում է **դժվլնաթ** (հաջողություն բերող): Իշխում է այն կարծիքը, որ, եթե շահմար օձը մեկի բերանում թքի, վերջինս իմաստուն կդառնա: Նման պատվի արժանացել է **Օվջի Փիրունը** [2(222)]:

Կաթնասուններից կատվի մասին ասում են, որ նա Քրիստոսի թաշկինակն է: Իբրև մի անգամ Հիսուսը հյուրընկալվել է մի տան և, տեսնելով, որ մկները խանգարում են ճաշել, հանել է թաշկինակը, խաշակեցել և արձակել: Այն իսկույն կատու է դարձել և հալածել մկներին [2(214)]: Կատուն համարվում է սուրբ, նրան սպանելը՝ մեծ մեղք. իզուր չեն ասում.

- Հու վեր մին կարու քսպանէ, բեղմա օխարը յը՛խօժէ շինի, հանցու մէխկա միզվի:

Մի ավանդության համաձայն՝ արջը ժամանակին ազահ ջրաղացպան է եղել: Մի անգամ նա գողացել է բազմազավակ որբևայրու այլուրի մի մասը և վերջինիս անեծքով դարձել արջ [2(215)]: Հուզիչ պատմություն է Պըտկէս պէրք եկեղեցու բակում թաղված արջի մասին եղած ավանդությունը: Երեխտապարտ արջը կամովին գնում է վանք և օգնում իր վերքը բուժած տերտերին՝ եկեղեցու կառուցման համար քարեր կրելով: Հերթական անգամ հեռվից քար բերելով՝ նա իր փրկիչին մեռած է գտնում և, վշտից գլուխը խփելով հանգուցյալի տապանաքարին, ինքնասպան լինում: Արջին թաղում են եկեղեցու բակում, որը և դառնում է սրբատեղի: Չբեր կանայք չոքեչոք պտտվում են արջի գերեզմանաքարի շուրջը, Աստված ասում է՝ պըտկըվի՛ս, չըպէ՛րք, և նրանք պողա-վորվում են: Այստեղից էլ ժողովրդի ստուգաբանությամբ առաջացել է վանքի անունը [2(150)]: Նմանատիպ մի գերեզման էլ կա Խնապատ գյուղի մերձակայքում՝ Նրիատակ տեղամասում: Ասում են՝ այստեղ մի գայլ է թաղված, որը սնել և պաշտպանել է գաղթի ժամանակ մորը կորցրած մի մանկան [2(151)]:

Գեղեցիկ պատումներ են հյուսվել նաև կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների մասին [2(207-219)]:

Երկնային լուսատուներից պաշտվում են հատկապես արևն ու լուսինը: Ճիշտ է՝ դրանց առաջ այլևս ծունր չեն իջնում և չեն աղոթում, ինչպես առաջներում, բայց շարունակում են դրանցով երդվել.

- Էն մարդ՛վը, քա էր պէնը ըրած ինիս, Էն լինսինգ՛ան ինչ քուռըցընէ, քա սը՛տի ինիս:

Ծեր կանայք երբեմն դիմում են այդ լուսատուներին՝ խնդրելով պահապան լինել իրենց հարազատներին:

Ավանդություններ կան նաև աստղերի, կայծակի, անձրևի, որոտի, գիշերվա ու ցերեկվա, օրվա, երկրաշարժի մասին [2(1-8)]:

Մի շարք ստեղծագործություններում արտացոլվում է քրիստոնեական կրոնի և հատկապես Քրիստոսի հանդեպ ունեցած մեծ հավատը. կռապաշտների զորավարը, տեսնելով սպանված քրիստոնյա գեղեցկուհու վրա երկնքից իջած լույսը, իր զինվորների հետ ընդունում է նրա կրոնը [2(81ա)], հովիվը, հրաժարվելով Քրիստոսին կաթ տալուց, նրա անեծքով իր հոտի հետ քարանում է [2(117)], Քրիստոսը զայրանալով անիծում է ջորուն, և վերջինս զրկվում է պտղաբերելու հնարավորությունից [2(213)]:

Արցախյան ավանդություններում մեծ արձագանք է գտել ժողովրդի ներքին կյանքը՝ զբաղմունքը, կենցաղը, հասարակական հարաբերությունները: Ջրաղմունքներից հատկապես արտացոլվել են երկրագործությունը, անասնապահությունը, արհեստագործությունը, այգեգործությունը, որսորդությունը, որոնք կենսական մեծ նշանակություն ունեն արցախցու կյանքում: Կենցաղային ավանդությունների մեջ տեղ են գտել մի շարք սովորույթներ, հարաբերություններ, ծեսեր: Դարեր շարունակ ազատ սիրուն և ամուսնությանը խոչընդոտել են սիրող զույգերի սոցիալական տարբեր ծագումն ու հասարակական դիրքը, ընչքային դրությունը՝ ստիպելով սիրահարներին գաղտնի հեռանալ հայրենի օջախներից, ինչը և հաճախ ոճրագործությունների և ողբերգությունների տեղիք է տվել: Այսպես, Վանք գյուղի բեկի աղջիկը՝ Հուռումը, անտեսելով հոր կամքը, փախչում է սիրած տղայի հետ և բնակվում գյուղից հեռու՝ անմարդաբնակ մի վայրում, որտեղ և հռչակվում է գազանների կողմից: Հետագայում այդ վայրում գյուղ է հաստատվում, որն էլ Հուռումի հիշատակին կոչվում է **Հուռումէն քաղ**, իսկ հետո՝ **Հուռաքաղ** [2(52 գ)]: Սակայն միշտ չեն ծնողները պարտադրում իրենց կամքը զավակներին, երբեմն նրանք տեղի են տալիս՝ հարգելով անկեղծ զգացմունքները: Մի ավանդության համաձայն՝ Դիզակի մելիք Մաջումը չի ընդդիմանում իր մինուճար աղջկա՝ Գայանեի սիրուն և նրան ամուսնացնում է ծառա Գագիկի հետ՝ մելիքությունը կտակելով վերջինիս [2(225)]: Նարեշտար գյուղի անունը ստուգաբանող ավանդության մեջ քուրդ բեկի մինուճար աղջիկը, հակառակ հոր կամքին, փախչում և ամուսնանում է իրենց տան հայ ծառա Առստամի հետ: Հետագայում հայրը ներում է աղջկան՝ տալով մեծ օժիտ և ծառաներ [2(63)]: Սրտառուչ մի պատմություն է Մեծ Թաղեր և Տող գյուղերի խաչմերուկում գտնվող Արգուման վանքի մասին եղած ավանդությունը. ռուս զինվորները իրենց հետ Ռուսաստան են տանում կռվի ժամանակ մորը կորցրած մի հայ մանկան՝ Արգուման անունով, որը, կրթություն ստանալով և մեծ հարգանքի արժանանալով, դառնում է գեներալ: Վերադառնալով Շուշի՝ նա ամուսնանում է իրենից տարիքով մեծ մի հայ կնոջ հետ: Մի օր էլ ամուսնու ոտքերը լվանալիս կինը տեսնում է նրա ոտքի նշանը և հեծկլտալով ուշաթափվում. պարզվում է՝ ամուսինները մայր և որդի են, որոնք տարիներ առաջ կորցրել են իրար: Խոր հիասթափություն ապրելով՝ նրանք այդ ամենը պատմում են տերտերին, որն էլ խորհուրդ է տալիս մեղքերը քավելու համար մի եկեղեցի կառուցել և մեջը աղոթել, ինչը և սիրով կատարում են [2(132)]: Նման դեպք է կապված Տուֆի գյուղի մերձակայքում՝ **Իք'ակ** գետի վրա, գտնվող կամուրջի կառուցման հետ. քույր ու եղբայր, մանկուց իրար կորցնելով, օտարության մեջ հանդիպում են և, անտեղյակ իրականությանը, ամուսնանում: Տարիներ հետո, պառավ կնոջից իմանալով եղբորությունը, նրանք դիմում են Գտիչ վանքի տերտերին՝ մեծ մեղքը քավելու խնդրանքով, և նրա խորհրդով մի թանկարժեք նվեր-հիշատակ են թողնում հայրենի գյուղի ժողովրդին. կառուցում են այդ կամուրջը [2(92)]:

Մի շարք ավանդություններում արծարծվել են օտար բռնակալների նվաճողական նկրտումները, կատարած ավերածություններն ու թալանը և արցախցիների անզիջում պայքարը նրանց դեմ: Ըստ ավանդության՝ Հաղրուքի շրջանի գյուղերից մեկը ստացել է **Թէգխարաք** (հաճախակի փչացող) անունը, քանի որ այդ տեղով անցնող օտար բռնակալներից յուրաքանչյուրը ավերել և թալանել է այն [2(12)]:

Արցախցին առանձնապես վրիժառու է դառնում, երբ փորձում են պղծել նրա սուրբ զգացմունքները: Նման մի հուզիչ պատմություն է ներկայացնում Ճարտար և Մոս գյուղերի մոտակայքում գտնվող **Ղիշա վանքի** մասին եղած ավանդությունը. օտար բռնակալ Խօշանբնագը, չբավարարվելով կատարած ավերածություններով և կողոպուտով, օրենք է սահմանում, որի համաձայն՝ իրեն է վերապահվում յուրաքանչյուր նոր ամուսնացող աղջկա հետ առաջին գիշերն անցկացնելու իրավունքը: Կտրիճ երիտասարդ Եղիշեն՝ ժողովրդի հավաստմամբ՝ Գրիգոր Լուսավորչի թոռը, չկարողանալով տանել նման անպատվությունը, հարսի շորերով ներկայանում է բեկին և գիշերը խողխողում նրան՝ ինքն էլ նահատակվելով հետագայում իր անունը կրող վանքի տեղում [2(137)]:

Առանձնակի շարքով են ներկայանում Թևան Ստեփանյանի մասին պատմվող ավանդազրույցները: Նշանավոր հայդուկապետը իր ամբողջ կյանքը նվիրել է արտաքին և ներքին թշնամիների դեմ մղվող պայքարին: Մի ավանդության մեջ իր փոքրաթիվ քաջերով նա հաղթում է թուրքական զորքին՝ կանխելով արյունահեղությունն ու թալանը [2(220 դ)], մի այլ դեպքում գնդակահարում է հայ կնոջ պատվի հանդեպ ոտնձգություն կատարած իր զինվորին [2(220 ա)], մի ուրիշ դեպքում ծեծում է հայ գյուղացուն, որը համարձակվել է գովել սպանված թուրքի արտաքին զեղեցկությունը:

- **Լ'ալ գ'իդնցէք', քօրքը հինչ էլ ինի, հային վր'ննանը րակէ ցը'խըն էլ չմրժի-** ալսպես է խրատում ազգային հերոսը իր հայրենակիցներին [2(220 բ)]:

Սակայն միշտ չէ, որ արցախցին կարողացել է զինված պայքար մղել թշնամու դեմ. երբեմն նա բռնակալներին հակադրվել է իր ստեղծագործ և շինարար ոգով՝ ապավինելով Աստծո և սրբերի զորությանը: Մի ավանդության մեջ պատմվում է, թե ինչպես Լենկ Թեմուրը, խղճի խայթ զգալով, թույլատրում է չկոտորել այնքան հայ, որքան կտեղավորի տեղի եկեղեցին: Մարդիկ, մտնելով եկեղեցին, գաղտնի ետնադռնով փախչում են անտառը և ազատվում [2(142)]: Չկարողանալով գրավել Գտիչ բերդը՝ արաբ զորավար Բուղան ավերում է հայկական սրբավայրերը: Նույն ժամանակ՝ կռվի թեժ պահին, հայերը կառուցում են նոր եկեղեցի՝ նրան տալով **Թիժ յը'խը** անունը [2(133)]: Պողոսագոմեր գյուղում ժամանակին մի մեծ փոս է եղել, որտեղ թշնամիների հարձակումների ժամանակ թաքնվում էին կանայք ու երեխաները և փրկվում: Հետագայում, երբ խաղաղություն է տիրում, ժողովուրդը ամենքին փրկող այդ փոսի տեղում եկեղեցի է կառուցում՝ այն անվանելով **Ամենափրկիչ** [2(141)]:

Վերոհիշյալ ազգային ավանդությունների կողքին տեղ են գտել նաև միջազգային որոշ ստեղծագործություններ, որոնք իրենց զուգահեռներն ու տարբերակներն ունեն մի շարք ժողովուրդների մեջ: Դրանցից Արցախում լայն տարածում ունի համաշխարհային ջրհեղեղի մասին եղած պատմությունը, որի համաձայն՝ Նոյ նահապետը, կանխագալով գալիք մեծ ջրհեղեղը, շինում է մի տապան և իր ընտանիքով ու կենդանիներով տեղավորվում նրա մեջ [2(9)]: Նման բնույթ ունի նաև տարբեր շինվածքների փլուզումը կանխելու նպատակով շինվածքի մեջ կենդանի վիճակում մարդ թաղելու պատմությունը [2(199 բ)]:

Արցախյան առակները (*մնամյ*) փոքր ծավալի բարոյախոսական փոխաբերական ստեղծագործություններ են, որոնք մեծ աղերսներ ունեն ժողովրդական բանահյուսության այլ ժանրերի, ինչպես նաև հայ ազգագրական մյուս շրջանների համապատասխան ստեղծագործությունների հետ: Որոշներն էլ պարզապես համընկնում են նշանավոր առակագիրների, հատկապես Եզոպոսի, Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու առակներին: Արցախի առակախոսները, սերնդեսերունդ վերապատմելով, դրանց հիման վրա ստեղծել են նորանոր տարբերակներ՝ հարմարեցնելով ժամանակաշրջանի երևույթներին և տեղական վարք ու բարքին, սոցիալական ու քաղաքական իրադարձություններին, հասարակական փոխհարաբերություններին: Առակներում սովորաբար մարդկային բնավորության և հասարակական, կենցաղային արատները ներկայացվում ու ծաղրվում են կենդանիների, երբեմն՝ բույսերի գործողությամբ ու վարքագծով՝ արտահայտելով բարոյախոսական եւ խրատական որևէ գաղափար: Նրանց մեջ գործողն ըստ էության մարդն է՝ այս կամ այն կենդանու կերպարանքով: Բազմազան են արցախյան առակներում արձանված թեմաները, գաղափարներն ու մոտիվները: Մի շարք ստեղծագործություններում ժողովուրդը մարդուն հատուկ խորամանկությունը, շողոքորթությունն ու քծնանքը ներկայացրել է աղվեսի կերպարի մեջ: Պատահական չէ, որ միջնադարում հայկական առակների ժողովածուները կոչվել են «*Աղվեսագիրք*», իսկ Ղարաբաղի բարբառում, ինչպես ընդհանուր հայերենում, աղվես բառը փոխաբերաբար նշանակում է նաև «*խորամանկ, շողորորք, նենգադավ մարդ*»: Իր բնատուր խորամանկության, շողոքորթության և այլ հատկանիշների շնորհիվ աղվեսին հաջողվում է խույս տալ անհաջողություններից [3(9), 3(15)], վրեժխնդիր լինել իր հանդեպ դավադրություն կազմակերպած արջին [3(31)], շահել արքայի՝ առյուծի սիրտը [3(23)]: Սակայն ոչ միշտ է դա նրան հաջողվում, և ի վերջո նա պարտվում է, ինչպես ժողովուրդն է ասում. «*Ժիւլիզ՝ աղվեսը ճօխար վրէննավ քնլանկ կրդնէ*»: «*Անգրն ա աղվեսը*» առակում խորամանկ ու երախտամոռ կենդանին փորձում է ուտել թակարդում հայտնված իր մտերիմ անգղին, սակայն վերջինս կտուցով խփում և հանում է նրա մի աչքը՝ մյուսն էլ թողնելով, որպեսզի դրանից հետո կարողանա ճանաչել և իրարից տարբերել քարեկամին ու թշնամուն, հարազատին ու օտարին [3(70)]:

Որոշ պատումներ ստեղծվել են գայլի շուրջ, որտեղ այլաբանորեն վեր են հանվում մարդուն հատուկ խարդախությունն ու երախտամոռությունը: Պիղծ՝ հարամ է գայլը, ահա թե ինչու՝ ի տարբերություն ոչխարի ցնկնելով մի քանի ձագ, նա հոտ չի կազմում [3(84)], նրա ձագի ապագա խարդախությունը գուշակում է անգամ կույր հովիվը [3(62)], իրեն մահվան ճիրաններից ազատած ագռավին վարձահատույց լինելու փոխարեն նա վերջինիս խորհուրդ է տալիս շնորհակալություն հայտնել, որ գլուխն իր երախից կենդանին է հանել [3(8)]: Որոշ ստեղծագործություններում էլ գայլը ներկայանում է խորամանկությամբ [3(47)], վախկոտությամբ [3(59)] ու սնապարծությամբ [3(66)]: Կյանքում մի անգամ իր անօրինություններով հայտնի կենդանին փորձում է լավություն անել ու բժիշկ ձևանալով՝ փրկել էշին,բայց այս անգամ էլ ինքն է երախտամոռության գոհ դառնում և զղջալով արածը՝ ասում. «*Էս ինչ խրդեզ՝ ա, ախերսաւ յէս արսաղան-բարսաղան դասաբ ի, խր՛լքես հինչ փրչի՞ց, վեր հննք՛իւմ տր՛ռէ*» [3(30)]:

Այսպես իրենց տարբեր հատկանիշներով հանդես են գալիս նաև առյուծը, արջը, էշը, ձին, ուղտը, նապաստակը, արծիվը, աղավնին, սագը, շնաճանճը, օձը, կրիան, սուսենին, բոխենին և այլն:

Քիչ չեն նաև այն առակները, որոնցում քննադատվում ու պախարակվում է պարծենկոտությունն ու մեծամտությունը. այսպես, նապաստակը, իմանալով, որ արջը թակարդ է ընկել և չի կարողանում դուրս գալ, աքացում է նրան և մոծակ կոչելով՝ հրամայում այլևս իր ճանապարհը չփակել [3(43)], արջի մեծահոգության շնորհիվ արժանանալով պատվի՝ մուկը վերջինիս հրամայում է այդուհետ իրեն «աղա» կոչել [3(36)], ավանակները իրենց են արժանի համարում անտառի թագավորի տիտղոսին, քանի որ առյուծին գերազանցում են ձայնի, հասակի, ոտքերի բարձրությամբ ու աշխատասիրությամբ [3(39)], լուսն ցանկանում է գոմեշի հետ լուծ քաշել, քանի որ իրենք նույն գույնն ունեն [3(29)]: Սակայն հաճախ մեծամիտներն արժանանում են հպարտությամբ ու համեստությամբ աչքի ընկնող իրենց խոսակցիների ծաղրին. երբ օձը պարծենում է իր՝ ամեն տարի շապիկը փոխելով, համեստ ձին պատասխանում է. **«Էփրան շնուր-շնուր հայավրար փօխում ըս, ամնա մին հէփի էլ ա գ'իղնիմ չըս խասալաքրար փօխէս»** [3(44)], երբ ագռավը նախատում է աղավնուն ամբողջ տարվա մեջ ընդամենը երկու ձու ամելու համար, վերջինս ասում է. **«Իմ ծուվէնասս խըղըղօթուն պիրօղ դօնէգ'նէ յըն փնու կ'ամ, քունան կըռկըռօղ քաշէր»** [3(32)], նույն ձևով արծիվը ծաղրում է սագին [3(53)], բոխենին՝ սոսենուն [3(82)]:

«Վր'նըրար յօրդանըրար ըգ'ծրնմ մը'կնէ»- խորհուրդ է տալիս ժողովրդական առածը, իսկ ով չի ճանաչում իր չափը, անպայման տուժում է: Նման գաղափար է արտահայտված որոշ առակներում. չհետևելով աղվեսի խորհրդին՝ գետն անցնել կամրջով, առյուծը փորձում է այն անցնել լողալով, որի արդյունքում վիշապ ձուկը պոկում է նրա ազդրը [3(69)], շնամանձի հանդգնությունն այն աստիճանի է հասնում՝ **աշկը ունքան էնքան ա պըրըննիւմ**, որ որոշում է խայթել ու սպանել առյուծին և դառնալ թագավոր, սակայն վերջինս կուլ է տալիս նրան [3(49)], տեսնելով մեծ ոսկոր կուլ տալու պատճառով ցավից գալարվող բագեին՝ բուն խորհուրդ է տալիս. **«Էփ ք'ը'գ խըրարպ, միհէնգ'ասս փէնը վը'ռէփ չափը ճիւնննչի, հանց վըսկըռ կօլ փօ, վէր վը'ռավըրար վէր քըցիս»** [3(10)]:

Յուրաքանչյուրը պետք է ձգտի ընկերանալ և գործել իրեն համապատասխան անձի հետ, այլ կերպ ասած՝ ամեն ոք **իւրնն ճըպարը քիդի իւրնն քօլան կըրըրէ**, այլապես անհաջողությունն ու ձախողումն անխուսափելի են: Նման գաղափար է արտահայտված **«Մարթըն ա կօրեն»** առակում. աշնանացանի ժամանակ ընկերանում են մարդն ու կրիան, մարդը ցանում է արտը, իսկ ընկերջը պատվիրում է աղբյուրից կուլալով ջուր բերել, սակայն դանդաղաշարժ կրիան պատվերը կարողանում է կատարել միայն ամիսներ անց՝ այն էլ շտապելուց կուլան գետնին գցելով և ջարդելով [3(75)]: Մեկ այլ դեպքում, համաձայնության գալով, ոգնին ու կրիան ամուսնանում են, բայց չեն կարողանում գրկախառնվել, ինչին խանգարում են առաջինի ցցված փշերը և երկրորդի ոսկրե պատյանը [3(72)]: Որոշ ստեղծագործություններում այլաբանորեն ներկայացվում են մարդկային բնավորության այլ հատկանիշներ:

Պատվախնդրության գաղափարն է արտահայտված **«Օղփէն ջօղաքը»** և **«Ասլանըն ա մուկըն»** առակների մեջ, որոնցից առաջինում մահամերձ ուղտը պատրաստ է ներելու իր հանդեպ տիրոջ կատարած բոլոր անարդարությունները, բացի նրանից, որ մի անգամ տերը ստորացրել է իրեն՝ սարը բարձրանալիս կապելով ավանակի հետևից [3(14)], իսկ երկրորդում պատվախնդիր առյուծը գերադասում է մեռնել որսկանի արձակած գնդակից, քան ազատվել մկան ձեռքով [3(56)]: Մյուս ստեղծագործություններում

արծածվում են ծուլության [3(4)], անճարակության [3(11)], կատարած սխալ քայլի զղջման [3(12)], ուրիշին օգնության չհասնելու հետևանքով տուժելու [3(25)], միայն սեփական շահի համար մտածելու ու գործելու [3(67)], միաբանության [3(18)] և զանազան այլ գաղափարներ:

Սակայն ոչ բոլոր առակներում է մարդկային էությունը այլաբանորեն վերհանվում կենդանիների գործողությամբ ու վարքագծով: Մի շարք ստեղծագործություններում ուղղակի հանդես է գալիս մարդը՝ հիմնականում իր բացասական հատկանիշներով՝ հատկապես ազահությանը: «**Թամսը՝ Արթ**» ստեղծագործության մեջ ազահ մարդը վազելով անցնում է երկար տարածություն, որն ըստ պայմանի իրեն պետք է պատկանի, սակայն շնչակտուր լինելով՝ չի բավարարվում այդքանով և վերջին շնչում աջ ձեռքը մեկնում է առաջ՝ ջանալով այդ մի թիզ հողն էլ յուրացնել [3(1)], «**Թաննը՝ Ար մարթը**» առակում, երբ Գաբրիել հրեշտակապետը, տեղի տալով հարյուրամյա ծերունու աղաչանքին ու սպառնալիքին, առաջարկում է բուք մատը դնել եզան վրա՝ դրա տակ եղած մազերի քանակով տարիների կյանք ստանալու պայմանով, մարդը պառկում է եզան վրա, իսկ ձեռքերով գրկում նրա գլուխը [3(41)], աչքածակ պառավ կինը, Աստծո ողորմածությամբ ապրելով երկար, մեռնելիս անիծում է նրան, որ թույլ չի տվել մի քանի տարի էլ ապրել ու ամուսնացնել թոռների թոռներին [3(42)]:

Ազահությանը զուգընթաց քննադատվում է ժլատությունը և խաբեությունը. մի դեպքում մոլլան է օրեցօր պակասեցնում էշի կերը, որի պատճառով կենդանին սատկում է [3(22)], մի այլ դեպքում տերտերներն են իրենք իրենց ժլատության ու խաբեության արդյունքում տուժում [3(3)]:

Իրականում բոլոր կենդանիներից առավել չար ու դաժան է մարդը, որի դատաստանը ի վերջո կատարվում է մահից հետո [3(79)]:

Արցախի վիպական բանահյուսության ժանրերից դեռես լայն կենցաղավարում ունեն զվարճախոսությունները, դեռ ավելին՝ ժամանակի ընթացքում ստեղծվում են նորերը: Աչքի ընկնելով բարոյախրատական ու դաստիարակչական բնույթով, դրանք ժողովրդի կողմից սիրված երգիծական ստեղծագործություններ են, որ պատմվում են ե՛ր տարեցների, ե՛ր երիտասարդների, ե՛ր պատանիների ու նույնիսկ դեռահասների կողմից: Չվարճախոսությունների թեմաները բազմազան են՝ ընդգրկելով մարդկային կյանքի տարբեր բնագավառներ՝ առօրյա զանազան հարցերից մինչև սոցիալական այլևայլ իրադարձություններ ու կենցաղային հարաբերություններ³⁹: Ընդ որում, եթե նյութերի մի մասի հերոսներն առանձնանում են սրամտությամբ, հանպատրաստից սրախոսելու արվեստով, ապա մյուսներն էլ իրականում կատակի նյութ են դառնում իրենց պարզամտության, չափից դուրս շիտակության, հոգեկան անհավասարակշիռ վիճակի, տարօրինակության, տարբեր արատների եւ այլ պատճառներով: Երգիծական գրույցներից շատերն ունեն միայն տեղական տարածվածություն, ստեղծված լինելով այս կամ այն անձի շուրջ՝ դրանք հաճախ պատմվում են տվյալ կամ հարեւան բնակավայրերում: Մի շարք պատումներ էլ ստացել են ընդհանուր արցախյան գործածություն: Վերջիններիս մեջ առանձնանում են Պլըրը-Պուղու զվարճախոսությունները,

39. Վարդանյան Ս., Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1971, № 8, էջ 92

որոնք տարածվել են նաև Արցախի սահմաններից դուրս⁴⁰: Պատահական չէ, որ այս կամ այն գյուղերում զվարճախոսներին կոչում են հենց **Պըլը-Պուղի** մականունով, իսկ **Պըլը-Պուղուն առուփօրը** (անշահավետ գործ), **Պըլը-Պուղուն դրզղանը** (ձգձգված գործ) արտահայտությունները Ղարաբաղի բարբառի կենսունակ դարձվածներից են: Մեծ զվարճախոսի անվան շուրջ ստեղծված գրույցներն այնքան են ծավալվել, որ հաճախ նրան են վերագրվում նաև հայտնի եւ անհայտ այլ զվարճախոսների մասին պատմվող պատումները: Իրականում հայ բանահյուսության մեջ նա ժողովրդական էպոսի հերոսներից հետո ամենից հայտնի կերպարն է⁴¹, որի մասին ստեղծվել են նաև գեղարվեստական գործեր, նրա անունով հրատարակվել երգիծական հանդես⁴²:

Պըլը-Պուղին արդարամիտ է ու անկեղծ, ազնիվ ու շիտակ, հնարամիտ ու սրամիտ, նաև խորամանկ: Մի շարք գրույցներում զվարճախոսն իր հնարամտությամբ կարողանում է օգնել իրեն դիմած մարդկանց՝ այս կամ այն հարցն արդարացի լուծելով. տեղի տալով ձիթավաճառի կնոջ թախանձանքին՝ Մելիք-Շահնագարի հրամանով տասնհինգ մարդկանց կտրած քթերի մեջ ճարելու իր ամուսնու քիթը, նա խորհուրդ է տալիս մեկ-մեկ հոտոտել եւ ձեթի հոտից ճանաչել [4(6)], մեկ այլ դեպքում իրեն դիմած լեզվանի կնոջը խորհուրդ է տալիս ամուսնու կողմից չծեծվելու համար նրան չհակաճառել [4(65)]:

Չվարճախոսի սրամտությունը բնատուր է, որը դրսևորվում է դեռես մանուկ հասակից: Ջրույցներից մեկում պատմվում է այն մասին, թե ինչպես փոքրիկ Պուղին պապի հետ անտառում հանդիպում են գայլերի: Պապը թռռանը առաջարկում է շան նման հաչել, սակայն սրամիտ փոքրիկն ասում է, որ եթե ինքը հաչի, գայլերը կարծելու են, թե շան ձագ է, ուրեմն ավելի լավ է պապը հաչի, որ գայլերն իմանան, թե մեծ շուն է ու փախչեն [4(76)]:

Ընդհանրապես Պըլը-Պուղու յուրաքանչյուր խոսք, լինի հանդիմանական, խրատական, թե այլ բնույթի, ուղեկցվում է սրամտությամբ. երբ նա հասնում է իր տունը թալանած գողերի հետևից, վերջիններիս այն հարցին, թե ուր է գնում, զվարճախոսն ասում է. «**Պա մէր փօնը քուչուցունում չը՞ք**» [4(78)], երբ հորթերից մեկը արձակվում է փախչում է, նա սկսում է ծեծել կապած մյուս հորթին՝ ասելով. «**Վէր սա պէց ընգնէ, էն մինին անա ք'ծիլմն ա փրխչիլմն**» [4(71)], երբ դատավորը, Պուղու սրախոսությունից զգուշանալով, նրան հրավիրում է թութ ուտելու, զվարճախոսն ասում է. «**Չէ, կըռէք՝ չօնիմ, չ'րիա մին ըստաքան արաղ փօ՛, խըմիմ**» [4(81)], տեսնելով երեխայի փոխարեն խանձարուրի մեջ փաթաթած գողացված գառը՝ Պուղին գողացողին ասում է. «**Ղա՛զմըր, փրէ՛ս հիշկան ա յէ՞ ք'ը՛գ նըման, հանց ա լիմն քըթապ վէր ընգած ինի**» [4(21)]:

Պըլը-Պուղու սրախոսության նյութ են դառնում բոլորը՝ անկախ դիրքից, սոցիալական վիճակից, իր հետ ունեցած հարաբերությունից: Սակայն դրանց մեջ առանձնանում է Վարանդայի իշխան Մելիք-Շահնագարը, որի ապարանքում՝ որպես կատակաբան, իր կյանքի մեծ մասն անց է կացրել մեծ զվարճախոսը: Դաժան ու հզոր

40. Ղազիյան Ա., Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1978, № 9, էջ 60

41. Նույնը, էջ 61

42. Աբելյան Ա., Պըլը-Պուղի (Օպերետ չորս արարով), Նոր Նախիջեւան, 1923, Բարսեղյան Ա., Պըլը Պուղի (Յերոսական կոմեդիա չորս գործողությամբ), Երեւան, 1963, Օվյան Վ., Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց, Ստեփանակերտ, 1993, «Պըլը-Պուղի», Ստեփանակերտ, 1991-2014

է Մելիքը, բայց նա երբեք չի կարողանում սաստել Պըլը-Պուղուն եւ ամեն անգամ, փորձելով ծաղրել նրան, ինքն է պարտվում՝ դառնալով ծաղրի առարկա: Որոշ պատումներ պարզապես երկխոսություններ են Մելիքի եւ զվարճախոսի միջեւ: Այսպես, երբ Մելիքը հարցնում է, թե ինչից է, որ Պուղու գլուխն է սպիտակել, իսկ իր՝ բեղերը, վերջինս ասում է. **«Մէլիքըն սայրած կէնա, էր ընդըրանա յա, վէր Կու ըռխավըր ըս կործ ընէս, յը՛ս կըլխավըս»** [4(11)], Մելիքի այն հարցին, թե որ տարիքում է մարդ **խը՛լքսկադար** դառնում, կատակաբանը պատասխանում է, որ ով իր նման է, խելոք է ծնվել, ով Մելիքի նման է, հնարավոր է՝ հարյուր տարի ապրի, այդպես տհաս էլ մեռնի [4(12)], մեկ այլ դեպքում Մելիքի հարցին՝ կընդունի արդյոք դրախտը իրեն մեռնելուց հետո, պատասխանում է. **«Տըրսխարը գ՛իդմնս չըն, ամնա Կըժօխըր հէԿապ գ՛նլլմն կըրըրցի»** [4(9)]: Սի շարք դեպքերում զվարճախոսը ծաղրում է Մելիք-Շահնազարի արտաքինն ու անմիտ արարքները: Պատումներից մեկում Մելիքը տասը ռուբլի է տալիս Պուղուն՝ այն պայմանով, որ նա հարսանիքի ժամանակ չծաղրի իրեն, սակայն վերջինս, տեսնելով տիրոջ կարմրատակած քիթը, չի համբերում եւ վերադարձնելով «կաշառքը»՝ բարձրաձայնում է. **«Տասար մանէքըր քէգ ինի, ամնա քըթէր հմլը հմլ չի»** [4(61)], Մելիքի այն հարցին, թե ինչով են իրենք իրարից տարբերվում, Պուղին պատասխանում է, որ իրենց միջեւ մեծ տարբերություն կա. ինքը խելոք է, բայց իրեն հիմարի տեղ է դնում, մինչդեռ Մելիքը հիմար է, բայց ձգտում է խելոք ձեւանալ [4(62)]: Պըլը-Պուղու սրամտությունն ավելի անողորք է դառնում, երբ խոսք է գնում Մելիք-Շահնազարի՝ ժողովրդին ճնշելու եւ հայրենիքը դավաճանելու մասին: Նա չի խնայում Մելիքին՝ ասելով, որ աշխարհի ամենալավ բանը ոչ թե փողն է, այլ ազատ խոսքը, որ չկա նրա տանը [4(51)], մեկ ուրիշ դեպքում, երբ իշխանը խորհուրդ է տալիս քիչ մեղր ուտել, թե չէ կարող է մեռնել, զվարճախոսը պատասխանում է, որ ավելի լավ է ասեն՝ մեղր է կերել ու մահացել, քան թե ասեն՝ Ղարաբաղը վաճառել է թուրքերին, սոված մահացել [4(31)]: Սակայն Մելիքն ու Պուղին թշնամիներ չեն, ընդհակառակը, նրանք լրացնում են իրար. զվարճախոսը անչափ համարձակ է, քանի որ ունի Շահնազարի նման հզոր հովանավոր, իսկ իշխանն էլ հպարտ է, որ ունի Պուղու նման հնարագետ ու սրամիտ կատակաբան, ով ծաղրելուց բացի, հարկ եղած դեպքում կարող է պաշտպանել իրեն [4(50)]: Որոշ պատումներում Պըլը-Պուղու սրամտության հետ երեսան է գալիս նրա միամտությունը [4(29), 4(38)], որոշներում՝ խորամանկությունը [4(4), 4(5), 4(20)] եւ այլն:

Արցախում գրեթե յուրաքանչյուր գյուղ ունի իր զվարճախոսը⁴³: Դրանցից է Բուղին՝ Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղից: Ինչ խոսք, որ նա չունի Պըլը-Պուղու վառ արտահայտված հատկանիշները եւ ամենից առաջ աչքի է ընկնում իր միամտությամբ եւ ազնվությամբ: Նա հրաժարվում է համագյուղացուն միս վաճառելուց, քանի որ վերջինս իր խոզերը մսամթերման է հանձնել [4(310)], հրաժարվում է թերթ բաժանորդագրվելուց, քանի որ ինքը թերթ չի կարդում [4(318)], հրաժարվում է բամբակաքաղին մասնակցելուց, քանի որ ինքը բամբակ չի ցանել [4(322)]: Որոշ պատումներում Բուղին համարձակ պատասխաններ է տալիս իշխանավորներին. երբ կոլտնտեսության մախազահն ասում է, որ համաձայն օրենքի՝ Բուղին իրավունք չունի երկու կով պահել, զվարճախոսն ընդդիմանում է. **«Պա վէր Կու էրկու կընէգ՛ ըս պահում, իրավունք**

43. Ղազիյան Ա., Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-73թթ. գրառումների հիման վրա, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1974, № 4, էջ 238

օ՞նիս» [4(321)], կամ երբ դատախազը մեղադրում է նրան, թե ինչու չի համաձայնում հովիվ դառնալ, պատասխանում է. «*Խէ փանըմ չը՞ս քու պաշտօնըդ սովորցրնում, չրբընօրուն ըս սովորցրնում»* [4(320)]:

Ավելի սրամիտ է նույն շրջանի Ճարտար գյուղի բնակիչ Սալոթնիզ՝ Վաղօն, ով կարողանում է ցանկացած դեպքում տալ այնպիսի կտրուկ պատասխաններ, որ խոսակիցն այլևս չի հակաճառում: Մի անգամ, երբ ավտոտեսուչը մեղադրում է վարորդին՝ Վաղոյի որդուն, թե ինչու մեքենան ամրագտիներ չունի, Վաղոն ասում է. «*Պօ՛, պս էր հինչ գ՛հիմ՞ցեր, քս չ՛րիս ք՛նննում ընք ռեմէն ինք՛ օնինք՛*» [4(254)], մեկ այլ դեպքում, երբ գնացքում աղբբեջանցին ու վրացին, իբր Վաղոյին ձեռ առնելու համար սկսում են վիճել՝ յուրաքանչյուրը պնդելով, թե Ղարաբաղը իրենցն է, զվարճախոսն ասում է, որ ինքը արհեստավոր է ու կծառայի եւ աղբբեջանցիներին, եւ վրացիներին, իսկ ոգետրված ուղեկիցների այն հարցին, թե ինչ արհեստավոր է նա, պատասխանում է. «*Յէս մըռալ՛ու դուքի շինծղ ում, մը՛ռալ՛ը՝ ծըզանս, դուքին ինչննս»* [4(246)]: Հետաքրքիր են Վաղոյի եւ Արցախի հերոս, հրամանատար Ավոյի՝ Մոնթե Մելքոնյանի երկխոսությունները. Ավոյի հարցին, թե որտեղ է Վաղոյի տղան, զվարճախոսը հարցով է պատասխանում. «*Քու ապեր քու փը՛ղըդ գ՛ննիմն ս՞*», եւ ստանալով բացասական պատասխան՝ ասում է. «*Պա վեր չէ, յես հինգ՛ի ՞ղնմ փրդաս ըշփէղ ս»* [4(249)], կամ երբ պատերազմի թեժ պահին իմանալով, որ Վաղոն թաքուն գինի է վաճառում՝ Ավոն գալիս եւ բացում է գինու տարայի ծորանը, որ թափի գինին, Վաղոն ասում է. «*Մէր փրդէրբըն էլ ըն կ՛իլմն պօսդ, հալմ յըս էլ ում կ՛իլմն, մինակ քս էր կըռանը կա՛պէ՛*» [4(248)]:

Մի շարք զվարճախոսություններ ստեղծվել են Մարտակերտի շրջանի Վանք գյուղի բնակիչ Ղըլէչի Միշայի անվան շուրջ. երբ Միշան, էշի վրա նստած, գնում է Շամխոր, շամխորեցիների այն հարցին, թե որտեղացի է, պատասխանում է. «*Քրմափաղ, յես դարաբաղէ յում, ամս փակէնըս շամխորէցի յս»* [4(489)], երբ շրջկոմի քարտուղարը այցելում է Միշայի տուն, որտեղ տասներեք երեխա կար եւ աթոռ չի ճարում, որ նստի, զվարճախոսն ասում է. «*Հընգէր Քաղունց, շար խըլըշփօփէ մի՛, փաբրէփկա չօնէմ, յօցան մինը քա՛շի փակըդ, նըսրէ՛*» [4(487)], մեկ այլ դեպքում էլ, երբ Միշայի տանը հյուրընկալված Միլվա Կապուտիկյանը բաժակ է վերցնում կենաց առաջարկելու համար, Միշան սաստում է նրան՝ ասելով. «*Յավաշ Է՛, Մի՛վս, Ղարաբաղ փրհէնց մղմը չըկս, մէր քըշփէն վերցակըն ս կանչում, հավը վար օզում ս կանչի, մօրթում ըն»* [4(490)]:

Ի տարբերություն նշված զվարճախոսների՝ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի բնակիչ Տիկօշը պարզամտությամբ ու կենցաղային տարբեր հարցերի նկատմամբ արտահայտած միամիտ վերաբերմունքով ինքն է դառնում ծիծաղի առարկա⁴⁴. Երբ մայրը կորած էշը փնտրող Տիկոշին հայտնում է, որ էշը ճարել են, նա ասում է. «*Մա՛մս, սաս քօղ օրիշ փը՛ղ չըքինմ, մի ծծր ս մընացէ, էս մի ծծրն էլ յմշէմ, նօր կ՛ամ»* [4(464)], երբ գյուղացիները հարցնում են, թե ինչու է գլխարկը թարս դրել, Տիկոշը պատասխանում է. «*Վէ՛չինչ, մին ս, էս ս յէր ըմ փմննիմ»* [4(468)]:

44. Վարդանյան Ս., Բանահյուսական կյուրեր Լեռնային Ղարաբաղից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 1971, № 8, էջ 92

Մյուս զվարճախոսներից հայտնի են Ավանք՝ անին [4(123) 4(124), 4(126)], Յեղի դային [4(233-239)], Աշոտը [4(384-386)], Թեոսը [4(402), 4(411), 4(413)], Թոննի դային [4(430-440)], Վարսենիզ՝ հնասին [4(502-511)] եւ ուրիշներ:

Բազմաթիվ զվարճախոսություններում ներկայացվում է բնակիչների միամտությունը. Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, կյանքում առաջին անգամ լինելով Ֆիզուլի քաղաքում եւ զարմանալով նրա մեծությամբ, Հէյրան արքերը գյուղի կանանց հավաքում է գլխին եւ հավաստիացնում, որ Հիտլերի նպատակը հենց այդ քաղաքը գրավելն է [4(122)], կուսակցական օրիորդը դատավորի այն հարցին, թե ինչու է համաձայնել կենակցել կուսկազմակերպության քարտուղարի հետ, զարմացած պատասխանում է. «**Պա վեր պարթկումէն ասածը անին վուչ, պա հնըր ասած ա՞նին**» [4(211)], ի պատասխան որդու մեղադրանքի, թե ինչու է ինքն իր գերեզմանոցը փորել, իննսունչորսամյա ծերունին պատասխանում է. «**Ըսոր-էք՛ում մըռնըլսկան ում, իմ հանգ՛խարսս փր՛սնամ վէ՞չ յր՛սնան մը՛ռնին**» [4(282)], միամիտ երիտասարդը իր սերը համարում է հիսուն տոկոսով ստացված, քանի որ ինքը սիրում է, իսկ աղջիկը՝ ոչ [4(377)]:

Մի շարք ստեղծագործություններում կատակի առարկա է դառնում մարդկանց շփոթմունքը. ցանկանալով սփոփել կինը մահացած եղբորը՝ Կարո դային շփոթվում է եւ ասում. «**Է՛, այ ա՛խպէր, հինչ ըս գ՛ո՞ւղին, բնըլք՛նս լնմըր էր ա՞**» [4(497)], շփոթված ծերունին աստում է էշի վրա եւ գնում՝ նույն էշը փնտրելու [4(103)], նկատելով, որ կինը գոմը մաքուր չի սրբել, զայրացած ամուսինն ասում է. «**Պա յր՛ս սիրփին ըսրփ կ՛ոլզածըմը**» [4(149)], ճանապարհելով հիվանդանոց գնացող բարեկամին՝ շփոթված կինն ասում է. «**Ք՛իննըլր Ինի, կ՛նըլր չինի**» [4(505)], մեկ այլ դեպքում նույն կինը թռռան ասում է. «**Վա՛զ փո փր՛սան կա՛պէ, շօնը կ՛ա**» [4(506)]:

Որոշ պատումներ ներկայացնում են ստախոսություններ. մի գյուղացի պատմում է, թե ինչպես է Ստալինն իրեն հրավիրել Կրեմլ եւ խնդրել ամբողջ երկրում տարածելու նպատակով այծը տարեկան երեք անգամ ծնեցնելու գաղտնիքը հայտնել [4(108)], մեկը, չնայած չի մասնակցել Հայրենական Մեծ պատերազմին, պատմում է այդ պատերազմի ժամանակ գերի ընկնելու եւ իր վաղեմի ծանոթ Հիտլերին հանդիպելու մասին [4(517)], մյուսը փորձում է համոզել, որ ինքը սպանել է գայլին եւ մորթազերծ արել, բայց գայլը վերակենդանացել է ու սկսել քայլել [4(427)], մեկ ուրիշը, չկարողանալով հավատացնել համազյուղացիներին, որ իրենց տան մոտ հարյուր գայլ է տեսել, դրանց թիվն աստիճանաբար կրճատում է եւ դարձյալ հանդիպելով խոսակիցների թերահավատությանը՝ ճարահատյալ ասում է. «**Գ՛նըրն ասած, մինը փր՛սալ ըմ, ամնա հասարաղ գ՛ի-դնս չըմ՛ կ՛ոլ ա լնմ՛, քա շօ՞ն**» [4(146)]:

Արցախյան ժողովրդական խաղիկները հիմնականում քառատող լիրիկական երգեր են՝ հորինված հոգեկան տարբեր վիճակների և հասարակական բազմազան երևույթների անմիջական ազդեցության տակ, որոնցից ամեն մեկն արտահայտում է մի ամբողջական միտք, տրամադրություն և ունի հանգավոր ու գեղարվեստորեն ավարտուն կառուցվածք: Դրանց մեծամասնությունը վիճակի երգեր (*ջանգ՛ոլլն*) են, որոնք ներկայացնում են երիտասարդ սիրահարների ներքին ապրումները և սովորաբար երգվել են համբարձման տոնին՝ վիճակախաղերի ժամանակ⁴⁵.

45. Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները Մ. Գրիգորյան-Սպանդարյանի), Երեւան, 1971, էջ 438-441

**Այսպիսի փոփոխված վրձններէն,
Վը՛սկէ ջամը կուռներէն,
Մանհրճում մընա էն փրդան,
Վէր ինչ բողից փրոռներէն [5(3)]:**

**Մէրը ծաղէ՞՞ չի, վէր քաղիս,
Մէրը սը՛րմը չի, վէր վարիս,
Մէրը քաննու՞ ախայմըր ա,
Մէրը սըրփսա՞լ բիդի սիրիս [5(193)]:**

Բազմազան են արցախյան խաղիկներում արծարծված թեմաները՝ սեր, աշխատանք, հայրենիք, բնություն, պանդխտություն, սոցիալական խնդիրներ, և այլն: Գերագանցում են սիրո պատումները, որոնք արտահայտում են երիտասարդ աղջիկների ու տղաների, հարս ու փեսաների, երբեմն էլ ամուսինների սիրո զգացմունքը՝ տարբեր նրբերանգներով: Մի շարք երգեր նվիրված են յարի գովքին, որ ասվում են աղջկա կամ տղայի կողմից: Գովվում են աղջկա չինար բոյը, պլազոյոգ աչքերը, քաղցր լեզուն, շեկ ու թուխ մազերը, ծամերը, շաման ծծերը, հագուստը, քայլվածքը, տղայի բոյն ու բուսաթը, ուժը, բեղերը, քյաքյուլը:

**Իմ յարրս աննըման ա,
Օնըր քէվու մընան ա,
Ամէն յէշօղ էրվում ա,
Մը՛րփ բիդի, վէր փրմանա [5(80)]:**

**Ա՛յիս փրդա, ա՛յիս փրդա,
Ա՛ ք՛անք՛իւլը դայիս փրդա,
Ա՛ սէր փրված, սէր ինք՛ կալմծ,
Տու իմ հմըմնց կալ՛իս փրդա [5(5)]:**

Սակավաթիվ խաղիկներում արտահայտվում է աղջկա բողոքը ժամանակի սովորությունների և բարքերի հանդեպ: Աղջիկներին հաճախ ամուսնացնում էին փոքր հասակում՝ արդեն տարիքն առած տղամարդու հետ՝ հաճախ հիմք ընդունելով տղայի հարուստ լինելը և անտեսելով նրա թերությունները: Ծնողների որոշումն օրենք է աղջիկների համար, սակայն պատահում են նաև համարձակները, ովքեր ընդդիմանում են այդ որոշման դեմ՝ գերադասելով աղքատ, բայց սիրած տղային:

**Բախճա-բրհար ըն կապալ,
Ադու գիհմըր ըն կապալ,
Մը՛րփրս էն փրդէն յըրա չի,
Չօռալ յըրա յըն կապալ [5(36)]:**

**Ա՛սիք ա, հա մսիք ա,
Է՛ն փրդան ինչ նմսիք ա,
Տանալ-փը՛ղալ ք՛մսիք ա,
Հինչ ա՞նիս, քա ք՛մսիք ա [5(30)]:**

Միրո պատումներում սիրված մոտիվներից է յարին տեսնելու, նրա մոտ լինելու, շուտափույթ ամուսնանալու, նրան ծաղիկ կամ խնձոր ուղարկելու, նրա կրծքին հանգչելու, նրա վրայի գարդը դառնալու, հանուն նրա կյանքը նվիրաբերելու ցանկության արտահայտությունը: Ներկայացվում են նաեւ սիրո վիշտն ու թախիծը, սալդաթ գրված յարի կարոտը, ամուսնության խոչընդոտները, առաջին սերը:

**Նըսարիմ քարէն,
Հիշիմ յարէն,
Մաղթուն մընա էն փարէն,
Վէր բանակ փարէն իմ յարէն [5(180)]:**

**Հանդըր ք՛ը՛ցէն հարսէրը,
Թ՛մնմու՞գ-ք՛մք՛իւլ վարսէրը,
Մարթին մընան հունց ընգէ՞
Ո՛ւրմն առաջի սէրը [5(123)]:**

Առանձնակի ճոխությամբ են հանդես գալիս մայրական եւ որդիական սերն արտահայտող երգերը, որտեղ անփոխարինելի են որդին մոր, իսկ մայրը՝ որդու համար:

**Ղարաբաղում ախ չի կա,
Առանց բար թաղ չի կա,
Ըշփը՛ղ շօռ կ՛աս, հինչ փը՛սնաս,
Բալից քախծըր պէն չի կա [5(137)]:**

**Մօրը ջանիլը վէրըն ա՞,
Մօրը մնիլը վէրըն ա՞,
Մօրան մազի՞ մարթ չի կա,
Մօրը մնիլը վէրըն ա՞ [5(167)]:**

Բազմազան ձևերով արտահայտված սիրո հետ ներկայացվում է գյուղական աշխատանքը՝ իր տարբեր տեսակներով, և դա հասկանալի է. այդ խաղիկները հիմնականում ասել են գեղջկուհիները, իսկ նրանց սիրածները գյուղական աշխատանքին, հատկապես երկրագործությանը նվիրված գեղջուկ երիտասարդներ են, որոնք ներկայացվում են աշխատանքի գործընթացում.

**Քաղերունը բոք ըս քափում,
Յէս քու քափչի ջանէպ մապառ,
Ըրէվէն փակէն հծնչ ըս անում,
Յէս քու հրնչնձ արտէպ մապառ [5(39)]:**

**Հննդը ք'ինիս ըրովկալ'ին,
Լէն-բօլ վարիս ցօրէն, կ'նրին,
Հըրսանէք'ըս փրունիս կալ'ին,
Ծափ-ծրծաղավ լըցնէ փարին [5(124)]:**

Մի շարք պատումներում արծարծվում է հայրենիքի թեման: Արցախցին սիրում է իր հայրենիքը, սիրում է նրա քարն ու ծառը, ջուրն ու հողը, իր մանկության վայրերը, անտառները, սարերը, աղբյուրները, այն վեր է դասում ամեն մի երկրից և ուր էլ լինի՝ հիշում է իր ծննդավայրը, կսկիծով ողբում նրա վիճակը:

**Յը'ս աշրղ ըս, վարթին քաղը,
Շնն'ի, Շիրվան նան շարմաղը,
Թէհրանը ջէնյաթ էլ փը'ռնա,
Մօռանալ չըս Ղարաբաղը [5(169)]:**

**Ճրռէք'ած գ'անըրպ հօր ա',
Խօսըս չըս դնրդըրպ խօր ա,
Էրված, փրրպակված Շուշին,
Իմ սը'րպըս խըրած բօր ա [5(139)]:**

Հայրենիքը ներկայացվում է իր բնությամբ, գեղեցկությամբ ու տարբեր բարեմասություններով.

**Տիզնիմնդ պէցնիր սար ա,
Մնն նան կ'էրանը քար ա,
Յէս մը'ռնիս էն Տիզրիմնդն սարէն,
Չըրք'ըպնիլիլիլը անպառ ա [5(216)]:**

**Մէր հինդերէն արտէր ա,
Չնրք'նուպնիլիլը վարթէր ա,
Ըշխրդօղէն ջանէն մապառ,
Քաղ ու քախճա քարէր ա [5(153)]:**

Անհնար է խոսել արցախյան քնարական բանահյուսության մասին՝ առանց դիտարկելու պանդխտության թեման: Դարեր շարունակ արցախահայությունը բռնել է գաղթի և պանդխտության ճանապարհը, և եթե գաղթի հիմնական պատճառը օտար զավթիչների կողմից Արցախի նվաճումն էր, ապա պանդխտությունը հիմնականում արդյունք էր սոցիալական կարգերի հետևանքով ստեղծված կենսական դժվար պայմանների: Ոգևորված օտար ավերում հարստանալու գաղափարով՝ արցախցի երիտասարդը թողնում է հարազատ վայրերը և դիմում պանդխտության: Մակայն երկար չի տևում այդ ոգևորությունը, վրա է հասնում հիասթափությունը, և կործանված համարելով իր երիտասարդ կյանքը՝ նա փախագում է գոնե թաղվել հայրենի հողում՝ իր հարազատների կողքին.

**Հըղըցէք'ը քարօպ կինի,
Ղարիքը միշտ կարօպ կինի,
Աշկը էն ա ջ'ավ մարթու յըրս,
Չօրս ողըր վիրվիլըր անօղ կինի [5(130)]:**

**Վը'ր մը'ռիս, փա'րէք' Շուշի թըղը'ցէք',
Ընդը'ղ ա մնգիզ վննքննըս, յարըս,
Ջրհննդննը, քա կըկ'ուղանան քարըս,
Ընդը'ղ ըն թաղված հնրըս ու մարըս [5(206)]:**

Այլ նմուշներում հերոսը պանդուխտի սիրածն է, ով մնացել է անտեր, շատացել են յարի թշնամիները, սակայն նա չի կորցնում հույսը, մերժում է բոլոր առաջարկողներին՝ երազելով այն պահը, երբ սիրածը կվերադառնա և իր դուռը կբախի.

**Քիհնի՛, կ'ալ չըմ, կարէլ չըմ,
Գնորդըս խօր ա, կարէլ չըմ,
Հը՛ռէ փը՛ղ մի՛ն յար օնիւմ,
Ուր՛նուշնու կ'ալ չըմ, կարէլ չըմ [5(231)]:**

**Մարունք ա կ'ամ պըպակի,
Պն՛ւն կըփի՛նի թըռչնակի,
Հիք կի՛նի յարըս կըկ'ա,
Իմ կապ փօռնը կըթակի [5(116)]:**

Առավել ողբերգական է պանդուխտ որդուն տարիներ շարունակ սպասող մոր վիճակը, ով դեղնել ու հալումաշ է եղել, վառվել ու խանձվել, ինչպես հայրենի Շուշի քաղաքը, սակայն, երբ ստանում է որդու վերադարձի լուրը, աշխարհը անմիջապես փոխվում է նրա աչքերի առաջ, և սև օրերը դառնում են կարմիր՝ լցված երգ ու խաղով.

**Իմ ը՛սվ բա՛լա, փօն յէ՛ք,
Ճըրմն'ըփ վառ ա, փօն յէ՛ք,
Իմ սը՛րփըս էրվախ, խանձվմն,
Տը՛ռալ ա Ղալա, փօն յէ՛ք [5(79)]:**

**Իմ վն՛թմնըս ա Ղարաբաղ,
Նախշուն սարէր, կանանչ բաղ,
Ղարիք դուշրս փօն ա կ'ամ,
Մ'նրմնը օրէր, յը՛րք նան հաղ [5(81)]:**

Եվ այսպես, պանդխտության բոլոր երգերում այդ երևույթը որակվում է որպես մեծ չարիք, որը դարեր շարունակ ուղեկցել է ողջ հայությանը, ահա թե ինչու օտար ափերում դեզերող արցախցին, գգալով մոտալուտ վախճանը, իր խորհուրդն է հղում այդ դաժան ճանապարհը դեռևս չբռնած հայրենակիցներին.

**Վախըմ ըմ՝ շնուփ մը՛ռնիւմ,
Խօսկէրքըս պըռափ մընա,**

**Ղարիքօթուն մի՛ք՝ ք'ի՛նի,
Ինձանա ծը՛գ խըրափ մընա [5(203)]:**

Որոշ խաղիկներում արծարծվել է պատերազմի թեման: Ծանր են պատերազմի թողած վերքերը, անտեր են մնացել արտն ու տունը, աղջիկներն ու կանայք, և հերոսուհին երագում է միմիայն խաղաղություն.

**Սխնիգ՛, կընէգ՛ լօխ անմարթ,
Մընաց անդար փօն նան արփ,
Օր նան քըշէր հօքսէն մաչիւն,
Կընանէք՛ը՝ փըղամարթ [5(9)]:**

**Մէխի ըն, խը՛ղճ ըն բալէք՛ը,
Ղաշմնգ՛, նախշուն բալէք՛ը,
Աշխարքըս խաղաղ ինի,
Պակաս չի՛նի հաց նան յէրքը [5(146)]:**

Կան նաև խրատական և խոհափիլիսոփայական խաղիկներ, որտեղ ներկայացվում է աշխարհի անցողիկությունը, մարդկանց ազահությունը, կարճամտությունը, պախարակվում անբարոյականությունը, չգրված սուրբ օրենքների ոտնահարումը.

**Ընասնէն աշկը միշտ ծակ ա,
Ամէն օր էլ փուրըթակ ա,
Էն աշխարքը պէն չի փանէլ,
Մարթը խը՛լքալ հնլմն խակ ա [5(61)]:**

**Նալը քըցիմ քըթօցը,
Յէր կի՛նի գընգօցը,
Յը՛ս փը՛սալ չըմ, թա նի մըննէ
Մարթ ուրմն քէնուն ծօցը [5(179)]:**

Քնարական բանահյուսության՝ մեր կողմից գրառված մյուս ժանրերի նյութերը հիմնականում առանձին անհատների կողմից հորինված ստեղծագործություններ են, որոնք լայն տարածում չեն ստացել:

Բանահյուսության մեջ իրենց դիպուկ արտահայտությամբ առանձնանում են ասույթաբանական բանահյուսության ժանրերը:

Արցախյան առած-ասացվածքներն ուղղակի եւ փոխաբերական իմաստ ունեցող կարճ ու պատկերավոր ասույթներ ու դատողություններ են, որոնցում կյանքի տարբեր երևույթներ բնութագրվում են սրամտորեն ու կատարյալ ամբողջականությամբ: Դրանց

մեջ արտահայտված են բազմաթիվ ու բազմաբնույթ երևույթներ: Առանձին խումբ են կազմում այն ստեղծագործությունները, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի արցախյան հատվածի ապրած միջավայրը, բնավորության գծերը, կենսական պայմանները, քաղաքական կյանքը պատմական տարբեր ժամանակաշրջաններում: Դարեր շարունակ արցախահայությունը կենաց ու մահվան պայքար է մղել օտար զավթիչների դեմ՝ հաճախ ստիպված լինելով դիմելու հարկադրական տեղաշարժերի: Դրա վառ արտահայտությունն է **«Ալին քրճապ, Վանին յրճալ»** առածը, որի ուղղակի իմաստը արտահայտում է օտար նվաճողների՝ իրար փոխարինելը: Բազում դարերի կենսափորձով արցախցին հանգել է մի հետևության. թշնամու բարեկամությունը կեղծ է և ցանկացած պահի կարող է վնասել, պետք է զգույշ լինել. **«Թօրքէն նրհրճի հրնգրթօրուն ըրա՛, մրհակը ծը՛րքարս վեր մէ՛լ փինիլ»**: Թշնամին անողորք է, բայց և վախկոտ, նրան պետք է պատժել, միայն այդ դեպքում նա կարող է հաշվի նստել քեզ հետ. **«Թօրքէն չրքերանը քակիս վէջ, աշնա չի փրճնալ»**:

Սոցիալ-քաղաքական կյանքն արտացոլող առած-ասացվածքների մեջ առանձնանում են պանդխտության վերաբերյալ եղած ստեղծագործությունները, որտեղ ներկայացվում է հայրենիքից ու ընտանիքից հեռացած պանդուխտի ծանր ողբերգությունը. **«Ղարիբը օրիշին վրճումը մինակ ըրպասունը կըթօղնէ»**, **«Ղարիբին հացը լըղէ յա, ճնլըր՝ աղու»**, **«Ղարիբին հրճի մին օրը մին փարէ յա»**, **«Ղարիբին օշը միշտ դըրբի կինի»**, **«Ղարիբ մարթին վէզը ծօռ կինի»**, **«Ղարիբին հանճիսպը ստանց քար կինի»**: Սակայն, չնայած կյանքի ծանր պայմաններին, արցախցին հռետես չէ, չկորցնելով պայծառ ապագայի հեռանկարն ու հույսը՝ նա պայքարում է իր անկախության ու ազատության համար, անդադրում աշխատում. **«Հայը ումէղալ ա սպրում»**, **«Հայը մինչրճի նրդանա վէջ, յրճի չի փրճնալ»**:

Մի շարք բանաձեւերում ներկայացվում է հայրենի բնաշխարհը՝ լեռներն ու ձորերը, գետերն ու առուները, դաշտն ու արոտը, քարն ու հողը. **«Սարէն սրվրճի կավը սարումը կըծրնէ»**, **«Սարերը ըրուփային փրճի ծծրերըն ըն ըրօփում»**, **«Սարը հիշկան պէցնլըր ինի, կրիսէ ծնլըր էնքան շար կինի»**, **«Հանդերը շօռ ածած հացը քախծըր կինի»**, **«Ըրասխէն դրաղէն վեր էշ քնվիլ փա, մօխերը ինչանալ կըփա»**, **«Քուռըն էլ ա մմրդ իլմն, մրհէնճ՛ ա նըմըրդացալ»**, **«Քուռէն դմրդը Քուռան վարար ա»**:

Հատկանշական է, որ առած-ասացվածքներում տեղ են գտել հիմնականում այն բույսերն ու կենդանիները, որոնք աճում ու ապրում են Արցախի հողում և արցախցու կյանքում կարևոր դեր ունեն. **«Խաղուն վեր հրասալ, ծըմէրուկէն մրհալ քըցծղ չինիլ»**, **«Ղարաքաղցունը օթըն ա, քօթը, քիյին կօթը»**, **«Նըղպօրէ ծառէն քարալ փրվօղ շար կինի»**, **«Արփը վեր նըմըրդօրուն անէ, կավը փօնը կըպահէ»**, **«Էշը վեր կա, վրճիկէ յա քըրքում»**, **«Յրճանը քաշմծը մինակ ընրմն կաշին ա գ՛նլընմ»**, **«Շօնը վեր շօն ա, ընրմն քըզնըմրդըր քնմնլգ ա պահում»**, **«Կ՛նլըր ընգալ վրխճարէն սնլրմն, վա՛յ մինափար»**, **«Օխճան էլ ըն ճար շինմն»**:

Առած-ասացվածքները հստակորեն ներկայացնում են արցախցու կյանքի պատկերը, հասարակական կենցաղը, սովորույթներն ու հայացքները: Դարեր շարունակ աշխատավոր գյուղացին ճնշվել ու հարստահարվել է ոչ միայն օտար զավթիչների կողմից, այլև իր ազգային տերերից՝ քաջ գիտակցելով հարուստների և աղքատների անհավասարությունը. **«Ապրրէլ կա՛ յրճի ա, սպրրէլ էլ կա՛ լըղէ յա»**, **«Ապրրէլ կա՛ արծաթ ա, սպրրէլ կա՛ արկաթ ա»**, **«Ապրրէլ կա՛ մրռնէլա փիս ա»**, **«Հարուստը ջուրէն ա**

քրիստմ, ք'մսիրը՝ ծույնանը» «Հարուստը ք'ըսիրին աշխադանքավը կասրըէ՝ ք'ըսիրին միննմնքու փակէ թուղէլայ, ընդրոս վիզին կօռ փինիլմն»:

Բազմաթիվ ստեղծագործություններում արտացոլված են կենցաղային հարաբերությունները: Հատկապես ակնառու են արյունակցական-ազգակցական և ընտանեկան հարաբերություններն ու դրանց հետ առնչվող երևույթները ներկայացնող առած-ասացվածքները, որտեղ ժողովուրդը տվել է ծնողի ու զավակի, եղբոր ու քրոջ, ամուսնու ու կնոջ, հարսի ու կեսրոջ բնութագիրը՝ բացահայտելով նրանց միջև եղած փոխհարաբերությունը. «Մօրը աշկէն խօխան մըծանալ չի», «Մօրը անէսկը փրոնէլ չի, ծրծէն կաթնէն փէս կըղնէ», «Մօրը մին օրթնանքը օխար վըրթըրէդու անէսկ կը քանդի», «Մօրը բախարը ըխճըկանը կ'օրկուսը կինի», «Հօրը-մօրան կըման ըշխարքունըս ամսէն հինջ կըրթթէնվա», «Հօրը-մօրը դադիրը չըգ'իօղը Ըսարուծէն դադիրը գ'իղմլ չի», «Ախճիգ'ը փնէսի պար ս», «Տըղան փանը սրթնընըն ս, ախճիգ'ը՝ նըխընընգ'մըր», «Քուրըն ասում ս՝ ախպեր օնիս, ախպերըն ասում ս՝ քուր չօնիս», «Ախպերը ախպօրը մը'ննէլը օգ'իլ չի, փիս սպրէլը կօգ'ի», «Կընգանը պաղէվը մարթը կըպահէ, մարթինը կընէգ'ը», «Մարթինը կընէգ'ըն ս, կընգանէնը՝ մարթը», «Հարթըն պըլթօրն ըրալ, ըսկը'սօրը քը'թը դըղէցէն», «Ըսկը'սուրը ընգուճէն մինը քառ կըպահէ» և այլն:

Մեծ տեղ ունեն նաեւ մարդու անճանակն ու հասարակական հատկություններին, բնավորությանն ու խառնվածքին նվիրված բանաձևերը, որոնցում ամենից առաջ վեր են հանվում մարդու դրական հատկանիշները: Ժողովուրդը խորհուրդ է տալիս գործ ունենալ բանիմաց, խելոք, անշահախնդիր մարդկանց հետ. «Խէլիճը մարթին նըխը'ս քար կըրէ, կ'իծին նըխը'ս փըլալ մէ'լ օրէլ», «Խէլիճը դիւշմնըն կէս պարիկամ ս»: Այլ ստեղծագործություններում ներկայացվում են մարդու բացասական հատկությունները՝ ազահությունը, շահամոլությունը, անբարոյականությունը, գողությունը և այլն. «Տմնճը՝ ինճ, խընճըր՝ ինճ, շըվթմլիճ վէլ ս ըշփմնըս փամ», «Միճին փօնը նի կացայ, էն մինը կըրալէն յըրա խըրալալալ ըրալ», «Ղըխպին օխար լիճըն կինի», «Փօղը սաից՝ հմըր օնէ, իմըն ս»:

Իմաստուն ու խորն են արցախցու դատողություններն աշխատանքի ու հասարակության՝ ժողովրդի մասին: Պետք է գնահատել աշխատանքը («Ըշխրդանքէն կ'ինը գ'իղծըր մարթինըն էլ կըգ'իղմ»), որը պահանջում է մեծ դժվարություններ («Աշխադանքը էն ս շանը վը'նունը, հու փըղա յա, կըծէ փնէս օնէ»): Աշխատանքը ժողովրդի զբաղմունքն է, ժողովուրդն է աշխարհի բոլոր բարիքների ստեղծողը, և մարդը միայն հասարակության մեջ կարող է հաջողության հասնել. «Ժըղուվորթան փնէս կ'ըվօղէն յա՛ վէզը կըկօրրէ, յա՛ պօգ'ը»:

Մի շարք ստեղծագործություններում արտացոլված է Աստծո կերպարը: Ժողովուրդը հավատում է ամենակարողի գործյանը, ապավինում նրա արդարադատությանը, բարին ընդունելու ու չարը պատժելու հատկությանը. «Ասարուծ ընօղէն ս փամ», «Ասարուծ հաց փըվօղէն հացը քօլ-քօլ ս անում», «Ասարուծ հըրօփօղ կըվէն պօգ'եր չի փամ», «Ասարուծ էրկու ծը'րքալ ս փամ», «Ասարուծ դմըրը փըվալ ս՝ դմընմնըն էլ նըխը'սը»: Սակայն ոչ միշտ է Աստված արդար, և երբեմն նա էլ է թույլ տալիս անարդարություններ. «Ասարուծ վէր Ասարուծ ս, էլիս դաթունը ծօռ պէնէր ս անում», «Ասարուծ ը'սվէն փանում ս, փիսին՝ քօղում», «Ասարուծ մինին յը'ղում ս, մինին՝ դաղում»: Ահա թե ինչու արցախցին խորհուրդ է տալիս երկնային տիրոջը. «Ասարուծ,

բա կարում չու մը՞զ պահիս, քըշա՛ց՝ մունք ք՛ր՞զ ճըղպորու մաչու նըման պահինք՛»:

Համառ ու արդար է դարաբաղցին, կողքահաստ, խոսքը երեսին ասող, նա չի սիրում շողոքորթել, ասում է այն, ինչ մտածում է, անկախ նրանից՝ դա վիրավորակա՞ն, թե՞ հաճելի կլինի դիմացիին. **«Ղարաբաղէն ըստրդաւ-ընդրդաւ չի ընգընում, խօսիք ք՛մամն՝ յա ասում»:** Ահա թե ինչու նրա խոսքը հաճախ է համեմվում անեծքներով, օրհնանքներով եւ բարեմաղթանքներով, որոնց ամենամահին և տարածված ըմբռնումը դրանց գերբնական ուժի հավատն է, որի համաձայն՝ անպայման իրագործվում են դրանցում արտահայտված ցանկությունները: Այդ են վկայում առայսօր պատմվող ավանդությունների, զրույցների, հեքիաթների և այլ ժանրերի ստեղծագործություններում տեղ գտած դիպվածները, որոնցում առանձնապես շեշտվում է Աստծո անեծքի և օրհնանքի ազդեցության զորությունը: Իրականություն են դառնում նաև հոր, մոր, կեսուրի, հարսի, աղքատ մարդու անեծքներն ու օրհնանքները, իսկ չբեր կանանց անեծքներից զգուշանում են բոլորը. **«Սօնգըզ կընգանը անէսիը փըռնօղ կինի»:**

Անեծքները, օրհնանքներն ու բարեմաղթանքներն ամենից առաջ մենախոսություններ են, որոնք արտահայտվում են խոսողի կողմից, և որտեղ խոսակցի ներկայությունն ու խոսքը ամենևին էլ պարտադիր չէ: Դրանց մեջ պարզապես խոսողը իր ցանկությունն է ուղղում խոսակցին՝ լավ թե վատ, բարի թե չար, և այդ ցանկությունը, կախված լինելով խոսողի կամքից, ի վերջո արդյունք է արտաքին որոշ դրդապատճառների: Տվյալ դեպքում խոսակցից, նախքան անեծքի կամ օրհնանքի ենթարկվելը, խոսողի հանդեպ կատարում է որևէ վատ կամ լավ արարք, որից ելնելով էլ՝ խոսողը նրան է ուղղում իր անեծքը կամ օրհնանքը: Կախված այն հանգամանքից, թե հոգեկան ինչպիսի գրգռվածության է հասցրել խոսողին խոսակցի արարքը, նույնքան չարությամբ կամ բարությանմբ է նա արտահայտում իր անեծքներն ու օրհնանքները: Համեմատության դեպքում դժվար չէ որոշել **«Աղու օպիս»**, **«Փավուր մընաս»**, **«Աչկըպ հը՛ռս»**, **«Ապրիս փու»**, **«Պէրանըր քախձըր կէնս»**, **«Շուրըվէր ինիս»** եւ **«Քալապ քաղիմ»**, **«Ազկալ-ծուպալ ճինջիլիք՛»**, **«Մազ՛էրըպ փըխարակէն սանդըրիմ»**, **«Ծառըպ ծաղկէ սաքիէր յօր օնէ»**, **«Օխըր հարթնալ սուփրա-սէղան նըսրիս»**, **«Ասրուծ ք՛ր՞զ քէվէր փա, քըռչըցընէ»** բանաձեւերի հեղինակների գրգռվածության աստիճանը: Այսպես, երբ մեկը հակաճառում է կամ ցուցաբերում իր խստասրտությունը, դիմելով նրան՝ երբեմն նույնիսկ ընկերաբար հանդիմանում են **«Հասպ կօխկըպ կըփըրվէ»**, **«Ասրուծ կըփըրըցընէ շան խասայաթըր»** և այլ անեծքներով, որոնք կարելի է որակել նաև խրատական հանդիմանություններ, մինչդեռ նենգ ու խարդախ արարքը արժանանում է բոլոր սահմաններն անցնող՝ **«Օխըր քըրժանէ**, հայիոյանքների ու անեծքների, որոնց հեղինակները ամեն կերպ ձգտում են տալ արարքին համապատասխան և նույնիսկ գերազանցող պատասխաններ. **«Ըռնըճիճը՛խ փը՛ռնաս»**, **«Մէլիիպ յըրս պըպըլ՛պապալ՛ անիմ»**, **«Մադարըր փափուըր փինիմ»**, **«Տըփէրան փուշի հըվաքիս»** և այլն: Ասել է թե՛՝ յուրաքանչյուր անեծք իր իմաստով պայմանավորված է անիծվողի՝ տվյալ պահի որոշակի վարքագծով, խոսքով, արարքով, վերաբերմունքով:

Ըստ էության լինելով պատժի ցանկություններ՝ անեծքները իմաստային տիպաբաժանման դեպքում վերածվում են պատժի ցանկության տեսակների, որոնք չորսն են՝ մարմնական պատիժների ցանկություն, սոցիալ-քաղաքացիական պատիժների ցան-

կություն, բարոյամարմնական պատիժների ցանկություն, հոգեկան պատիժների ցանկություն⁴⁶: Արցախյան անեծքներում ավելի հաճախ արտահայտվում է մարմնական պատիժների ցանկությունը: Ինչ խոսք, որ ամենախիստ պատիժը անիծվողին մահվան դատապարտելն է: Անիծողը փափագում է անիծվողի բնական մահով մեռնելը՝ *«Քօն ինիս, յէր չի կէնաս»*, սպանվելը՝ *«Պ'նլլի՞նիսարավ փրէ՞ննաս»*, մանուկ կամ ծաղկուն հասակում մեռնելը՝ *«Վէ՛չ մըծանաս, վէ՛չ ծաղկիս»*, հարազատների մահը՝ *«Մարթրդ քաղիմ»*, *«Ազիզրդ մրէ՞ննէ»*, *«Բայար չծր-չուրանս»*: Բազմաթիվ անեծքներում արտահայտվում է անիծվողին հիվանդությամբ, մարմնական ցավերով, կուրացած, անդամալուծված, մարմնական տանջանքների և փորձանքների ենթարկված տեսնելու տենչը՝ *«Չմնը պրկէփ վէր կ'ս»*, *«Քուռանաս, չուլիանաս, քրռանաս»*, *«Յմբ'ը չըլսիիս, շէմբաշէն շօռ կ'ս»*, *«Օխձը կրծէ քրէ՛գ»*:

Սոցիալ-քաղաքացիական անեծքներում ներկայացվում են հակառակորդի ունեզրկման և ծայրահեղ աղքատացման, ինչպես նաև անտեր, անընտանիք, անսերունդ մնալու գաղափարները, որոնք կարևոր նախապայմաններ են մարդկության գոյատևման համար՝ *«Տօնրդ էրվի, պրրիշակ փրէ՞ննա»*, *«Տանրդ խէրըն ա բարաք'մբը կրփրրվէ»*, *«Մինրդ էրկու չրփրէ՞ննա»*, *«Սը'րմրդ կրփրրվէ»*, *«Պէժիք'ըր կապած մըննա»*, *«Օզ'օղ փրէ՞ննաս ըղնիս փրռները, մին կուտոր հաց չի քրքէնաս»*, *«Անդար մըննաս»*, *«Մըրքամը'ռ մըննաս»*, *«Խուխու իրը'ս չի փրէ՞սնաս»*:

Բարոյամարմնական պատիժներ ակնկալող անեծքների նպատակն է անիծողին ենթարկել բարոյական և մարմնական պատիժների: Անիծողը փափագում է տեսնել նրան աստվածային պատժի ենթարկված՝ անհիշատակ ու անմուրազ, անպատված, հարազատների հիշատակը պղծված՝ *«Ասպուծ դուվանրդ անէ»*, *«Յէռնայիը քրէ՛գ պապժի»*, *«Ասպուծ անումրդ կրփրրէ»*, *«Բէյնուրազ մըննաս»*, *«Սը'ռայրդ շրները քաշ-քաշ անին»*, *«Սը'վ վրէ՞ղէն արժան չի փրէ՞ննաս»*, *«Խազ'-խայրառակ փրէ՞ննաս»*:

Հոգեկան պատժի անեծքները ընդգրկում են անիծվողին կամեցվող հոգեկան տանջանքների, տառապանքների ցանկություններ՝ հոգու կորստյան և տանջանքի, տխրության և վշտի, սգո և սգավորության՝ *«Չրհմնդմնը ք'ինիս»*, *«Հուք'իս ըրրիսավրդ փնիս կ'ս»*, *«Օրախ օր չի փրէ՞սնաս»*, *«Աշըղ փրէ՞ննաս, ըղնիս չծլէրը»*, *«Շուվանը ըղնէ փօնրդ»*:

Օրհնանքները եւ բարեմաղթանքներն իրենց արծարծած գաղափարներով բաժանվում են երկու խմբի՝ ապահովության և պահպանության⁴⁷:

Առաջին խմբի օրհնանքներում եւ բարեմաղթանքներում հիմնականը օրհնվող անձի կամ նրա մերձավորների վիճակը մեկ այլով՝ ավելի լավով փոփոխելու ապահովության փափագն է, իսկ երկրորդ խմբի օրհնանքներում՝ տվյալ վիճակի պահպանության ապահովության:

Արցախի բանահյուսության մեջ և՛ քանակով, և՛ բազմազանությամբ աչքի են ընկնում ապահովության բնաձևերը, որտեղ խոսողը խոսակցին ցանկանում է երկար ու ապահով, բարեկեցիկ կյանք, հաջողություն, հռչակ, իղձերի իրականացում, բարեհաջող ամուսնություն, երջանկություն ու սեր, ողորմածություն, հոգեկան հանգիստ, օջախի

46. Հարությունյան Ս., *Անեծքի եւ օրհնակի ժանրը հայ բանահյուսության մեջ*, Երեւան, 1975, էջ 199

47. Նույնը, էջ 249

շենացում, բազմազավակ ընտանիք՝ «*Ումբուրդը էրկան ինի*», «*Ծրժրքը սիպրակ մրրբավրդ անց կըցընիս*», «*Տաշտը միշտ լիզ՛ր ինի*», «*Անիս՝ օտիս, անիս վէջ՝ էլիս օտիս*», «*Մինը հրզգար փր՛ննա*», «*Տօնը շէն կէնա*», «*Ընրմավոր փր՛ննա*», «*Ըշտը՛դ կօխիս՝ կընանչի*», «*Ասրուծ մուրազը կըղարէ*», «*Պարավ կընընչի՛ մըրմիւրը կասիս*», «*Մին պէրցու ծըրանաք*», «*Ըղօրմի քա հօր*», «*Ասրուծ համփէրուքին փա*», «*Օջաղը շէն կէնա*», «*Թուռնափար, ծուռնափար փր՛ննա*»:

Պահպանության օրհնանքների մեջ օրհնվող անձի կամ նրա հարազատների կյանքի, ունեցվածքի պահպանման գործի, չարից ու փորձանքից ազատ լինելու, Աստծո, սրբերի, Քրիստոսի, հրեշտակների հովանավորությունն վայելելու գաղափարների արտահայտումն է՝ «*Ասրուծ պահէ քր՛ննա*», «*Ասրուծ պահէ մաղարը*», «*Ըսրուծէն ծր՛քը փանըր յըրա ինի*», «*Շառա, փուրցանքա հր՛նէ ինիս*», «*Վր՛նըր քարու նի չի կիս*», «*Ասրուծ էզգանան կօխկէր ինի*», «*Նըհափակը դըվումըր ինի*»:

Հանելուկի (*պընգըր*) ժանրը ենթադրում է ավարտուն ու պարզ բանաձևեր, կուռ, հակիրճ շարադրանք, փոքր ծավալ՝ սեղմ ձևակերպումներով ներկայացնելով ժողովրդի զարգացման ընթացքը, նրա կացութեանը, աշխարհայացքը, բարոյահոգեբանական առանձնահատկությունները: Հանելուկները, չնայած իրենց տարբեր դրսևորումներին, համախմբվում են որոշակի ոճական ձևի մեջ, որի պարզագույն տարբերակը հարցն է, որը պահանջում է պատասխան: Արցախյան հանելուկները պահպանել են հարցադրման եղանակը, որը դրսևորվում է մի շարք հարցական բանաձևերի ձևով՝ *Էն հինչըն ա՞, Էն հինչ պէն ա՞, Էն հու վա՞* և այլն: Ամեն մի հանելուկ բաղկացած է հանելուկի բուն նշանակությունից և արտաքին պատկերից, որոնք որոշակիության իմաստով տարբերվում են իրարից, չնայած ունեն մաս ներքին ինչ-որ կապ: Գուշակողի խնդիրն է բացահայտել իրենից անկախ գոյություն ունեցող նմանությունները, ինչը հենց հանելուկի լուծումն է: Հանելուկային բուն նշանակության և արտաքին պատկերի կերպավորման ամենատարածված եղանակը այլաբանությունն է, որը Ս.Հարությունյանը բաժանել է հետևյալ տեսակների⁴⁸.

ա) Այլաբանություն ըստ արտաքին նմանության, երբ արտաքին պատկերի և բուն նշանակության միջև նկատվում է արտաքին որևէ ընդհանուր գիծ՝ «*Ծին քինաց, քննք՛ր մընաց*» (գետ և կամուրջ): Այստեղ այդ արտաքին նմանությունը շարժման հանգամանքն է, և գետի հոսելու հատկանիշը փոխաբերվել է գնալու հետ:

բ) Այլաբանություն ըստ գործառական նմանության, երբ հանելուկային և այլաբանական առարկաները համընկնում են որևէ հատկությամբ, գործառությամբ, ինչպես՝ «*Ա՛լ յր՛զնը, չա՛լ յր՛զնը, հիշքան պէռնիմ փա՛ր յր՛զնը*» (գդալ), որտեղ գդալը այլաբանվել է եզան հետ իր մի բան կրելու, տանելու հատկության պատճառով:

գ) Այլաբանություն ըստ հատկանիշների հակաբնական գուգորդման, երբ արտաքին աշխարհի առարկաների գծերն ու հատկանիշները դասավորվում են այնպես, որ այլաբանական պատկերը վեր է ածվում անիրական, արտասովոր, ոչ տրամաբանական երևույթի կամ հասկացողության՝ «*Մըսէ շամփուր, ըրկաքէ խըրաված*» (մատ և մատանի) «*Ծիք՛ ըմ փամ, ծիք՛ կըրճանում ա*» (ծխախոտ):

Սրանցից էապես տարբերվում է հանելուկների մի շարք, որտեղ բուն նշանակության և արտաքին պատկերի միջև որևէ տարբերություն չկա, և հանելուկի երևույթն ու

48. Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, էջ 16

էությունը համընկնում են իրար: Դրանք իրենք անվանում են իրենց լուծումը. «**Կա՛րէս, կա՛րէս, անըմբ փամ՝ գ՛իղմնս վէչ**» (բահ, քի), «**Տիլը՛ր քաշ ա, փիվէր քաշ ա**» (ագռավ (քաշ), «**Ա՛լազ, փա՛լազ, անըմբ փամ՝ չըգ՛իղմնս**» (փալաս):

Ընդհանուր առմամբ, հանելուկներում առարկաների բազմակողմանի բնութագրումներ չեն տրվում, և հաշվի է առնվում առարկայի ոչ էական, երկրորդական նշանակություն ունեցող որևէ կողմը կամ հատկանիշը: Հենց դա է պատճառը, որ նույն առարկայի վերաբերյալ կազմվել են տարբեր հանելուկներ, որոնցից յուրաքանչյուրում հիմք է ընդունվել այս կամ այն հատկությունը. օրինակ՝ «**Մին պուլիգ՝ մաչին էրկու ջուռաս ճիւր**», «**Հիւլլծր ս, պիլլծր ս, մննգ օնէ, ծակ չօնէ**», «**Մին փօն օնինք՝ պապէրը արծաթ, մաչը վը՛սկէ, վէր քընդէցէ, էլ շինվիլ չի**» ստեղծագործությունները բնութագրում են ձուն, ընդ որում՝ առաջինի մեջ նկատի է առնվել սպիտակուցի և դեղնուցի առկայությունը, երկրորդի մեջ՝ ձվի՝ անցք չունենալը, բայց նրանից մազավորի՝ ճտի առաջանալը, երրորդի մեջ՝ ձվի կեղևի արծաթագույն, իսկ դեղնուցի ոսկեգույն լինելու երևույթը: Դրան հակառակ՝ արցախցին ստեղծել է հանելուկներ, որոնք կարող են ասվել տարբեր, նույնիսկ սեռով, տեսակով իրարից հեռու առարկաների վերաբերյալ: Դրանք այնուամենայնիվ ունեն ինչ-որ ընդհանուր գիծ. «**Տիւսը՛ վը՛սկըռ, մաչը՛ մէս**» (կրիա, ընկույզ), «**Ալա՛լա, բալա՛լա, փար խա՛ղ ըրա, պէր կա՛խ ըրա**» (սագ, թառ, մաղ): Երբեմն հանդիպում են նաև բազմակի լուծման առարկաներ ունեցողներ, ինչպես. «**Մին թումբ փը՛ղ, թումբէն փակէն մին դիւզ փը՛ղ, դիւզին փակէն էրկու ծառ, ծառէն փակէն էրկու գ՛օլ, գ՛օլէն փակէն էրկու նօվ, նօվէն փակէն մին ճէղաց, ճըղացէն փակէն մին թումբ**» (գլուխ, ճակատ, հոնքեր, աչքեր, քիթ, բերան, դունչ):

Բազմազան ու բազմաբնույթ է արցախյան հանելուկների թեման: Հանելուկային առարկաների և բանաձևերի մեջ արծարծվել են արցախցուն շրջապատող բուսական և կենդանական աշխարհը, տնտեսական զբաղմունքները, երկրային ու երկնային մարմիններն ու երևույթները, այն, ինչ հնարավոր է տեսնել լսել, զգալ: Պատահական չէ, որ այս ժանրում առաջին հերթին արտացոլվել են գյուղատնտեսության տարբեր բնագավառներ՝ կապված երկրի տնտեսական բնույթի հետ: Արցախցու համար կարևոր բնագավառ է երկրագործությունը, որ հնուց ի վեր հանդիսացել է հիմնական զբաղմունքներից առաջնայինը: Այսպես՝ «**Մին արփ օնիմ՝ վարվէլ չի, մաչի քարէրը հրմբարփէլ չի**» (երկինք և աստղեր) հանելուկի մեջ ժողովուրդը երկնքի անծայրածիր լինելը կապել է մեծ հողատարածության, իսկ աստղերի առատությունը՝ արցախյան հողերում այնքան տարածված քարերի հետ: Կամի և եզների նկարագրությունն է տրված «**Կըլծիսը՛ փմնը, փակը՛ քար, օք վըննանէ էրկու սար**» ստեղծագործությունում: Սովոր թիվ են կազմում հողագործական տարբեր գործիքների նվիրված հանելուկները. «**Հիլի փամ, հիլի-միլի փամ, փափէն փակավը ծիլի-միլի փամ**» (գութան), «**Մին կուրանէ, հնիրմըր ըռխանէ, կօփէ, կօփէ, էլիա լըղար**» (մանգաղ), «**Մին ջանավար կա՛ հիշկան ըրը՛խըն ընք փամ, քուշփանում չի**» (ջրաղաց):

Տարածված են նաև այգեգործությանը և բանջարաբուծությանը նվիրված ստեղծագործությունները, որտեղ բնութագրվում են բազմաթիվ մրգեր, պտուղներ, բանջարեղեններ, ինչպիսիք են ընկույզը, նուռը, մասուրը, մոշը, մորին, հոնը, թութը, խաղողը, դդումը, ձմերուկը, բողկը, զազարը, սոխը, եգիպտացորենը. «**Տիւսը՛ աղու, մաչը՛ քախծըր**» (ընկույզ), «**Շծրերը՛ հանիմ, նըսփիմ լնց ինիմ**» (սոխ), «**Քօուրփ թուլա՛ լըվաշավ պէռնած**» (եգիպտացորեն), «**Հմրը՛ դիք՛, մարը՛ կը՛ռ, խօխան խէլմնը, թօռը՛ պը՛լ**» (խեչմար, վազ, խաղող, գինի):

Երկրագործությանը զուգընթաց արցախցին զբաղվել է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, շերամապահությամբ՝ ստեղծելով տասնյակ հանելուկներ, որտեղ որպես հանելուկային առարկա կամ արտաքին պատկեր հանդես են գալիս եզր, կովը, գոմեշը, էշը, ոչխարը, այծը, ուղտը, հավը, շերամորդը, մեղուն. **«Սը՛վ յը՛զնը լուխը՛ցէն, խօխէնք՛ը ուրխացէն»** (բով և հաց), **«Ինք՛ը՝ սարէն յըրս, սարը՛ մաշկէն յըրս»** (ուղտ), **«Մէզ միներն օնիներ՛ մըռնէյիս ինք՛ը իւրմն հմնգ՛իսար կըրորում ս»** (շերամորդ) եւ այլն:

Որոշ պատումներում արձագանք են գտել Արցախում տարածված արհեստները: Օրինակ՝ **«Կանանչ հինիս, սպիտակ քիլ փամ, կ'մըմնը կ'օրծիս, քօխ կըրորիս»** (մոշ), **«Հէնգ՛ ախպէր՛ միներ քար ս կըրում, մը՛կալը պատ ըն շարում»** (գուլպայի ճաղեր) հանելուկներից առաջինում տրվում է ոստայնագործության, իսկ երկրորդում՝ որմնադրության ընդհանուր նկարագրությունը: Առավել հաճախակի են հանդիպում կենցաղում գործածվող տարբեր առարկաներ՝ բով, մաղ, շերեփ, գդալ, ճախարակ, կուժ, ասեղ, գուլպա, սանդեղ, փափախ և այլն:

Հանելուկային առարկա են դարձել նաև երկինքը, երկնային մարմինները, բնության տարբեր երևույթները՝ աստղերը, ամպը, որոտը, անձրևը, կարկուտը, կայծակը, ծիածանը, ձյունը, քամին: Առավել ընդգծվում են արևն ու լուսինը, որոնք ներկայանում են մե՛րք քրոջ ու եղբոր, մե՛րք հով ու տաք բովի, մե՛րք անծայրածիր արտում վազվզող երկու կաքավների, մե՛րք է՛լ պղնձե կաթսայի մեջ դրված ձվերի տեսքով. Որոշ ստեղծագործություններում հանդես են գալիս ժամանակի միավորները. **«Մին ծառ օնիս՛ փրսնըրկու ճըղնանէ, ամնէն ճըղնանը իւրօսմնէն փիլը՛վ կէսը սիպտակ, կէսը սը՛վ»** (տարի, ամիսներ, օրեր), **«Ծըմը՛ռն ա՛ կ'արունքը պատէն, ամը՛ռն ա՛ կ'արունքը պատէն»** (գորգ), **«Սը՛վ կըժէ՛զը հնըրըն ի վեր քըցիս, քա մօր պօրպըն ի վեր քըցիս»** (գիշեր):

Արցախում լայն տարածում ունեն մականունները (**փօք սնում**): Գյուղերի ու քաղաքների մականուններն այս կամ այն բնակավայրին և նրա բնակիչներին հարևան բնակավայրերի բնակիչների կողմից տրված մականուններ են, որոնք ուղղակի կամ փոխաբերական իմաստով արտացոլում են նրանց հետ կապված զանազան հանգամանքներ: Մի շարք բանաձևերում ներկայացվում է տվյալ բնակավայրի դիրքը. **«Ծըմակում սպրոզող հրկուկվը՛ցէք՛»**, **«Ծծրում սպրոզող պիլըրնը՛ցէք՛»**, **«Քարում կօրած ըռչըժուրը՛ցէք՛»**, **«Դիք՛ում փրոսօփող խիրխընը՛ցէք՛»**: Հաղործի շրջանի Մելիքաշեն (Միրիշկ՛ալու) գյուղը տեղադրված է բարձունքի վրա, և տարվա բոլոր եղանակներին քամին անպակաս է այդ տեղանքից, ինչը և հիմք է հանդիսացել **«Քամէ կօլ փրվող միրիշկ՛ուլը՛ցէք՛»** մականվան համար: Նույն շրջանի Սարէն շէն (Շաղախ) գյուղը սարի վրա է՝ այնքան բարձր, որ գյուղացիները վերևից են տեսնում ագռավի (քաշ) թռիչքը (**«Քաշէն փօրէն հասըրս սարէն-շինը՛ցէք՛»**), իսկ Թաղասեռ գյուղը, ընդհակառակը, տեղակայված է սարի ստորոտում (**«Քաշէն մաշկէն հասըրս քրխարը՛ցէք՛»**):

Առանձին խումբ են կազմում այն բանաձևերը, որտեղ ներկայացվում է տվյալ բնակավայրում տարածված արհեստը՝ **«Դմրգի սըղնըխը՛ցէք՛»**, **«Պնըրնը կապող դըվըխընը՛ցէք՛»**, **«Մագ կ'իզող հիրիըրը՛ցէք՛»**, տնայնագործական կամ երկրագործական զբաղմունքը՝ **«Ք՛ծմնը շիւօղ քըղըրը՛ցէք՛»**, **«Թրխմըչար քիջմրօղ գիշըցէք՛»**, **«Մօրալ կապող խըժըպըրը՛ցէք՛»**, **«Լ՛ալ կ'ունաշ լըծօղ սէյիշիննցէք՛»**:

Բազմաթիվ մականունների համար հիմք են հանդիսացել բնակիչների բացասական հատկանիշները. անհյուրընկալ լինելը՝ «**Հացում բոն քրրրհունջը՛ցեք՝**», «**Ղօնադ խրո՛ւ գ՛րվօղ կրսրսրսրեցիք՝**», «**Հննննն օր կա, յր՛ր ընցեր, սէյդիչինննցեք՝**», ժլատությունը՝ «**Ըսկրսոյ նօրչիննցեք՝**», «**Յօրէնը ծախօղ, կ՛ննրի օրօղ նուրուկ՛ը-ղը՛ցեք՝**» խենթությունը՝ «**Դննի կալխօզաշիննցեք՝**», «**Պը՛լ դրզղըղը՛ցեք՝**» «**Պըլըննիւ-սրրի խրնսկըցեք՝**» զազրախոտությունը՝ «**Լակ-լակ խօսօղ խրնրքըղը՛ցեք՝**» «**Վիրննննչ սրվօղ խրնրծըրիս՛ցեք՝**» անլըջությունը՝ «**Սննիլիգ՛ սուսըցեք՝**» միամտությունը՝ «**Դօնգի նիսնգըցեք՝**», «**Ք՛ննի խրնուշինըկը՛ցեք՝**», հայհոյասիրությունը՝ «**Ուշունցապու ըշընը՛ցեք՝**», կովարար լինելը՝ «**Կըովարար ճիրըկուսը՛ցեք՝**» և այլն:

Որոշ մականուններում էլ ծաղրվում են խոսվածքային առանձնահատկությունները՝ «**Նա՛ սսօղ ինզինիսը՛ցեք՝**», «**Ռ-ուսօվուր խօսօղ կ՛ուրըքըղեցիք՝**», այս կամ այն ուտելիքի հանդեպ հակում ունենալը՝ «**Կըլօլակ օրօղ շուշըցեք՝**», «**Շիծօր օրօղ չայլուլեցիք՝**», «**Գ՛նննն օրօղ բըղըլըրըթը՛ցեք՝**», «**Մարաղ օրօղ վընըրըցեք՝**», մարմնական թերությունները՝ «**Փուրընն զընծօղ մըղըվուզեցիք՝**», իսկ «**Խօյլու մէկրիչի-ննցեք՝**» մականունը վկայում է Ասկերանի շրջանի Սեհոխեն գյուղի բնակիչների նախնիների՝ Պարսկաստանի Խոյի գավառից գաղթած լինելը:

Ի տարբերություն գյուղերի եւ քաղաքների մականունների՝ մարդկանց մականունները տրվում են հիմնականում ոչ թե հարևան գյուղերի բնակիչների, այլ համագյուղացիների կողմից: Հիմք ընդունելով ստեղծման հանգամանքները՝ մարդկանց մականունները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ տարբեր խմբերի⁴⁹.

1. ֆիզիկական արտաքին հատկանիշներով պայմանավորված մականուններ՝ **Բալջօյ** (մեծ), **Բեղի** (թավ բեղեր ունեցող), **Գըղըլ** (կարճահասակ), **Դօյդաղ** (միհար և բարձրահասակ), **Չըռփի** (խոշորամարմին), **Ընչուղու** (երկարավիզ), **Թննի** (վտիտ), **Ճըրըռ** (թզուկ), **Քաչալ** (ճաղատ), **Քառ** (խուլ), **Քօռ** (կույր),

2. բնավորության տարբեր հատկանիշներով պայմանավորված մականուններ՝ **Աղվես** (խորամանկ), **Բըկիկ** (շատակեր), **Դօրրի** (բարի), **Դիլխօր** (տխտր), **Դըզըլ** (հիմար), **Բըսպրախօղ** (արագաշարժ), **Դենագօզ** (ամբոխավար), **Չըռըրըլծիս** (հանդուզն), **Ըսկրսոյ** (ժլատ), **Հննրիփ** (անգետ), **Մըսնրս** (մսմսացնող), **Մուրպառ** (խարդախ), **Պը՛լ** (չարածճի), **Յակասր** (խստաբարո), **Քածի** (վախկոտ, կնամարդի), **Քըչէղակ** (թեթևոլիկ ու շատախոս), **Օրասպրիկ** (սուտասան),

3. մասնագիտություններով կամ դրանց հետ կապված աշխատանքային գործիքներով և տարբեր առարկաներով պայմանավորված մականուններ՝ **Բայթալ** (անասնաբույժ), **Բուխալսեր** (հաշվապահ), **Դնննրչի** (դարբին), **Դօխարուր** (բժիշկ), **Չալօղչի** (օղի թորող), **Խուզննն** (խոզապահ), **Ծննկունչի** (ձկնորս), **Ղասաբ** (մսավաճառ), **Ղըլէչի** (կլայեկագործ), **Շօփեր** (վարորդ), **Սանսիչի** (կոտրվածքներ բուժող), **Վնր-ծնրէղ** (ուսուցիչ), **Ճուվարան** (կողով գործողին), **Նամակ** (փոստատարին), **Շարքացան** (հողագործին), **Շճիկ** (էլեկտրացանցի աշխատողին), **Պնննն-մինուս** (մաթեմատիկայի ուսուցչին), **Թալաշա** (պատշարին), **Ժօլօթ** (թիթեղագործին), **Սապօր** (մսավաճառին), **Խալաղէլնիկ** (սառնարան նորոգողին), **Փօբս** (դարբին),

4. այս կամ այն երկրի կամ ազգի հետ որևէ կապ ունենալու, այդ ազգի ներկայացուցիչներին արտաքին տեսքով կամ բնավորության որևէ գծով նմանվելու և այլ

49. Յմնտ. Ղազիյան Ա., Լեռնային Ղարաբաղի բանախյուսությունը 1970-1973թթ. գրառումների հիման վրա, «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1974, N 4, էջ 240, Գալստյան Ա., Թեյլան Լ., Մականունների գործածությունը ժամանակակից հայերենում, «Զահուկյանական ընթերցումներ», Երեւան, 2006:

հանգամանքներով պայմանավորված մականուններ՝ **Ափրիկա** (թխադեմ լինելու համար), **Թօրթ** (ոչ մաքրակենցաղ լինելու համար), **Յապօն** (նեղ աչքեր ունենալու համար), **Մադրավան** (կինը մոլորվացի լինելու համար), **Նեմեց** (դաժան լինելու համար), **Քնլոդ** (անգութ լինելու համար), **Յեվրեյ** (ժլատ լինելու համար), **Փրբանայա** (Ֆրանսիայում բարեկամներ ունենալու համար),

5. պատմական տարբեր դեմքերի, նշանավոր մարդկանց ստեղծագործությունների ու կինոնկարների հերոսների հետ ունեցած տարբեր կարգի նմանություններով ու դիպվածներով պայմանավորված մականուններ՝ **Բենյամին** (երկար միտք ունենալու համար), **Գարբաշով** (ճաղատ գլխին խալ ունենալու համար), **Դեմոկրիտ** (գրագետ լինելու համար), **Կուրուզով** (մի աչքը կույր լինելու համար), **Մանթաշով** (ունևոր լինելու համար), **Պրլը-Պուդի** (զվարճախոս լինելու համար), **Պուշկին** (բանաստեղծություններ գրելու համար), **Բրեժնեվ** (Լեոնիդ Բրեժնևի հեռուստաճառերը մեկնաբանելու համար), **Բօրի** (հնդկական համանուն կինոհերոսուհու նման գեղեցիկ լինելու համար), **Մաուզի** (ճարպիկ լինելու համար), **Վերգո** (վախկոտ լինելու համար), **Պեյո** (ձկնորսությանը զբաղվելու համար), **Գիբօր** (խեղճ լինելու համար),

6. անունների աղավաղումներով, կրճատ արտասանությամբ կամ վերջնամասնիկների հավելումով կազմված մականուններ՝ **Աբի** (Աբրիկ), **Ազծի** (Ազնիվ), **Ավիս** (Ավետիս), **Ծնարի** (Աստվածատուր), **Ծնվի** (Արծվիկ), **Մապի** (Մարտիկ), **Մուրծ** (Մխիթար), **Տիկոզ** (Տիգրան), **Սոջի** (Սերգեյ), **Քանի** (Քնարիկ),

7. զանազան այլ հանգամանքներով և դիպվածներով պայմանավորված մականուններ՝ **Լրսիր** (որևէ բան պատմելիս անընդհատ խոսակցին հորդորում էր լսել), **Յեւ** (միշտ գովում էր իրեն), **Յերէսնուիրը՛ք** (պատերազմի ժամանակ՝ որպես հրամանատար, այդ ծածկանունը ունենալու համար), **Հօպ** (որևէ բան անելիս շարունակ արտասանում էր այդ բառը), **Քնլմն** (ոչ տեղացի՝ եկվոր, լինելու համար), **Գալոլի** (բոլոր տղամարդկանց այդպես էր դիմում), **Չանեն մապաղ** (հաճախ էր խոսքը ընդմիջում այդ կապակցությամբ), **Չօրեց** (տունը կառուցել էր ձորի պոնկին):

Բազմաթիվ մականուններ էլ պայմանավորված չեն որևէ հանգամանքով և որևէ իմաստ չեն արտահայտում՝ **Ազնօ**, **Բալլար**, **Գարաջիդ**, **Դօմա**, **Խրսպան**, **Ճուխարուրու**, **Շինպուլ**, **Սօպուր**, **Փաղասուխարա** և այլն:

Ասույթաբանական բանահյուսության ժանրերից են նաեւ շուտասելուկները եւ հանգախաղերը, որոնք սովորաբար մանկական եւ պատանեկան կատակային ասույթներ են:

Շուտասելուկները կազմված են մույն հնչյուններով սկսվող կամ մույնահունչ բառերից: Խոսակցիցը, փորձելով արագ կրկնել խոսողի առաջարկածը, հաճախ շփոթվում եւ աղավաղում է այն: Օրինակ, փոխանակ ասելու՝ «**Ծնկունը քրցիւ, ծնկունը կօլ քամ, մուկունը քրցիւ, ծնկունը կօլ քամ**», ասում է՝ «**Ծնկունը քրցիւ, ծնկունը կօլ քամ, մուկունը քրցիւ, մուկունը կօլ քամ**», ինչը շրջապատում ծիծաղ է առաջացնում:

Հանգախաղերը հիմնականում երկխոսություններ են. մեկն արտասանում է որեւէ բառ կամ բառակապակցություն, իսկ մյուսը ձգտում է տալ սրամիտ ու ծիծաղաշարժ հանգավորված պատասխան, ինչպես՝ «**Տաննչի, Կրլծխրդ քակէն խրնչ՛րմննչի**», «**Քնքան ածիւ պրքերալը, Օխծը կօլ քաս մուքերալը**» եւ այլն:

Սրանցով չեն սպառվում Արցախի բանահյուսության ժանրերն ու այդ ժանրերի ստեղծագործություններում արծարծված թեմաներն ու հանգամանքները: Իրականում

դրանք բազմաթիվ են ու բազմազան: Սակայն ամենակուլ ժամանակն իր բացասական ազդեցությունն է ունեցել նաև այս բնագավառում, և աստիճանաբար պատմության գիրկն են նետվում ժողովրդական բանահյուսության գոհարները, ինչը ավելի հրատապ է դարձնում դրանց հավաքագրումը եւ հրատարակումը:

Ղարաբաղի բարբառը: Ղարաբաղի բարբառը հայերենի ամենատարածված եւ կենսունակ բարբառներից է, որով հաղորդակցվում են ԼՂՀ-ում, ՀՀ-ում եւ աշխարհի տարբեր երկրներում ապրող հարյուր հազարավոր հայեր:

Ղարաբաղի բարբառի ձայնավոր հնչյուններն են՝ **ս, ն, ու, ռ, օ, ծ, է, ի, ը, ը՛, ը՛:** **Ա, ու, օ, է, ի, ը** ձայնավորները արտասանությանը համընկնում են ժամանակակից հայերենի համապատասխան հնչյունների հետ:

Ս, ռ, օ-ն ս, ու, օ ձայնավորների քմային տարբերակներն են:

Ը՛-ն ներկայացնում է **ը** եւ **է, ը՛-ն՝ ը** եւ **ի** ձայնավորների միջին աստիճանը:

Բաղաձայն հնչյուններն են. ձայնեղ պայթականներ եւ կիսաշփականներ՝ **բ, գ, գ՛, ղ, ճ, ջ**, խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ **պ, կ, կ՛, պ, ծ, ճ**, շնչեղ խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ **փ, բ, բ՛, բ, ց, չ** ձայնեղ շփականներ՝ **վ, գ, ժ, ղ**, խուլ շփականներ՝ **ս, շ, խ, հ**, ձայնորդներ՝ **ւ, ն, ը, ռ, ւ, ւ՛, ւ՛:**

Գրական լեզվի համեմատությամբ նորություններ են **գ՛, կ՛, բ՛, ւ՛** բաղաձայնները, որոնք ներկայացնում են համապատասխան **գ, կ, բ, ւ** հնչյունների քմային արտասանությունը:

Հազվադեպ գործածություն ունեն նաեւ **դ՛, պ՛, բ՛, ճ՛, ժ՛, ց՛, ճ՛, ժ՛** բաղաձայնները, որոնք առանձին որակ չեն կազմում եւ հնչույթային արժեք չունեն:

Բարբառում բացակայում է **ֆ** խուլ շփականը, որի փոխարեն գործածվում է **փ** բաղաձայնը:

Ինչպես ժամանակակից հայերենում, բարբառում եւս **ս, օ, ու, է, ի, ը** ձայնավորները հնչույթներ են, քանի որ հանդես են գալիս բառի բոլոր դիրքերում, բաց եւ փակ, շեշտակիր եւ շեշտագուրկ վանկերում, բնիկ ու փախառչյալ բառերում եւ միմյանց հետ կարող են կազմել հակադրական զույգեր:

Ս, ռ եւ **օ** ձայնավորները նույնպես ունեն գործածության լայն ոլորտ: Դրանք հակադրության զույգեր են կազմում ինչպես միմյանց, այնպես էլ մյուս ձայնավորների հետ: Սակայն **ն, ռ, օ-ի** հնչույթայնությունը ի վերջո հաստատվում է ամենամերձավոր հնչույթների՝ **ս, ու, օ-ի** հետ ունեցած հակադրություններով՝ **վնր** (1. պահ, ակնբարթ, 2. շարք)-**վար** (հերկ), **հնր** (հայր)-**հար** (1. խոտհունձ, 2. խնոցի հարելը), **րնլ** (1. ամուսնու քույրը, 2. ծառի ճյուղ)-**րալ** (տալ բայը), **հն՞ր** (ու՞մ)-**հ՞ր** (ու՞ր), **րնլ** (կարճ երաժշտական ողջույն)-**րուլ** (թանաք), **շժր** (շոր)-**շօր** (կաթնաշոռ, լոռ), **րծղ** (դող)-**րօղ** (տող):

Ը՛ ձայնավորը, հանդես գալով բառերի շեշտակիր փակ վանկում, կարող է հակադրվել ամենամերձավոր հնչույթներին՝ **ը-ին** եւ **է-ին**, ու կատարել իմաստազատիչ դեր, հետեւաբար անկախ հնչույթ է՝ **րը՛ղէն** (տեղին)-**րըղէն** (տղային)-**րէղէն** (դեղին), **րը՛ռնը** (տիրոջ)-**րէռնը** (դառն), մինչդեռ **ը՛-ն** հանդիպում է հիմնականում Մարտակերտի շրջանի մի շարք խոսվածքների որոշ բառերում՝ **խը՛լլա, նը՛սպա**, եւ, հակադրության զույգեր չկազմելով ամենամերձավոր **ը** եւ **ի** ձայնավորների հետ, համարվում է դրանց դիրքային տարբերակը:

Բաղաձայն հնչյունները հանդիպում են բառասկզբում, բառամիջում, բառավերջում,

բնիկ եւ փոխառյալ բառերում:

Գրական հայերենին համապատասխանող բաղաձայնները հնչույթաբանական մակարդակում հակադրվում են ամենամերձավոր հնչույթներին՝ ներկայանալով որպես անկախ հնչույթներ:

Հնչույթային արժեք ունեն մասն քմային **գ', կ', ք', լ'** հնչյունները, որոնք կարող են իմաստային հակադրության նվազագույն զույգեր կազմել ամենամերձավոր հնչույթների՝ **գ, կ, ք, լ** - ի հետ. **գ'ազ** (**գ'ազ անցկըցընէլ** - կովի ստերջ մնալը) - **գազ** (գազ), **կ'ը'նալ** (հագնել) - **կը'նալ** (մընալ), **կ'ը'տ** (գետ) - **կը'տ** (ճանճի տեսակ), **ք'օք** (գեր)- **քօք** (արմատ), **ք'ար** (օգուտ, շահ)- **քար** (քար), **լ'ալ** (լավ)- **լալ** (հորդ անձրեւ), **լ'նու** (հյուսվածք)- **լնու** (լույս), **խուլ'** (ուռուցք, պալար) - **խուլ** (խուլ):

Բարբառում շեշտը սովորաբար դրվում է նախավերջին վանկի վրա եւ ունի կայուն-շարժական բնույթ: Ակտիվ գործածություն ունի մասն վերջնավանկի շեշտը, որը հանդիպում է.

- **նէ** հոգնակերտ ունեցող բառերի ուղիղ ձեւերում՝ **քաղաքնէ', սալդաքնէ', աշագ'էրդնէ',**

- նախորդ վանկում **ք** գաղտնավանկ ունեցող բառերում՝ **մընա'ն, կըրա'ն, ինչպես մասնային բառերում, որոնց նախորդ վանկի ք-ն փոխարինվել է այլ ձայնավորով՝ կուլօ'խ, խումօ'ր, տիպի'լ,**

- պատճառական բայերում՝ **խուսցունէ'ն, կուրցնէ'ն, մուտուցնէ'ն:**

Մի շարք բարդություններ կրում են կրկնակի շեշտ՝ **դո'րփուրա'կէն, դո'րփուր'նու'նու'նա'չախ, քօ'րնըսք'ըն'նում** եւ այլն:

Ձայնավորները շեշտազրկվելիս կրում են տարբեր փոփոխություններ:

Ա եւ **Ա՛** ձայնավորները հիմնականում հերթափոխվում են **ը, ի, ու** ձայնավորներով՝ **աշկ-ըշկացալ, դմրդ-դըրդննիօխ/դիրդակիօխ, շմք'մր-շըք'ըրաման/շիք'ըրաման, քննգ'-քընգ'անալ/քինգ'անալ, աշունք-ըշունքը'նէ/ուշունքը'նէ, աղութկ-ըղթէլ/ուղօթէլ** (մասն՝ **ղօթէլ**):

Է ձայնավորը հիմնականում հնչյունափոխվում է **ի** - ի կամ **ը** - ի, կամ էլ սղվում է՝ **էշ-իշանալ, շէն-շինամաչ, ծէի-ծըիլրկանէ/ծիիլիկանէ, քէվք-քըվքըպըտօկ/քիվքըպըտօկ, էպ-տի/ըպի/իպի, քըրէք'-քըրքէ, մըքէն-մըքնըլ'նու:**

Ի ձայնավորը ընդհանուր առմամբ մնում է անփոփոխ կամ հնչյունափոխվում է **ը-ի՝ իվիլ-իվիլմնալ/ըվիլմնալ, հիշպ-հիշպըցընէլ/հըշպըցընէլ, ինչ-ինչը'տէլ/ընչը'տէլ:**

Ո՛ եւ **ու** ձայնավորները հիմնականում չեն հնչյունափոխվում՝ **կ'ումաշ-կ'ումըշակալ, խութ'-խութ'երան, կ'նիքնն-կ'նիքըննէ, քնու-քնումնալ:** Որոշ բառերում **ո՛**-ն հնչյունափոխվել է **ի** - ի կամ **ը** - ի՝ **պնիք-պիրքիճըպար/պըրքըճըպար, մնիք-միրիկուտէմը:**

Օ եւ **ծ** ձայնավորները հերթափոխվում են **ու, ո՛, ը** ձայնավորներով կամ **վ** բաղաձայնով՝ **օք-ուքը'քան, սծք'-սնիք'ըվէր, փօռնը-փըռնըպէց, ծօռ-ծըռըմանգ(ը)լի, քըքօ-քըքվօթուն, կըծօ-կըծվօթուն:**

Ը ձայնավորը վեր է ածվում **ը** - ի կամ սղվում է՝ **մը'ծ-մըծանալ, նը'դ-նըդանալ, սը'րպ-սըրպացալ, վը'ննը-վըննըպէց, կըռը'վ- կըռ(ը)վարար:**

Ղարաբաղի բարբառը հարուստ է մասն պատմական հնչյունափոխության դեպքերով:

Հին հայերենի **ա** ձայնավորը սովորաբար մնում է անփոփոխ՝ **աջ-աչ, քաք-քաք,**

աղալ-աղալ, աղքատ-ախկաղ, բարեկամ-պարիկամ:

Ա-ին համագոր գործածություն ունի քմային **Ա՛** ձայնավորը, որը հանդես է գալիս բառի բոլոր դիրքերում: **Ա**-ի քմայնացումը որեւէ ընդհանուր օրինաչափության չի ենթարկվում: Այնուամենայնիվ կարելի է նշել որոշ դեպքեր.

- երբ հաջորդում է խլացած ձայնեղներին (Աճառյանի օրենք)՝ **գարի-կ'Ա՛րի, դաս-տԱ՛ն, բաժին-պԱ՛մժին,**

- երբ նախորդում կամ հաջորդում է ձայնորդ բաղաձայններին՝ **արեւ-Ա՛նրէ՛վ, լահան-լԱ՛նգ'Ա՛ն, ժառանգ-ժԱ՛ռԱ՛նգ':**

Քմայնացման պատճառ է նաեւ ձայնավորների ներդաշնակությունը, որոշ բազմավանկ բառերի մի քմային ձայնավորի ազդեցությամբ մյուս ձայնավորները հիմնականում եւս քմայնանում են՝ **վարժապետ-վԱ՛րժԱ՛րէ՛ն, խանդակ-խԱ՛նդԱ՛նկ:**

Այս երևույթը տարածվում է նաեւ **ու** եւ **օ** ձայնավորների քմայնացման վրա՝ **իրար-ի՛րճի՛ր, զարթուն-զճ՛րթճի՛ն:**

Բացի քմայնացումից՝ **ա**-ն կրել է նաեւ հետեւյալ փոփոխությունները.

ա-ը-շեշտանախորդ վանկերում (բառասկզբ, առաջնավանկ)՝ **ազապեւ-ըզաղէ՛, աշխապեւ-ըշխաղէ՛, ճախարակ-ըրխարակ, կարկապան-կըրկապան,**

ա-ը՛ - շեշտակիր փակ վանկում (միջնավանկ, վերջնավանկ)՝ **ամառն-ամը՛ռնր, փայծաղն-փածը՛ղնր, երախ-ըրը՛խ, գաւաթ-կ'ը՛վաթ,**

ա-է - շեշտակիր փակ վանկում (առաջնավանկ)՝ **գազար-կէզԱ՛նր, բանջար-պէնջԱ՛նր, շալակ-շէլԱ՛նկ, բարձ-պէրց,**

ա-ի - շեշտանախորդ (մասամբ՝ շեշտակիր) վանկերում (բառասկզբի բաց եւ փակ վանկեր)՝ **արեգակն-իրիք'նակ/ըրիք'նակ, բանալի-պիննլի(ք')/պըննլի(ք'), աւել-ի-վիկ,**

ա-օ՛ - շեշտակիր փակ վանկերում՝ **դգալ-ըըթ՛ծ, բարձր-պ՛ծցճի՛ր, կաղին-տըկօղէ՛ն, զարթուն-զճ՛րթճի՛ն:**

ա-ու/ի՛-շեշտանախորդ (մասամբ՝ շեշտահաջորդ) բաց եւ փակ վանկերում՝ **մալաւնի-մուլաւնա, ալեւոր-հիւլիւլուր, սկանջ-անգուն:**

Գրաբարի **ե** ձայնավորը շեշտակիր վանկում փոխարինվել է հետեւյալ ձայնավորներով.

ե-է (միավանկ եւ երկվանկ բառերի բառասկզբի բաց եւ փակ վանկերում)՝ **ձեռն-ժէրք'ժը՛րք, գերան-կ'էրան/կ'ը՛րան, երկու-էրկու, երկայն-էրկան, բեռն-պէռնր/պը՛ռնր,**

ե-ի (բառասկզբի բաց եւ փակ վանկերում)՝ **երես-իրը՛ս, մենակ-մինակ, քել-քիկ, շերեփ-շիրը՛փ, չեճ-չիճ, եփել-իփիկ, երբ-հիբ,**

ե-/ը՛ (փակ վանկում)՝ **սեպ-սը՛պ, սերմն-սը՛րմն, խելք-խը՛լք, համեղ-համը՛ղ, եռ-հը՛ռ:**

Մի շարք բառերում, որտեղ **ե**-ն փոխարինվել է **է** եւ **ը՛** ձայնավորներով, այդ հնչյուններից առաջ լսվում է նախահունչ **յ**՝ **երկիր-յէրգ'իր, երկինք-յէրգ'ինք', եւ-յը՛ս, երգ-յը՛րք:**

ե-ա/Ա՛ (առաջնավանկ)՝ **երագ-արագ/Ա՛րԱ՛նգ, երաշտ-արաշտ, երկանք-արկանք, երկաթ-արկաթ:**

ե-ու/ի՛ (առաջնավանկ, միջնավանկ)՝ **երեւալ-ուրվալ/ըրվալ, դեղնուց-տընդնճց/տըղնոց/տիղնոց, լեզու-լի՛նգի՛ն,**

ե-օ՛ (առաջնավանկ, միջնավանկ)՝ **խելոք-խօլի՛ն(ն)ք/խէլի՛ն(ն)ք, ուղեղ-հըղօղ/հու-**

դօղ,

Է երկբարբառակերպի դիմաց ընդհանուր առմամբ բարբառում առկա է **է** պարզ ձայնավորը՝ **շէն-շէն, կէս-կէս, էշ-էշ, օրէնք-օրէնք, դէմ-դէմ, խէժ-խէժնը, ամէն-ամմէն:**

Շեշտակիր եւ շեշտահաջորդ վանկերում **է**-ն երեւան է հանում նաեւ հետեւյալ փոփոխությունները. **է-ա՝ փէր-փար, մէջ-մաջ, մէջք-մաշկ, գոմէշ-կ'ունաշ, է-ի՝ քէժ-քիժ, շրէշ-շիրիշ, կիւրակէ-կ'իրմկ'ի:**

Հին հայերենի գաղտնավանկի **ը** ձայնավորը շեշտագուրկ վանկերում հիմնականում մնում է անփոփոխ՝ **ծանը-ծանդրը, խնոցի-խընը՛ցէ, պսակ-փըսակ, կծիկ-կըծէ՛գ՛:**

Բառասկզբում **ը**-ն պահպանվել է **ընկեր-հընգէր, ընկրել-հընդրէլ** բառերում, որտեղ ստացել է **հ**-ի հավելում:

Որոշ բառերում գաղտնավանկ **ը**-ն փոխարինվել է **ի, օ, ու** ձայնավորներով՝ **գրել-կ'իրի, բլիթ-պիիթ, կրայ-կօրէ, ճիպո-ճուպօ, կծու-կուծօ:**

Ի ձայնավորը շեշտակիր եւ շեշտագուրկ վանկերում մնում է անփոփոխ կամ փոխարինվում է **է, ը, ը՛, ու, ո՛ն, ծ** ձայնավորներով՝ **իլիկ-իլիգ՛, գին-կ'ին, չամիչ-չամէնչ, քիթ-քէթ/քը՛թ, դիմանալ-փրմանալ, կռիւ-կըռը՛վ, յիշոցք-ուշունց, Յիսուս-Հնուհնուս, սիրուն-սէրմն/սմիրմն/սծրմն/սիրուն:**

Գրաբարի **ո** ձայնավորը բառասկզբի բաց վանկում դառնում է **վը՛/վը/վօ/վէ/վի** որչ-վը՛րց, **ոսկոր-վը՛սկըռ/ վըսկըռ/վէսկըռ, ոսկի-վը՛սկէ/վըսկէ/վէսկէ, որս-վը՛րս/ վէրս, ոչ-խար-վը՛խճար/վէխճար/վօխճար, ոջիւ-վիշիւ:**

Շեշտակիր վանկում **վ** բաղաձայնից առաջ **ո**-ն հնչյունափոխվում է **ս**-ի կամ **օ**-ի՝ **կով-կավ/կօվ, հով-հավ/հօվ, ծով-ծօվ, սով-սօվ:**

Որոշ բառերում **ո**-ն դարձել է **ը, ի** կամ սղվել է՝ **բորբոս-փիրփէշնը/փըրփէշնը, խորոված-խըրաված, ողորմ-ըղուրմ/ ղուրմ, ողողել-ըղօղէլ/ղօղէլ:**

Մյուս բոլոր դեպքերում **ո**-ին համապատասխանում է պարզ **օ/ծ** կամ **ու՛ խոսք-խօսք, փոս-փօս, չոր-չծր, չոր-ծծր, խնչոր-խընչծր, բոռն-բօռնը, գոմ-կ'ում, քակոր-քաքուն, լակոպ-լակուպ** եւ այլն:

Ու ձայնավորը բառերի մեծ մասում կրել է **ու-օ/ծ** հնչյունափոխություն՝ **ուղպ-օղպ, սուգ-սծք՛, կպուց-կըպօց, խունկ-խօնց, բուղթ-բօխպ, ուրբաթ-ծրփմնք, ընկերութիւն-հընգըրթուն:**

Մի շարք բառերում **ու**-ն մնացել է անփոփոխ կամ քմայնացել է՝ **աշուն-աշունը, կսպու-կսպու, չու-ծու/ծո՛ն, լու-լո՛ն, քունդ-քո՛նը, յուշ-հո՛նշ:**

Որոշ բառերում **ու**-ն դարձել է **ը, ի** սկ որոշներում՝ **Է՝ անուն-անըմ/անում, թուր-թըր, մանուշակ-մընէշակ, հեռու-հը՛ռէ:**

Էական փոփոխությունների են ենթարկվել նաեւ հին հայերենի երկբարբառները:

Այ երկբարբառը շեշտակիր ու շեշտահաջորդ վանկերում կրել է հետեւյալ փոփոխությունները.

այ-է (բառասկիզբ, բառամեջ, բառավերջի փակ վանկ)՝ **այծ-էծ, այս-էս, այդ-էդ, այն-էն, լայն-լէն, չայն-ծէն, եղբայր-ախպէր,**

այ-ա/մ (միջնավանկ, բառավերջի բաց վանկ)՝ **մայր-մար, հայր-հմր, սալսանալ-սաղանա, փղայ-փրղա:**

Որոշ բառերում **այ**-ը փոխարինվել է **ի, ո՛ն, ը, ը՛, է** ձայնավորներով՝ **ցայս-ցիթ, գայլ-կ'ոլ, գայլագոռավ-կըռակլմնվ, սայր-սը՛ն/սըռ/սէռ:**

Այսօր-սօր բառում բառասկզբի **այ**-ը սղվել է:

Ա երկբարբառը բարբառում, ինչպես հայերենի բոլոր դրսետրումներում, հանդես է գալիս իբրև **օ** պարզ ձայնավոր՝ **այր-օր, աւչ-օխց, յանք-օնք, կարաւոր-կարօր:**

Մի շարք բառերում (շեշտահաջորդ եւ շեշտանախորդ վանկեր) առկա է **աւ-օ-ու** հնչյունափոխություն՝ **օրորոց-ուրուրու(ն)ց, մօպենայ-մուրանայ:**

Շեշտի տակ եւ շեշտահաջորդ վանկերում **ես** երկբարբառը սովորաբար հերթափոխվում է **է** պարզ ձայնավորով՝ **կորեակ-կօրէկ, ցորեան-ցօրէն, սեան-շէմք, ծովե-ար-ծօվէր:**

Որոշ բառերում **ես** երկբարբառը հնչյունափոխվել է **ա/ւն-ի՝ կեանք-գ'անք, մեռեալ-մը՛ռայ, ածեալ-ածայ, գրեալ-կ'իրմի:**

Ե խոնարհման բայերի եզակի հրամայականի **ես** վերջավորությունը բարբառում փոխվում է **ի**-ի կամ **է**-ի **գրեա-կ'իրի՛, կազմեա-կա՛զմէ:** **Ես**-ի հնչյունափոխություն առկա է նաեւ անցյալ կատարյալում՝ **գործեաց-կ'օրծից, սիրեաց-սիրից:**

Հին հայերենի **իւ** երկբարբառին բարբառում ընդհանուր առմամբ համապատասխանում են **ու** եւ **իւ** ձայնավորները՝ **լաւութիւն-լ'ըվօթուն, իւրեանք-իւրմնք, արիւն-արմն:**

Գրաբարի **ոյ** երկբարբառը սովորաբար փոխարինվել է **ու** եւ **իւ** ձայնավորներով՝ **քոյր-քուր, լոյս-լիւս, քոյլ-քիւլ, կապոյր-կ'մայիւր/կ'մայիւր, բոյն-պիւն.** իսկ **ոյժ-օժ** բառում **ոյ**-ը դարձել է **օ:**

Ղարաբաղի բարբառում զգալի են գրաբարի բաղաձայնական համակարգի կրած փոփոխությունները:

Բառասկզբում (մասամբ բառամիջում եւ բառավերջում) հին հայերենի ձայնեղ պայթականների ու կիսաշփականների դիմաց բարբառը հանդես է բերում խուլ պայթականներ եւ կիսաշփականներ՝ **բերան-պէրան, աղբիւր-ախպիւր, գլուխ-կըլծի, գազար-կէզմըր/կ'էզմըր, ազգ-ազի, մգլահոյր-մըկլավը՛ր, դանակ-պէնակ, դապարի-պէրպակ, շեռն-ծէրք, չմերուկ-ծըմէրուկ, ջուր-ճիւր, ջրադաց-ճը՛դաց:**

Բ, գ, դ, ճ, ջ բաղաձայնները ուձգայիններին հաջորդելիս մնում են անփոփոխ՝ **բանքակ-պէմբակ, անբար-անբար, հինգ-հէնգ՛, հանգիստ-հմնգ՛իստ, հանդարտ-հմնդմըր, հիւանդ-հիվանդ, քանչ-քմնչ, խնչոր-խընչ՛որ, բանջար-պէնջմըր, քանջե-քմնջի:**

Որոշ բառերում **ք** եւ **գ** բաղաձայնները ձայնեղության որակը պահպանել են բառասկզբում՝ **գիրկ-գ'իւրգ՛, գուլպայ-գ'իւլքմ, գիպե-գ'իդմ, բաշխե-բախշի:**

Բառամիջում եւ բառավերջում ձայնավորներից եւ **ք** ձայնորդից հետո գրաբարի ձայնեղներին համապատասխանում են շնչեղ խուլեր. **խարե-խմիի, սուրբ-սօրի, քազար-քաքավէր, օգուր-օթութ, մարդ-մարք, կարդալ-կարթի, օչ-օխց/օց, բարչ-պէրց, աջ-աչ, արջ-արչ, վերջ-վէրչ, մրջիմն-վըրչէմնը:**

Մի շարք բառերում **ք** եւ **գ** ձայնեղների դիմաց շնչեղ խուլ **փ, ք** բաղաձայններ առկա են բառասկզբում՝ **քոնե-փըռնէ, բորբոս-փիրփէշնը, գիշեր-քըշէր, գնալ-ք'իմիլ:**

Հնչյունափոխության մասնակի դեպքեր են՝ **գ-դ՝ գերփե-դըրփէլ, չ-ս՝ դագճն-պէսնը, չ-զ՝ սինչ-սը՛զն, արչակ-հմըզմնի:**

Հին հայերենի խուլ պայթականներն ու կիսաշփականները բառի բոլոր դիրքերում հիմնականում մնում են անփոփոխ՝ **պսկաս-պսկաս, ճիպոտ-ճըպատ, պարաս-իրպարաս, քրնկե-քընգէլ, սարակե-ըսարակէլ, քար-քար, կասկած-կասկած, ծակե-ծակէլ, կայծակ-կածմն, կորեակ-կօրէկ, ճուր-ճօտ, կոճակ-կօճակ, կարճ-կարճ, ծաղիկ-ծաղէգ՛, արծաթ-արծաթ, առիծ-մը՛նծ:**

Որոշ բառերում խուլերին համապատասխանում են շնչեղ խուլեր՝ **պսակ-փրսակ,**

յուշապ-օշափ, օգուպ-օրուք, կքեյ-բքթէ, ծիծառն-ցըցէռնակ, ճանկ-չմնգ՝ ճախարակ-չըխարակ, իսկ որոշներում՝ ձայնեղներ՝ աշխարանք-աշխարանք, պարարագ-բարարանք՝, երկինք-յերգ՝իւնք՝, պարհինճան-բաղընջան:

Յնկնէ-ցըղնէ, ճոնք-ճօժկ բառերում չ եւ ճ խուլերը կրել են մասնակի փոփոխություն:

Ընդհանուր առմամբ անփոփոխ են մնացել նաեւ հին հայերենի շնչեղ խուլ պայթականները եւ կիսաշփականները՝ *փրփուր-փրփօր, շամփուր-շամփուռ, շերեփ-շիրք՝փ, քամի-քամէ, կաքաւ-կաքավ, խելք-խը՛լք, քափեյ-քափէ, մորթի-մօրթէ, խորք-խօրք, ցուրպ-ցօրպ, կացին-կացէն, հաց-հաց, չափեյ-չափէ, կաշաղակ-քըչէղակ, կանաչ-կանանչ:*

Հատուկեմտ բառերում շնչեղ խուլերի դիմաց բարբառը երեսն է հանում խուլ բաղաձայններ՝ *փաքաքեյ-պըպապէ, խոսք-խօսկ, բոյթն-պ՛նկեր, քաղցր-քախճըր, ոչխար-վր՛խճար:*

Գրաբարի ձայնեղ եւ խուլ շփականները բառի բոլոր դիրքերում ընդհանուր առմամբ հնչյունափոխության չեն ենթարկվել՝ *զկեռ-զրկրռ, խուզեյ-խօզի, մագ-մմգ, ժամ-ժամ, դժուար-պիժէր, կուժ-կօժ, վարագ-վարագ, խորովեյ-խըրավէ, հով-հավ, սուրք-սօրփ, խոսեյ-խօսէ, բուխ-բօխ, շուն-շօն, խարշեյ-խաշի, էշ-էշ, խնոր-խըմօր, մոխիր-մօխէր, ծուխ-ծօխ, հայելի-հիլի, մահակ-մըհակ, մահ-մահ, ողողեյ-ըղղէ, մեղր-մը՛ղր, փեղ-փը՛ղ:*

Այդ ընդհանուր օրինաչափություններից կան շեղումներ՝ *սալոր-շըլճր, սեամ-շէմք, հող-վը՛ղ, հոպ-վը՛պ, բուդք-բօխք, աղջիկ-ախճիգ՝:*

Լ, մ, ն, ռ, ռ ձայնորդները տարբեր դիրքերում հիմնականում ներկայանում են անփոփոխ վիճակով՝ *լափ-լէփ, լայն-լէն, իլիկ-իլիգ՝, ծիլ-ծիլ, մենակ-մինակ, ամիս-ամէս, համ-համ, նկար-նըկար, հանեյ-հանէ, բան-պէն, կրակ-կըրակ, գիր-կ՛իր, քուռակ-քօռակ, սաքառ-սաքառ:*

Գրաբարի *ն* վերջնահանգ ունեցող բառերում Ղարաբաղի խոսվածքների մեծ մասում հիմնականում պահպանվել է *ն*-ն, իսկ որոշներում այն ընկել է՝ *քոռն-քօռնր/քօռ, ծոռն-ծօռնր/ծօռ, դոռն-փօռնր/փօռ:*

Մասնակի հնչյունափոխության դեպքեր են՝ *ր-ռ՝ պորպ-պօռպ, ոսկոր-վը՛սկրռ, ռ-ր՝ չեռն-ժը՛րք, փառք-փարք՝:*

Յ ձայնորդը բառամիջում սակավ է հանդիպում՝ *մայիս-մայիս, ծառայեյ-ժըռայէր:* Բառասկզբում *յ*-ն սովորաբար սղվում է կամ դառնում է *ի՝ յանք-օնք, յիսուն-իցցուն, յարակ-իարակ:*

Որոշ բառերի բառասկզբում *յ*-ն հնչյունափոխվել է *հ*-ի՝ *Յիսուս-Հ՛նկան, յաղթեյ-հախթէյ/յը՛խնէ, յունիս-հունիս:*

Ի ձայնորդը հանդես է գալիս որպես ձայնեղ շփական *վ՝ ծարաւ-ծարավ, ցաւ-ցավ, աւել-իվիլ, քել-թէվ, արել-մըրք՝վ:*

Ղարաբաղի բարբառում լայն տարածում ունեն նաեւ դիրքային եւ փոխազդեցական հնչյունափոխության մի շարք երեսույթներ, ինչպիսիք են. հնչյունների անկում՝ *անալի-նմլի, աքացի-քացէ, ուղղորդ-ղօրթ, ողորմեայ-ղօրմի, հայելի-հիլի, ջախջախեյ-ճիճը՛խէ, եկեղեցի-յը՛խցէ, խոնարհ-խօնար, խաղող-խաղու, պաշտպան-պաշպան, արջառ- մը՛րք, քարշեյ-քաշի, հնչյունների հավելում՝ աներ-հանէր, համարեյ-հըմբարէ, ծանր-ծանրըր, ոզնի-կօզնի, ամաչեյ-հըմանչի, առնմանում՝ մարն-մաննր, ելա-*

նել-իլլմն, շաղախել-շրդաղել, անմեղ-ամմեղ, տարնմանում՝ բոքիկ-պէպէզ՝-փէպէզ՝, ծածկել-ծասկել, անուն-անըմ, դրավոխություն՝ արեգակն-իրիք՝նակ, ականջ-անջուկ/անգուն, արմուկն-արմունգ, դապարկ-փերփակ, փեպուր-քէփուռ, սրահ-սրհար, պղպոռ-պըրպոռ, բաշխել-բախշիլ, ոչխար-վը՛խչար, կապերպ-կարպեր, խարոռ-արիպօր, նման-մընան, համար- մըհար, հաւարել-վըհարել, հնչյունի կրկնություն՝ ամեն-ամմէն, գոռալ-կ՛օռռալ, հազար-հազար, յիսուն-իցցուն, հնչյունի պարզեցում՝ կծկել-կըզկել, անէծք-անէսկ, երիցակիւն-իրիսկիւն, հնչյունի բարդացում՝ վաքսուն-վացցուն, քանգ-կանց, վարժ-վմնրջ, վարժապետ-վմնրջմբէր, ինժեներ-ինջինէր:

Ինչպես հայերենի մյուս բարբառներում, Վարաբաղի բարբառում եւս թվի կարգի արտահայտությունը պայմանավորված է եզակի եւ հոգնակի թվերի հակադրությամբ:

Հոգնակերտներն են *էր/ը՛ր, նէ, ք՛, ա(ն)ք/ն(ն)ք, ու(ն)ք/ն(ն)ք, էք/էրք, օպէ(ն)ք՛, իք՛, անէք՛, վանք, վասկ, ըթկընէ, էն/ը՛ն, օպ/ծպ, լար/լմնր:* Սրանցից յուրաքանչյուրը գործառում է որեւէ դիրքում՝ կապված տվյալ բառի ձեւի եւ իմաստի հետ:

Առավել հաճախակի գործառություն ունեն *էր* եւ *նէ* թեքությունը, որոնք հին հայերենում (*եսար, անի*) ընդգրկում էին սահմանափակ թվով հիմքեր՝ արտահայտելով հավաքական իմաստ:

էր հոգնակերտ ստանում են միավանկ բառերը՝ *փօն-փընէր, շօն-շընէր, հավ-հավէր:* Այդ թվին են դասվում նաեւ գրաբարյան *ն* վերջնահանգով բառերը, ինչպես նաեւ այն բարդությունները, որոնց վերջին բաղադրիչը անվանական միավանկ բառ է՝ *կ՛առնը-կ՛առնէր, բօռնը-բօռնէր, փրնապար-փրնըպարէր, ծրծամար-ծրծըմարէր:* Որոշ խոսվածքներում *էր* թեքությին զուգահեռ գործածություն ունի *ը՛ր-ը՛ փրնըր, շընըր, հավըր:*

Նէ հոգնակերտ ստանում են բազմավանկ բառերը՝ *արկաք-ըրկըթնէ, ջանավար-ջանավարնէ, ք՛նքն-ք՛ըթնէ, ճըպպար-ճըպըթնէ, դասապու-դասապունէ:* Այդ վերջավորությամբ հոգնակի են կազմում նաեւ բառասկզբում *ռ* ունեցող որոշ միավանկ բառեր՝ *ռոք-ռուրնէ, ռուս-ռուսնէ,* որոնք ավելի շատ գործածվում են նախաձայն *ր*-ով կամ *ու*-ով՝ *ըռուք/ուռուք-ըռուրնէ/ուռուրնէ, ըռուս/ուռուս-ըռուսնէ/ուռուսնէ:*

Ա(ն)ք/ն(ն)ք, ուք/նք, էք/էրք, օպէ(ն)ք՛ հոգնակերտները գործառում են ազգակցություն կամ գերդաստան ցույց տվող բառերի հետ՝ *հանէր-իրնէրա(ն)ք, Սնիրք՛իս-Սիրք՛իսն(ն)ք, Վանի-Վանու(ն)ք/Վանն(ն)ք, փրդա-փրդէք՛/փրդէրք, փրէսա՛/փրսօպէ(ն)ք՛:*

Ք/ք՛ հոգնակերտը, որ գրաբարում ամենակենսունակ թեքությն էր, բարբառում գործածվում է որտեղացի լինելը մատնանշող բառերի հետ՝ *դարաբաղցէ-դարաբաղցէք՛, պիլթընը՛ցէ-պիլթընը՛ցէք՛, շինըցէ-շինըցէք՛, փրդըցէ-փրդըցէք՛:* *Ք/ք՛*-ն իր հոգնանշությամբ արժեքը պահել է նաեւ բաղադրյալ կազմություններում:

Օպ/ծպ թեքությով հոգնակի են կազմում ծառանուններ արտահայտող բառերը՝ *կաղնէ-կաղնօպ, զրկըռի-զրկըռօպ, շմվթնլի-շմվթնլծպ, թնլզի-թնլզծպ:* Այս բառերը հոգնակիությունից բացի կարող են արտահայտել նաեւ որեւէ բույսի աճման տեղի, վայրի իմաստ: Տարբերությունը երեւում է միայն շարահյուսական մակարդակում, ինչպես՝ *ք՛ը՛ցալ ըմ զրկըռօպը* (զնացել եմ այն տեղը, որտեղ զկռնիներ են աճում), *զրկըռօպ ըմ քանդան, պէրալ* (զկռնիներ են քանդել, բերել):

Թուրքերենից փոխառյալ *լար/լմնր* հոգնակերտը հանդես է գալիս ինչպես փոխառյալ, այնպես էլ բնիկ բառերի հետ՝ *բալա-բալալար, դայի-դայիլմնր, Արմրթնն-Արմրթնք*

լմիր, ԹՈՒՆԻ-ԹՈՒՆԻԼԻՄԻ:

Մյուս հոգնակերտները կենսունակ չեն եւ գործածվում են սահմանափակ թվով բառերի հետ՝ **մարթ-մարթիք՝, կրնէգ՝-կրնանէք՝, շէն-շինըթկընէ, քէ-քիյէն/քիյը՛ն, ծոն-ծոն-վէն/ծոնվը՛ն, փննդ-փննդվանք/փննդվասկ:**

Հարկ է նշել նաեւ, որ որոշ բառեր կարող են ստանալ թվանիշ տարբեր կամ կրկնակի թեքույթներ, ինչպէս՝ **ծի-ծիյը՛ն-ծիյանք-ծիյէր-ծիյէրք-ծիյանէր, շէն-շէնէր-շէնէք՝-շէնէրք-շինըթկընէ:**

Հին հայերենի համեմատ՝ բարբառը հոլովման համակարգում երեսան է հանում զգալի տարբերություններ. գրաբարի վեց հոլովներից այստեղ առկա են չորսը՝ ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական, գործիական: Որոշ դեպքերում գործածական են ներգոյականի հատուկ ձեւերը, որ գրաբարը չունի: Բարբառում չեն գործառնում գրաբարյան հոլովման որոշ տիպեր (**ո** վերջադրական հոլովում, **ե** ներքին հոլովում, տրականի **ոջ** վերջավորություն (Մարտակերտի շրջանի որոշ խոսվածքներում հազվադեպ գործածություն ունեն **փիրուջ, քրրոջ** եւ այլ ձեւերը), խառը հոլովում), առաջ է եկել **վա** արտաքին հոլովումը: Փոփոխություններ են կատարվել հոլովների կազմության մեջ. բարբառը չունի նախդիրներ, հայցականի **ս**, գործիականի **ք, ւ, ք** վերջավորություններ: **Ք**-ն պահպանվել է հատուկեմտ բառերում՝ **վը՛ննուք, ծէնուք, կօ՛րուք**, որտեղ արտահայտում է եզակի գործիականի իմաստ՝ **նպրոպ, ճեռոպ, վզով**: Անգործածական է նաեւ տրականաձեւ գործիականը: Նորություն է բացառականի եւ գործիականի կազմության վերլուծական եղանակը: Փոխվել է հոգնակի հոլովման կազմությունը. ընդհանուր առմամբ նույնացել են հոգնակիի եւ եզակիի հոլովանիշ թեքույթները: Նույն բառերը գրաբարում եւ բարբառում ընդգրկվում են հոլովման տարբեր տիպերի մեջ:

Այսքանով հանդերձ՝ բարբառը հոլովման համակարգում գրաբարի հետ ունի մի շարք ընդհանրություններ:

Անվանական համակարգում հոլովները ունեն հետեւյալ կազմությունը.

Ուղղական-հայցական հոլովը եզակի եւ հոգնակի թվերում գուրկ է հոլովակերտներից եւ մյուս հոլովներին հակադրվում է զրո վերջավորությամբ: Եզակիի եւ հոգնակիի հակադրությունը արտահայտվում է հոգնակերտների բացակայություն-առկայություն հատկանիշով:

Տրականը բնութագրվում է հոլովանիշ թեքույթների բազմազանությամբ, որոնք արտահայտվում են վերջավորություններով եւ հնչյունական հերթագայություններով:

Վերջավորություններն են՝ **էն/ին, ու(ն)/ոն(ն), վա/վն, ա(ն)/ն(ն):**

Հերթագայություններն են՝ **ք/ց, ա/օ, է/օ, է/ու, ի/ոն, օ/ա, ու(ք)վօ**, որոնցից առաջինն ունի վերջադրական, մյուսները՝ ներդրական բնույթ:

Տրականի նշված թեքույթներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որոշակի սահմաններում:

էն/ին հոլովակերտը, հանդիսանալով ամենակենսունակ թեքույթը, չունի միանշանակ բնորոշում եւ ընդգրկում է բոլոր այն բառերը, որոնք չեն բաշխվում այլ հոլովանիշ թեքույթների սահմաններում: Այս հոլովակերտով տրական են կազմում.

ա) գրաբարյան հոլովման տարբեր տիպերից բազմաթիվ բառեր, ինչպէս՝ **Վարդանայ-Վրրբանէն, սրբի-սրբիէն, գործոյ-կործէն, ծովու-ծովէն, ասպեղ-ասքրիէն, ընկերութեան-հընգրթունէն** եւ այլն,

բ) գրեթե բոլոր փոխառյալ բառերը՝ **ջանէն, գ'օլէն, ըստօլէն, դանդիկն,**
գ) հաստուկ անունների մեծ մասը՝ **Ըրշակէն, Գագօյին, Վօվին, Ըրասիէն, Թըրքանին:**
Հարկ է նշել, որ բարբառում բառերը **էն/ին** հոլովանիչ ստանում են միայն որոշյալ առման դեպքում:

Ու(ն) հոլովակերտը կենսունակությամբ երկրորդն է, մանավանդ որ **էն/ին** հոլովման բառերը անորոշ իմաստով գործածվելիս թեքվում են **ու** թեքությամբ, հմմտ.՝ **մեր ծանէն - մին ծառու, ծը՛ր շէնին- մին շէնու:**

Ու(ն) հոլովանիչ են ստանում նաեւ.

ա) **է/ի** վերջավորություն ունեցող բառերը՝ **քամէ-քամու(ն), շինըցէ-շինըցու(ն), կօզնի-կօզնի(ն), Բաղդի-Բաղդու(ն):**

բ) **ա** վերջավորություն ունեցող՝ ազգակցություն արտահայտող որոշ բառեր՝ **այս-այուն, սպս-սպուն, նմնն-նմնուն, մամս-մամուն, պսպս-պսպուն:**

գ) **ս** վերջավորություն ունեցող անձնանունները, որոնք զուգահեռաբար թեքվում են նաեւ **էն/ին** թեքությամբ՝ **Լիդա-Լիդու(ն)/Լիդին, Յաշա-Յաշու(ն)/Յաշին:**

Մարտակերտի շրջանի խոսվածքների մեծ մասում **ա** վերջավորություն ունեցող բառերը թեքվում են **ան** թեքությամբ՝ **այան ախպերը, սպան էշը, Յաշան փօնը:**

Վա/վն հոլովանիչով թեքվում են ժամանակի իմաստ արտահայտող բառերը՝ **օր-օրվա, քրածր-քրածրվն, կ'արունք-կ'արունքվա, ծընը՛նը- ծընընըվա:**

Ա(ն)/ն(ն) հոլովանիչ ստանում են.

ա) **կրնէգ' եւ ախճիգ'** բառերը՝ **կրնգա, ըխճրկա:**

բ) հաստուկ տեղանունները՝ **Ղարաբաղ-Ղարաբաղա, Իրէվան- Իրէվանա, Հանրմուք-Հրդրմուքն, Կ'ծրէս-Կ'ծրէսն:**

գ) գրաբարյան **ն** վերջնահնչյուն ունեցող բառերի մեծ մասը՝ որոշյալ առման դեպքում՝ **կ'առնը-կ'առնանը, բօռնը-բօռնանը, փօռնը-փրռնանը:** Անորոշ առման դեպքում այս բառերը թեքվում են **ու** հոլովանիչով՝ **կ'առնու, բօռնու, փրռնու:**

Է/օ հերթագայությունը պատմականորեն հանգում է հին հայերենի **այ/օ** հերթագայությանը՝ **ահպօր, դօրփօր** (նաեւ **դօրփուր**):

Գրաբարյան նույն հերթագայությանն են հանգում **ա/օ, ն/օ-ն՝ մար-մօր, հնիր-հօր:**

Է/ու հերթագայությամբ հանդես է գալիս **հանէր/հանուր** (նաեւ **հանօր**), իսկ **ի/ն** հերթագայությամբ՝ **փնք'իր- փնք'նր** (նաեւ **փնք'ծր**) բառը:

Օ/ա հերթագայությունը համապատասխանում է գրաբարյան **ու/ա** հերթագայությանը եւ ընդգրկում է **շօն** եւ **փօն** բառերը՝ **շօն-շան, փօն-փան:**

Ու/րվօ հերթագայությամբ է թեքվում **քուր** հիմքը՝ **քուր-քրվօր, մրրաքուր-մրրաքրվօր:**

Հոգնակի թվում տրական հոլովը արտահայտվում է **էն/ին, ու(ն)** վերջավորություններով եւ **ք/ց** հերթագայությամբ:

Էն/ին հոլովանիչ են ստանում **էր/ը՛ր, նէ, լար/լնր, էն/ը՛ն** հոգնակերտներով բառերը՝ **ծառէր-ծրռէրէն, սաղաքնէ-սաղաքնէրէն, աքալար-աքալարէն, նմիր-նմիրլնրին, թիրէ՛ն- թիրէ՛նէն:**

Ու(ն) հոլովանիչ են ստանում՝ **օր/ծր** հոգնակերտ ունեցող բառերը՝ **զրկրօս-զրկրօսուն, փննչօս-փրնչծփուն,** ինչպես նաեւ **նէ** հոգնակերտով բառերը՝ Հադրուքի եւ Շաղախի ենթաբարբառներում՝ **ընրննէ-ընրննուն, սաղաքնէ-սաղաքնուն:**

Ք/ց հերթագայությամբ թեքվում են *ք', ա(ն)ք/ն(ն)ք, ու(ն)ք/ն(ն)ք, էք/էքք, օպէն(ո)ք', իք', անիք'* հոգնակերտներով բառերը՝ *շինըցէք'-շինըցուց, Ըրշակա(ն)ք-Ըրշակա(ն)ց, Սըրք'իսն(ն)ք-Սըրք'իսն(ն)ց, փայրու(ն)ք-փայրու(ն)ց, ննգն(ն)ք-ննգն(ն)ց, ըխճըկէք'-ըխճըկոց, փրդէրք-փրդօրց, փրսօպէ(ն)ք'-փրսօպա(ն)ց, մարթիք'-մարթկանց, կրնանէք'-կրնանուց* եւ այլն:

Այսքանով հանդերձ՝ տրականի թեքությունների գործառնությունը որոշակի հիմքերի հետ օրինաչափ երեւոյթ չէ, եւ երբեմն հոլովման տիպերի միջեւ կատարվում են փոխանցումներ, ինչպես՝ *ճրրպարա/ ճրրպարէն, օրվա/օրէն, փարվա/փարուն*:

Բացառական հոլովը ներկայանում է համադրական եւ վերլուծական կառուցվածքներով:

Համադրական բացառականի վերջավորությունն է *ա(ն)*, որ դրվում է ուղղական-հայցականի անհնչյունափոխ կամ հնչյունափոխված հիմքի վրա՝ *ծակ-ծակա(ն), բուն-բունք(ն), փէնակ-փէնակա(ն), փինըկնէ-փինըկնա(ն), հնննծպ-հնննծպան*:

Օ/ա հերթագայությամբ թեքվող բառերը եզակիում եւ վերջնահանգ *ք* ունեցող հոգնակերտով բառերը համադրական բացառականը կազմում են տրական հոլովածեւից՝ *շօն-շան-շանան, փօն-փան-փանան, ծիյանք-ծիյանց-ծիյանցան, շէներք- շէներց-շէներցան*:

Վերլուծական կառուցվածքով բացառականը հիմնականում հատուկ է անձ ցույց տվող գոյականներին եւ բաղադրվում է տրականից եւ *անա* կամ *նրէսպա/նրսպա/նիսպա/նրէսպա* բառ-մասնիկներից՝ *փրդէն անա/նրէսպա, մարթին անա/նրէսպա, դօրփուրցը անա/նրէսպա, հօրը անա/նրէսպա, Ըրշակէն անա/նրէսպա*: Այդ գոյականները, բացառությամբ անձնանունների, բացառականը կարող են կազմել նաեւ համադրական եղանակով՝ *մարթան, կրնգանան, ըխճըկանան*: Այս երեւոյթը, սակայն, չունի լայն տարածում:

Տեղանունների բացառականը նույնանում է սեռական-տրականի կառուցվածքին՝ *Իրէվանա, Մարտունա, Իրանա*: Տարբերությունը նկատվում է միայն շարահյուսական մակարդակում:

Գործիական հոլովին եւս հատուկ են համադրական եւ վերլուծական կառուցվածքներ: Դրանց կազմության եղանակները նույնն են բացառականի հետ, այն տարբերությամբ, որ գործիականը ունի *ալ* ընդհանուր վերջավորությունը՝ *ծառավ(ր), քրքէրավ(ր), փինըկնավ(ր), փանավ(ր), շանավ(ր), ծիյանցավ(ր), ըխճըկօցավ(ր)/ըխճըկօցը անավ/նրէսպավ, փրդօրցավ(ր)/փրդօրցը անավ/նրէսպավ, Ըրշակէն անավ/նրէսպավ, քրվօրը անավ/նրէսպավ, Հրթէրքավ(ր), ճրրպարավ(ր)*:

Ներգոյական հոլովը հատուկ է հիմնականում տեղի եւ ժամանակի գաղափար արտահայտող բառերին եւ ունի *ուղղական-հայցական հոլովաչէր+ըմ/ում վերջավորություն* կառուցվածքը (ուղղական-հայցականը կարող է ներկայանալ անհնչյունափոխ եւ հնչյունափոխված հիմքերով)՝ *շէն-շէնըմ(ր)/շէնում(ր), կ'ում-կ'ումըմ(ր)/կ'ումում(ր), ժամ-ժամըմ(ր)/ ժամում(ր), ամէս-ամսըմ(ր)/ամսում(ր)*:

Հատուկ տեղանունների ներգոյականի իմաստը ընդհանուր առմամբ արտահայտվում է ուղղական-հայցականով՝ *Շուշի ը'ավ ճնըր կա* (Շուշիում լավ ջուր կա), *Տումէ բօլ գրկըռօպ կա* (Տումիում շատ գկռնիներ կան):

Մյուս դեպքերում ներգոյականի իմաստն արտահայտվում է տրական հոլովի եւ *մա-*

չին/մէշին/միշին ետադրութեան բաղադրութեամբ՝ *խօսկէն մաշին* (խոսքի մեջ), *մարթին մաշին* (մարդու մեջ) եւ այլն:

Բարբառին հատուկ են որոշյալութեան, ստացականութեան, ցուցականութեան եւ դիմորոշութեան հոդային ենթակարգեր:

Որոշիչ հոդերն են *ը*-ն եւ *ն*-ն, որոնցից առաջինը գործառու է բաղաձայնահանգ, երկրորդը՝ ձայնավորահանգ բառերի հետ՝ *կարբը, կ'իրբը, կըլծխը, ըսքօլը, ըննմնիզը, կայուն, փրդան, մայան*:

Ը, ն որոշիչ հոդ են ստանում գոյականները եւ փոխանունները եզակի եւ հոգնակի թվերի թե՛ ուղիղ, թե՛ թեք հոլովածներում՝ *շէնը, շէնին, շէնանը, շէնավը, շէնումը*:

Անորոշութունը որոշյալութեանը հակադրվում է գրո վերջավորութեամբ եւ *մի/մին* ցուցիչի առկայութեամբ՝ *քարը-քար/մի քար/մին քար, հայաթը-հայաթ/մի հայաթ/մին հայաթ*: *Մի/մին* ցուցիչը ունի միայն նախադաս կիրառություն:

Առանց որոշյալ հոդի են գործածվում.

ա) *իմ, քու, մեր, ծր'ր* անձնական դերանունների հետ գործածվող՝ ազգականություն ցույց տվող բառերը՝ *իմ փայփ, քու հմը, մեր մար, ծր'ր քուր*:

բ) ազգակցություն ցույց տվող հավաքական գոյականները, որոնք տրականում թեքվում են *ք'ց* հերթագայութեամբ՝ *պայպուք, փայպուք, մագիք, Ուրմիքլմըմք, Անվանք*:

Ուղղական հոլովի կիրառություններից անորոշ ձեւ ունեն գոյականաբար հանդես եկող որոշիչները եւ կոչականները՝ *չամէնչ մէս, մը'ղըր հաց, Մմ'ր'ի, յը'ր կաց*:

Գործիականում սովորաբար որոշիչ հոդ չեն ստանում *վա* հոլովման բառերը՝ *ծամավ, օրավ*:

Շաղախի ենթաբարբառի հին սերնդի խոսվածքում անձնանունները սովորաբար խոսքի մեջ հոդ չեն ստանում՝ *Արշակ ք'ը'ցավ, Մանդու փրդան* եւ այլն:

Ստացականությունն արտահայտվում է *ս* եւ *փ* հոդերով՝ *փօնըս, հրնգէրուքըս, հացըր, ծառըր*: Ստացական հոդ ստանում են գոյականները՝ *հմըրս, մարըր*, գոյականաբար գործածվող ածականները՝ *մը'ծըս, կունհնիս*, թվականները՝ *հէնգ'ըս, էրկունջինըր*, մի շարք դերանուններ՝ *ինք'ըս, ըշփը'ղըր*, անորոշ, հարակատար, ենթակայական դերբայները՝ *կարթիլըս, կէրածըր, օփողըր*:

Ստացականութեան իմաստ են արտահայտում նաեւ *ը* եւ *ն* հոդեր ունեցող բառերը, որոնց ստացական իմաստը սակայն չի պայմանավորված հոդով: Դա բառի ներքին ստացական իմաստն է, որի՝ երրորդ դեմքի վրա կոնկրետանալը տրամաբանորեն բխում է տեքստից՝ պայմանավորված *ս, փ* հոդերի բացակայութեամբ, ինչպես՝ *վը'նըր կօփրայ ա* (նրա ոտը), *փրդէն փրսակայ ա* (իր տղային):

Ստացական հոդերը միաժամանակ որոշյալութեան իմաստ են արտահայտում եւ կարող են գործառել բոլոր հոլովների եզակի եւ հոգնակի ձեւերի հետ՝ *քաղաքըս/քրղըրքնէս, քրղաքէս/քրղըրքնէրէս, քրղաքաս/քրղըրքնէրաս, քրղաքավըս/քրղըրքնէրավըս, քրղաքըմըս/քրղըրքնըմըս*:

Ստացական հոդեր ունեցող բառերը կարող են գործածվել եւ՝ առանց դերանուն հատկացուցիչների, եւ՝ դերանուն-հատկացուցիչներով՝ *ծը'րքըրս/իմ ծը'րքըրս, խօխայր/քու խօխայր*:

Գրաբարյան *ս, դ, ն* ցուցական հոդերից բարբառում, ինչպես արդի հայերենում, պահպանվել է միայն *ս*-ն, որն ունի *էս* (այս) դերանվան իմաստը եւ գործածվում է տեղի ու ժամանակի մի շարք անունների հետ՝ արտահայտելով ժամանակի եւ առարկայի մոտիկության գաղափար, ինչպես՝ *աշունքըս* (այս աշնանը), *վէրչէրքըս* (այս վերջին

ժամանակները), **աշխարհը** (այս աշխարհը), **յրգ'իրմը** (այս երկրում): Այս բառերը կարող են գործածվել նաև **էս** դերանվան հետ՝ **էս աշունքը, էս ընդունու, էս շէնը**:

Գիմորոշության կարգը, որ հատուկ է եւ՝ հին, եւ՝ արդի հայերենին, պահպանվել է նաև բարբառում եւ արտահայտվում է **ս, ր** հոդերի միջոցով՝ **յր՛ս ինք՛ըս, րու ինք՛ըր, մինակըր, սաղրս**:

Ածականները բարբառում լինում են որակական եւ հարաբերական: Որակական ածականների բաղդատական աստիճանը ներկայանում է վերլուծական եւ շարահյուսական կառուցվածքներով: Վերլուծական կառուցվածքը արտահայտվում է գրաբարյան **քան՝ գ-քանց/կանց/ կանս** նախդիրի միջոցով՝ **իմ րըդաս կունճի յս, քանց քունը**:

Բաղդատականի իմաստ է արտահայտվում նաև **պակաս, շար** բառերի, ինչպես նաև **ավուն** ածանցի միջոցով՝ **պակաս խէլիճը, շար դաշննգ՛, կ՛ըպրմվուն**:

Շարահյուսական կառուցվածքը արտահայտվում է համեմատելի առարկայի բացառական հոլովաձեւով՝ **էր ծիճ էս ծիյան քավքառ ս**:

Գերադրական աստիճանին եւս հատուկ է վերլուծական կառուցվածք. կազմվում է **ամմէն** եւ **լօխ** դերանունների բացառական հոլովաձեւի հարադրությամբ՝ **ամմէնս-քմնգ՛ը, ամմէնսպր՛նը, լուխնաց/լօխնաց պէրակը**:

Հարաբերական ածականները սովորաբար կազմվում են գոյականներից՝ **է/ի** ածանցով՝ **արկաք-ըրկաքէ, քար-քարէ, պիւրք-պրքի, փմն-փմնի**:

Փոխանվանական կիրառության դեպքում ածականը հոլովվում է **էն/ին** (որոշյալ առման դեպքում) եւ **ու** (անորոշ առման դեպքում) հոլովումներով՝ **պառավը/պառավ, պրռավէն/պրռավու, պրռավէն անա/նր՛սպա/պրռավու անա/նր՛սպա, պրռավէն անավ/նր՛սպա/պրռավու անավ/նր՛սպա**:

Բարբառում թվականները լինում են քանակական, դասական, բաշխական, չափական, անձներական, կոտորակային, բազմապատկական:

Քանակական թվականներն են. միավորներ՝ **մի/մին, էրկու, իրը՛ք/իրէք, չօրս/չծրք՛, հէնգ՛, վէց(ց), օխպը, օթ, ինը (օխպը եւ ինը** թվականները հանդես են գալիս միայն հոդով), տասնավորներ՝ **րաս(ս)ը, րրսնըմին/րասնըմին, րրսնըէրկու, րրսնըիրը՛ք, րրսնըչօրս, րրսնըհէնգ՛, րրսնըվէց, րրսնըօխպը, րրսնըօթ, րրսնըինը, քրսան, յէրէս(ս)ուն/րրէս(ս)ուն/իւրծս(ս)ին/իրէս(ս)ուն, քրռաս(ս)ուն/քառաս(ս)ուն, իցցուն/իցծուն/ իծծուն/, վացցուն/վացծուն/վածծուն/, ուխպընաս(ս)ուն/ ուխպունաս(ս)ուն, ուքաս(ս)ուն, իննմնս(ս)ին/իննաս(ս)ուն**: Մյուս թվականներից են՝ **հմրիւր, հագ(գ)ար/ հրգ(գ)ար/ հրգ(գ)էր/հիգ(գ)էր միլլծն/միլ՛օն/մըլ՛օն, միլլմրդ/մըլ՛արդ**:

Տաս(ս)ը թվականը միավորներին միանում է հնչյունափոխված եւ անհնչյունափոխ արմատներով՝ **րրսնը/րասնը**, որտեղ վերականգնվում է գրաբարյան **ն** վերջնահանգը:

Երբեմն գործածվում է նաև **քաց(ց)ուն/ քած(ծ)ուն/քաքսուն** տասնավորը, որ **քառասուն** թվականի հնչյունափոխված ձեւն է՝ **իցցուն** եւ **վացցուն** թվականների համաբանությամբ, սակայն ունի այլ իմաստ՝ **շար, սհագին**, ինչպես՝ **քացցուն հր՛տէ սասլըմ** (շատ են ասել):

Տասնավորները միավորներին միանում են նախադաս շարադասությամբ:

Դասական թվականները, բացառությամբ **առաջին-ըորչի/առաջի/ըռաջի** թվականի, արտահայտվում են քանակական թվականների եւ թուրքերենից փոխառյալ **ինջի/ընջի/հինջի** մասնիկի հարադրությամբ՝ **վէց(ց)ինջի/վէց(ց)ընջի, իրը՛ք(ի)ինջի**:

Այս թվականների իմաստը նախադասության մեջ կարող է ներկայացվել նաև քա-

նական թվականների տարբեր հոլովածներով՝ **փոխալսի ա հենգ'ը** (փոխադրվել է հինգերորդ դասարան), **վեցընըն ա սրվը'րում** (վեցերորդ դասարանում է սովորում), **օխ- փան փնու ա յը'կալ** (յոթերորդ դասարանից հեռացել է): Նոր սերնդի խոսվածքում եր- քեմն գործածվում են գրական հայերենի **օրթ/րորթ/էրորթ** ածանցներով կազմված ձևերը՝ **չօրօթ, յէրգըրօթ, հինգ'էրօթ**:

Թվականների մյուս տեսակներն արտահայտվում են.

- բաշխականները՝ քանակականների կրկնությամբ՝ **մին-մին, հենգ'- հենգ', քրասն- քրասն**:

- չափականները՝ **անուց/անուց** ածանցով՝ **փրասանուց, իրքբանուց, վրցցանուց**:

- բազմապատկականները՝ **փակ, պատեգ' բառերի** հետ քանակականների հարադ- րությամբ՝ **հինգ'ըփակ, հինգ'ըպատեգ', վից(ց)ըփակ, վից(ց)ըպատեգ'**,

- անձներականները **ը'քան/էքան** ածանցով՝ **հինգ'ը'քան/հինգ'էքան, վրց(ց)ը'- քան/վից(ց)էքան**:

- կոտորակայինները՝ քանակական թվականների բացառականով (հայտարար) եւ ուղղական-հայցականով (համարիչ)՝ **չօրասն մինը** (մեկ չորրորդ), **քրասնան օրը** (ութ քա- ներորդ):

Թվականները փոխանուն կիրառությամբ հոլովվում են՝ տրականում թեքվելով **էն/ին** (որոշյալ առում) եւ **ն** (անորոշ առում) հոլովանիշներով՝ **օրը/օթ, օթէն/օթու, օթան/օթա, օթավը/օթավ**:

Բարբառում դերանունները լինում են անձնական, ցուցական, հարցական-հարա- բերական, որոշյալ, անորոշ, փոխադարձ, ժխտական:

Անձնական դերանուններն են՝ **յը'ս/յրս/յէս, փու/փն, ինք'ը/ինքը, մուք, փուք/փնէք, ինքն(ն)ք**:

Ցուցական դերանուններն են՝ **էս, էք, էն, ըստի/խտի, (ը) փի/իփի, (ըն) դի/ինդի, էս- քան, էքքան, էնքան, էսչա(ն)ք, էքչա(ն)ք, էնչա(ն)ք, ըստը'ն/ըստէն/ըստդ, (ը) փը'ն/ (ը) փը'ն(ը) փը, (ըն) դը'ն/(ըն) դէ'ն/(ըն) դը'ն**:

էն ցուցական դերանունը կիրառվում է նաեւ **նս** անձնական դերանվան փոխա- րեն:

Հարցական-հարաբերական դերանուններն են՝ **հու(ւ), հինչ, վէր/վը'ր, (հ) ըչտը'ն/ըչ- փէն/հիշտը'ն/վըրդէն/վըրդը'ն, հիշկան/հինչքան/հինչանք/հիշչա(ն)ք/ հինչուք/հիշչուք, քանէ/ քանը'ք/քանի, հիք(ը)/հիքի/հիքու/հէք/հէփ, հուր, հօր, խէ/խի, հունց(ը)/հունցու**:

Որոշյալ դերանուններն են՝ **ամ(ւ) էն/ամը'ն/ ամ(ւ) ան, ամ(ւ) էնք'ը/ ամը'նք'ը/աման- ք'ը, մն(է) գ'ն/ամէգ'ս/մնիգ'ն/ամաքա/ամէք'ս/մն(է) կ'ն , ամէն մին, յօխ, սադ**:

Անորոշ դերանուններն են՝ **մի(ն), էրնիշ/ծրնիշ/ծրիշ, մը'կա/մէկա, մի(ն) քանէ, փը- լան, փըստան, փըլանք'ն/փալանք'ն**:

Ժխտական դերանուններն են՝ **վէչ/վէշ մինը, վէչ/վէշ մին պէն**:

Փոխադարձ են **ինքնուր, մինամինու/մննամննու** դերանունները:

Անձնական դերանունների սեռական հոլովածները բարբառում գործածվում են որ- պես ստացական դերանուններ եւ փոխանվանաբար գործածվելիս կարող են հոլովվել, ինչպես՝ **ինք, քունք, իմին, քունան, ինքնանվը** եւ այլն:

Դերանունները ներկայանում են պարզ եւ բաղադրյալ կառուցվածքներով: Պարզ դե- րանուններ են **յը'ս, փու, էս, էք, էն, հիք, հուր, քանէ, մին, յօխ, սադ** եւ այլն: Բաղադրյալ դերանուններից համադրական բարդություններ են՝ **ըստը'ն, ըպը'ն, ընդը'ն, էսչա(ն)ք,**

Էփզա(ն)ք, Էնչա(ն)ք, մը՛կալ (մէկ այլ), հարադիր բարդություններ են՝ **վէչ միւնը, վէչ մին պէն, ամմէն մի, մի(ն) քանէ**, կրկնավոր բարդություններ են՝ **ճւրճը, միւնմիւնու**:

Դերանունների մի մասը չեզոք է դեմքի նկատմամբ, ինչպես՝ **հիշկան, հուր, ըշփրէ՛ղ, հիբ**:

Որոշ դերանուններ դեմքի գաղափար են հանդես բերում՝ հողերին միանալով, օրինակ՝ **ամմէն միւնրու, վէչ միւնրփ, սաղրա**:

Որոշ դերանուններ (հատկապես անձնական) ունեն դեմքի իմաստի լիակատար դրսետրում, ինչպես՝ **յրէս, փու, ինք՛ը, մուք, փուք, ճւրմնք, Էն**:

Ըստ թվի կարգի իմաստային արտահայտության՝ բարբառում դերանունները բաժանվում են մի քանի խմբերի.

ա) դերանուններ, որոնք ունեն թվի կարգի լիակատար դրսետրում, դրանք են՝ անձնական՝ **յրէս, փու, ինք՛ը**, ցուցական՝ **Էս, Էփ, Էն, ըսփրէ՛ղ, ըփրէ՛ղ, ընդրէ՛ղ**, հարցական-հարաբերական՝ **հու(վ), հինչ, ըշփրէ՛ղ**, անորոշ՝ **Էրճը, մը՛կալ, փրլան, փրսփան, փրլանք՛մա**:

բ) դերանուններ, որոնք ունեն եզակի ձեւ եւ եզակի իմաստ՝ **քանէ, մին, ամմէն մին, վէր, վէչ միւնը, վէչ մին պէն**,

գ) դերանուններ, որոնք ունեն եզակի ձեւ, հոգնակի իմաստ՝ **ամմէն, լօխ, սառ, ճւրճը, միւնմիւնու, մին քանէ**,

դ) դերանուններ, որոնք ընդհանրապես չեզոք են թվի կարգի արտահայտության նկատմամբ՝ **Էսքան, Էփքան, Էնքան, Էսչա(ն)ք, Էփչա(ն)ք, Էնչա(ն)ք, հունց, հիշկան, հիբ, հուր, իւէ**:

Ձեւաբանական մակարդակում հոգնակի թիվը ներկայանում է **ք, էր, նէ** հոգնակերտներով:

Ք թվանիշ թեքությով կազմություններ ունեն միայն անձնական եւ ցուցական դերանունները՝ **յրէս-մուք, փու-փուք, ինք՛ը-ճւրմնք, Էս-ըսփրքանք/ըսփահանք, Էփ-ըփրքանք/ըփահանք, Էն-ընդրքանք/ընդահանք** (Շաղախի ենթաբարբառ՝ **ճւսփճը՛/ճւսփճը՛էր, ճւսփճը՛/ճւսփճը՛էր, ճւսփճը՛/ճւսփճը՛էր, ճւսփճը՛/ճւսփճը՛էր**):

Մյուս դերանունների հոգնակին կազմվում է անվանական հիմնաքերով. միավանկները ստանում են **էր**, բազմավանկները՝ **նէ** հոգնակերտները, որոնց նախորդում է ուղղական-հայցականի հնչյունափոխված կամ անհնչյունափոխ հիմքը՝ **հու(վ)-հուվէր, հինչ-հինչէր, էրճը-էրճնէ**:

Ցուցական **ըսփրէ՛ղ, ըփրէ՛ղ, ընդրէ՛ղ** եւ հարցական-հարաբերական **ըշփրէ՛ղ, հու(վ), հինչ** դերանունները կարող են ստանալ կրկնակի հոգնակերտ (**ուղղական-հայցականի հիմք + էր + ք**)՝ **ըսփրէ՛ղէրք, ըփրէ՛ղէրք, ընդրէ՛ղէրք, հուվէրք, ըշփրէ՛ղէրք, հինչէրք**:

Որոշ դերանուններ՝ **հունց, հօր, իւէ**, բարբառում փոխանվանական կիրառություն չունեն եւ չեն հոլովվում:

Թեքվող դերանուններին հատուկ է հոլովման երկու տիպ՝ անվանական, երբ դերանունները ստանում են գոյականների հատուկ հոլովակերտներ (**միւնը-միւնիւն**), եւ դերանվանական, երբ դերանունների ուղիղ եւ թեք հոլովածները ներկայանում են տարարմատներով (**յրէս-իւ-իւնչ**):

Դերանունների մեծ մասին հատուկ են ուղիղ եւ թեք բոլոր հոլովածները (բացառությամբ ներգոյականի): Դրանք են՝ **ինք՛ը, Էս, Էփ, Էն, հու(վ)** դերանունների հոգնակի ձեւերը (**ճւրմնք, (ը)սփրքանք, (ը)փրքանք, (ըն)դրքանք, հուվէրք, Էսքան, Էփքան, Էնքան, Էսչա(ն)ք, Էփչա(ն)ք, Էնչա(ն)ք, ըսփրէ՛ղ, ըփրէ՛ղ, ընդրէ՛ղ, ամմէն, ամմէն մի, լօխ**,

սաղ, մին, էրճիչ, մը՛կայ, մին քանէ, փըլան, փըսպան, փըլանք'մա, հինչ, վէր, ըշտը՛դ, քանէ, վէչ մինը, վէչ մին պէն դերանունները: Սրանք բոլորն էլ ունեն չորսական հոլովածն, որոնք կազմվում են անվանական հոլովման սկզբունքներով. տրականը բաղադրվում է ուղղական-հայցականի հիմքից եւ հոլովական թեքություններից, բացառականը եւ գործիականը հանդես են գալիս երկու կազմությամբ՝ պարզ (*ուղղական-հայցականի հիմք+վերջավորություն*) եւ վերլուծական (*տրական+ անա/նը՛սպա (գործ.՝ անա/նը՛սպա)*) բառ մասնիկներ: Եթե խոսքը իրի է վերաբերում, բացառականի եւ գործիականի կազմությունը պարզ է, իսկ եթե անձի մասին է, կազմությունը վերլուծական է:

Ըստրրանք, ըտրրանք, ընդրանք, ընրմնք, հուվէրք դերանունները տրականում թեքվում են *ք/ց* հերթագայությամբ՝ *ըստրրանք, ըստրրանց, ըստրրանց անա/ նը՛սպա, ըստրրանց անա/նը՛սպա*:

Էն/ին հոլովանիշով թեքվում են՝ *էքքան, էտքան, էնքան, էսչա(ն)ք, էտչա(ն)ք, էնչա(ն)ք, հիշկան, ըստը՛դ, ըտը՛դ, ընդը՛դ, ամմէն, ամմէն մի, մին, լօխ, սաղ, մին քանէ-նը, էսհինչը, էտհինչը, էնհինչը, հինչ, վէր, ըշտը՛դ, քանէ, վէչ մինը, վէչ մին պէն, էրճիչ, մը՛կայ, փըլան, փըսպան, փըլանք'մա* դերանունները՝ *էքքան(ը), էքքանէն, էքքանան/էքքանէն անա/նը՛սպա, էքքանալ(ը)/էքքանէն անա/նը՛սպա*:

Մի շարք դերանուններ, որոնք թեքվում են *էն/ին* հոլովանիշով, անորոշ առման դեպքում թեքվում են *ու* հոլովանիշով, ինչպես՝ *էրճիչին փօնը-էրճիչու փօն, ըստրդէն ճճիւր - ըստրդու ճճիւր*:

Հարցական-հարաբերական *հիք* եւ փոխադարձ *ձորձոր, մինմինու/մճնմճնու* դերանունները ունեն թերի հոլովում:

Հիք դերանունը չունի գործիական հոլով, տրականը կազմվում է ժամանակ ցույց տվող գոյականների նման՝ *վա* հոլովանիշ թեքությով, բացառականը ստանում է *անց* վերջավորությունը՝ *հիք, հիքվա, հիքանց*:

Ղըրճը եւ *մինմինու* դերանունները գրաբարի նման (*իրերաց, միմեանց*) չունեն ուղղական հոլով, բացառականը եւ գործիականը կազմվում են վերլուծական եղանակով՝ *ճըրճը, ճըրճը անա/նը՛սպա, ճըրճը անա/նը՛սպալ, մինմինու, մինմինու անա/նը՛սպա, մինմինու անա/նը՛սպա*:

Որոշ հարադիր բայերում պահպանվել է գրաբարյան *իրերաց* ձեւը՝ *ճըրճը(ն)ցմմ* *ածէլ/անէլ/տալ/քըցի/ըղնէլ/ընցընէլ/ինիլ/կ'մմ*:

Դերանվանական հոլովման առանձնահատկությունները հանդես են գալիս ուղղական-հայցական, սեռական եւ տրական հոլովներում, իսկ բացառականը եւ գործիականը կազմվում են անվանական հոլովման ընդհանուր սկզբունքներով:

Դերանվանական հոլովմամբ թեքվում են անձնական *յը՛ս, փու, մուք, փուք, ինք'ը*, ցուցական *էս, էտ, էն*, հարցական-հարաբերական *հու(վ)* դերանունները, որոնց հոլովման առանձնահատկությունները առնչվում են ընդհանուր հայերենի դերանվանական հոլովման համակարգի հետ:

Անձնական *յը՛ս, փու, մուք, փուք* դերանուններն, ի տարբերություն մյուս բոլոր դերանունների, ունեն հնգական հոլովածն՝ ուղղական-հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական: Այս դերանունների սեռականը եւ տրականը համընկնում են գրաբարի հետ՝ *իս, ինչ, քու-ք'ը՛գ, մէր-մը՛գ, ծէր-ծը՛գ*: Եղած տարբերությունները պատմական հնչյունափոխության արդյունք են: Բացառականը եւ գործիականը ունեն համադրական կառուցվածք՝ *ինչանա, ինչանալ, ծըզանա, ծըզանալ*:

Ինք՝ը անձնական դերանունը սեռական հոլովածեւ չունի: Տրականը առնչվում է գրաբարյան **իրեան** հոլովածեւին՝ **ձորանն**: Բացառականը եւ գործիականն ունեն վերլուծական կառուցվածք՝ **ձորան անա/նր՛սպա, ձորան անա/նր՛սպալ**:

Որոշ դարձվածներում պահպանվել է գրաբարյան **(զ)ինքն-զինք՝ը** հայցական հոլովածեւը՝ **զինք՝ը ըսպանէ/թափ Կա/հրվաքէ/կուրցընէ/շաղ Կալ** եւ այլն, որտեղ **զինք՝ը** կրել է իմաստափոխություն եւ պարզապես նշանակում է մարմին:

Ցուցական **էս, էպ, էն** դերանունները ունեն չորսական հոլովածեւ, ինչպես անվանական հոլովումը: Դերանվանական հոլովման առանձնահատկություններն արտահայտվում են տրական հոլովում՝ **ըսպորա, ըպորա, ընդորա** (Շաղախի ենթաբարբառ - **ձևսպոր, ձևպոր, ձևնդոր**):

Բացառականը եւ գործիականը կարող են կազմվել եւ՝ համադրական, եւ՝ վերլուծական եղանակով՝ **ըսպորանա/ըսպորա անա/նր՛սպա, ըսպորանա/ըսպորա անա/նր՛սպալ**:

Հարցական-հարաբերական **հու(վ)** դերանունը տրականում թեքվում է **վ/ր** հերթագայությամբ՝ **հու(վ)-հմիր**: Տրական հոլովածեւը համապատասխանում է գրաբարյան սեռական հոլովածեւին՝ **որ**: Բացառականը եւ գործիականը ունեն վերլուծական կառուցվածք՝ **հմիր անա/նր՛սպա, հմիր անա/նր՛սպալ**:

Ինչպես հայերենի մյուս դրսետրումներում, Ղարաբաղի բարբառում եւս բայն ունի եղանակի, ժամանակի, դեմքի, թվի եւ սեռի քերականական կարգեր: Սրանցից յուրաքանչյուրը եւ՝ իմաստային, եւ՝ կառուցվածքային տեսակետից հիմնականում մնում է ընդհանուր հայերենի կաղապարներում:

Բայերն ըստ կազմության բաղադրություններ են, որոնք լինում են երկու բնույթի՝ համադրական եւ հարադրական: Համադրական կազմությունների կառուցվածքը բնութագրվում է **հիմք+բայական վերջավորություն** կաղապարով:

Բայերի հիմքը կարող է լինել անաժանց եւ աժանցավոր, որոնց անորոշ ձեւում հաջորդում են **ալ/ան, էլ** եւ **իլ** բայական վերջավորությունները:

Որպես անաժանց հիմք կարող է հանդես գալ բայարմատ (**մըն-ալ, խոս-էլ, կարթ-իլ**), անվանական արմատ (**կ՛իպար-իլ, քար-էլ**), փոխառյալ արմատ (**յրհմիր-իլ, նաղդ-էլ**), կրկնավոր արմատ (**հըռհըռ-ալ, փըրփըր-էլ**):

Աժանցավոր հիմքերի կառուցվածքն է՝ **արմատ+բայաժանց**: Բայաժանցները բաժանվում են երեք խմբի՝ հիմքակազմ, կերպանիշ եւ սեռանիշ: Բարբառի հիմքակազմ աժանցներն են՝ **ան, էն, ըն, ն, ջ**, որոնցից առաջինները համապատասխանում են գրաբարի **ան, են, ն**, իսկ վերջինը՝ **ջ** բայաժանցներին: Հին հայերենի **ն** բայաժանցը սովորաբար բարբառում մնացել է անփոփոխ՝ **առնուլ-առնէլ, դնէլ-դինիլ**, մինչդեռ **ան** եւ **են** բայաժանցների **ա** եւ **ե** ձայնավորները մեծամասամբ ընկել են կամ հնչյունափոխվել՝ **դեսանէլ-դր՛սնալ, հասանէլ-հրսնէլ, անկանէլ-ըղնէլ/ընզընէլ, մօփենալ-մուփանալ, գփանէլ-քրթէնալ**: Որոշ բայերում **ան**-ը մնացել է անփոփոխ՝ **հասկանալ-հրսկանալ, քարանալ-քրրանալ**: Այս բայաժանցը կարող է հանդես գալ նաեւ մի շարք արմատների հետ՝ կազմելով նոր բայահիմքեր, ինչպես՝ **քաշ+ան+ալ-քրշանալ, դամնագ+ան+ալ-դրմնրզանալ**:

Չբայաժանցը ընդհանուր առմամբ մնացել է անփոփոխ՝ **քրշիլ, օռչիլ, փախչիլ**:

Հին հայերենի **նչ, աչ, անչ** բայաժանցները բարբառում սովորաբար չեն գործառում: Թերեւս կարելի է նշել **ճանաչել-ճրնն(ն) չիլ, մեղանչել-մրղանչիլ** բայերը:

Գրաբարում հազվադեպ գործածություն ունեցող բազմապատկական-կերպանիշ **ապ, օպ** բայածանցները բարբառում խիստ կենսունակ են՝ **կուպրո-ապ-է, շրդշուդ-ապ-է, ճրկնուկ-ապ-է, ծրն-օպ-է, պրպրո-օպ-է, ըսպրն-օպ-է**: Միաժամանակ երեւան են գալիս **օր/ծր** եւ **կօպ** կերպածանցները, որոնք չկային գրաբարում՝ **պըչպըչ-օր-է, կ'ուղկ'ըդ-օր-է, վըշվըշ-ծր-է, կընընչ-կօպ-է, քըռչը-կօպ-է**:

Մեռանիշ ածանցներն են՝ **-ըվ/վ** եւ **-ցըն/ըց(ը)ն**:

Կրավորական **-ըվ/վ** բայածանցը, որ ավանդված չէ գրաբարում, սովորաբար դրվում է ներգործական սեռի բայերի վրա: **է** եւ **ի** լծորդության բայերի դեպքում այն դրվում է անորոշի հիմքի, **ա** լծորդության բայերի դեպքում՝ երբեմն նաեւ անցյալի հիմքի վրա՝ **օպէլ-օպվէ, շինիլ-շինվի, աղալ-աղվէ/ըղացվէ**:

Պատճառական **-ցըն/ըց(ը)ն** բայածանցը համապատասխանում է գրաբարի **-ուցան** ածանցին: Սակայն, ի տարբերություն հին հայերենի, որտեղ բոլոր բայերի պատճառականը կազմվում է անցյալի հիմքից, բարբառում **ցըն/ըց(ը)ն** ածանցը դրվում է անորոշի հիմքի վրա՝ **ծիծաղել-ծիծաղեցուցանել-ծրծրդց(ը)նէ**: Բացառություն են կազմում **ան, ըն, ն** ածանցներով բայերը, որոնց դեպքում պատճառական բայածանցը դրվում է անցյալի հիմքի վրա՝ **գրքանալ-գրքըց(ը)նէ, ընցընէլ-ընցըց(ը)նէ, հրսնէլ-հրսընէլ**:

Հարադրական կազմությունները բարբառում ունեն լայն գործածություն: Հարադրության առաջին մասում գործառում են բնիկ եւ փոխառյալ բառեր, իսկ երկրորդ մասում՝ մի շարք բայեր, ինչպես՝ **խաղ անէ, ինջիմիշ ինի, հօփ կ'ան, սը՛րպ փինի, յը՛ր ածէլ** եւ այլն:

Տալ բայի եւ որեւէ այլ բայի անորոշ ձեւի հարադրությամբ արտահայտվում է պատճառականության իմաստ՝ **ասէլ փա, խօսէլ փա, օպէլ փա, ըսպանէլ փա**:

Բարբառում բայի բոլոր ձեւերը կազմվում են երեք հիմքից՝ **անորոշի հիմք, անցյալի հիմք, անորոշ դերբայ** (դերբայական հիմք):

Սրանցից հիմնական են համարվում առաջինները, որոնք կազմությամբ լինում են պարզ կամ արմատական եւ բաղադրյալ: Անորոշի հիմքը պարզ է, երբ գուրկ է բայածանցներից՝ **աղ-ա, խըն-է, կարթ-իլ**: Անորոշի բաղադրյալ հիմքում բայարմատների հետ գործառում են բայածանցները՝ **մուրթ+ան-ա, առ+ն-է, քըթ+էն-ա, ընց+ըն-է, քըռ+չ-ի, ըսպրկ+օպ-է, կուպրրթ+ապ-է, կըրկըպ+օր-է, կընընչ+կօպ-է, ըսպան+վ-է, չուրթ+ըց(ը)ն-է**:

Անցյալի հիմքը պարզ է, երբ համընկնում է բայարմատին: Անցյալում այդպիսի հիմք ունեն **էն, ըն, ն**, չաճանցներով բայերը, որոնցից աճանցները դուրս են ընկնում, ինչպես՝ **քըթէնալ-քըթ, ընգընէլ-ընգ, փր՛սնալ-փր՛ս, օռչիլ-օռ**: Անցյալի բաղադրյալ հիմքը լինում է բուն հիմքածանցավոր եւ հերթագայական: Հին հայերենի **ի** թույլ բաղադրիչով անցյալի հիմք բարբառին հատուկ չէ: Բուն հիմքածանցավոր հիմքի կառուցվածքն է՝ **անորոշի հիմք+հիմքածանց**: Որպես հիմքածանց՝ հանդես է գալիս **ց**-ն, որին կարող են նախորդել՝ **ա, ը՛, է** լծորդ ձայնավորները: Այդպիսի հիմք ունեն **ա** լծորդության բայերը եւ **է, ի** լծորդության պարզ եւ բազմապատկական ու կրավորական ածանցներով բայերը՝ **աղալ-ըղաց, մընալ-մընաց, խըմէլ-խըմը՛ց, ըսպրնօպէլ-ըսպրնուրթ՛ց, խաշվիլ-խըշվէց**: Հերթագայական հիմքը կազմվում է բայածանցների եւ անցյալի հիմքածանցների հերթագայությունների միջոցով: Դրանք են.

ա) **ն/ց** - անցյալի հիմքը այդպիսի հերթագայությամբ են կազմում **ան** ածանցով բայերը՝ **մըծանալ-մըծաց, քիթըվանալ-քիթըվաց, հրսպանալ-հրսպաց**:

բ) *ԱՐ* - այդպիսի հերթագայություն ունեն պատճառական ածանց ունեցող բայերը՝ **մուտքընկել-մուտքըրթ, հրացընկել-հրացըրթ, շրշկըռցընկել- շրշկըռցըրթ, խուսընկել-խուսըրթ**, ինչպես նաև որոշ անկանոն բայեր՝ **փանկել-փար, փինիլ-փիր**: Մի քանի անկանոն բայերի անցյալին բնորոշ է տարահիմքությունը՝ **օպտել-կեր, փալ-փուլ, կ'անլ-յը'կ**:

Անորոշ դերբայը իբրև հիմք (դերբայական հիմք) գրաբարում մասնակցում էր միայն ապառնի դերբայի կազմությանը՝ **թռչելոց, թռչելի**: Բարբառում այս հիմքից են կազմվում ապառնի դերբայը (բացառությամբ **ն, աճ, էն, ըն, ցըն'ըցըն** ածանցներով բայերի)՝ **խուսըլան, կըրթիլան, ըղըլան**, պայմանական եղանակի ժխտականը՝ **աղալ չըն, սաւլ չըն**, արգելական հրամայականը՝ **ք'իճիլ մէ՛ն, մընալ մէ'ք'**, իսկ Շաղախի ենթաբարբառում՝ նաև ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների անցյալ ժամանակները՝ **ասիլ ըն լան, բիղը/բէղը ասիլ ըն լան**:

Բարբառում բայերի սեռի իմաստաձեւային հատկանիշները արտահայտվում են ներգործական, կրավորական եւ չեզոք սեռերի միջոցով՝ հին հայերենի համեմատությամբ երեսն հանելով մեծ տարբերություններ:

Հայտնի է, որ գրաբարում բայական սեռի կարգը արտահայտվում էր լծորդ ձայնավորների, ինչպես նաև ժամանակաթվադիմանիշ վերջավորությունների միջոցով, ինչպես՝ **գրեմ** (ներգործական սեռ)- **գրիմ** (կրավորական սեռ), **աղաց** (ներգործական սեռ) - **աղացալ** (կրավորական սեռ): Հաճախ էլ մույն բայաձեւը արտահայտում էր եւ՝ ներգործական, եւ՝ կրավորական սեռերի իմաստներ. օրինակ, **հեղու** նշանակում էր եւ՝ **թափում է**, եւ՝ **բափվում է**, **աղայ**՝ եւ՝ **աղում է**, եւ՝ **աղացվում է**: Տվյալ դեպքում սեռերի հակադրությունը իրացվում էր նախադասության մեջ: Հին հայերենում սեռերը չէին տարբերակվում նաև **անցյալի անկապար** ժամանակաձեւում, իսկ դերբայները ընդհանրապես չունեին սեռի ձեւաբանական արտահայտություն: Արեւմտյան խմբակցության որոշ բարբառներ մասամբ պահպանել են գրաբարյան առանձնահատկությունները, մինչդեռ արեւելյան խմբակցության բարբառներում, այդ թվում եւ Ղարաբաղի բարբառում, ինչպես ժամանակակից հայերենում, սեռերի հակադրությունն հիմնականում արտահայտվում է **Վ** սեռաձանցի առկայություն-բացակայություն հատկանիշով: Այս ձեւաբանական միջոցը, որ հանդես է եկել ետգրաբարյան շրջանում, հետագայում գործածվել է գրեթե բոլոր բարբառներում:

Վ սեռաձանցի միջոցով կրավորական սեռը հակադրվում է ներգործականին: Ընդ որում, **Վ** ածանց կարող են ստանալ նաև անդեմ բայերը՝ **ըսպանվել, ըսպանվալ, ըսպանված, ըսպանվող, ըսպրնվրլան** եւ այլն:

Սակայն **Վ**-ն զուտ կրավորանիշ ածանց չէ, եւ բազմաթիվ բայեր **Վ** ստանալիս արտահայտում են նաև չեզոք սեռի իմաստ: Այդպիսի բայերի մի մասը սովորաբար չեզոքության իմաստ ունի փոխաբերական նշանակության դեպքում, ինչպես՝ **ըզաղվել- 1) ազաղվել** (կրավ.), **2) ծննդաբերել** (չեզոք), **քամվել - 1) քամվել** (կրավ), **2) սնանկանալ** (չեզոք):

Չեզոք սեռի իմաստ են արտահայտում նաև անդրադարձություն եւ փոխադարձություն ցույց տվող որոշ բայեր՝ **տրդրվարվել, պըրապրվել, տը'սնըվալ**:

Որոշ բայեր չունեն իրենց սկզբնատիպ՝ չեզոք թե ներգործական, ձեւերը եւ գործածվում են միայն **Վ** ածանցով՝ **կ'ընգ'անրվել, խըղաղվել, կ'իժվիլ, հըմբնըցվիլ**:

Սեռաձանց կարելի է համարել նաև պատճառական **ցըն'ըցըն** ածանցը, որի միջոցով հիմնականում չեզոք սեռի բայերից կազմվում են ներգործական սեռի, իսկ ներգործ-

ծական սեռի բայերից՝ պատճառական սեռի բայեր՝ **թնկանալ-թնկըցրնէլ, մընալ- մընըցրնէլ, փահչիլ-փըհչըցրնէլ, օպէլ-ուպըցրնէլ, խըմէլ-խըմըցրնէլ:**

Բայի անդեմ ձեւերը բարբառում ներկայանում են հետեւյալ տեսակներով՝ անորոշ՝ **խօսէլ, հմըփիլ, աղալ**, անկատար՝ **խոսում, հմըփիմ, աղում** (Հաղորթի եւ Շաղախի ենթաբարբառներ՝ **խուսէլ** (Շաղախի ենթաբարբառ՝ **խուսիս**), **հիրփիս, ըղաս**), վաղակատար՝ **խօսալ, հմըփիմլ, աղալ/ըղացալ**, հարակատար՝ **խօսած, հմըփիմծ, աղած/ըղացած**, ենթակայական՝ **խօսող, հմըփիծղ, աղօլ/ըղացօղ**, ապառնի՝ **խուսուլան/խուսուլական, հիրփիլան/հիրփիլանկան, ըղլան/ըղլական**, համակատար՝ **խուսէլիս/խուսէլիս, հիրփիլիս/հիրփիլիս, ըղալիս/ըղալիս:**

Հին հայերենի անորոշ դերբայի հինգ՝ **ա(յ), է(յ), ի(յ), ու(յ), ո(յ)** լծորդություններից բարբառում կայունացել են միայն երեքը՝ **ա(յ)/ան(յ), է(յ), ի(յ):** Շաղախի ենթաբարբառում **է(յ)** լծորդության բայերը ենթարկվում են **ի(յ)** լծորդության՝ **ասէլ-ասիլ, խըմէլ-խըմիլ:**

Գրաբարի բայերը շատ հաճախ լծորդություններով չեն համընկնում բարբառի համապատասխան բայերի հետ, ինչպես՝ **փեսանէլ-փըսնալ, քողուլ-քողնէլ, զարթնուլ-զըրթնանալ** եւ այլն: Ընդհանուր առմամբ անփոփոխ է **ա** լծորդությունը՝ **բանալ-պէնալ, աղալ-աղալ, բարչրանալ-պիցըրանալ, գողանալ-կ'ուղանալ, մնալ-մընալ:**

Անորոշ դերբայը ունի թե՛ բայական-դերբայական, թե՛ անվանական կիրառություններ: Բայական-դերբայական նշանակությամբ, ինչպես նշել ենք վերեւում, այն մասնակցում է ապառնի դերբայի եւ որոշ ժամանակաձեւերի կազմությանը:

Նախադասության մեջ հանդես գալով՝ անորոշ դերբայը հոլովվում է **ի(ն)** հոլովանիշ թեքությամբ՝ **օպէլ(ը)-ուպէլի(ն)-ուպէլա(ն)-ուպէլալ(ը):** Շարահյուսական մակարդակում այն ներկայանում է տարբեր պաշտոններով. ինչպես՝ **Պատր փինիլը լնլ փէշակ ա** (ենթակա), **Մընէլի վահարը յըկալ ա, էլլն լըզընն իւրնն չի քաշում** (հատկացուցիչ), **Էս մըլըը խըմէլի մըլը ա** (որոշիչ), **Տու խօսէլը գընընում չըս** (ուղիղ խնդիր), **Պա էս սայրէլ ա**՞ (վերադիր), **Էրկան նըսպէլան վըննէրը փըմըրըսալ ա** (պատճառի պարագա), **Խըէղըը փընջվիլնլ սայրալ ա, փընջվիլնլ մընալ** (ձեռի պարագա), **Ուպէլի հըէ-փէ գ'անըը կըփա** (նպատակի պարագա), **Մըղակը պէնալըն բնալը ըսկըտում ա նըղըրղալը** (ժամանակի պարագա) եւ այլն:

Բայի անկատար ձեւը կազմվում է **ըմ/ում/նլ/ան/նլ**, իսկ Հաղորթի եւ Շաղախի ենթաբարբառներում՝ **աս/ան, էս, իս** վերջնամասնիկներով, որոնց բոլոր դեպքերում նախորդում է անորոշի հիմքը՝ **կարթիլ-կարթիմ/կըրթիս, մընալ-մընում/մընաս, օշչիլ-օշչում/ուշչիս, մըծանալ-մըծանում/մըծընաս, հըսնէլ-հըսընմ/հըսնէլ/հըսնիս, ըսպըկօպէլ-ըսպըկօպում/ըսպըկօպէլ/ըսպըկօպիս, ուպըցրնէլ-ուպըցրնըմ/ուպըցրնէլ/ուպըցրնիս, փալ- փամ/փաս, կ'նլ-կ'նլմ/կ'նլ:**

Անկատար դերբայը մասնակցում է սահմանական եղանակի ներկա՝ **խըմում/խըմէլ/խըմիս ըմ/ըս/ա/ընք/ ըք/ըն, աղում/ըղաս ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն, հըվափըմ/հըվըփաս ըմ/ըս/ա/ընք/ըք/ըն**, եւ անցյալի անկատար՝ **խըմում/խըմէլ/խըմիս ի/իլ/ար/ինք/իք/ին, աղում/ըղաս ի/իլ/ար/ինք/իք/ին, հըվափըմ/հըվըփաս ի/իլ/ար/ինք/իք/ին** ժամանակաձեւերի կազմությանը:

Վաղակատար դերբայը ձեւավորվում է **ալ/նլ** վերջնամասնիկով, որը համապատասխանում է հին հայերենի անցյալ դերբայի **եսլ** վերջավորությանը՝ **ծնեալ-ծընալ, գպեալ-քըքնլ, գողացեալ-կ'ուղացալ:**

Ալ/նլ վերջավորությանը կարող են նախորդել անորոշի եւ անցյալի հիմքերը՝ ի տար-

բերություն գրաբարի, որտեղ անցյալ դերբայը ձեւավորվում էր գլխավորապես անցյալ կատարյալի հիմքից:

Վաղակատարը անորոշի հիմքով են կազմում է եւ *ի* լծորդության պարզ եւ բազմապատկական ու կրավորական ածանցներով բայերը՝ *շարէլ-շարայ, իփիլ-իփան, էրվիլ-էրվայ, պրչպրչօրէլ-պրչպրչօրայ, նրսօօրէլ-նրսօօրայ*: Վաղակատարը անցյալի հիմքով են կազմում՝ 1) *ա/ան* լծորդության պարզ, ինչպես նաեւ *ան, էն, ըն, ն* ածանցներով բայերը՝ *աղալ-ըղացալ* (նաեւ *աղալ*), *մրնալ-մրնացալ, փրմանալ-փրմացալ, քրքէնալ-քրքննի, ընգրնէլ-ընգալ, փրժնալ-փրժալ*, 2) պատճառական բայերը՝ *ուփրցրնէլ-ուփրցրրայ, մրծրցրնէլ-մրծրցրրայ, սրվրցրնէլ-սրվրցրրայ*:

Չաճանցով բայերի վաղակատարը կազմվում է եւ՝ անորոշի, եւ՝ անցյալի հիմքերով՝ *սառչիլ-սառչանի/սառայ, օռչիլ-օռչանի/օռայ*:

Վաղակատար դերբայը անկախ կիրառություն չունի: Այն հանդես է գալիս օժանդակ բայի հետ՝ կազմելով սահմանական եղանակի վաղակատար՝ *խրմալ ըմ/ըմ/ա/ընք/ըք/ըն, աղալ/ըղացալ ըմ/ըմ/ա/ընք/ըք/ըն, հրվրպացալ ըմ/ըմ/ա/ընք/ըք/ըն* եւ անցյալի վաղակատար՝ *խրմալ ի/իր/ար/ինք/իք/ին, աղալ/ըղացալ ի/իր/ար/ինք/իք/ին, հրվրպացալ ի/իր/ար/ինք/իք/ին* ժամանակաձեւերը:

Հարակատար դերբայը, որի իմաստը գրաբարում արտահայտվում էր անցյալ դերբայով, բարբառում ձեւավորվում է *ած/անծ* վերջավորության եւ *անորոշի* կամ *անցյալի հիմքի* հարադրությամբ: Հարակատարի հիմքակազմությունը նույնն է վաղակատարի հետ՝ *շարէլ-շարած, իփիլ-իփանծ, էրվիլ-էրված, պրչպրչօրէլ-պրչպրչօրած, նրսօօրէլ-նրսօօրած, աղալ-ըղացած* (նաեւ *աղած*), *մրնալ-մրնացած, փրժնալ-փրժած, փրմանալ-փրմացած, քրքէնալ-քրքննիծ, ընգրնէլ-ընգած, ուփրցրնէլ-ուփրցրրած, մրծրցրնէլ-մրծրցրրած, սրվրցրնէլ-սրվրցրրած, սառչիլ-սառչանծ/սառած, օռչիլ-օռչանծ/օռած*:

Հարակատար դերբայն ունի եւ՝ բայական, եւ՝ անվանական կիրառություններ: Այն մասնակցում է սահմանական եղանակի հարակատար եւ անցյալի հարակատար ժամանակաձեւերի կազմությանը՝ *խրմած ըմ/ըմ/ա/ընք/ըք/ըն, խրմած ի/իր/ար/ինք/իք/ին, աղած/ըղացած ըմ/ըմ/ա/ընք/ըք/ըն, աղած/ըղացած ի/իր/ար/ինք/իք/ին, հրվրպացած ըմ/ըմ/ա/ընք/ըք/ըն, հրվրպացած ի/իր/ար/ինք/իք/ին*: Փոխանվանական կիրառության դեպքում հարակատարը հոլովվում է *էն* (անորոշ առման դեպքում՝ *ու*) հոլովանիչ թեքությամբ՝ *խրմածը/խրմած, խրմածէն/խրմածու, խրմածէն անա/նրժսրա/խրմածու անա/նրժսրա, խրմածէն անալ/նրժսրալ/խրմածու անալ/նրժսրալ*:

Այս դերբայը շարահյուսական մակարդակում կարող է հանդես գալ որպես ենթակա (*Քրչէրվա կէրածը կօրած ա*), որոշիչ (*Պրռաված մարթըն էլ ա խօխա*), հատկացուցիչ (*Թրղվածէր կրնէզ՛ր հանց ա մարալ ինի*), վերաբերության խնդիր (*Սրռածէն անա քնրիի կանին*), պատճառի պարագա (*Ըփրրա ըսածավը յր՛ես շար ըմ ուրխանում*), ուղիղ խնդիր (*Յր՛ես քրածրփ մրննաս քրցիլ չրմ*), միջոցի խնդիր (*Ըրածավրփ պէն չի դնիզիլ*), ձեւի պարագա (*Աչկէրը չրռած յէ՛նն ա*):

Ենթակայական դերբայի վերջավորությունն է *օղ/ծղ*, որով այն նույնաճում է գրաբարի նույն դերբայի հետ: Սակայն, ի տարբերություն հին հայերենի, այդ վերջավորությունը հիմնականում դրվում է ոչ թե անցյալի, այլ անորոշի հիմքի վրա՝ *կ՛իր-օղ, հրսն-օղ, ուրխան-օղ, սառչ-ծղ, լրպրզփ-օղ* եւ այլն:

Ա լծորդության մի շարք բայերի ենթակայականը կարող է ձեւավորվել նաեւ անցյալի հիմքից, ինչպես՝ *աղալ-աղօղ-ըղացօղ, մրնալ-մրնօղ-մրնացօղ, մրծանալ-մրծա-*

նօդ-մըծացօղ:

Ենթակայականը բայի եղանակային ձեերի կազմությանը չի մասնակցում: **Խըմօղ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, խըմօղ ի/իք/ար/ինք/իք/ին, աղօղ/ըղացօղ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, աղօղ/ըղացօղ ի/իք/ար/ինք/իք/ին, հըվապօղ/հըվըպացօղ ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, հըվապօղ/հըվըպացօղ ի/իք/ար/ինք/իք/ին** եւ այլ ձեերը լայն տարածում չունեն:

Փոխանվանաբար կիրառվելիս ենթակայականը թեքվում է հարակատարի նման՝ որոշյալ առման դեպքում՝ **էն**, անորոշ առման դեպքում՝ **ու** հոլովանիչներով՝ **ասօղը/ասօղ, ըսօղէն/ըսօղու, ըսօղէն անա/նր՛սպա/ըսօղու անա/նր՛սպա, ըսօղէն անա/նր՛սպա/ըսօղու անա/նր՛սպա**:

Ենթակայական դերբայը նախադասության մեջ ներկայանում է իբրեւ ենթակա (**Ծնու կ'ուղանօղը ծի էլ կըկ'ուղանա**), որոշիչ (**Տու օրօղ-խըմօղ մարթ ըս, ինչ ՚ալ կըսկանա**), հատկացուցիչ (**Հիբիօղին քօնը քերպակ կինի**), խնդիր (**Ըսօղէն ըսկանօղ քիդի ինի**):

Ապառնի դերբայի հիմքակազմությամբ (անորոշ դերբայից) բարբառը ընդհանուր առմամբ նույնանում է հին հայերենի հետ: Սակայն վերջինիս **օղ** եւ **ի** մասնիկները փոխարինված են **-ան/անն, -սկան/անկանն** վերջավորություններով՝ **ասէլ-ըսըլանն/ըսըլանկանն, քըռչիլ-քըռչիլանն/քըռչիլանկանն, գըռռալ-գըռռըլան/գըռռըլանկան, ուրվալ-ուրվըլան/ուրվըլանկան, մուրթօպէլ-մուրթուպըլան/մուրթուպըլանկան**: Ստեփանակերտի եւ հարակից որոշ խոսվածքներում դրան զուգահեռ գործածվում են **-էլու, -ալու, -իլու** վերջավորությամբ ձեերը՝ **ըսէլու, քըռչիլու, գըռռալու, ուրվալու, մուրթուպէլու**, որոնք գրական հայերենի ազդեցության արդյունք են:

Պատճառական եւ **ան, էն, ըն, ն** ածանցներով, ինչպես նաեւ որոշ պարզ բայերի ապառնի ձեւավորվում է անորոշի հիմքից՝ **խըմըցընէլ-խըմըցընան/խըմըցընական, ուպըցընէլ-ուպըցընան/ուպըցընական, մուպանալ-մուպընան/մուպընական, քըթէնանլ-քըթինանլ/քըթինանկան, ըղնէլ-ըղնան/ըղնական, հըսնէլ-հըսնան/հըսնական, շիւնիլ-շիւնան/շիւնանկան, մընալ-մընան/մընական**:

Ապառնի դերբայը ունի միայն բայական կիրառություն. նրանից կազմվում են սահմանական եղանակի ապառնի եւ անցյալի ապառնի ժամանակաձեերը՝ **խըմըլան/խըմըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, խըմըլան/ խըմըլական ի/իք/ար/ինք/իք/ին, ըղըլան/ ըղըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, ըղըլան/ըղըլական ի/իք/ար/ինք/իք/ին, հըվըպըլան/հըվըպըլական ըմ/ըս/ա//ընք/ըք/ըն, հըվըպըլան/հըվըպըլական ի/իք/ար/ինք/իք/ին**:

Համակատար դերբայը ունի **իս** վերջավորությունը, որը դրվում է անորոշ դերբայի վրա՝ **խըմէլիս, ըղալիս հըվըպալիս**: Անորոշի **լ**-ն հաճախ փոխարինվում է **յ**-ով՝ **խըմէլիս, ըղայիս, հըվըպայիս**:

Այս դերբայը հիմնականում ունի փոխանվանական կիրառություն՝ ժամանակի պարագայի դերով (**Ուպէլիս խօսէլ չըն**):

Ղարաբաղի բարբառն ունի հինգ եղանակաձեւ՝ սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական, հրամայական, որոնցից յուրաքանչյուրը մյուսներին հակադրվում է իր ուրույն հատկանիշներով:

Սահմանական եղանակը մյուսներին հակադրվում է օժանդակ բայի առկայությամբ (բացառությամբ անցյալ կատարյալի), ըղձական, պայմանական, հարկադրական եղանակները հակադրվում են եղանականիշ մասնիկի առկայություն-բացակայություն հատկանիշով. ըղձականը գուրկ է եղանակիչից, պայմանականին բնորոշ է **կ/կը**, հարկադրականին՝ **քիդի/քըդի/քէդի/պէպի/պըպի/պիպի/քէդմա/պէպմա** եղանակիչը: Հրամայ-

յական եղանակն ունի միայն երկրորդ դեմք, որ ընդգծվում է հատուկ վերջավորություններով եւ շեշտի ուժգին արտաբերմամբ:

Նշված եղանակածեւերը տարբեր են նաեւ ժամանակածեւերի քանակով. սահմանական եղանակն ունի ինը ժամանակածեւ՝ ներկա՝ **ասում/ըսէա/ըսիս ըմ/ըա/ա//ընք/ըք/ըն**, անցյալի անկատար՝ **ասում/ըսէա/ըսիս ի/իք/ար/ինք/իք/ին**, հարակատար՝ **ասած ըմ/ըա/ա//ընք/ըք/ըն**, անցյալի հարակատար՝ **ասած ի/իք/ար/ինք/իք/ին**, վաղակատար՝ **ասալ ըմ/ըա/ա// ընք/ըք/ըն**, անցյալի վաղակատար՝ **ասալ ի/իք/ար/ինք/իք/ին**, ապառնի՝ **ըսըլան/ ըսըլական ըմ/ ըա/ա//ընք/ըք/ըն**, անցյալի ապառնի՝ **ըսըլան/ ըսըլական ի/իք/ար/ինք/իք/ին**, անցյալ կատարյալ՝ **ըսը՛ցէ, ըսը՛ցէր, ասից, ըսը՛ցէ(ն)ք՛, ըսը՛ցէք՛, ըսը՛ցէն**, որոնք, բացի վերջինից, կազմվում են համապատասխան դերբայներից եւ օժանդակ բայի ներկայի կամ անցյալի ձեւերից: Անցյալ կատարյալն ունի ինքնուրույն ձեւաբանական արտահայտություն. կազմվում է անցյալի հիմքից՝ հատուկ դիմաթվանիշ վերջավորությունների միջոցով:

Ըղծական, պայմանական, հարկադրական եղանակներին հատուկ է երկուական ժամանակածեւ՝ ապառնի եւ անցյալ, որոնք կազմվում են անորոշի հիմքից՝ դիմաթվանիշ վերջավորությունների միջոցով. ըղծական ապառնի՝ **ասիմ, ասիս, ասէ, ասի(ն)ք՛, ասիք՛, ասին**, պայմանական ապառնի՝ **կասիմ, կասիս, կասէ, կասի(ն)ք՛, կասիք՛, կասին**, հարկադրական ապառնի՝ **բիդի ասիմ, բիդի ասիս, բիդի ասէ, բիդի ասի(ն)ք՛, բիդի ասիք՛, բիդի ասին**, ըղծական անցյալ՝ **ըսի, ըսիր, ասար, ըսի(ն)ք՛, ըսիք՛, ըսին**, պայմանական անցյալ՝ **կըսի, կըսիր, կասար, կըսի(ն)ք՛, կըսիք՛, կըսին**, հարկադրական անցյալ՝ **բիդի ըսի, բիդի ըսիր, բիդի ասար, բիդի ըսի(ն)ք՛, բիդի ըսիք՛, բիդի ըսին**:

Շաղախի ենթաբարբառում օժանդակ բայի անցյալի ձեւեր չկան. անցյալի անկատար, անցյալի հարակատար, անցյալի ապառնի ժամանակածեւերի իմաստը արտահայտվում է ներկայի ձեւերի եւ **լմլ** բայի հարադրությամբ՝ **խըմիս ըմ լմլ, խըմած ըմ լմլ, խըմըլան/խըմըլական ըմ լմլ**, իսկ անցյալը՝ **խըմալ ըմ**, խոսքի մեջ արտահայտում է նաեւ անցյալի վաղակատարի եւ անցյալ կատարյալի իմաստներ: Նույն ձեւով ըղծական անցյալի եւ պայմանական անցյալի կառուցվածքը բնութագրվում է **անորոշ դերբայ+օժանդակ բայի ներկայի ձեւեր+լմլ** կաղապարով՝ **խըմիլ ըմ լմլ**, որից **բիդը/բէդը** եղանակիչով կազմվում է հարկադրական անցյալը՝ **բիդը/բէդը խըմիլ ըմ լմլ**:

Հրամայական եղանակի հոգնակին բոլոր դեպքերում ձեւավորվում է անցյալի հիմքից՝ **շինը՛ցէք՛, մընա՛ցէք՛, ըսը՛ցէք՛, փախէք՛/փրիչէ՛ցէք՛**:

Եզակի հրամայականը անորոշի հիմքով են կազմում **է, ի** լծորդության պարզ եւ բազմապատկական, չեւ կրավորական ածանցներով բայերը՝ **կա՛րթի, խըմէ՛, ըսպանվէ, կուպրրա՛յրէ, օ՛ռչի**, ինչպես նաեւ **ա՛մլ** լծորդության պարզ բայերը՝ **ա՛ղա, մընա՛, հըվա՛յրա**:

Մյուս բայերի եզակի հրամայականը կազմվում է անցյալի հիմքից՝ **մուպա՛ց, քըթիլ, ընցէլ, հըսէլ, պիցըրցըրու՛**:

Բարբառում, ինչպես հայերենի մյուս դրսեւորումներում, բայի դեմքի եւ թվի իմաստները ներկայանում են միեւնույն դիմաթվանիշ վերջավորություններով, որոնք ընդհանուր առմամբ արտահայտում են նաեւ ժամանակի իմաստ: Այդ վերջավորությունները բաժանվում են վեց խմբի՝ օժանդակ բայի ներկայի ձեւերի՝ **ըմ/ում, ըս, ա, ը(ն)ք, ըք, ըն**, օժանդակ բայի անցյալի ձեւերի **ի, իք, ար, ի(ն)ք՛, իք՛, ին**, ըղծական ապառնու՝ **ամ/իմ**,

աա/իս, ա/է, ա(ն)ք/ի(ն)ք', աք/իք', ան/ին, ըղձական անցյալի՝ ի, իր, այր, ի(ն)ք', իք', ին, անցյալ կատարյալի՝ է, էր, -/առ, է(ն)ք'/ի(ն)ք', էք'/իք', էն/ին, եւ հրամայական եղանակի՝ ա, է, ի, էր, իր, ու, թ (արմատ), էք'/իք': Հրամայականի այս վերջավորություններին նախորդում են.

ա) *ա-*ին՝ *ա* լծորդության պարզ բայերի անորոշի հիմքը՝ *ա՛ղս, մընս՛, ըրվա՛,*

բ) *է-*ին՝ *է* լծորդության պարզ, կրավորական եւ բազմապատկական բայերի անորոշի հիմքը՝ *խըմէ, ըսպանվէ, ծրմըռս՛դէ,*

գ) *ի-*ին՝ *ի* լծորդության պարզ, կրավորական եւ *չ* ածանցով բայերի անորոշի հիմքը՝ *կա՛րթի, շի՛նվի, փա՛խչի,*

դ) *էր/իր* - ին՝ *էն, ըն, ն* ածանցներով բայերի, ինչպես նաեւ *չ* ածանցով որոշ բայերի անցյալի հիմքը՝ *քրթիր, ընգէր, հրսէ՛ր, փա՛խէր, կո՛րէր,*

ե) *ու-*ին՝ պատճառական բայերի անցյալի հիմքը՝ *մըծըցըրո՛ւ, խըմըցըրո՛ւ,*

զ) *թ-*ին՝ *ան* ածանցով եւ անկանոն բայերի անցյալի հիմքը՝ *մուպս՛ց, մըծս՛ց, փի՛ր, պէ՛ր,*

է) *էք'/իք'* հոգնանիշ ընդհանուր վերջավորությանը նախորդում է բոլոր բայերի անցյալի հիմքը՝ *ըսա՛ցէք', հրսէ՛ք', կա՛լիք', մընըցըրէ՛ք', փրմս՛ցէք'* եւ այլն:

Ու ձայնավորով վերջացող բառերին հաջորդող օժանդակ բայից առաջ լավում է *վ՛ ծախու վա, մարթու վա*, իսկ մյուս ձայնավորներով վերջացող բառերից հետո՝ *յ՛ ըրկաթէ յա, կօզնի յա* եւ այլն:

Բարբառում ժխտական խոնարհումը արտահայտվում է *չ(ք), վէչ, մէլ/միլ/մէր/միր, մէք'/միք'* մասնիկների միջոցով, որոնք համապատասխանում են հին հայերենի *չ, ոչ, մի* մասնիկներին:

Օժանդակ բայով կազմվող բոլոր ժամանակների ժխտականը արտահայտվում է *չ* մասնիկով, որ դրվում է դերբայից հետո հանդես եկող օժանդակ բայի վրա՝ *աղում չըմ, աղում չի, աղսա/ըղացալ չըմ* եւ այլն: Օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքում լինում է *չի՛* սպասելիք *չա-*ի փոխարեն՝ *ասում ա-ասում չի, շիննլ ա-շիննլ չի:*

Պայմանական եղանակի ժխտականը կազմվում է անորոշ դերբայից եւ օժանդակ բայի ժխտական ձեւերից՝ *կասիւմ-ասէլ չըմ, կրսիւմ-ասէլ չի:* Ընդ որում, ապառնի ժխտական ձեւերում օժանդակ բայը կարող է ունենալ նաեւ նախադաս գործածություն՝ *շօնը գօռնավ վը՛րս չըն փանէլ, անօդ-թօղօդ ախճիզ՛ը փանը չի մընալ:*

Մյուս ժամանակների (բացառությամբ արգելական հրամայականի) ժխտականը արտահայտվում է *վէչ* մասնիկով, որ ընդհանուր առմամբ գործառում է խոնարհվող բայից հետո՝ *հըսնիւմ վէչ, հըսնի վէչ, բիդի հըսնիւմ վէչ, հրսէ վէչ* եւ այլն:

Ըղձական եղանակում երբեմն *վէչ* մասնիկը գործածվում է նախադաս (հատկապես անեծքներում)՝ *վէչ հըսնիս ումէդիս, վէչ փրէ՛սնաս խօնցըրս:*

Հարկադրական եղանակի ժխտականը կազմվում է նաեւ *չը* մասնիկով, որ գործառում է եղանակից անանջատ՝ *չըբիդի ասիւմ, չըբիդի ըսի:*

Արգելական հրամայականը բաղադրվում է անորոշ դերբայից եւ *մէլ/միլ/մէր/միր* (եզակի), *մէք'/միք'* (հոգնակի) մասնիկներից, որոնք հիմնականում ունեն ետադաս կիրառություն՝ *խըմէլ մէ՛ն, խըմէլ մէ՛ք':* Անորոշի *լ-*ն հաճախ սղվում է՝ *խըմէ մէ՛ն, խըմէ մէ՛ք':*

Արգելական մասնիկը հարադիր բայերում գործառում է անորոշ դերբայից առաջ՝

փոնս մէջ կ'ան, փոնս մէջ կ'ան: Այս դեպքում անորոշի լ-ն մնում է անփոփոխ, իսկ արգելական մասնիկը ձայնավորով սկսվող բային նախորդելիս կարող է պահպանել միայն **մ-ն` փոնս մէջ անէ/փոնս մա'նէ:** Հոգնակիում անորոշի վերջավորությունը փոխարինվում է արգելականի վերջավորությամբ` **փոնս մէջ անէ/փոնս մա'նէ:**

Բարբառում գործածական են նաեւ մի շարք անկանոն եւ պակասավոր բայեր:

Անկանոն են **անէ, առնէ, պէնայ, պիրի, կ'ան, քրքէնայ, փինի, կ'ը'նայ, ինի, կէնայ, օնէ, օփէ, փայ, փանէ, փր'սնայ** բայերը, որոնք հիմքակազմության օրինաչափություններից եւ խոնարհման ընդհանուր համակարգից շեղվում են հիմնականում անցյալ կատարյալում, անցյալի հիմքից կազմված ձեւերում եւ բուն հրամայականում:

Պակասավոր են **ըմ** էական բայը, ինչպես նաեւ **կամ, անրժիմ** բայերը: Սրանցից առաջինը ունի միայն սահմանական եղանակի ներկա եւ անցյալ ժամանակաձեւերը` **ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն, ի, իր, ար, ինք', իք', ին:**

Կամ եւ **անրժիմ** բայերը ունեն միայն սահմանական ներկա ժամանակաձեւը` **կամ, կաս, կա, կանք, կաք, կան, անրժիմ, անրժիս, անրժի, անրժինք', անրժիք', անրժին,** եւ սահմանական անցյալի եզակի թվի 3-րդ դեմքը` **կար, անրժար:**

Օնէլ բայը **փակէ, ծածկէ, վերցնէլ** եւն նշանակություններով գործածվելիս անկանոն բայ է, իսկ **ունենայ** նշանակությամբ գործածվելիս պակասավոր է եւ ունի նույն ժամանակաձեւերը, ինչ **ըմ** էական բայը` **օնիմ, օնիս, օնէ, օնինք', օնիք', օնին, ունի, ունիր, օնար, ունինք', ունիք', ունին:**

Լայն գործածություն ունեն նաեւ երկրորդական բաղադրյալ ժամանակները: Դրանք հիմնականում կազմվում են անկատար, համակատար, հարակատար դերբայների եւ **ինի** բայի խոնարհված ձեւերի հարադրությամբ, ինչպես` **ք'ընիւմ ըմ ինիւմ/իլնիւմ/իւնն, ք'ըննիս ըմ ինիւմ/իլնիւմ/իւնն, ք'ը'ցած ըմ ինիւմ/իլնիւմ/իւնն** եւ այլն:

Երկրորդական բաղադրյալ ժամանակաձեւեր են կազմվում նաեւ հարակատար դերբայի եւ **կամ** պակասավոր բայի հարադրությամբ, ինչպես` **ք'ը'ցած կամ, ք'ը'ցած կաս, ք'ը'ցած կա:**

Բարբառում մակբայները ըստ իմաստային խմբավորման լինում են` ժամանակի` **ըսոր(է)/ սասոր/սոր(է)** (այսօր), **էք'նից/էք'նիւմ/ծք'նից** (վաղը), **ան(յ)ծր** (մյուս օրը), **մրիէնգ/մրիէնգ'** (հիմա), **յրիկէ/յրիէգ'ի** (երեկ), **կրնօիւկ/կրնօիսանց** (վաղուց), **քրչէրայ/քիչէրայ** (վաղ առավոտյան), **ծանք'ին/ծաք'ին/ծէք'ին** (արեւածագին), **ըսպարէ/ըսպրռնէ** (այս տարի), **հրք'նէ/հրք'նու/հէրու/հրք'նէ** (անցյալ տարի), **էզզնն(ան)/էզզան(ան)/էզզննն/էզզանդան/էզզննն/էզզանան** (միշտ), **հննն(ա)** (դեռ), **սիէպ/աննն(ըմրա)/անէպը** (հետո), **կանօի/կանուիս** (կանուիս), տեղի` **դրքէպ/դիքէպ/դրքրէպ/դիքրէպ** (դեպի ետ), **փիլք'ր/փրլք'ր** (վերեւ), **փիվէր/փրվէր/փուվէր** (ներքեւ), **փէւ/փրէւ** (այս կողմ), **փէն/փրէն** (այն կողմ), **փէմարէմ** (դեմառդեմ), **մօփէ/մօփի** (մոտիկ), ձեւի` **կանա(ն)ց** (կամաց), **սիիւլ-թափիւլ** (արագորեն), **զօռ(ո)սլ** (զոռով), **գ'ընգ'ըրիսպան(ա)/գ'ինգ'ըրիսպան(ա)** (կամաց-կամաց), **քիդդնն/քիդդան** (խկույն), **գ'իք** (հանկարծ), **սիիւլիսպա** (բացահայտ կերպով), **թաթար-յախնի/թնթնիսնի** (ձեռաց), **դասիդ/դասպի** (դիտմամբ), չափի` **շար-շար** (առավելագույն չափով), **հերիք/հերիք'** (բավական), **սպաառ** (մի քիչ), **թօլ-թօլ** (առատորեն) եւ այլն:

Որոշ մակբայներ ընդհանրական են, ինչպես` **առաչ** (տեղի եւ ժամանակի), **ճէլի** (ձեւի եւ ժամանակի):

Որոշ մակբայներ առաջացել են քերականական ձեւերից` **քրչէրայ, զօռսլ, վրէննուք:**

Տեղի եւ ժամանակի մակբայների մի մասը կարող է հոլովվել, ինչպես՝ **փիլիսոսայիտները** եւ այլն:

Ինչպես հայերենի մյուս դրսեւորումներում, բարբառում եւս կապերը ըստ տեղի լինում են նախադրություններ եւ ետադրություններ, ըստ կազմավորվածության՝ իսկական, ան-իսկական եւ կապական բառեր:

Գրաբարի նախդիրները ընդհանուր առմամբ չեն պահպանվել, թերեւս որոշ կապակցություններում հանդես է գալիս **ի-ն՝ ծծրըն ի յը՛ր, ծծրըն ի վէր, սարըն ի յը՛ր, սարըն ի վէր:**

Նախադրությունները իսկական կապեր են՝ **բիդի/բրդի/բրդն/դիբի/դրբն** (դեպի), **մինչը/մինչէվ** (մինչեւ), **առանց/ուռուց** (առանց), **չք(էլ)մնը/չրոու/չրօրանը** (մինչեւ):

Ի տարբերություն գրաբարի՝ բարբառում գերակշռում են ետադրությունները: Դրանցից իսկական կապեր են՝ **մըհար** (համար), **կրման(ցէ)/գ՛ուման** (բացի), **ք՛խի** (չափ, մեծությամբ), **(ը) գ՛ծրն/(ը) գ՛օրա** (համեմատ), **(ը) բնայ/(ը) բախպ/ըբնթ** (հեց որ), **պը՛ղ/պը՛ղ** (փոխարեն), անիսկական կապեր են՝ **յրա** (վրա), **նրման/նրման** (մման), **մաչին** (մեջ), **խաբրն/ խմբրն/խաբէր/խմբէր** (հանուն), **քը՛շտէն** (կողքին):

Կապական բառեր են՝ **պի՛ու** (դուրս), **յը՛րը** (վերեւ), **վախպը** (ժամանակ), **առաչ** (առաջ), **հը՛ռէ** (հեռու), **փիլիսոս** (վերեւ), **փիվէր** (ներքեւ):

Կապերը պահանջում են ուղղական, տրական եւ բացառական հոլովներով խնդիրներ:

Ուղղական հոլովով խնդիր են պահանջում **առանց, մինչը՛վ, չքէլմնը, բիդի, ք՛ի-մի** կապերը՝ **առանց քօն, մինչը՛վ շէնը, չքէլմնը բօսպանը, բիդի քաղաք, գ՛նլ ք՛ի-մի:**

Տրական հոլովով խնդիր են պահանջում **կօշպ** (ընդերս կօշտը), **մըհար** (տատուն մըհար), **նըհը՛պ** (շանը նըհը՛տ), **հը՛պէ** (ըխճըկա հը՛տէ), **մաչին** (տանը մաչին), **յրա** (ծառէն յրա), **պակէն** (սարէն տակէն), **պը՛ղ** (ըսկընալին տը՛ղ), **նրման** (ինճ նրման), **դմբրն** (կընգա դմբրն), **նմնց** (փօղէն նմնց): Այս կապերի մի մասը պահանջում է սեռական հոլովով խնդիր, երբ գործածվում է անձնական 1-ին եւ 2-րդ դեմքերի դերանունների հետ, ինչպես՝ **իմ նմնց, քու պակէպ, ծէր մաչին, մէր քը՛շտէն:**

Բացառական հոլովով խնդիր են պահանջում **յը՛պը** (հըրսընքան յը՛տը), **հը՛ռէ** (մըզանա-ծըզանա հը՛ռէ), **կրման** (կընգանը անա կրման), **պէս** (շէնան տէս), **պէն** (ծառան տէն), **առաչ** (ընդըրանա առաչ):

Առաչ կապը ժամանակի իմաստով իբրեւ ետադրություն գործածվելիս կարող է ընդունել նաեւ ուղղական եւ գործիական հոլովներով խնդիրներ, ինչպես՝ **երկու օր առաչ, վէց քարէ առաչ, օրավ առաչ, շէփրավ առաչ:**

Անիսկական կապերը նյութական իմաստով գործածվելիս կարող են հոլովվել՝ **մաչ-մաչին-մաչան-մաչավը:** Այս կապերին հատուկ է նաեւ հոդառությունը՝ **պակէս, պակէպ, պակէն, մաչիս, մաչիպ, մաչին** եւ այլն:

Բարբառում շաղկապները նույնպես բաժանվում են երկու խմբի՝ համադասական եւ ստորադասական:

Համադասական շաղկապներ են՝ **ու, էլ** (եւ, ու), **համ** (եւ), **ամ(մ)ա/ամհա/համ(մ)ա** (բայց), **ևս** (ու, եւ), **յա** (կամ):

Ստորադասական շաղկապներ են՝ **վէր/վար/վը՛ր/ վօր** (որ, որպեսզի, եթե), **քա վէր**

(եթե), *կանց/կա(ն)ա/ քան(ց)* (քան), *կօզ'ի/կօզի/կծզի* (թեկուզ, թեև), *անգ'անր/ագ'անր* (եթե):

Բարբառը հարուստ է ձայնարկություններով, որոնք բաժանվում են հետեւյալ խմբերի. *զգացական՝ ա՛ ի, վա՛ն յ/վո՛ւ յ, վա՛ն շշ/վի՛ շշ, ո՛ւ ի/օ՛ հ, սա(ն)ա՛ն ն, ջա՛ն ն, ուխա՛ն (յ) /օխա՛ն (յ), փա՛ն հ-փա՛ն հ, քը՛ խ(ա), պօ՛/բօ՛/վօ՛, պա՛/բա՛, կամային՝ փը՛խի, փի՛շպ, ճի՛ւ-ճի՛ւ, բի՛ժի, (ա)չո՛ւ, փըփը՛ռռ, բնաչայնական՝ քը՛ռ(ռ), նը՛ռռ, վը՛զ(զ), փը՛զզ, փը՛ շշ մի-յա՛ վու, բա՛ն :*

Բարբառում գործածվող վերաբերականները ըստ արտահայտած իմաստի ներկայացնում են հետեւյալ խմբերով. *հասարակական՝ հա* (այո), *պա հինչ* (իհարկե), *դի՛զ վէր* (իրոք որ), *երկբայական՝ հանլըմք/հանրըմք* (երեւի), *բանլ(ք)ան/բանլը՛մա/բանլ(ք)ի/ բանլի* (թերեւս), *սաբալ* (իրբ, իբրեւ), *հանցա* (կարծես), *կաբուրը(քր)/ բուքուրը(քր)/բուքուրը(քր)* (իրբեւ), *սասրկական՝ առռէ/առռի* (թեպետեւ, հենց), *լափ* (հենց), *սահմանափակման՝ կօնյա/զօնյա* (զոնե, թեկուզ), *միմակ/մէնակ/միմանկ* (միայն), *կամային՝ հանլան(մ)/հըլան(մ)* (հապա), *թօղ(է)* (թող), *ժխարական՝ չէ* (ոչ), *չըչէմին/չէչէմին/չիչէմին* (ոչ մի դեպքում) եւ այլն:

Շարահյուսական կառուցվածքով բարբառը ընդհանուր առմամբ համընկնում է արդի հայերենին՝ հանդես բերելով արեւելահայերենին բնորոշ հատկանիշներ: Այնուամենայնիվ, կարելի է նշել մի շարք առանձնահատկություններ.

- Հարցական նախադասություններում հարցը հիմնականում դրվում է օժանդակ բայի վրա՝ *Խէ՛ յը՛ս սասալ, հինչ ը՛ն շինիս* (ի՞նչո՞ւ ես ասել, ի՞նչ են սարքում):

- Բարդ համադասական նախադասություններում համադաս նախադասությունները հաճախ կապակցվում են շարահարությամբ՝ *Յը՛ս սասալ ըն, փու ըսկացալ չըս* (ես ասել եմ, բայց դու չես լսել):

- Բարդ ստորադասական նախադասություններում գերադաս եւ ստորադաս նախադասությունները հաճախ կապվում են կախյալ շարահարությամբ՝ *Քը՛ցալ ա ծըմակը՝ փանդ պիրի* (զնացել է անտառ, որ փայտ բերի):

- Ուրիշի ուղղակի խոսք ստորադաս նախադասությունը գերադասին երբեմն կապվում է *բա* շաղկապի միջոցով՝ *Իմ փափ սասալ ա, բա. - Վէր մը՛ռնիմ, ինչ թօռնանըս քըշպէն կըթաղիք՝* (Իմ տատը ասել է. «Որ մեռնեմ, ինձ իմ թոռան մոտ կթաղեք»):

- *Ս, պ, ն, ը* հոդերը, զուգորդվելով կապական բառերի հետ, արտահայտում են համապատասխան դեմքի իմաստ եւ զեղջում կապվող դերանունը՝ *Մաչիք հինչ կա՞* (քո մեջ), *Տակըս նամ ա* (իմ տակը), *Յըրան պէն չի կա* (նրա վրա), *Առաչը փը՛սնում չի* (իր առջեւը):

- Ուղղական հոլովով կարող է արտահայտվել գրական հայերենում տրական եւ ներգոյական հոլովներով դրսեւորվող տեղի պարագան՝ *Մաչիք ճար ա քըսալ* (մեջքին դեղ է քսել), *Խըրմանջուղ փիլիփոն չի կա* (Խըրմանջուղում հեռախոս չկա):

- Տրական հոլովով երբեմն արտահայտվում է գործիական հոլովի իմաստ՝ *Տօնրք քանէ մընէթու վը՛ս ծախալ* (տունը քանի՞ ռուբլով ես վաճառել):

- Ուղիղ խնդիրը անձի առման դեպքում կարող է արտահայտվել ուղղական հոլովով՝ *Հիմբմըցին փրդան փրսակալ ա* (Համբարձումը տըղային ամուսնացրել է):

- *Լոխ, սաղ* դերանուններով արտահայտված որոշիչը սովորաբար դրվում է որոշյալից հետո՝ *Ըխճըկէք՛ը յօխ մարթու վրն քը՛ցալ* (բոլոր աղջիկները), *Տըղէք՛ը սաղ յը՛ կալ ըն* (բոլոր տղաները):

- **Մուրասնայ** բայը պահանջում է բացառական հոլովով խնդիր՝ **Հնորը փրկէն անա մուրասցայ ա** (մոտեցել է տղային):

- Անորոշ դերբայի իմաստը կարող է արտահայտվել հարակատար դերբայով եւ հակառակը՝ **Հարկավէր ա ըղացած** (հարկավոր է աղալ), **Հնլմ խօսկրս ըսէլու՝ կրգնրվում ըս** (դէռ խոսքս չսասած՝ բարկանում ես):

- Անորոշ դերբայի տրական հոլովի փոխարեն նախադասության մեջ երբեմն գործածվում է անկատարը՝ **Խըմում վախարը շար ա խօսում** (խմելու ժամանակ շատ է խոսում):

- Անկատար դերբայը կարող է գործածվել ենթակայական դերբայի փոխարեն՝ **Ըշփրէ դ փննջվում մարթ ա փրէսնում, քժմնճ՝ ա սնում** (որտեղ տանջվող մարդ է տեսնում, օգնում է):

- Պայմանական ապառնին կարող է արտահայտել սահմանական ներկայի իմաստ՝ **Կասին փրսակվայ ըս, դիւզ ա՞** (ասում են՝ ամուսնացել ես, ճի՞շտ է):

- Ստորոգյալը հաճախ թվով չի համաձայնում ենթակայի հետ՝ **Ծառերը ծաղկայ ա** (ծառերը ծաղկել են), **Աշկերքը քուռանա, վրէններքը փրովէ, ընգունէկը քրռանա** (աչքերը քուռանան, ոտքերը բռնվեն, ականջները խլանան):

Բարբառի բառապաշարի հիմնական շերտերն են՝ գրաբարից ավանդված բառեր, բարբառային բառեր, փոխառյալ բառեր: Բառային կազմի գերակշռող մասը բարբառային բառերն են, որոնք ստեղծված են հին հայերենից ավանդված եւ փոխառյալ բառերից՝ բառակազմական տարբեր միջոցներով, ինչպես նաեւ՝ անկախ դրանցից:

Փոխառյալ բառերի շերտում հիմնականում արեւելյան լեզուներից (արաբերեն, պարսկերեն, թուրքական լեզուներ) եւ ռուսերենից կատարված անմիջական եւ միջնորդավորված փոխառություններն են:

Հատուկ տեղ են գրավում նաեւ այն բառերը, որոնք ունեն հնդեվրոպական ծագում, սակայն չկան գրաբարում՝ **Արց, լափու, լէմ, լօկ, կօրկ** եւ այլն:

Բարբառում բառերը լինում են մենիմաստ եւ բազմիմաստ:

Բազմիմաստությունը հիմնականում պայմանավորված է բառերի փոխաբերական իմաստով կիրառությամբ, ինչպես՝ **Կ'ստնը** բառը բացի հիմնական իմաստից՝ **գառ**, փոխաբերաբար նշանակում է նաեւ **հեզաբարո, խոնարհ, քար** բառը փոխաբերական կիրառությամբ ստացել է նաեւ **կարծր, սնգուր** իմաստները եւ այլն:

Գրաբարի հետ ընդհանուր բառերը իմաստաբանական մակարդակում երեւան են հանում մի շարք փոփոխություններ.

Էտ դմրընըտ ասլանը ըռըչներան տհու ա կ'ամ, թա.

- Հը՞, ա՛ ախմախներ, էտ հինչ ը՞ք քըսի-փըսի անըմ:

Էշերը լիւզվա կըտրում ըն, չօքում, մին թնհրավ կըմկըմամ.

- Հէ՛չ, թաքավէրըն ասարած կէնա, լիհն ընդի էշ-էշ խուսէլավ ք'իներն ընք:

3(40). ՄՕԿՈՒՆԸՆ Ա ՄԵԿԸԾԸ՛ՌՆԸ

Հունց ա պըտահում՝ մօկունը մըկըծը՛ռնէն կօշտը դօնաղ ա ընգնում: Մըկըծը՛ռնը պիլըրիւմ ա իլննծ-չիլննծնն, կաղնան-գատան հիլըրիւմննթ անում: Մօկունը էտ վէր տը՛սնում ա, ասում ա.

- Մըկըծը՛ռնը ախպեր, էս ա՞ քու ապրուստըտ, ըստի ապրէլը մըգօված, յը՛ս ճուղպօրավ-տըկօղնավ, յը՛ղըր-մը՛ղըրավ ըմ նըստում-յը՛ր կէնում, պա համօթ չի՞, յը՛ր կաց, տանիմ քը՛կգ արքայութիւն:

Կ'ամ ըն հըսնում շէնը: Առաչի քըշերը լ'ըհնն նի յըն մընում մին տօն, թա ճուղուպուր կ'ուղանան, տարը դույուղ ա ջիհիւմ, ճըրընէն կըտրած փախճում ըն: Ըտի մըհէտ տարը, մըհէտ կատուն, մըհէտ շօնը ջըհիւմ ըն, տահանց կօրծը խափան անում: Մըկըծը՛ռնը ծէրքը թափ ա տամ, թա.

- Մօկուն ախպեր, յը՛ս քը՛կցէ, լ'ավըն էն ա փըթած կաղէն օտիմ, քան թա ջանըս տուղտուղալավ՝ յը՛ղըր-մը՛ղըր:

3(41). ԹՆՍՆՔՆԻՐ ՄԱՐԹԸ

Մի մարթ հնրիւր տարէ ապրում ա, հայ-հայը ք'ինամ, վայ-վայը մընամ, ամնա էիա աշկը քուշտանում չի: Վէր Կ'ննփրիյէլ հըրիշտըրակը կ'ամ ա, թա տանէ, վը՛նները տէմ ա տամ, դանչանք-պըղատանք անում, հըղէդա տամ, մին քանէ տըռնըվա գ'անք էլ օզ'ում: Կ'ննփրիյէլը խըղճամ ա, թա.

- Մա'րթ օլաբան, էտ յեզնը, էտ տու, պ'նուտնըտ տի'ր յիրան, քանէ մնագ ինի տակէն, էնքան տարէ գ'անք ում տամ:

Հնլն խօսկը պիրանունը՝ մարթը սաղ ջանավը ընգում ա յեզնանը յիրան, ծիրքէրավըն էլ կըլծխը խըտտում:

3(42). ՊԸՌԱՎԷՆ ԹԱՄԱՀԸ

Աստուծ Կ'նպիրիյէլէն դարկում ա մին պըռավու կօխկ, վեր հ'նլք'ին ինք' օնէ: Պառավը չօքում ա Աստվածէն դանչանք անում.

- Ա'ստուծ, շընուրիակալ ըմ, ինձ խուխատար, թուռնատար ըս շիննլ, ամմա հինչ կընի՞, վեր մին տասար տըռնըվա գ'անք տաս՝ ծուռնէրիս տը'սնամ, յետնան տանիս:

Աստված սըրտան լէն ա ք'իննում, պըռավէն խընթիրք'ը կըդարում: Տասար տըռնանը յետը, վեր հըրէշտըրակը կ'ամ ա, պառավը մին էլ ն ծէրքէրը բիդի յերգ'ինք'ը մը'կնում.

- Ա'ստուծ, մէխկ ու կըրակ ում, մին տասար տարէ էլ բախշի, կուռնէրիս տը'սնամ:

Վեր վախտը թըմամում ա, Աստված Կ'նպիրիյէլէն դարկում ա, թա.

- Էլ թօ'դիս վուչ՝ պէն խընթրէ, հ'նլք'ին ի'նք' կալ՝ պեր:

Պառավը էտքանը վեր գ'նուդ'ում ա, վերչին շընչումը բիդի յերգ'ինք'ը պուլօր ա անում, թա.

- Անիծված ընիս, Ա'ստուծ, մին քանէ տարէն հինչ ա՞, վեր տըվէցեր վուչ՝ կուռնէրիս փըսակիմ, խէրը տը'սնամ:

3(43). ԱՍՏՈՒԾ ՀԷՌՈՒ ՊԱՀԷ ԸԼԸԲԸՍԵՐՍԱԿԻՆ ՔԱՅԻ ՏԱԼՆՆ

Ըլըբաստըրակը ծըմակավը ք'իննլիս յէշում ա տը'սնում՝ արչը կըծանումը պըրանամ: Պըկան փըռնում ա դաչանք անում.

- Արչ ախպեր, մէխկ ըմ, լի՞, հինչ կինի՞, վար հնք'իտ պատառ քաշիս, անց կէնամ:

Էքսը էլիս հնմին տը'ղը պըտահում ա արչին, էլիս թա.

- Արչ ախպեր, դաչանք ում անում, ճօտէրըս էն ըն սօված, թօ'դ, անց կէնամ:

Իրէքինչի օրը էլիս վար տը'սնում ա՝ արչը կըծանումը պըրանամ, սնք'նքը հըրցընում ա, արչը ասում ա.

- Էս ա իրէք օր ա՝ ինգ'ալ ում թալակը, կարում չում՝ տ'նու կ'ամ:

Ըլըբաստըրակը էտ վար ըսկանում ա, խընդըրուզի յա տամ արչին քացի տամ, թա.

- Մօծն'կ, քը'գ ասալ չու՞մ, էլ ըստը'դ պըրանէս վուչ:

3(44). ՕՅԸՆ Ա ԾԻՆ

Օցը ամէն տարէ հալավը փօխում ա: Մի հէտ էլ հալավը փուխէլիս ծին պըտահում ա:

Օցը ասում ա.

- Մաթրս-դուքրս կըտրում ա. յը՛ս ամէն տարէ շծրքս քննանլնմիշ ըմ անում, տու սաղ գ՛անքըտ մին հըլավում ըս անց կըցընում:

Ծին խուսկու տակ չի մընում, յը՛տ ա տը՛ռնում, թա.

- Օ՛ց ախայէր, իմ մաթրս-դուքրս էլ ա կըտրում, վար տու էտքան շնետ-շնետ հալավըտ փոխում ըս, ամնա մին հէտի էլ ա գ՛իդնում չըս՝ խասա՛աթըտ փոխէս:

3(45). ԱՄՍԷՆ ՄԱՐԹ ԷԼ ՄԻՆ ԳՆՐԳ ՕՆԷ

Մին քաքավը՛ր նըրանն ցնըք՛նընընէն դարկում ա ծըմակը, ասում.

- Ք՛նցէք՛ իսնց ծառ պիրաք, վար յիրան վը՛չ չծր ճօղն ինի, վը՛չ կօտըրած: Ննըք՛նընէն ք՛իննն ըն օխտը օր սաղ ծըմակը շօռ կ՛ամ, տանրտանկ ու բօշ յէտ տաննում, թա.

- Թաքավը՛րըն ապըրած կէնա, քու ըրգ՛իրումըտ տըրէնց ծառ չի կա, վար յըրան չօր յա կօտըրած ճօղըն չինի:

3(46). ԱՄՍԷՆԱՆԸ՛Ղ ՕՐԸ

Կարկուտը կ՛ամ ա մինին բօստանը քիշնում: Յէտնան էլ արաշտըն ա վէր կօխում արտէրը խաշնում, կօվըն էլ ընդը՛ղ ա ցըմաքում, թօղում տօնը չօքած: Մըրքըկընէգ՛ մընամ ըն նըրնըր իրէտու յիշիլիս: Կընէգ՛ը ասում ա.

- Ա՛ մարթ, յննի ըստըրանա յէրը նը՛ղ օր էլ ա՞ ինում:

Մարթը թա.

- Հա՛, ա՛ կընէգ՛, էս հնլն հինչ ա՞, ամմէնանը՛ղ օրը էն ա, վար մարթ պըրըրըստօթուն ա քաշնում, սուփրա-սէղան պնց անում, մի հընգէր-հիրէվան չի կ՛ամ, թա նըստա մին պատառ կըտրէ:

3(47). ԿՆՆԷՆ ԼԸ՛ՎՕԹՈՒՆԸ

Մին մարթ էըն նըստեց ք՛ինաց ծըմակը: Էըն կապէց, ինք՛ը կացինը յեր կալնլ հըռացավ, վար չօր ծառ քըթննա: Մին դաթում էըն զըռօնըն քըցից ընդը՛ղէք՛: Տարը մուտացավ տը՛սավ՝ մին կ՛նլ, յիրա պըրծած, օգ՛ում ա՛ խէղճ հիյվանէն ցըրէվ տա: Մուտացավ կ՛նլին պըկան փըռնէց, վար խէխտի, կ՛նլը խըռխըռ-ցընէլավ յէտ տանավ, թա.

- Մարթ ախայէր, յէս քէգ լը՛վօթունա կըման հինչ ու՞մ ըրալ. օգ՛ալ ում էշին խըրատէն, վար հախէ-նըհախէ զըռզըռա վուչ, քէգ գօրծա քըցի:

3(48). ՄԱՐԹԸՆ Ա ՃԸՂՈՒՊՈՒՐԸ

Մին մարթ, ճըղպըրէն տակէն թէյըն տըրված, էն ա իննում դինչընալիս, բնըրլնն մին ճըղուպուր ա վէր ինգ՛ում: Մարթը կօտրում ա օտում, թա.

- Ուխա՛յ, հիշքան ա է՛ քախծըր, մնիծված ինիս, Ա՛ստուծ, խէ ծըմէրուկու մըչանք չըս շիննլ՝ օտէն քուշտանամ:

Էտ սըհաթէն ծառէն պըտկան մին օրիշ պուպու վա վէր ինգ՛ում բուշ ճըկատէն: Մարթը ասում ա.

- Փարքըտ շատ ինի, Ա՛ստուծ, վար ճըղուպուրը ծըմէրուկու մըչանք չըս ըստէղծալ, թա չէ իմ ճարըս հինչ կընի՞:

3(49). ՎԵՆՆԵՏ ՅՕՐՂԱՆԵՏ ՈՒՓՉՐԱՆՍ ԿՐԿՆԵ

Շրմանանքը կրտադում ա, հախե-նրհախե լօխճին կրծում: Մի օր էլ աշկր ունքան էնքան ա պրցրաննում, վար մրտկումը տրնում ա՝ ասլանէն կրծէ ըսպանէ, ինքը տանննն թաքավէր: Էքսը յէշում ա տէսնում՝ ասլանը, լիւզին տոնս կալած, լրհլրհամ ա, մուտանում ա, հինչքան օժժումը կա՝ լուզվան կրծում: Ասլանը լիւզին յէտ ա քաշում, շրնրճաննջին կօլ տամ:

3(50). ՆՉՔՍՐԸ

Կ'անփրիյէլ հր'րիշտըրակը նի յա մրնում մին հըրուստու տօն, թա.
- Ծէր տանան էրկու հօքու էս քըշէրը պիտի տանէն էն դունյան:
Լօխ բիղնն մծք'անրն ըն յէշում: Նծք'անրը ասում ա.
- Հա յէ՛, էտ մինը յէս, պա յերգըրօ՞րթը:

3(51). ՍԱՐԵՆ ԾԵՆԵԼԸ

Սադարաթը յէր ա իննում, ըշխարքավըս մին ա տաննըն, թա փըլան սարը յըղէ յա, ծընէլ պիտի: Մարթ-մուրթ, հէյվան-պանն, սար-ծօր լօխ հըվաքվում ըն, թա տէսնան սարը հինչ ա պիրիլանն: Մարէն ցավը փըռնում ա, տըրքամ ա, ճըռռամ ա, հարայ-հուրայ, ախըրը, ծընում ա, մին կուճուր մօկուն վը՛ր քըցնում:

3(52). ԳԵՐԸՆ Ա ԷՇԸ

Մին դէր օզից էշին կարթիլը սուվըրցընէ. դանվթանը տիրանվ ըռաչէն, թա.
-Ասէ ա՛:
Էշը օրիշ հինչ ա՞սէ, լրհա մին բաշ զըռռամ ար: Գէրը կ'ուվազանը յէր կալանվ էշին ջանէն իլանվ, ամնա էլ'հա չի պանն աննալ յէկու: Վար շատ թակէց, էշին լիւզին փըսավ, ասէց.
- Գէ՛ր ախպէր, իմ փէշակըս հըմբըլօթինըն ա, էն ա՝ վար կըրի կըրթի, յէս քու միշկէտ կընըստի, վէշ թա տոն՝ իմ:

3(53). ՂԱՁԸՆ Ա ԱՐԾԻՎԸ

Ղազըն ա արծիվը հծջանթ ըն տամ: Ղազը ասում ա.
- Տու հինչացու վո՞ւս, մինակ մին թըռչիլ ըս գ'ուղիւն, ամա յէս հա՛ն լըղ ըմ տամ, հա՛ն տափին յիրա շօռ կ'ամ, տէղը ինզ'ած տը՛ղըն էլ՝ թըռչնում:
Արծիվը ծիծաղում ա, թա.
- Ա՛ դանգըլա, լ'ավըն էն չի՞, վար մին պանն անէս, ըրամակին անէս, քան թա մին քանի պանն՝ ամէնան խըրէգ-խըրէգ:

3(54). ԷՇԸՆ Ա ԾԻՆ

Մին մարթ ոնրանն յօրղա ծիյին միշտ վարսակ, կ'արի ար տամ, խօտէն լանվըն ար տամ, էշին էլ՝ կըրճունքը: Էշը շատ բողօքէց, խըռավէց: Մին օր էլ տարը, ծին նըստած, կըռէվ ք'ինննց, էրկու օրանը յէտը ծիյին յարալու, մըրոնը շըռռալավ

Արցախի բանահյուսությունը

պիրավ: Էշը էտքանը վար տեսավ, սուսուփուս սրքսեց կըրճունք օտէլը: Հօղուտ, ցէխուտ կըրճունք էլ ար օտում, դաթումըն էլ, վար շիլ ինկ'ած կ'անրի ին տամ, խըրթնում ար, դուդվավը կուփի տամ բիդն ծիյին առաչը:

3(55). ԱՐՉԻՆ Ա ԱՂՎԷՍԻՆ ՋԸՐՈՒՅԸ

Արչըն ա աղվէսը մին օր պըտահում ըն, գըրոնց անում: Աղվէսը ասում ա.

- Ա՛րչ ախայէր, մարթին մը՛սը հինչ համ օ՞նէ:

- Խարար չօնէմ, ա՛ղվէս ախայէր, յէս մարթու մը՛ս կէրած չում, սաղէն քըլօլում ըմ, անա մըռածէն նի չում կ'ամ:

- Լ՛ավըն էն չի՞, սաղէն չի նի կ'աս, մըռածէն օտէս, ա՛րչ ախայէր, յէս տըհէնց ում անում:

Արչը ծիծնողում ա, թա.

- Կըտըրվէ՛ս տու, տու հանց սադանա յըս, թա վար օժըտ պատէ, սաղ մարթ էլ կօտէս, ասլան էլ:

3(56). ԱՍԼԱՆԸՆ Ա ՄՕԿՆԸ

Մի օր ասլանը քօլավը ք'իննիս ինգ'նով հօրսկանին թալակը, տէս դարթու տըրվավ, տէն դարթու տըրվավ, կարաց վէչ տոնս կ'նն, սրքսեց պըռանչէլը: Էտքանըտ մի մօկնը տը՛սավ, յէկավ թըլակին կապէրը կըրծկըրծէց, թաքավէրին ըգաղէց: Ասլանը խօր թառանչ քաշէց, հըմընչ-համանչ թա.

- Շընօրհակալ ըմ, մօկնը:

Մօկնը գ'առ-գ'առ սննսր պըցըրցըրավ.

- Հունց թա՞ թա՛ շընօրհակալ ըմ, տոն իմ կէնթանըն էս, սըրանա յէտը յէս թաքավէր էն, տոն՝ ծառա, հինչ հըրամանք տամ, պիտի կըդարէս:

Ասլանը կըրծիսը քաշ ա քիցոնմ քընէնք՛ անում, ք'ոննոն հօրսկանին ըռաչին վէտը կէնում, թա.

- Յիւն ըրա ինձ վը՛ր քըցի, մա՛րթ ախայէր, լննվըն էն ա՛ քու ծը՛րքավը մը՛ննէմ, քան թա մօկնին ծը՛րքավը ըգաղվէմ:

3(57). ՄԱՐԹԻՆ ԳԱԼՈՒՆ

Մէ հարուստ մէ քննսիբի թըփէլի, փծրին գննփկէլի, քըցէլի կ'էտինն: Քննսիբն էրկու ծէրոսով փծրէն պըռնէլի, կանչէլի.

- Վա՛յ մէշկիս, վա՛յ դալուս:

Մէկ'նն մօտէնալը վէր.

- Քօ տունըտ շինվի, փծրիտ էն գննրկի, դալույէտ է՞ս ծէն նննէլի:

Քննսիբն ասէլի:

- Բնն ինչ նն՞նէմ, վէր ինձ դալու ինի, դալույումըս մարթ ըլը, վը՛ր կըմանա իմ փծրիս գարկի:

3(58). ՕՂՏԷՆ ԳՆՐԳԸ

Շիննցին օղտը կօրչում ա, հիշք'նն շօռ ա կ'ամ, սօրաղ ա անում, քըթէնում չի: Ճարը կըտրած՝ ք'իննն ա մըսէն բագարը տէսնում՝ օղտու մը՛ս ըն ծախում:

Մուտանում ա թօքուջիգ'անրին վըրըվ'ող աճում, մինին յիրն վը'ննը կենում, թա.

- Սա իմ օղտին թօքուջիգ'անրն ա:

Ծախօղը քըմծիծաղ ա տամ, թա.

- Քու տօնը շինվի, խալխը նըրննց սաղ օղտը չըն ճինննչ'նում, տու թօքուջիգ'անրին յիշելնվ վըրդեղա գ'իդն'ցիր, թա քունըն ա:

Շիննցին ասում ա.

- Իմ օղտըս իրեք ծնք ա կուրցըրալ, լ'ա'վ յեշի, նըրա սըրտեն յիրն իրեք յարա յա իննն:

Յեշ'նում ըն տը'սնում` դ'նոզ վար տըրենց ա: Վը'ննուկուլ'ծխըն էլ ըն պիր'նում, համօզվում, վնր էտ մարթին օղտըն ա:

Հատեք տըրենց ա, դ'նրդը փիս պ'նն ա, մարթ իլնծ, հեյվան իլնծ, վար նիստա յա կենում, հունց էլ ինի, սըրտեն յիրն մի յարա թօղում ա:

3(59). Կ'ՈՒԼԻՆ ԶՕՂԱԲԸ

Մեհեա կ'ոլըն նի յա մըտնում մին շեն, վեր վեշխար կ'ուղանա, տընատը'րնը շօնը դույուղ ա ջիհ'նում, հիշիլնվ հետան պըրծնում: Հըղըցեննի արչը պըտահում ա, թէ.

- Կ'ո'լ ախպեր, պա համօթ չի', վեր շանը անա էլ ըս վախում, փախչում:

Կ'ոլըն թառանչ ա քաշում, թէ.

- Արչ ախպեր, վեր դ'նոզը գ'իդաս, վախում չըն, լ'ըհա հիշիլնն ա զնհիլնս տանում:

3(60). ԻՐԻՔՆԱԿԸ, ՔԱՄԻՆ, ՄԱՐԹԸ

Իրիք'նակըն ա քամին շնրթ ըն կ'ամ, թա հու կըկարա հօնձ ընօղեն շօրերը հանէ: Չօփ ըն քըց'նում, հերթը հըսնում ա քամին: Քամին կըտաղում ա, փըշշամ, վըշշամ, հիշքան օժումը կա` մարթին անավ պըտուտնը տամ, ամնա պ'նն չի նննն կ'ամ. հիշքան պենդ ա փըչում, մարթը էնքան տընագ ա անում, նըրնն շ'նըրերումը պըտատվում:

Իրիք'նակը ժուլիկ ա ինում. յըվըշ-յավաշ կըծանում ա, մարթին տիմբիրցընում: Մարթը հընցընում ա ծանեն շօքը, էլ'հա չի տնն կենում, ճարը կըտրած տըկլուրանում ա, տամ կ'ետին մեչը: Իրիք'նակը քըմծիծաղ ա տամ, թա.

- Քամի ախպեր, մարթը ճօկ հեյվան ա, նըրա օժժավ կարալ չըս յախնէս, թա օգում ըս կօրծըտ տեսնաս, պիտի կ'օք տաս, քախծըր լ'նոզի պինըցընէս, սիլի-բիլի անէս, վար կարաս խաթիրը քըթ'նննս:

3(61). ՎԸՄԿԻ ՓԱՅՏՕՆԸ

Մին թաքավը'ր մին վը'սկի փայտօն ա շինիլ տամ, ըշխարքավըս մին անում.

- Հու վար կարա իմ փայտօնէս կ'ինը գ'իդա, հըրըստութունէս կեսը տըլականում նըրնն:

Սաղ էրգ'իրումը հիշքան իմաստուն ա ին'նում, կ'ամ ըն, բայց վեշ մինը կարում չի հենց կ'ին ասէ, վար թաքավը'րը ըռագի կենա: Մին չօքան ա կ'ամ, թա.

- Թաքավրերն ապրած կենա, քու վրէսկի փայտօնըտ չարժի հուլիս ամարվա մին քօռու:

3(62). ՔՕՈՒ ՉՕՔԱՆԸ

Մի քօռ չօբան ա ինձում: Կօզի քօռ, ամնա հինչ հիյվանու նի յար կ'ամ, դնստի ճինննչնում ար: Մի օր էլ էս չուբանէն կօշտը կ'նկնի ծնք՝ ըն պիրում: Չօբանը ծերքերը նի յա քըսնում, թա.

- Կարալ չըմ ասէմ՝ հինչու ծնք՝ ա, ամնա մի պնն հաստատ կասէմ. տըրան վըչխարէն մէչին քօղէք՝ վէչ:

3(63). ՓԱՓԱՂԸՏ ՀՈՒՐ Ա՞

Կ'նկը ըլբըստըրակէն վըրդը՛դ տը՛սնում ա, փըռնում ա տըմբըզում, թա՝ փափաղըտ հուր ա՞: Ըլբաստըրակը ք'իմնում ա արչէն կօխկը՝ կ'էնգ'ատ: Արչը ծէն ա տամ կ'նկին, խըրատ կարթնում.

- Ա՛ ախմախ, օրիչ մահնա չը՞ս կարում քըթնննա:

- Ա՛րչ ախպէր, հինչ ա՞նէմ, ա՛սէ:

- Հինչ պի՞տի անէս, մին կէզար օ՛գէ, վար տէղինը տա, ասէ՝ խէ սը՞վ չի, վար սը՛վը տա, ասէ՝ խէ տէ՞ղին չի:

Կ'նկը ուրխացած նի յա հըսնում ըլբըստըրակէն կօշտը, թա.

- Մին կէզար տօ՛:

Ըլբաստըրակը ասմա.

- Կ'նկ՛ւլ ախպէր, տէ՞ղին, թա սը՞վ, մը՞ծ, թա կ'ն՞ւճնկը, թօ՞փալ, թա բի՞զիզ՛...

Կ'նկը տէսնում ա, վար պնն չի մնննլ կ'ամ, փըռնում ա, մին լ'ավ քըլօլում, թա.

- Փափաղըտ հուր ա՞:

3(64). ՓԱՆ ՀԻՆԳՈՒՇԿԱՆ

Թուխսուկանը ճուտէրին նըհէտ էն ա ինձում ծառէն տակէն քնէջնէջ ընէլիս, բըրդնն մին տիրէվ ա վեր ինննում մին ճօտու կըլխէ: Ճօտը, բըրդըյար տննած, սննտը քըցնում ա ընդը՛ղէք, ծըվծըվամ.

- Աշխարը փօլ ա կ'ննի՛, աշխարը փօլ ա կ'ննի՛, մին զը՛ռ քար էլ իմ կըլխէս ա ընգ՛էլ:

Սննսին յիրն հըվաքվում էն, սննս-սննսու էն տալի, սօք փըռնում: Մին հինդնէլկու վը՛րցակ գ'առ-գ'առ մուտանում ա, թէվէրըն ու հնք'ին ցէց կըցնում, թա.

- Արխային ք'ննցէք քնէջնէջ ըրէք, յէս աշխարը թիվէրիս յիրն կըպահէմ:

65. ԷՇԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Էշին հըրցընում էն.

- Վար քուռակիտ նըհէտ կալ էք թակում, կալան տնն կ'ննիս վըտըրնէքըտ թափ էք տալիս, հինչի հէ՞տի:

Էշը ասում ա.

- Ծըմէռը, վար խօզին ճըրդօցը ըսկանում էմ, տըրնն հէտի:

3(66). ԿՈՒԼԵՆ ՈՒ ԱՌՈՒՅԾԸ

Կոնկրետ ու առույծը ըստիսըրացան, քիմացիկն հորսի, տըխան՝ մի սոնրոն ծիյան ըրածում էն: Առույծը ասեց.

- Կոնկրետ ախապեր, հինչ վար հըրցընեմ, դոնը կասես:
- Աշկիս յիրան,- ասեց կոնկրետ:
- Մազերըս բիզ-բիզ ցեց ա՞ կըցել:
- Բիզ-բիզ ցեց ա կըցել:
- Աշկերըս առնավ լըցել ա՞:
- Էն էլ հո՞ւնց:
- Հնքիս հըլծըվել ա՞ մեշկիս յիրա:
- Հըսել ա ճըկատիտ:
- Դե վար տըրեց ա, վախտըն ա:

Ասեց ու յիրան տըվավ ծիյանցը միհին յիրան, մեշտընդան էրկու կըխ ըրավ, կերան կուշտացան:

Էքծը օչըրեդը կոնկրետըն էր: Կոնկրետ հըրցըրավ.

- Մազերըս բիզ-բիզ ցեց ա՞ կըցել:
- Չէ՛,- առույծը կարաց վեչ սօտ ասի:
- Աշկերըս առնավ լըցել ա՞:
- Չէ՛:
- Հնքիս հըլծըվել ա՞ մեշկիս յիրան:
- Չէ՛:

- Փըխըլօթին ա քաշում,- մըտածեց կոնկրետ, յիրան պըրծավ մի ծիյու: Ամնա ծին ճըրեց քացի տըվավ կոնկրետը կըխտեմ, վար աշկերը տոնս տանան:

Ըստեղ առույծը տեմ չի կըցավ, ասեց.

- Կոնկրետ ախապեր, մըրեկ վար մազերըս բիզ-բիզ ցեց ա կըցել, աշկերըս առնավ լըցել ա, հնքիս հըլծըվել ա մեշկիս յիրան:

- Նախանձ,- քըթեն տակին մըրթմըրթաց կոնկրետ, վըտերը յետնան քաշ ընելավ, հըռացավ:

3(67). ՅԸՉՆԸՆ Ա ԷՇԸ

ՅըՉՆԸՆ, պիցրացած քըրծեն պըտօկը, ըրածում ար: Էշը տըխավ, հարայ-հըրօցը քըցից.

- ՅըՉՆԸՆ ախապեր, յե՛տ տըն, ընգնական ըս ծծըր, յե՛տ տըն:

Տըխնօղնեն ըսըցեն.

- Է՛շ ախապեր, էտ հիբանց ա՞ յըՉՆԸՆ հըտե ջանըտ հեռում, էտ քըզանա չի: Էշըն էլ թա.

- Պա հինչ ա՞նհիմ, վեր ընգնե քըրծեն տակը ըստակե, կաշին ա մեսը ինձ ըն պիռըրլան:

3(68). ԽՕԶԻՆ ՋՕՂԱԲԸ

Մին խօզմու մարի ըրրծելիս մին տըրեկան էք՝ խօզ՝ մուտացավ: Մարունը հանց յըրա պըրծավ դուրվավը թըխից, վեր էք՝ խօզը մին բաշ ճըրից: Մին հու-վուրանը յետը մին վըրց ճօտ մուտացավ, դուդան մըկնից, վեր մարուվեն հնք՝ վին տական վըրտ-վըրտ անե, հըսավ վուչ: Մարունը կըռացավ, հանցու վըրց ճօտը կարե ներանն քեփը նըրիմիշ անե:

Մինը էտքանը տըրսավ, հըրցըրուց.

- Ա՛յ մարուն, էտ հունց ա՞, վեր էն էք՝ տըրըկանեն խըռեզ՝ տուվեր, նըլըրցեր լըփըճ-լափուճ անիս, ամմա էտ փըպընքօտետ թօղում ըս՝ մօտ թակե:

Մարունը խըռխըռցըրավ, թա.

- Հիշքան ճօտեր օնիմ, լօխ ըտըրա նըմաններան ա, սըրտըս, հօքիս դինջըցընօղը տահանը ըն, յը՛ս հունց տահանց քարավ տա՞մ:

3(69). ԱՂՎԵՍԸՆ Ա ԱՍԼԱՆԸ

Աղվետըն ա ասլանը հըսնում ըն մին կետու: Աղվետը ասում ա.

- Թաքավերըն ասպրած կենա, յը՛ք կարմունջ քըթենանք, անց կենանք:

Ասլանը գըռանում ա.

- Էս հինչ ա՞ վեր, յը՛ս բիդի ճնըրը կըտըրիմ անց կենամ:

Վեր նի յա մըտնում ճնըրը, մին օշափ ծնըկուն հախառում ա, ըսլանեն մին բուղը պուք տամ:

Աղվետը յեշում ա, թա.

- Էս քըրեզ խըրատ, միհենգ՝անց տենը լ՛ավ գըրդն՝ տու ցամաքեն թաքավերըն ըս, վեչ թա ճիբին:

3(70). ԱՆԳԸՆ Ա ԱՂՎԵՍԸ

Մեհեա անգը մին ըլբաստըրակ փըռնից, վեր տանե ճուտերեն հըրտե: Հըղեննի յեշից տըրսավ իրեք ըղվետու ճօտ քօլեն տակեն սըրթսըրթամ ըն, մեխկը յեկու, վըրսը քըշըցըրավ, պըտըռ-պատատ ըրավ, տուվավ էտ ծիքյերեն: Աղվետը էտքանը տըրսավ, մուտացավ, թա.

- Շունուրհակալ ըմ, ա՛ բուր, ըսօրվանից յը՛ս քըրգ հալալ բուր ըմ հաշեվ անում:

Ըտի քուվերք տըրեռեն, քըրթօն ըրեն, անգը քըճմնգ՝ ըրավ, ըղվեսին ճօտերը մըծացեն:

Մին օր էլ անգը թալակ ընգավ, աղվետը պըտահից, չըգըրդնը տիրավ, օզից անգեն փըռնե, օտե: Անգը դարթու տուվավ տնու յեկու, կըտուցից ըղվեսին մին աշկը տնու կալնվ, համ էլ թա.

- Էն մին աշկըտ թօղում ըմ, հանցու միհենգ՝անց տենը դօտըտ-դընշմնըտ, քուրըտ-յաղըտ ճինննչիս, նըրնըր անա ճօկիս:

3(71). ԸՍՏԻ ԷԼ ՉԻ ՄԸՆԱԼ

Մին մարթու մին տրդա յա ինում: Էտ տրդան քիցնամ ա, թա փեշակ սըվերտ: Մին տրդնանը յետը հնարը քիցնամ ա տըսնում՝ տրդան խօզեր ա պահում, ասում ա.

- Բալա, էտ փեշակ չի:

Տրդան ասում ա.

- Ապա, ըստի մընալ չի:

Էտ մարթը կ'ամ ա տօն, մին տրդնանը յետը էլիա քիցնամ տըսնում՝ տրդան տըվարած ա, ասում ա.

- Բալա, էտ էլ չի փեշակ:

Տրդան էլիա յա ասում.

- Ապա, ըստի մընալ չի:

Իրեքընջի տարեն հնարը քիցնամ ա տըսնում՝ թաքավերը մընած, տրդան՝ թաքավերեն ըխճըկանը ծօլած, թաքավերեն թախտեն նըստած:

Հնարըն ասում ա.

- Ափնրիմ տրդա, հատե ըտի յըմ ասալ է՛, հատե էտ վեր փեշակ ա՛:

Տրդան յետ ա տըսնում, թա.

- Ապա, ըստի էլ չի մընալ:

Հատե ըտի յա՝ փնլնք'ան-փնլնք'ան տարե յա. ըսօր մինը փիս ա ասարում, մինը՝ լ'ավ, էք'նլծ էս մինը՝ լ'ավ, էն մինը՝ փիս:

3(72). ՎՕԶՆԻՆ Ա ԿՕՐԷՆ

Մին քօլում մին վօզ'նի, մին կօրե յին ասարում: Սահանք ճիլը-ճելլի պըտահում ին, զնլրնլց անում: Մին օր էլ հունց պըտահից, ձըրնլր հավան կացեն, քըսի-փիսի, քըսի-փիսի, ախըրը, խուսկուրնեն մին ըրեն, վեր փըսակվին, մըրթըկընեզ՝ տըսնան, դալու դըվու տան, մին տը՛ղ ասարին: Քախճըր զնլրնլցնմվ ընգած՝ ձըրնլցեն ձըրնլր կօլ'ավ ընգնին, պըչպըչօրին, ամմա հո՞ւնց. վօզ'նուն ցեց կացած փօշերը չի թօղից՝ կօրեն կըլօխը տնլս օնե, կօրուն դըլվեն քարը չի թօղից՝ վօզ'նին մուտանա: Ըտի էլ պեն չի նմնլ յեկու: Ճըրըրնեն կըտրած՝ ձըրնլր անա նըղացեն, քօռ ու փեշման հըռացեն:

Նըհախ չըն ասալ՝ ճըպատըտ քօլատ կըտրե:

3(73). ԱՇԿԸ ՏԸՍԱԾԱՆ Ա ՎԱԽՈՒՄ

Տարը յը՛գնանըն ա կուվեն լ'ավ պահում ար, ասարուք քօլ-քօլ, ճնլրը վախտեն տան, տակը սիրփնլմ, բիջմըում, ամմա էշին միհնլ չար քըցնլմ, սաղ օրը պեռնում ար, չըրչարում, ձըրնլզ'նլնը մին հափուտ կըրճունք քըցնլմ առաշկը, թա.

- Կէ՛ր, տա յա քու փայըտ:

Էշը սուս ըրավ, սուս, էլ տեմ չի կացավ, կըլօխ յեր կալմվ, փախավ: Շեքեք-նեքավ լեն ու քօլ ձըրնլն ք'էփինա ասարից, հննդին խօտան կերավ, ցօրտ-ցօրտ ըխպիրնեքան խըմից, ք'էփը նըրիմիշ ըրավ: Մին օր էլ յեշից տըսավ՝ չօրս-հեց՛

կ'իւլ ծօրնւնը մին էշու ցըրէվ տուված: Էտ տը'սնալըն ա, վէր տը'սալ. կըլօխը քաշ քըցնձ՝ յը'կու տը'ռնը կօշտը, վը'ննէրը ընգալ դաչչանք ըրալ:

- Մա'րթ ախալէր, նէրօղ կընիս, իշօթուն ըմ ըրալ, ըսօրվանից յը'ս քու համ-բալըտ ըմ, ինձ չըրչարէ, տննչի, կըրճունք տօ՛, կա վէչ՝ էտ էլ մէ'լ տալ, սօված յօլլա կըք'իւննմ, մէնակ թա ինձ տըրօթուն ըրա՛, յը'ս իմ տը'սածըս տը'սալ ում. անդար էշին ախըրը կ'իւլիւն փօրունըն ա իննւմ:

3(74). ԽԱՄ ՎԸՎԸ

Վը'դէրը մըսլըհաթ ըն անում, վէր էտ տարէն ժըղօվուրթէն բէրք չըտան: Տա-հանց նը'ստա մինը պայմանը կատարում չի, բօլ-բօլ ցօրէն ա տամ: Նօրից ըն հըրվաքվում, էտ վը'դէն մին լ'ալ թըքթօծհնմնթ տամ: Էտ վը'դը հըրըշնում ա, կը-լօխը քաշ քըցնւմ, թա.

- Նէ'րօղ կիւնիք, խամ ըմ իլնւլ:

3(75). ՄԱՐԹԸՆ Ա ԿՕՐԷՆ

Մին մարթ ըշունքավար ա անում: Կօրէն կ'ամ ա մուտանում, ասում.

- Աստուծ դուվաթ տա, ծիլի, հասկ տա, մինը հազգար տը'ռնա, ասում ըմ՝ յէս էլ հըրակաշ տը'ռնամ, հինչ կա՞սէս:

- Լ'ալ կընի, կօ'րէ ախալէր, յէս վարէմ, տու մի սըհաթ կօլան տա'ր ըխալիրան լըցցէր, պէ'ր:

Աշունքը անց ա կէննւմ, ծըմը'ռնը անց ա կէննւմ, կ'արունքը անց ա կէննւմ՝ հալն կօրէն ըրվալի: Հունիսումը մարթը ք'իւննմ ա, թա արտը հընձի, յէշում ա տը'սնում՝ հընգէրը տէրտակուրօշ կ'ամ ա: Կըզնըվում ա, թա.

- Պա հօր ա՞ կօլան:

Կօրէն լ'ըցըկումած ասում ա.

- Ննւլնթ թայդի գօրծէն, վազ տալնւլ կ'նւլիս վը'ննըս ք'իւլննշավըն ա ինգ'նւլ, վը'ր ըմ քըցնւլ կօտըրալ:

3(76). ՕՂՏԸՆ Ա ԾԸՒՏԸ

Ծը'տը կըծանում ա օղտէն յըրա, թա.

- Յէ'ք փըսակվինք:

Օղտը ծիծաղում ա, նըստալ շուլուղ անում, ամա ծը'տը էնքան գննիւնք'իւշ ա անում, վէր ճարը կըտրած ռազի յա կէնում, փըսակվում ըն: Ծէտը պիցըրանում ա օղտէն տննդին, հնք'վին տական դըրդի-դըրդի անում: Օղտը վէր քամակը պէց ա թօղում, խը'դճը կէնում ա պատան: Ախըրը, վէր հնւշը կիլօխըն ա կ'ամ, ծը'տը ասմա.

- Ախմախ օղտ, վէր ըռխալըտ կ'ամ չի փըսակվիս, հօր ը՞ս ռազի կացալ:

3(77). ԱՄԷՆ ՍԱՐԹ ԱՄԷՆ ՀԻՆՉ ՈՒՐԱՆ ԱՐԾԻՆԱՎԵՐ Ա ՉԱՓՈՒՄ

Մըրչէմնը սարան քըշանում ա շէնը: Մարթիք հըրցընում ըն.

- Հը՞, սարան ըս կ'ամ, խօտ կա՞, ք'ինանք պատառ հարիմք:

Մըրչէմնը ահում ա.

- Խօտ, հինչ խօ՞տ, կըռիճիլէրաս ա տամ:

3(78). ԹԱՔԱՎԵՐԸ Ա ՕԽԾԸ

Մին թաքավերի մին դաշննգ՝ օխծ ա ինըմ: Էտ թաքավերըտ ուրանն օխծին էնչանք ա սիրըմ, վեր առանց նըրան սուփրա-սէղան չի նըստըմ, ըշտէղ էլ ք'ինըմ ա, ուրանն նըհէտ տանում ա:

Մին օր հունց ա պըտաահըմ՝ էտ օխծը չըգ'իղնլծվ կըծըմ ա թաքավերի մաղար տըղին ըսպանըմ: Նննգիր-վէգիրնէն յիրա էն տառնում, վեր օխծին ըսպանէն, բայց թաքավերը չի թօղում, ասըմ ա.

- Հննք'ուն կըտըք, բօ՛լ ա:

Վեր մին խը'լլն վախտ անց ա կէնըմ, թաքավերը տէսնըմ ա, վեր էլ կարըմ չի առանց օխծը յօլա ք'ինա, ծէն ա տամ, թա.

- Օխծ ախպէր, էլ չէն կարըմ, յէ՛ք մեր պարիկամութիւնը թննանլնմիշ անէնք:

Օխծը մըտածըմ ա, մըտածըմ, թա.

- Թաքավերը ապրած կէնա, շընուրհակալ էմ քըզանից, բայց մունք էլ չէնք կարա պարիկամութիւն անէնք. տու քու մաղար տըղիտ չէս մըննէտ քըցէլու, յէս՝ իմ հննք'նու:

3(79). ՎԵՂԵՆ ԽԱՔԱՐԸ

Էրկու հըրէվան էրկու մէտըր վը՛ղու դննրան կըմվըմ ըն, ուրիւր յըխա կէնըմ, էլ սաղ-մը՛ռած, հննր-մար, կընէգ՛-խօխա չըն թօղըմ, լօխճին նախշըմ ըն: Մին դարիք մարթ ա կ'ամ ջիհըմ: Սահանք ասըմ ըն.

- Յը՛ք մեր շառը կըտըրէ:

Ղարիքը անջուկը տինըմ ա վը՛ղէն, յէր կէնըմ, թա.

- Վը՛ղը ասըմ ա՝ տու կօրծ չօնիս, էսա ըտահանք ճօխտը կ'իլնն ըն խըտէտըս, յը՛ս շառը կըտըրլական ըմ:

3(80). ԱՂՎԵՍԸ Ա ՀՈՒՆԳՈՒՇԿԱՆ

Մին իրփիվերի կընէգ՛ հնննդնշկան թօխս ա տիննում: Քննսիք կընէգ՛ ա, լի՞, հընգէր-հըրէվան հինչու ծնու տամ ա, տիննում ա տակէն՝ էլ դագու, էլ հնննդնշկու, էլ հավու, էլ ծօղնկու: Հնննդնշկին մարուն լօխ ճօտէրը տնու ա անում, հը՛տը ըրած՝ տանում չօլը, դագէն ա ծօղնկէն ճօտէրը բիղի կ'էտըն ըն վագ տամ, հավէն ճօտէրը՝ բիղի քօտանը, հնննդնշկին ճօտէրը՝ բիղի հնննդը: Աղվէտը մուտանում ա, թա.

- Էս հինչ խաբար ա՞, էս հինչ խըռնըխառնէ ճօտէր օ՞նիս:

Հնննդնշկան ասում ա.

- Քանէ ք՛էգ նըմաննէն կան, թօղէ թիվավորնէն շըտանան:

3(81). ԾՈՒԿՈՒՆԸ ՀԱՔՎԱՆ ՎԵՏ ՕՆԷԼԸ

Մինը քընըն ա բագար, վեր ծոնկուն ինք օնե: Մուտանըն ա մին ծոնկուն յեր օնըն, հաքվան վրտ-վրտ օնըն: Ծոնկունծախեն ասըն ա.

- Ա քընընհաք, ծոնկունը կըլխան ա վրտըն, տու հաքվան ը՞ս վրտ օնըն: Էս մարքըն էլ թա.

- Ախպեր, կըլծխըն նաղըն վրտաժ կինի, օզըն ըն տընսնամ՝ վրտըն մինչընվ հաքին քընցալ ա՞:

3(82). ՏԻՆՉԻՐԻՆ Ա ՊԷԽԷՆ

Տինջիրին լօխճին հըվաքըն ա կըլծխըն, պիցըրծեընըն.

- Յէս ըն ծընակեն հոնրին-փերին, մարթիք՝ ինճ յէշըն ըն, լանգաք քաշըն:

Պէխեն կըլծխըն պիցըրցընըն ա, թա.

- Լանգաքավ տօն չըն պահըն, ա՛ մարդիմագար, տու մըզանա խօտ, վեր էրվըն ընք մօխեր տընընըն, մարթկանըն ծընըռհան անըն:

3(83). ՄՕՐԸ ՏԸՄ, ԸԽՃԸԳՄՆԸ ՕՉԻ

Մին տըղա օգ՛ում ա մին ըխչըգ՛ա օգ՛ի, ամմա տանը նագի չըն կենում. էս ըխչըգ՛անը մարը փիս անում ա ին՛ում յը՛ր ըրած՝ վընընը հըղըցան տոնս յէկած: Էս տըղան մըթկունը տինում ա՝ ըխչըգ՛անը փօրցի. մին ծիյու քօռակ ա տանում ախպընը, ծառան կապում, մըռակը յեր օնում վեր թակում: Ախչիգ՛ը ջըհոնում ա, թա.

- Ա տըղա՛, էտ խընդ հիյվանեն խե թակում ը՞ս:

- Օգ՛ում ըն՝ էս քօռակը պիցըրանա ծառը:

- Ա դա՛նգըլա, յանի ծիյին քօռակը հունց յը՞ր կինի ծառը:

- Պա ըստըրա մարը մին քանե հընտ յը՛ր ա իլան:

Ախչիգ՛ը ասում ա.

- Դե էտ վախտը հիշքան կարում ըս՝ վեր թակե, վեր մարը ծառըն ա պիցըրացալ, քօռակը ճըղնեըն պըտօկըն ա հըսըլական:

Ըստընդ տըղան ամմեն հինչ կըլխու վա ընգընում, քինում մին մօրը անումը լ՛ավ յը՛ր իլան ախչիգ՛ օգ՛ում:

3(84). ԿՈՒԼԸ Ա ՈՒԼԸ ՃՕՏԸ

Կոնըն ուրան ճօտեն նըհըտըն թումբեն նըստում ա, յէշում վըխճարեն սոնըվեն, վեր մուտանան, մինը փըռնե: Ճօտը հըրցընում ա.

- Տահանց մարը քանենըն ա՞ պիրոն, վեր էտքան շատ ըն:

- Յա՛ մինը, յա՛ էրկունը:

- Պա տո՞ւ հինչքան ըս պիրոն:

- Չօրսը-հենգ՛ը, պըտահում ա՝ օխտը-օթը:

- Պա վեր էտքան պիրում ըս, ին քուվերք, ին ախպերք հօր ը՞ն, խե մուք շըտանում չընք:

Կոնըն թառանչ ա քաշոն, թա.

- Տահանք հալալ ըն՝ սնիրնու վրն փրոնում, մունք հարամ ընք, վախում ում՝ ք'իզանա էլ չի խէր տը'սնամ:

3(85). ԱՂՎԷՍԸՆ Ա ՃՕՏԷՐԸ

Ըղվէսին ճօտէրը մօրը անավ ըն տըռնաս, թա.

- Մը'գ փանդ ու փանլն սըվըրցըրո՛ւ, հանցու վէր նը'դըն ընգիք՛, կարիք՛ շանա-կ'նուլն պըրծընիք՛:

Մարը ըսէս ա.

- Փանդ ու փանլն շատ կա, ամմա ամմէնադ'նուզը էն կինի, վէր ծէր պ'նունն տ'նու չի կ'աք:

3(86). ԷՇԻՆ ՋՕՂԱԲԸ

Տարը էշին հըրցընում ա.

- Ա՛ էշ, էտ խէ ամմէն էշու թըրքա, շըռա վը'տ ը՞ս օնում, ըտըրան մաչին հինչ օ՞քուք, հինչ սէ'կըէտ կա:

Էշը թառանչ ա քաշ'նում, թա.

- Մա՛րթ ախպէր, յը'ս խէ բի՞դի նիգ'անրան կէնամ, թա հըղէննի քանէ էշ ա ք'ը'ցալ, քանէնըն ա քաժ իլնլ, քանէնը՝ յըղէ, քանէնըն ըն օգում՝ յըղէ տը'ռնան: Համ էլ հինչը անում ըմ, քու օքտէտ ըմ անում, մին թըրքա վը'տ օնէլ ա մընացալ, խէ օգում ը՞ս քէթըտ ըտըրա մաչըն էլ կօխիս:

4. ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵԼԸ-ՊՈՒՂՈՒՆ ԱՁԱՆՈՒՄ-ՄԱՁԱՆՈՒՄ ՊԻՆԵՐԱՆ

4(1). ԼՈՒՂՈՒՄ ՊԱՏ ԶԻ ԿԱՍ

Մելիքըն ա Պուղին մին այագ օր, ծի նըստած, քիս ըն. Մելիքը՝ էծու մօրթէ շօռ կալննծ, Պուղին՝ չընգըլիանդի: Վէր մին խիլլնն քիս ըն, Մելիքի մըթկավը հինչ ա անց կընաս, ասմա.

- Պուղի, միհէա մըկըկա՛:

Պուղին ծըծըղէա ա, թա.

- Մելիքըն ասարած կէնա, լիւզիս պատ չի կ'ասա՝ ասիմ՝ տու մըկըկա՛, ամմա էծին մօրթէն քու մաշկավըտ ա քըցննծ:

4(2). ԸՍՏՈՒԾԷՆ ՊԱՐԹԿԸ

Պուղին Մելիքի մըթկընը նըստէա ա, բիդի յերգի մըքըլ յիշիս, խուսէա.

- Աստուծ, յանի հիշ կի՞նի, էրկու վը՛սկէ վէր քըցիս, վըհաքիմ, տանիմ ք'իւլ-վիւնթըս պահիմ: Ամմա յէշի հա՛, վէր միմը վէր քըցիս, յօր չըմ ունան:

Մելիքը ըսկընաս ա, տիյը՛րան մին վը՛սկէ վէր քըցիս՝ տը՛սնա՝ Պուղին հինչ ա ընէա:

Պուղուն աշկերը մընաս ա չըմված, յօր ա ունէա, հըղէ ինիս:

Մելիքը կ'ասա ա առաչը կըտըրէա, թա.

- Պուղի, պա ասալ ըս՝ վէր միմը ինի, յօր չըմ ունան, էա խէ դմստի կօխալ ը՞ս ջուրըտ:

Պուղին ինընն կուրցընէա չի, ասմա.

- Պակաս տարէ յա, Մելիք-Շահնագար, վէշինչ, էն միմըն էլ Ըստըծու պարթկ ա, յը՛տնան կըտա:

4(3). ՊԱ ՀԻՆՉ Ա՞ՆԻՄ, ՎԷՐ ԿՕՂԸԼ ԶԻ ԿԷՆԱՄ

Պըրը-Պուղուն տօնը կ'օղ ա նի մընէա, Պուղին նի յա մընէա կըրըվաթէն տակը: Կ'օղը մուտընաս ա, թա.

- Պուղի, էա խէ նի յը՞ս մըտալ ըտը՛ղ կ'օղըլ կացալ:

Դէ Պուղին հիք ա՞ խուսկու տակ մընացալ, ասմա.

- Շան տըղա՛, պա հինչ ա՞նիմ, տանըս մին պէն չի կա, թա կ'ուղանաս, յը՛ս էլ հիմինչիլնն կ'օղըլ ըմ կացալ:

4(4). ԿԸՓՄՎ ՓԸԼԱՎԸ

Պըրը-Պուղին քըշերը մին ըսկուպօյ մարթու տօն դօնաղ ա ընգընէա: Տընատարը ասմա.

- Նէրօղ կիմիս, վէշ մին պէն չօնիք՛, թա լ'ըհա մին շուրվա-գատա շիմիք՛օտիս:

Պուդին տրսնաս ա, վեր տնլգնը քօն ա իննկնն, ասնա.

- Մին քննդիրու կընփ պե՛րեք՛, մին լ՛ավ կընփավ փըլավ անին, մինտընդ օտիք՛:

Լօխնին արմանքը-գարմանքը կըտըրես ա, կընփը պիրիս ըն տինիս ըստօլեն, Պուդին քա.

- Դէ, կընփան կըման մին քանէ խուրդն-մուրդն պեներ էլ ա հարկավեր՝ յընդ, պըրինն, չամենչ...

Ախըրը, ըստի լօխ պիրիլ ա տաս, մին լ՛ավ փըլավ ընես, կընփը տինիս կըլխեն, քա.

- Դէ կե՛րեք՛, գըլավնին կընփըն ա, վեր կընփը ինի, մընացածը կըքըթենվա:

4(5). ՄԵԽԻՆ ՀԱԽԸ

Պուդին սադարաք ա ընես, վեր տօնը իրընք մընեքավ ծըխես ա՝ պատեն յըրա քըխած մին մէխա կըման: Օրնչ տընդա յընկած մին հարուստ, վեր հնկն Պուդուն քննլնգնեն ըսկացած չինիս, ռազի յա կընաս, իրընք մանեքը ծըծըղելավ տաս, տօնը իք՛ ունես:

Մէլիքը ըսկընաս ա, քա.

- Ա ախմադ, պա խընքը կըլխեն մարթը իրընք հնրնը մընըթական տօնը իրընք մընեքու կըտա՞:

Պուդին ասնա.

- Մէլիք՛, էտ հնկն գըղվնկ չի՝ հու վա ախմադ:

Ուրերան մին օր էտ հուրուստեն հնրը մընես ա: Վեր նլգիս ըն, քա մէյըր տանան տնես օնին, յիշիս ըն տըսնաս՝ Պըրը-Պուդին, մին ըստակած էշ քաշ տալավ, նլգիս ա նի քըցի տօն:

Մըռատարը մուտընաս ա, քա.

- Ա մա՛րդիմագար, էտ հինչ ը՞ս ընես:

Պուդին ասնա.

- Գօրմի քա հօր, էն մէխը իմըն ա, չէ՞, պիրըս ըմ էշըս նըստա կախ տամ, մաշկիմ:

- Ա մըն՛ած, հու՞նց:

- Հա, լի՞, մէխը ծախալ չըմ, քա ռազի չըս, հագար մանեք ա, տօ՛, քընգ տամ:

4(6). ԾԷԹ ԾԸԽՕՂԷՆ ՔԷԹԸ

Մին օր Մէլիք՛-Շահնագարը շատ ըջըղված ա ինիս, հըրաման ա տաս, վեր տասնըհենգ՛ մարթու քըթեր տական կըտըրին: Կըտըրես ըն, ըծես մին փօս: Ըտըրանց նիհետ էլ կըտըրէլ ա տաս մին ծէթ ծախօղ մարթու քէթ: Էտ ծէթ ծախօղ մարթին կընէգը, հարայ-հըրօցը քըցնն, կ՛աս ա Պըրը-Պուդուն կօխկը, լնց ինիս, քա.

- Պու՛ղի, կըլխավըտ շօռ տամ, մին ճա՛ր ըրա, նլգիս ըմ մարթիս քէթը տանիմ, ճինչիս չըմ:

Պուղին ասմա.

- Ա դա՛նմազ, պա վեր տու էսքան տարե քըշեր-ցիրը՛կ քու մարթիտ նիհետ ապրալ ըս, ընդրրա քեթը ճինչիս չըս, յը՛ս հունց ճինա՞նչիմ:

Էտ կընեգ՛ը շատ ա լնց ինիս, դաչանք-պըղատանք ընէս, վերչը Պուղուն մէխկըն ա կ՛աս, ասմա.

- Դէ վեր իտի յա, էտ քըթերը յօ՛ր կալ՛ մին-մին վը՛տ քաշի, վերէն անա ծէթու վը՛տ կ՛ա, գ՛իղն վեր մարթիտ քեթըն ա:

4(7). ԷՏ ՀԻՆՉ Ա՞

- Պո՛ղի, էն օրէն ծէխէ հափուտըս քօր ա յը՛կալ, էտ հինչ ա՞:

- Մէլիք՛ըն ապրած կէնա, փուլ ըս քըթիննն:

- Յըրկէ յէլ աչի հափուտըս ա քօր յը՛կալ:

- Փուլ ըս կուրցընան:

- Ա մը՛ռա՛ծ, ասօր էլ սաղ ջանըս ա քօր կ՛աս:

- Մէլիք՛-Շահնազար, ներօղ կիմիս, հնըմնթ քօսան ընգալ ըս:

4(8). ՉԱՅԸ ՎԷՐ Լ՛ԱՎ ՊԷՆ ԻՆՆԻՐ...

- Պո՛ղի, նըստէ՛ չայ խըմէ:

- Սաղ ինիս, Մէլիք՛, ինգիս չըմ:

- Խէ՞:

- Մէլիք՛ըն ապրած կէնա, չայը վեր լ՛ավ պէն իննը, քու հնը կըրըսնէն չայավ կըրըսնար, վէշ թա կինավ, ըրաղավ:

4(9). ՏԸԺՕԽԿԸ ՀԷՏԱՏ Գ՛ՈՒԼԼԱՍ ԿԸՔԸՑԻ

Մէլիք՛ըն հըրցընէս ա.

- Պո՛ղի, յը՛ս վեր մը՛ռիմ, տըրախտը ինճ կընթո՞ւնէ:

- Տըրախտը գ՛իղնս չըմ, Մէլիք՛-Շահնազար, ամմա տըժօխկը հէտատ գ՛իլլն կըքըցի:

4(10). ԽԷ՞, ՀԻՎԱՆԳ Ը՞Մ

Մէլիք՛-Շահնազարը Պըըը-Պուղուն ծէն ա տաս ինրաց տօն, մին թաժժա հաց, մին էլ մին պիլիթ պանէր տինիս ըռըչին, թա.

- Պո՛ղի, ք՛ը՛գ հիւրիմննթ ըմ ընէս, կէ՛ր քուշտաց:

- Մէլիք՛ըն ապրած կէնա, խէ ք՛ը՛փէս նի յը՞ս կ՛աս, խէ՞, յը՛ս հիվանդ ը՞մ, վեր թաժժա հացան ա էծին պընէրան քուշտանամ:

4(11). ԷՏ ԸՆԳԸՐԱՆԱ ՅԱ, ՎԷՐ...

- Պո՛ղի, հինչան ա՞, վեր քու կուլօխըտ ա սիպտակալ, իմ բէղէրըս:

- Մէլիք՛ըն ապրած կէնա, էտ ընդըրանա յա, վեր տու ըռխավըտ ըս կօրծ ընէս, յը՛ս՝ կըլխավըս:

4(12). ՅԷՇԱՆՑ ՄԱՐԹ

- Պուղի, շատգիղ մարթ ըս, քանէ տիրըկանըմըն ա՞ մարթ խըլքակադար տըռաս:

- Յէշանժ մարթ, Մէլիք՝-Շահնագար, հու իզ նըման ա, խըլքակադար ա ծընվալ, հու քըլ՛զ նըման ա, կարօղ ա հնարհոր տարէ ապրէ, ըտի խըլքը խակ էլ մըլէ:

4(13). ԸՌԱՉԱՆ ՔԻՆԻՄ, ԹԱ ՔԸՄԱ՞ԿԱՆ

Մէլիք՝-Շահնագարէն հնարը մըռէս ա, տընէս ըն, թա թաղին: Մէլիքը հըրըրնէս ա.

- Պուղի, հինչ խօրուրթ ը՞ս տաս, յըս դուրհուն ըռաչան քի՛նի՞մ, թա քըմա՞կան:

- Մէլիք՝-Շահնագար, տու վըս գիղմնս, ամմա վեր ինձանա ինի, դուրհուն մաչին քի՛նիս, լօխճաց լ՛ավը էտ կինի:

4(14). ՄԱՆՆԸ ԹԻԼ ԿԱՊԷ

Մէլիքը մօրը դուրհուն ըռըշկին չուրէս ա, ըսքըսէս խօսելը.

- Այա, ապուն կասիս դնրդ չանէ, յըրան լ՛ավ քար ըմ քըցնլ, կասիս 1000 վըլխճար ըս թօղալ, Մէլիքը շիննլ ա 4000-ը, կասիս թօնէրըտ մըծացալ ըն, ասօր-էրհըց փըսըկվըլական ըն, ա՛յա, մըննատ քըցիս վէչ, կասիս...

Պուղին էտ լօխ ըսկընաս ա, մուտընաս ծէրքան փըռէս, թա.

- Մէլիք՛, այան պառաւ կընէզ՛, էտքանը հունց պա՞հէ մըլտը, մանըն մին թիլ կա՛պէ, վեր մըննան քըցի վէչ:

4(15). ԾՉԱՆ ԸՄ ՃՕԿԻՄ

Պըլը-Պուղին մին խիլլն տըղ պիհիս ա, բօստան ընէս, ամմա չըփըրէս չի, լիհն մին մըղակ ա յըրա ընէս:

Մէլիքը կ՛աս ա պէց տըղավըննի մընէս, թա.

- Ա ախմաղ, էտ վեր բօստանըտ չըփարալ չըս, էս մըղակը յըրա յըս ըրալ, հինչ ա՞նիս:

Պուղին ծըծըղէս ա, թա.

- Ծգնլ ըմ մարթկանըցը հիյվըննան ճօկիմ:

- Հո՞ւնց:

- Հա, լի՞, հու մարթ ա, մըղակավընն ա նի մընէս, հու հէյվան ա՛ պէց տըղավը:

4(16). Լ՛ԱՎԸՆ ԷՆ ՉԻ՞...

Մէլիքըն ա Պուղին ծիյավ քիս ըն, թօռը նի յա ունէս: Պուղին շծրէրը հընէս ա տինիս տակէն, թա.

- Մէլիք՛, տու վէլ հա՛նէ, յըտնան փուշմընան ըս:

Մէլիքը ծըծըղէս ա, թա.

- Ա ախմաղ, խէ քըլ՛զ մընան շնն ը՞մ, մինակ շննէրըն ըն թօռէն տակէն լըղընաս:

Վեր պատառ ընցընէս ա, թօռը կըտըրէս ա, մըրըվը տնիս կ՛աս: Պուղին

շօրերը տական տոնու ա ունէս, չծր-ցամաք կ'ընաս, Մէլիք'ըն էլ հա՛մ սըրք-սըրթաս ա, հա՛մ էլ թա.

- Պո՛ղի, ամնա ըղվէտու ժնլիզ'օթուն օնիս, հա՛:
- Մէլիք'-Շահնազար, էս թօռէն տակէն լ'ավ չի՞ ըղվէտու ժնլիզ'օթուն ինի, կանց էշու կուխկըհըստօթուն:

4(17). ՄԱՐԹԻՏ ՏԱՐ ԿԱՊԷ, ՇԱՆԸ ԱՄԷ՝ ՏՈՒՍ ԿԱ

Պըըը-Պուղին ք'իս ա Մէլիք'ին տանը տակէն վը՛ննը կընաս, Մէլիք'ին ծէն տաս: Մէլիք'ին էլ մին բունբունկալնծ շօն ա ինիս, յըրա յա պըրծընէս, թա Պուղուն քըլօլէ: Ախըրը, Մէլիք'ին կընէզ'ը տոնու ա կ'աս, թա.

- Ա՛ղն, հինչ ա՞, Պո՛ղի:
- Վէշ մին պէն, մարթիտ տար կա՛պէ, շանըտ ա՛սէ՝ տոնու կ'ա, պէն ըմ ըսէս:

4(18). ՎԸԿՆՉԱՐ ՀԸՄԲԱՐԷԼԸ

- Պու՞ղի, վըխչըրնէս շըտացալ ըն, հունց հըմբա՞րիմ, վէր հիշտ ինի:
- Մէլիք', ամմէնահիշտը էն կինի, խընուշինըկը՛ցուց նըման անիս:
- Հո՞ւնց:
- Մըշկըռնուն յըրա պարաց քըցի՛, վըննըրնէն հըմբա՛րէ, պիժէ՛նէ չծրք' տը՛ղ:

4(19). ՅԸՄ ՀԷՉ, ԷՇԻՍ ՄԱՇԿԸ ԿՈՒՏՐԷՑԷՐ

Պըըը-Պուղին, էշը պէռած, ծըմական կ'աս ա, քըթէն տակէն մին խաղ մըռ-մըռցընէս, համ էլ քընէնք' ընէս, թա իւրան վէց ըխչըկանը հունց բիղի մըրծըցընէ, մարթու տա: Մին էլ հիրը՛վանը ըռըչան տոնու ա կ'աս, թա.

- Աշկըտ լի՛ւսի, Պո՛ղի, կընէզ'ըտ ճօխտակ ախչիզ' ա պէրալ:
- Պուղին թառանչ ա քըշիս, թա..
- Հիրը՛վան, յը՛ս հէչ, ամնա քու էտ խուսկավըտ էշիս մաշկը կուտրէցեր:

4(20). ՅՈՒՂՈՒԾՈՒՆ

Պուղուն ըշտննիը յուղուծու վա տաս, ամնա օթ ախչիզ' օնէ, ընդըրա հուվ ա՞ յուղուծու տըվօղը: Ախըրը, փննդը քըթիննս ա: Մին օր հննդնն կ'աս ա, թա.

- Ա՛ կընէզ', մըռէս ըմ, ծառան վէր ըմ ընգալ վըզ'ըհօռ տը՛ռալ, ճէլլի յախու շի՛նի, տինիմ վիզիս:
- Կընէզ'ը իլթիհնլ հէնզ' ծու վա կուտըրէս, յը՛ղըմը դաղ ընէս, թա փըլազըմը պըտատէ պիրի, Պուղին ասմա.
- Ա՛ կընէզ', կըպէլավ պէն չի դո՛լզիլ, թօ օտիմ, վէր հա՛մ վէզըս լիվանա, հա՛մ պօկըս, հա՛մ էլ փօրըս:

4(21). ՀԱՆՑ Ա ԼԻՀՆ՝ ՔԸԹԱՏ ՎԷՐ ԸՆԳԱԾ ԻՆԻ

Պուղին տըսնաս ա, վէր Մէլիք'-Շահնազարէն չօբաննան մինը՝ Ղազմըրը, շէփտանը մէհէտ մին պնրիւր խըտտած, սարան ք'իս ա տօն: Մին դծննւմ էլ մուտընաս ա, թա.

- Ղա՛գւնր, էտ հինչ պննրնր ա՞:
- Պո՛ղի, կիճի խօխասս ա, լի՞, ազառու վա, տընէս ըմ դուխտուրէն նըշասս տամ:
Պուղին իրըսժասկանը քըշիս ա, տըսնաս՝ մին կ՛առ պննրնրին մաչին, յը՛տ ա տըռաս, թա.
- Ղա՛գւնր, տը՛ս հիշկան ա յէ՞ ք՛ը՛գ նըման, հանց ա լիհնն քըթատ վեր ընգած ինի:

4(22). ՀՕՐԸ ԿԻՆԸ

- Պըլը-Պուղին տանում ա, թա ծնու ծախէ, մին մարթ՛ մուտանում ա, վեր գ՛ննղնում ա՝ ծնուվէն մինը չծրթ՛ կապէկ ա, յէտ ա տը՛ռնում, թա.
- Պա քու տօնը շինվի, Պո՛ղի, քա հօր կ՛ինը տիրնլ ըս յըրան:
 - Պա օգ՛ում ըս քանէ ծա՞խիմ:
 - Սինը մին կապէկ:
- Պուղին խուսկու տակ չի մընամ, ասմա.
- Էտ էլ քա հօր կ՛ինըն ա՞:

4(23). ԸՏԸՐԱ ԳՆՐԳՆՆ

- Պըլը-Պուղուն հըրցընում ըն.
- Խէ էգգանան պը՛լ-պը՛լ պինէր ը՞ս անում:
- Պուղին ասում ա.
- Խէլնընք պինէր ըմ ըրալ, մարթու հը՛տա հըսալ չում, ըտըրա դննրդնն:

4(24). ՎԷՐ ԿՈՒՂԱՆԱՆ ՎԷՉ, ՀԱ՛

- Պո՛ղի, վը՛սկէն վեր տինիս ըրէվէն տակէն, ոննգ՛ը կըփօ՞խէ:
- Վեր կ՛ուղանան վէչ, հա:

4(25). ԷՆ ԸՄ ՔՕՆ ԻԼՆԾ

- Հըրէվանը քըշանա-քըշէրնմվ կ՛ամ ա Պուղուն քունըհարամ անում, թա.
- Պու՛ղի, քօն իլննծ ը՞ս:
 - Չէ՛, Ղա՛գւնր, հինչ ա՞ լնլ:
 - Հէնգ՛ մանէթ՛ փօղ ա հարկավեր, կավ ըմ ինթ՛ օնում:
 - Էն ըմ քօն իլննծ, Ղա՛գւնր, խընգարու մէ՛լ:

4(26). ԷԼ ՀԻՆՉ ՏԸՐԱ՞ԽՏ

- Պո՛ղի, տըրախտունը տըղըմարթիթ՛ ճօկ-ճօկ ը՞ն ասարում, թա կընանուցը նըհը՛տ:
- Ա քընըծննիիր, դէ վեր կընանուցը նըհը՛տ չըն ինննկնն, էլ հինչ տըրա՞խտ:

4(27). ՇՕՆ-ՇԱՆ ՏԸՂԱ ԸՍԸՑԷՐ, ՄԸ՛ՆՆԸՍ ԸՆԳԱՎ

- Մէլիթ՛ը ծէն ա տամ Պըլը-Պուղուն, թա.
- Ա պը՛լ, ճէլի ք՛ինի՛ Աշան, էն շօն-շան տըղա Ափկարէն ասէ՛ օխտը կարասս կ՛ինի պիրի:

Պուդին յըտ ա տըննում, թա.

- Մէլիք-Շահնազար, շօն-շան տըղա ըսըցէր, մըննըս ընգավ, պա ինձ մին կօլա կ'իմի յըս խօսկ տըվալ, հինչ տընալ:

4(28). ԻՄ ՓԱՅԸՍ ՄԻՆԷՆՊՂ ԸՄ ԼԱՅ ՈՒՆՈՒՄ

Պըլը-Պուդուն կընէգ'ը հիվընդանում ա, Պուդին սըքըսում ա սօք' ըսէլավ լանց ինիլը: Հըրէվանը կ'ամ ա, թա.

- Ա տընա'շին, հինչ ը'ս սանըտ յերգ'իմք'ը քըցան, կընէգ' ա, լի', լ'ըվըննական ա:

Պուդին ուրան կուրցընում չի, ասում ա.

- Յէս հօ ըսըրա հըտէ չը'մ լանց ուննում, կարօղ ա մըհըտ էլ հիվընդանա մըննէ, յէս տանը չիմիմ, իմ փայըս միհէնգ' ըմ լանց ուննում:

4(29). ՊՈՒՂՈՒՆ ԹՄԻՓԸ

Պուդին ք'ոննում ա բազար, տըսնում՝ միըն պէցոլը սանսնվ ծէն ա տամ.

- Էշ ըմ ծախում, լ'ավ էշ՝ պըռնաքաշ, յօրղա, պիցըրվըննը, ինք'ըն էլ վէց ըմսէկան յըղէ:

Պուդին ուրոնգ'ոնը հըսնում ա տօն, տըսնում՝ յէկալ ըն մըծ ըխչըզանը խընըմախօս, մըտածում ա, թա հունց ըխչըզանը թմրիփ անէ, յըտ ա տըննում, թա.

- Ախչիգ', հինչ ա'խչիգ'՝ պըռնաքաշ, յօրղա, պիցըրվըննը, էն էլ հանն՝ վէց ըմսէկան յըղէ, տանօղը մըխթիրլանկան ա:

4(30). ՊՈՒՂՈՒՆ ՏԸՂԱՆ

Մէլիք-Շահնազարը օգ'ոնում ա Պըլը-Պուդուն տըղէն փօրցի, ասում ա.

- Յէս Մէլիք-Շահնազարըն ում, կա մին վըսկէ տամ:

Պուդուն տըղան ծէրքը քաշոնում ա, թա.

- Սօտ ըս ասում, տու Մէլիք-Շահնազարը չըս, թա Մէլիք'ըն ըս, խէ մին վըսկէ յը'ս տամ, մին հափուտ սօ':

4(31). ԼՍՎԸՆ ԷՆ Ա...

Մէլիք-Շահնազարէն տանը օտէլ-խըմէլ ա ինում: Պուդին օրիշ պէն չի օտում, լ'ըհա վմրիհա մըղըրան նի յա տամ:

Մէլիք'ը յէտ ա տըննում, թա.

- Ա մըտած, խըրէգ' մըղըր կէր, դմրըրս մին պէն չի, ըսըլական ըն՝ Պուդին շատ մըղըր ա կէրալ մըտալ:

Պըլը-Պուդին ուրան կուրցընում չի, վէչ տանում ա, վէչ պ'ըննում, թա.

- Մէլիք-Շահնազար, տու ք'էգ յէշի, լ'ավըն էն ա ասին՝ մըղըր ա կէրալ մըտալ, քան թա ասին՝ Ղարաքաղը ծախալ ա թուրքէրէն, տոնընը մըտալ:

4(32). ԷՏ ԷԼ ՀԱԽԸՏ

Մելիքը հրյաթունը խրրաված ա անում, Պուդին կ'ամ ա կրռանում, մին լ'ավ վր'տ օնում: Մելիքը Պուդուն պրկան փրռնում ա, թա.

- Վր'տ ըս կալննլ՝ հախը բիդի տաս:
- Պուդին խօսում չի, ք'հնննում ա հիրրվրններան փուլ պարթկ անում, ածում մին քրսակ, պ'հրնում Մելիքին ունջուկտակէն շրրլխկշրրլխկըցընում, թա.
- Մելիք-Շահնագար, ըսկացալ ը'ս:
- Հանց գ'իդանք ըսկացալ ում:
- Լ'ավ ըս ըրալ, էտ էլ խրրրվածան վր'տ ունէլիս հախը:

4(33). ՀԱՎԱՏԱՐԻՄ ՇՕՆԸ

Պըրը-Պուդին շօնը յեր ա օնում տանում Ըդդանա բագարը, վեր ծախէ: Մին քօրք ա մուտանում, թա.

- Բ'իրվա, լ'ավ շօն ա ըրվամ, օգ'ում ըմ ինք' օնիմ, ամմա ասէ, տը'սնամ՝ հավատարիմ ա՞՞ հրնն տը'ռնանը, թա չէ՞:
- Պուդին բեղէն տակէն քըմծիծաղ ա տամ, թա.
- Բ'իրվա, ըստըրա նրման հավատարիմ շօն չի կա, էս օխտինջի դծննումըն ա, վեր ծախում ըմ:

4(34). ՄԻՎԵՆՊՂ ՀԸՎԱՏՈՒՄ Ը՞Ս, Թ՝Ա ՉԷ՞՞

Մելիք-Շահնագարէն կընէգ'ը մը'ռնում ա: Մելիքը չօքում ա մէլդին ըռըչին, թա.

- Չէ՛, կարօղ չի պըտահէ՛, հըվատում չո՛ւմ:
- Վեր տանում ըն հննգ'իստը, թա թադին, Մելիքը էլինն յա հննմին խօսկերքը ասում.
- Չէ՛, կարօղ չի պըտահէ՛, հըվատում չո՛ւմ:
- Ախրըրը, վեր թադում ըն, կ'ամ բադարնաք'ը տամ, Մելիքը վերչումը շընուր-հակալ՝ ա ինում լուխճին անա, վեր յէկալ ըն հրնն կընգանը առօք-փառօք թադալ: Պուդին յեր ա կէնում, թա.
- Մելիքըն ապրած կէնա, դ'հլըր ա՛սէ, միհէնգ'ը հըվատում ը՞ս, թա չէ՞:

4(35). ԱՌԱՆՑ ՈՒԽԱ՛Յ ԷԼ Ա ԿՕԼ Ք՛ՈՒՆՈՒՄ

Մելիք-Շահնագարըն ա Պըրը-Պուդին հաց ըն օտում: Մելիքը հրնն ըռըչին լ'ավ կ'իննի յա տիննում, Պուդուն ըռըչին՝ քացախ: Պուդին ամմէն դծննում քըցախէն կ'էվաթը տիրտակում ա, թա.

- Ուխա՛յ:
- Վեր մին հէնգ'ը-վէցը խըմում ըն, Մելիքը հրնն կ'ինան ա ածում Պուդուն կ'էվաթը: Պուդին խըմում ա, ամմա սնս չանում: Մելիքը ծիծաղում ա, թա.
- Պուդի, ա մը'ռած, էտ խէ ուխա՛յ չը՞ս անում:
- Պուդին խօսկու տակէ չի մընամ, ասում ա.
- Մելիք-Շահնագար, էս կ'ինինն առանց ուխա՛յ էլ ա կօլ ք'հննում:

4(36). ԼՈՒՉՈՒՏ ՔԷՉ ՊԱՎԷ

Շինըմաչումը հրվաքված՝ թօռը նի յա օնում:

Մինը ասում ա.

- Հինչ լ'ավ ա՞, բօստանըս կրճիրի:

Մինըն էլ էն ղնգ'ղնան ասում ա.

- Թօղ կ'ա, թօղ կ'ա՝ հու հինչ վր'ղըն ա քըցնլ, տնլս կ'ա:

Պըլը-Պուղին մուտանում ա, թա.

Լնգ'ղնտ ք'եգ պա'հէ, էրկու կընէգ' էլ յէս ում վր'ղը քըցնլ, պա վէր տնլս կ'ան, յէս հինչ ա՞նիմ:

4(37). ԸՐՎԱՄ Ա՝ ԱՌԵՏՕՐԵՏ Լ՝ԱՎ Ա ՔՈՒՆՈՒՄ

Պուղին նի յա մընում մին գնրգ'նրնլ դնլք'նն, թա.

- Ախպէր, էս հինչ ը՞ս ծախում:

Չնրգ'նրը ղնլնն մաչումը օգ'ում ա շուրտղ անէ, ասում ա.

- Տըվարու վր'նըկըլծխ ըմ ծախում, Պուղի:

Պըլը-Պուղին յէտ ա տը'ռնում, թա.

- Ըրվամ ա՝ առըտօրըտ լ'ավ ա ք'ղննլն, ըստի վէր յէշնլն ըմ, դնլք'ննումըստ մին վր'նըկըլծխ ա մընացալ:

4(38). ՀԱՆՅՈՒ ԸԷԼԼԻ ՏՈՒՄ ԿՍ

Պուղուն կընէգ'ը խօխա պիրիյիս խօխան տիժէր ա ծընվում: Պուղին մին քանէ ճուղուպուր ա յէր օնում, կընգանը անա մուտըցընում, խըշխըշցընում:

Տատմարը ասում ա.

-Ա պը'լ, էտ հինչ ը՞ս անում:

- Տա'տմար, ճուղուպուրը խըշխըշցընում ում, հանցու խօխան սնսը ըսկանա, ճէլլի տնլս կ'նն:

4(39). ԳԻՂԱՅԷ

Ղազնրը մին ճուվարան ծնլ տընէյիս Պուղին պըտահում ա, թա.

- Ղա'զնր, էտ հինչ ը՞ս տանում:

- Պո'ղի, թա գ'իղանցէր, ըտըրա յուղուծուվան ք'իգ էլ կըտամ:

- Գ'իղանցէ՝ հինչ ըս տանում, Ղա'զնր, քըշըված սօղան, մաչը ծակ, իփննծ կիզնրնլ լըցած:

4(40). ՎԷՐՑ ԷՇԻՆ ՔՕՌԱԿԸ

Մին հը'տ Պըլը-Պուղին, մին վէրց էշ նըստած, մին քօռակ էլ հը'տը քըցննծ, ք'ղննլն ա: Մէլիք'-Շահանգարը պըտահում ա, թա.

Պուղի, էտ հինչ քօռակ ա՞:

- Իմ էշիս քօռակըն ա, հինչ քօռակ ա՞:

- Ա մը'ռած, վէրց էշին քօռակ կինի՞:

- Մէլիք'-Շահանգար, քօռակը քօռակ չի՞, կօզի՝ մօրը հը'տան կըք'ինի, կօզի՝ հօրը, իմըն էլ հօրը հը'տան ա ք'ղննլն, էլ հինչ ը՞ս օգ'ում:

4(41). ՅԷՍ ՔԷՉ Ը՞Մ ԾԷՆ ՏԱՄ

Պուդին քրչրհանա քիհնամ ա Մելիքի-Շահնագարեն տանը ըռաչին վրէնը կէնում, Մելիքին կընգանը ծէն տամ.

- Արփէնի՛ գ՛, հէ՛ Արփէնիգ՛:

Մելիքը տոնու ա կ'ամ, թա՛ հինչ ա՞:

Պուդին ասում ա.

- Մէլիք՛, յես քէգ ը՞մ ծէն տամ:

Ախրըրը, վար Արփէնիգը տոնու ա կ'ամ, Պուդին թա.

- Արփէնիգ՛, մի Մելիքին ա՛սէ՛ տոնու կ'ա:

Մելիքի-Շահնագարը կըտաղում ա, թա.

- Ախմաղ, պա վար ինձ ըս օգում, խէ կընգանըս ը՞ս ծէն տամ:

- Մելիքըն ապրած կէնա, լ'ըհա ասալ ըմ Արփէնիգին քրչրհանա վըտըշօրած տէսնամ:

4(42). ՊՈՒՂՈՒՆ ԿԱՐԱԼ ՉԸՆ ՔՅԱԼԱԳ ԿԱՆ

Շիննցիք՛ մըսըրհաթ ըն անում, վար Պուդուն ք'ալազ կ'ան. մարթա մի ծոն վըն տինում ջուբըրնէրումը, Պուդուն նըհէտ քիհնամ հննդը, թա՛ յէկաք մարթա մի ծոն ածէնք:

Ախրըրը, նի յըն մընում քուլէրեն քամակը, կըրթկըրթամ, ծոնվէնը ծըրքըրնէրեն տոնու կ'ամ, թա.

- Պո՛ղի, տու տանէլ տըվէցիք, հօր ա՞ ածած ծոնու:

Պուդին հինչ ա՞սէ, վար լնվ ինի, ասում ա.

- Կը-կը-ղը-ղի՛, պա էտքան հավէրեն մէչին մի վէրցակ չի՞նի, էտ էլ յես ըմ, լի՞:

4(43). ՀԸՎԱՏՈՒՄ ՉԸՄ ՉԱՓԷ

Մելիքը խըմած Պուդուն ջիհում ա, թա.

- Ա՛ պըլէ, թա կարաս ասէս՝ աշխարքէս կէնտօնը վըրդէղ ա, մի կարաս կինի կըտամ:

Պուդին ծըրքէ մըհակը թըխում ա տափէն, թա.

- Հասէ ըստը՛ղ, Մելիքըն ապրած կէնա, հըվըտում չըս՝ չա՛փէ:

- Հունց չա՞փէմ:

- Կարում չըս՝ հըվա՛տա, կինին տօ՛:

4(44). ԱՆՈՒՄԸ ՏԻՆԻԼԻՍ ՔԸՇՏԷՆ Ը՞Մ ԻԼՆՆԼ

Մելիքը Պուդուն դարկում ա, վար կաքավ վէր քըցի պիրի: Պուդին քիհնամ ա մի քըչէղակ փըռնում, պիրում:

Մելիքը կըտաղում ա.

- Ա մը՛ռած, յես կաքավ ու՞մ ասալ, թա քըչէ՞ղակ:

- Մելիքըն ապրած կէնա, հինչ ը՞ս գ'ոնղոնմ, բալի կաքավը լ'ըհա էս ա՞, անումը տինիլիս քըշտէն ը՞ս իլննլ:

4(45). ԷՐԿՈՒՍԱՆ ՄԻՆԸ ԳՈՒՋ Ա

Մելիք-Շահնազարը Պուրուն կանչում ա, հրըցընում.

- Պուրի, խըլքըտ հինչ ա՞ կըտրում, էքուց արեվ ա՞ ըննան, թա թոռ ա՞ կ'իլնն, վար դիւզ գիղննցիր, մի վէսկէ յում տըլան:

- Մելիքը ապրած կէնա, տա էտքան էլ հէշտ չի, պիտի քինամ, կընգանըս նըհէտ մըսըրհաթ անէմ:

Ուրիւզ'իւնը Պուրին կ'ամ ա ասում.

- Մելիք-Շահնազարը ապրած կէնա, յէս ասում ում՝ թոռ չի կ'իլնն, կընէգ'ըս ասում ա՝ կ'իլնն ա: Նադըր գ'իղա, վար էտ էրկուսան միւնը դիւզ ա, վէսկէն յա՛ ինձ տո՛, յա՛ կընգանըս:

4(46). ԱՇԽԱՐՔԷՆ ՎԷՐՉԸ

Մէհէտ Մելիք-Շահնազարը ասում ա.

- Պուրի, աշխարքէն վերչը կ'ամ ա, հինչ լնվ պնն օնէս, պէ՛ր օտէնք:

Պուրին ք'ինամ ա, իլնն-չիլնն մի վէշխար ա իննն, մօրթում պիրում, ք'էփ ըն անում:

Էքսի օրը Պուրին ք'ինամ ա Մելիք'ին ցօրէնը պիժննում ժօղօվուրթէն:

Մելիքը կըտաղում ա, թա.

- Կըլծխըտ կըտրել ում տըլան, տու քանի կըլծխ օ՞նէս, վար ցօրէնըս յէր կալած՝ պիժննում ըս:

Պուրին ասում ա.

- Ա՛յ մարթ, տու չը՞ս ասալ, վար աշխարքէն վերչը կ'ամ ա, տըրանա յէտը ցօրէնը պահում ըս հինչ ա՞նէս:

4(47). ՄԷԼԻՔԻՆ ՇՕՆԸ

Մէհէտ Մելիք-Շահնազարէն ծառանէրան միւնը Պուրուն ասում ա.

- Պուրի, էս հինչ պնն ա՞, էքան վախտ ա ծառայում ում, բայց էս Մելիք'ին շանը ռըխը միւնչէվ պնն չըմ քըցիւն, հննչիւն ա ինձըրա:

Պուրին ասում ա.

- Դէ Մելիք'ին շօնըն ա, լի՞, խէ զարմանում ը՞ս, ուրնն ա քաշալ, էտ էլ տըրէնց ա ըռըշվաթ յօր օնում:

4(48). ՊՈՒՂՈՒՆ ՍԾՔԸ

Մելիք- Շահնազարէն հնարը մըհում ա:

Պուրին, վար դուքին քըշըցընում ըն, սըկըսում ա սծք՛լ ասէլը.

- Ա յէս քու չըռըչննփռնն վըննէրէտ մատաղ,

Ա յէս քու մի միտրանուց բօյիտ մատաղ,

Պա տու մի քանի հէտի մըհած ի՞ր, վար մըհէր, ա տընըք'նն'նղի մարթ:

4(49). ԻՄ ԼՆՅԸՍ Ա ԿԱՄ

Մելիք-Շահնազարը մէհէտ ասում ա.

- Պուրի, վար քէգ տըհնում ում, ծիծաղըս կ'ամ ա:

Պուդին ասում ա.

- Մէլիք՛, յէս էլ վար քէզ ում տըննում, իմ լնցըս ա կ'ամ:

4(50). ՄԵԼԻՔԻՆ ՍՕՏԸ

Մէլիքը մէհէտ ժողով ա անում, ասում, վար ուրանց պալատը խըկլա մէլիքնէ յըն կ'իլանն, ինքը մի չալ սօտ ա ըսըլան, Պըլը-Պուդին պիտի էտ սօտը դուր-քըցընէ, նրհէնց պանն ասէ, վար լօխ հըվատան: Վար մէլիքնէն կ'ամ ըն հըվաք-վում, սըքսում գըրնէց անէլը, Մէլիք-Շահնագարը յէտ ա տննում, թա պա էրէգ'ի ք'ացալ ում վըննում, մի յէղնիկ ա պըտահալ, միհէտի յիրա յում ըրալ, հա՛մ վըննէն պըտկան ա կացալ, հա՛մ պօզան: Լօխ գարմանում ըն, ասում՝ սօտ ա, տըրհէնց պանն չիհիլ: Պըլը-Պուդին ասում ա.

- Դնլզ ա, լըհա վըննը օզալ ա պիցըրցընէ, վար կըլծխը քօրէ, յիրա յա ըրալ:

4(51). ԸՇԽԱՐՔԷՍ ԱՄԵՆԱԼՎԱԿ ՊԱՆԸ

Միհէտի Մէլիք-Շահնագարը հըրցընում ա Պուդուն անա.

- Պո՛ղի, ըշխարքէս անէնալ'ալ պաննը հինչըն ա՞:
- Ըշխարքէս ամէնալ'ալ պաննը քու տանըտ կա վէչ, Մէլիք՛:
- Հունց թա՞ կա վէչ, յէս վար օզէմ Իրանա կէտը կարամ ինք՛ օնէմ:
- Ըշխարքէս ամէնալ'ալ պաննը փօղը չի, Մէլիք՛, ըշխարքէս ամէնալ'ալ պաննը ազատ խօսըրն ա:

4(52). ԱՄԵՆ ԽԵՏՈՒՐՈՒ ՊԱՆՈՒ ՓՕՂ ՉԸՆ ՏԱԼ

Պուդուն հըրէվանը հնըրվում ա, տնիս կ'ամ մէյդանը, սըքքսում մը՛ծ- մը՛ծ խօսէլը.

- Յէս վար օզէմ, Մէլիք-Շահնագարէն փօղալ ինք՛ կօնէմ:
- Պուդին մուտանում ա, թա.
- Հըրէվան, մըղափնին ա փօղէրըտ, ամէն խըտուրու պաննու փօղ չըն տալ:

4(53). ՄԵԼԻՔԻՆ ՂԱԶԱՆԸ

Պուդին մէհէտ ք'ինամ ա Մէլիք- Շահնագարէն տօն, ասում.

- Մէլիք-Շահնագարը ապրած կէնա, տօնըս դուըրղնէ յըն յէկալ, մի մը՛ծ դազան տօ՛, տանէմ խօրնն՛ իփիմ:

Մէլիք-Շահնագարը մի մը՛ծ դազան ա տամ: Պուդին տանում ա մի օր պահում, մի կն՛ւճնըրն էլ նրհէտը պիրում:

Մէլիք-Շահնագարը ասում ա.

- Պո՛ղի, էս իմ դազանըս ա, պա էս կն՛ւճնըրն հինչ ա:
- Մէլիք-Շահնագարը ապրած կէնա, էս միըն քու դազանըտ ա, էս կն՛ւճնըրն էլ քու դըզանէտ ճօտըն ա. դազանըտ ծընալ ա:

Մի քանի օր ա հընցընում: Պուդին նօրից ք'ինամ ա Մէլիքին անա մի դազան օզում: Մէլիքը տամ ա, մի ամէս ա անց կէնում, Պուդին դազանը պիրում չի:

Մէլիք-Շահնագարը ասում ա.

- Պո'ղի, դազանըս հինչ տննննվ:
- Մելիք-Շահնագարը ապրած կենա, դազանըտ ըստակալ ա:
- Ա շան տըղա', դազանը կըստա'կէ:
- Էտ հունց ա', դազանը ճօտ ա ըրալ, հըվատալ ըս, վար ըստակալ ա, հը-վատում չըս:

4(54). ՊՈՒՂՈՒՆ ԽՕՐԱՉԸ

Մի ցօրտ օր Մելիք'ը ասում ա.

- Պո'ղի, թա սօր քիշէրը կարաս տնես կ'աս տնեսը, սաղ քիշէրը ընդէղ կենաս, մի հափուռ վը'սկէ յում տըլան:

Պուղին սաղ քիշէրը մի մը'ծ քար ա թուրու-թուրու անում, կենում:

Քըշանա կ'ամ ա ասում.

- Մելիք-Շահնագարը ապրած կենա, յեկալ ում, վը'սկէս ինճ տօ':

- Պո'ղի, դն'զըն ա'սէ, կըրակ ը'ս ըրալ:

- Չէ, մօտիկ կըրակ չիւնլ, Սարուշէն մենակ մի լամբ ա իւնլ իրիլիս:

- Դէ էտ ա, լի', էտ լամբավըն էլ թըքացալ ըս, վէշ մին վը'սկէ էլ տամ չում:

Հընցընում ա մի քանի վախտ, Մելիք'ին տօնը դունըղնէ յըն կ'ամ: Մելիք'ը Պուղուն ասում ա.

- Պո'ղի, խօրնա՛լ ի'փի, վար դունուղնէրէն հարգէնք:

Պուղին փըռնում ա վը'խճար մօրթում, մը'սը ածում դազանը, պատալօկան կախ տամ, տակէն կըրակ անում:

Իրէք-չօրս ժամ ա հընցընում, դօնադնէն նըստօտած ըսպասում ըն, բայց Պուղին խօրնա՛լը տննում չի:

Մելիք'ը յէր ա կենում ք'ինամ' տը'սնա, թա խէ չի խօրնա՛լը տննում: Ք'ինամ ա տը'սնում կըրակ ըրած, խօրնա՛լը պատալօկան կախ տըված:

- Պո'ղի, ա շան տըղա, պա խօրնա՛լը պատալօկան կախ ըս տուվալ, տա կի'փի:

- Մելիք-Շահնագարը ապրած կենա, վար ըստէղա Սարուշէն լամբէն իշէղավը թըքացալ ում, խօրնա՛լը նադըր իփըլնն ա:

4(55). ԽՐԷԼՔԷՆ ՃԱՐԸ

Պուղուն փօղը պըկասըմ ա, փըռնըմ ա էրկու մէշուկ կըտէտ նի ածըմ, պիրըմ' քըղաքըմը ծախէ:

Ժըղօվուրթը ք'ինըմ ըն-կ'ամ ասըմ.

- Պո'ղի, էտ հինչ ըս ծա'խըմ:

- Խը'լքու ճար:

Ինք' ըն օնըմ, տանըմ օտըմ: Մին քանէ օրանը յէտը նօրից կ'ամ ըն, թա.

- Պո'ղի, ախըր հանցա տա խը'լքու ճար չինի, էծու կըտէտ ինի:

- Տը'սնըմ ը'ք, էտ ա կէրալ ըք, խըլքըրնէտ յեկալ ա, արթէն գ'իղըմ ըք' հինչ ըք օտըմ:

4(56). ԼՊԻՎԷՆ ՃԱՐԸ

Պուղին փրոնում ա էրկու մէշուկ մօխէր էշին պէռնում, պիրում բազար: Ժրո-վուրթը կ'ամ ըն հըրցընում, թա էտ հինչ ա: Պուղին էլ ասում ա՝ լ'ուվի ճար ա: Ինք' ըն օնում տանում, ամնա ք'ծմննգ' չի անում: Մին քանէ օր հէտօ էլի կ'ամ ըն, թա.

- Պուղի, ախըր էտ ճարը ք'ծմննգ' չի անում:
- Հինչ ըք ըրա՞լ, վէր ք'ծմննգ' չըրալ:
- Դէ սաղ տանը շաղ ընք տըրվալ, ամնա, մին ա, օրուք չանում:
- Ա'րա, ա շա'ն տըրա, տի չըն անում:
- Պա հունց ըն ա'նում:

Լնուն փրոնում ըն, կուռնըտըկէրան դըրդի տամ, վէր ծիծաղում ա, էտ ճարը ածըմ ըն բողազը:

4(57). ԾԻՅԻՏ ՀՆՔՎԱՎԸՆ Ա ԾԻԾԱՂԸՄ

Մըհէտ Պուղին ա Մէլիք'-Շահնագարը դօնաղ ըն քինում:

Մէլիք'-Շահնագարը տնու ա կ'ամ, թաքուն Պուղուն էշին պըռըշնէն կըտօրում: Պուղին տը'սնում ա, տնու կ'ամ, ինքըն էլ Մէլիք'-Շահնագարին ծիյին հննք'ին կըտօրում:

Տօն յը'տ տըռնալիս Մէլիք'ը քամակ յէշում ա, ասում.

- Պուղի, էտ էշըտ հինչավ ա' ծիծաղում:
- Մէլիք'-Շահնագարըն ապրած կէնա, ծիյիտ հննք'վննվըն ա ծիծաղում:

4(58). ՇԱՀԷՆ ՄԱՐԹԻՆ ԹՕԽՍ ՏԻՆԻԼԸ

Իրանա շահը ըսկանում ա, վէր Չանախչի Մէլիք'-Շահնագարէն մին ծառա օնէ, վէր լուխճին խօսկավ կապում ա: Տա վօրօշում ա՝ մարթ դարկէ, կ'ա տը'սնա՝ էտ հուվ ա:

Պուղին գ'իղում ա, մին ճուվըրանում քըսան ծնու տինում, կօխկէն վը'ննը կէնում: Շահէն մարթը կ'ամ ա դըրբըզան թակըմ, Պուղուն ասում.

- Մէլիք'-Շահնագարէն կօխկըն ընք յէկալ, ա'սէ, թօ տնու կ'ա:
- Չէ', տը'սնում չը'ս, վէր էն ըմ թօխս նըստած, վէր յէր կէնամ, ծըվէնը սըռչիլնն ա, յէք տու ծըվէն յըրա նըստէ, վէր սառչի վէչ, յէս ք'ինամ ապիմ՝ տնու կ'ա:

Շահէն մարթը կ'ամ ա նըստում.

Մէլիք'-Շահնագարը տնու ա կ'ամ, թա.

- Հինչ ա' իլնլ:
- Պա յէկալ ընք ծառէտ ք'նլննգ' կ'անք:
- Ա շան տըրա', հնլնն դըրբըզավըն նիմ չըք ըտալ, ծառաս արթէն ծըվէն յիրա թօխս ա տիրնլ, պա վէր պիցըրանաք տօն, հինչ ա իննն'ն:

4(59). ԿԸԼԽԸՏԱԿԷՆ ՓՕՂԸ

Մինը կ'ամ ա Պուղուն ասում.

- Պուղի, մին հննրնր մանէթ պարթկավ տօ':
- Էն ա կըլխըտակէս տիրննծ, ք'ինա յէ'ր կալ':

Տա քիմըն ւ յեր օնըն: Մին քանէ օրանը յետը, փօղը յեր կալննժ, կ'ամ ա:
Պուղին ասըն ա.

- Տար տի'ր պերցիս տակէն:

Էս մարթը մըտածըն ա, թա..

- Ա'րա, վէ'չ տալիս հըմբարից, վէ'չ յեր ունէիս, մէհէտ էլ քիմնամ, տը'սնամ՝ հինչ
ա անըն:

Քիմնամ ա նօրից փօղ օզըն, ասըն ա՝ քիմնա կըլխըտակաս յեր կալ': Տա յեր ա
օնըն, քիմնամ: Մին քանի վախտ հէտօ կ'ամ ա, թա՝ փօղը պերալ ըմ:

Պուղին ասըն ա.

- Տար տի'ր կըլխըտակէս:

Էտ մարթը նի յա մըտընըն տօն, տ'նու կ'ամ, փօղը թօղում չի:

Մին խըլլն վախտ ա անց կէնըն, տըրան էլիս փօղ ա ինըն հարկավեր, կ'ամ
ա ասըն.

- Պո'ղի, հնըր'նը մանէթ պարթկ կըտա՞ս:

- Խէ չըն տա՞լ', քիմնա կըլխըտակաս յեր կալ':

Քիմըն ա տը'սնըն՝ փօղ չըկա, ասըն ա.

- Պու'ղի, պա ընդը'դ պէն չըկա:

- Ա շա'ն տըղա, կըլխըտակէս պէն ը՞ս տիրնն, վեր յեր օնիս, հիբը տիմիս,
կըկ'աս յեր օնիս:

4(60). ՈՒՐՈՒՄԱԶ ԱՊՐԻՍ

Պուղուն շալվարը մըղօրտած ա ինըն, կըրկըտօտըն ա, կ'ամ Մէլիք'-Շահնա-
զարէն կօխկը.

Մէլիք'-Շահնազարը յէչըն ա տը'սնըն՝ տը'դ-տը'դ թննզն յա, ասըն ա.

- Պու'ղի, շալվարըտ տը'դ-տը'դ շընհավուր ինի:

Պուղին խօսկու տակ չի մընամ, ասըն ա.

- Ուրումաչ ապրիս, Մէլիք'-Շահնազար:

4(61). ՔԸԹԷՏ ՀՆՆԸ ՀՆՆ ԶԻ

Ղարաբաղա հարուստներան միմին տանը հըրսանէք՝ ա ինըն:

Մէլիք'-Շահնազարը Պուղուն մըհը'տը տանըն ա, վեր տա ղօնաղներին ծի-
ծըղցընէ:

Հըղըցէն քիմնալիս Մէլիք'ը ասըն ա.

- Պու'ղի, քէզ տասար մանէթ ըն տամ, հըրսընքընը քըթէս անընը տաս վէ'չ:

Հըրսանէքէն էն թ'ննդ վախտը Մէլիք'-Շահնազարը խըմըն ա կ'իրմիրըն,
քէթըն էլ ղու'նն անա բէթնըն ա կ'իրմիրըն:

Պուղին տը'սնըն ա, կարըն չի տէն կէնա, յեր ա կէնըն ասըն.

Մէլիք'-Շահնազարը ապրած կէնա, տասար մանէթըտ քէզ ինի, ամմա քըթէտ
հննըն հնն չի:

4(62). ՀԻՆՉԱՎ ԸՆՔ ԾՕԿՎՈՒՄ

- Մին օրէ Մէլիք՝Շահնագարը ասում ա.
- Պուղի՛, յէս նա տու ինքնուր անա հինչավ ը՞նք ճօկվում:
 - Մէլիք՛ըն ապրած կէնա, մը՛ր մաչին սարերու-քուլերու տարբերութիւն կա. յէս խը՛լունք ում, բայց ինճ շնչի տը՛ղ ում տիննւմ, տուվ էլ դանգլա յըս, օգում ըս խը՛լունք ըրվաս:

4(63). ՊՈՒՂՈՒՆ ԱՐԱՋԸ

- Մէհէտ Մէլիք՛ը Պուղուն ասում ա.
- Ա՛ղն, հինչ ը՞ս տը՛սալ ըրագի, մին պա՛տմէ, տը՛սնամ:
 - Պա պըտմէ՞լի պէն ա, վեր պատմիմ:
 - Լ՛սավ, դէ պա՛տմէ:
 - Մէլիք՛ըն ապրած կէնա, պա ասէլ չը՞ս, էս քըշերիս ըրագումըս իմ նա քու հօր ում տը՛սալ: Իմ հօր շօրերը թըրքօտ ըն իլնի, քու հօրէնը՝ մը՛ղրուտ:
 - Ա՛ղն, պա հինչ ը՞ս օգալ. իմ հնը մէլիք՛ ա, քու հնը՝ ծառա:
 - Մէլիք՛Շահնագար, ախերամ տա չի, է՛, օրիշ պէն էլ ում տը՛սալ:
 - Հի՞նչ:
 - Քու հնը լիւզվավը իմ հօր շօրերըն ար լըպըգտում, իմ հնը՝ քու հօրէնը:

4(64). ՕՉՈՒՄ ԸՄ ՀՕՐԱՎ ՅԷԹԻՄ ԻՆԻՄ

- Մէհէտ Մէլիք՛Շահնագարը Պուղուն հըրցընում ա.
- Պու՛ղի, Ղարաբաղը քըզէտէ հինչ ա՞:
 - Ղարաբաղը ինճէտէ մամա յա:
 - Պա յէ՞ս քու հինչըտ ում:
 - Իմ պապա:
 - Ափնըիմ Պուղի, մէհէնգ՛ հինչ ը՞ս օգում քու հօր, քու մօր հէտէ:
 - Օգում ում հօրավ յէթիմ ինիմ:

4(65). ԼՈՒՉՎԻՏ ԽԸՎՔԸՆ Ա ՅԷԿԱԼ

- Մէհէտ մին կընէգ ա կ՛ամ Պուղուն կօխկը, կ՛էնգ՛նտ անում.
- Պու՛ղի, ախերամ մարթըս միշտ ինճ թակում ա, ասէ տը՛սնամ՝ հինչ անիմ:
 - Վեր մարթըտ քեզըրա կըզըրվէ, մի կում ճնըր աժէ պերննըտ, վեր կըզըրված վախտը կարէցեր վէչ պիրննընըտ պահիս, էլիս թըկըլական ա: Էտ կընէգը մին ամէս Պուղուն ասածը անում ա, կ՛ամ ասում.
 - Պու՛ղի, մարթըս խըլունքացալ ա, էլ ինճ թակում չի, հէնցա խըլըքը յէկալ ա:
 - Մարթիտ խըլըքը չի յէկալ, է՛, լիւզվիտ խըլըքըն ա յէկալ:

4(66). ՀԻՆՉ ԿԱ՞, ՎԷՐ ՀԻՆՉ ԱՆԻՄ

- Պուղուն չանթան՛ կ՛ուղանում ըն, Պուղին տնու ա կ՛ամ շինամաչը, ասում.
- Ա՛ խալխ, չանթաս կ՛ուղացալ ըն, հու վեր յեր ա կալալ, պիրի ինճ տա, թա չէ իմ հօր նըման ըմ ըննան:

Կ'օղը Պուղուն չանթան պիրին և տամ իւրնն, համ էլ հըրցընում.

- Պուղի, վեր չանթան պերած շինիմ, հինչ ի՞ր ըննան.
- Հինչ կա՞, վեր հինչ անիմ, մին խուրջին օնիմ, կըտըրըլան ում, էրկու չանթա շինիմ:

4(67). ՊԱ ԷՏՔԱՆԸ ՇԻԼՍԿԱՎ Ը՞Ք ՏԵՆԱՆ

Կ'օղերը նի յըն մըտնում Մելիք'-Շահնազարեն տօնը, լօխ կ'ուղանում: Պուղին էտ վախտը էն և նին 2 ինըմաչումը, վեր կ'ամ և տըսնում՝ կ'օղերը, ապրանքը շիլնկած, ք'ինամ ըն, վազ և տամ կ'ումը, էշը փըլանում, պիրում տամ իւրանց.

- Էտ հինչ ը՞ս անում, Պուղի,- հըրցընում ըն կ'օղերը:
- Պա էտքանը շիլնկավ ը՞ք տընան, շան տըղէք:

4(68). ԿԻԺԸ ԽԷԼՈՒՆՔԷՆ Ա ԿԻԺ ԱՍՈՒՄ

Մեհէա Պուղուն հըրցընում ըն.

- Պուղի, տու հնրիւր կըլծիս պեցնիւր ըս Մելիք'ին անա, էտ հունց ա՞, վեր քեզ կ'իժ և ասում.
- Քէ մատաղ, ըշխարքեն գօրծը տի յա իննում, միշտ կ'իժը խելինքեն և կ'իժ ասում:

4(69). ԹԱ ԱՍԱԾԸՏ ՂՕՐԹ ԻՆԻ...

- Պուղի, քանէ տարեկան ը՞ս.
- Ասթըխագէտը հինչ ա՞ ընէս:
- Մին դարբէթկա յա տինիս բըլկօնէն, քըշէյը նըստէս, ըսթիւէէն թիմիշա ընէս:
- Յննի տընն հէտէ փուլ ը՞ն տաս:
- Հա՛, ա՛պա, շատ փուլ ըն տաս:
- Յէփէէն դննինն չիբուխը ծիք՛ ա տաս, թա.
- Բա՛լա, հավատըս կաս չի, թա ըսթիւէէն յիշիլի հէտէ փուլ տան, պաղէ վէ տի ինի, էլ մէ շիննցէք՛ ho ը՞ն վա ընէս, սաղ ցիյէկը քօն կինին, քըշէյը կ՛նթննինն նըստին կըլխըյէ թիմիշա անին:

4(178). ՕՂՏԸՆ ՌԻ ՌՈՒՍԸ

Ապէլ դննինն տըղան բընական ռուս հաթն ա պիիս, Ապէլ դննինն կըզընվէս ա, մէսը ուտէս, ամմա ղնզիս չի պիցիծէնի: Ախըյը, մին օյ էլ տէն չի կընաս, ծէն ա տաս տըղէն, թա.

- Մատաղ ինիմ ք՛ը՛գ , էս գօյծը նննն կ՛ննի չի:
- Խէ՞, ա՛պա:
- Ա շա՛ն տըղա, հունց թա խէ, տու գ՛իդննա չը՞ս, վէ օղտըն ա ռուսը մէ շէնընը ննյնն չըն ընէս:

4(179). ԹՐՔՕ ՃԻԻՆ ՀՐԳԷՆ

Ըստեփանակալը՝ տա մին քանե հօքի քիս ըն Տումե, վե Թրքօ ճիին քըլեփ անին: Վե հրսնե ըն շենը, Ապել դնյին պըտըխեա ա, ըսեա ըն.

- Դնյի՛, Թրքօ ճնլը ըշտըղավ քիինի՞ք՝:

Ապել դնյին քընենք՝ ա ընեա, թա.

- Բա՛լա, տի հըղեն քըթննկան չըք, հանե, նախագեն վիլիսը էն ա կննցիլնյեն տըռանը, նըստե՛ցեք՝, առանց շօփե ծը՛գ տըռական ա խօզին փիմնն, ընդըղան էլ՝ թուշին Թրքօ ճնլը:

4(180). ԱՅՏԸ ՀԱՍԲԷԳԸ ԿԱՆԷ...

Թօռը կ'աս ա Սուդումուն դնյին կօշտը, թա.

- Ապա՛, տու լնն թայիփ ըս ընեա մե վըղեյան, էս ա իյեք տայե յա՛ այտ չի տըռաս, հինչան ա՞:

Սուդումուն դային թնթննան ծիք՝ ա տաս, թա.

- Շան տըղա՛, աթադան-բաբադան ննյնթ ա՛ այտը Հասբեղը կանե, Կասաբեղը կանե, Բուղդանը, Իսակը, Սուդումունը, Ալիսանը կանին, միհեց՝ այտ անօղը Ժօժիկըն ա, Տօլիկըն ա, Պավլիկըն ա, խե բի՞ղի տըլեա:

4(181). ԻՍԱ ԳԱՅՈՒՆ ԹՆՐՍ ԽՕՍԷԼԸ

Իսա դային կիճի տըղեն նիհեա քիս ա՛ խօտ հարե: Վեր քըսծը ա տըռնաս, ննզիս ա տըղեն դարկե տօն, հանցուվեր հա՛մ հարած խօտը տանե, հա՛մ էլ քըսծըվա հացը պիթի: Տըղեն ծեն ա՛ տաս, թա.

- Փե՛ղյա, Փե՛ղյա, էշը քըլե՛գ մատտաղ, ապան պե՛ռնե տար տօն:

Փեղյան էլ խուսկու տակ չի մըռաս, ասմա.

- Աշկեա յըրա, ա՛պա, խօտը իզ տօ, հանցու վեր ք'ննդիթը հակ տամ:

4(182). ՊԷՅՑՈՒՐ ԾԷՆ ՏՕ

Մնցնկ նմնն մի լննվ հերենջ ա ինիս: Մի քանե տարե վըռըկըլխեա յիշիս ա, ամա էտ հերենջը մըռնաս ա սըրե: Ախըրը, վեր մըռնելի վախտը կ'աս ա, ծեն ա տաս կընգանը, թա.

- Ա՛դուն, յը՛ս մըռնեա ըն, ամա աշկըս յըրա յըն քիս, էտ հերենջըտ վեր ծընե, կըկ'աս հինգ'իստիս յըրա կըռանաս, ծեն տաս ասիս, հանցուվեր դինջանամ:

Մի էրկու տըռնանը յետը, վեր հերենջը ծընեա ա, Ադունը քիս ա չուքեա մարթին քարեն ըռըչին, թա.

- Մնցնկ, հերենջը ծընալ ա յե՛, արխային կա՛ց:

Ծատօր նմին էլ էն ա ինիս տըղավ քիս, մուտըռնաս ա, թա.

- Ախչի, պեցցո՛ւր ծեն տօ յե՛, Մնցնկը մի խըրեգ՝ քառ ա իլնն, պեցցո՛ւր ծեն տօ, վեր ըսկանա:

4(183). ԷՐՈՒՇ ՓՕՐՄԻ ԿԸԿԱՐԻՄ

Մնկիչ նմին քիս ա քաղաք, նըկար քաշիլը սըվըրեա, մի չախկու ապարատ իք՝ ունեա, կ'աս շենը, թա՛ փօտօզըրափ ըն, հու՛ ննզիս ա, կ'ա՛ նըկարիմ:

Մեհետ էլ, շինըմաչըմը թուփ տըհած, Մանրդի դային լիլ տըհած կ'աս ա մասխարա ընէս, թա.

- Մանկիչ, կըկա՞րիս ինձ հանց նըկարիս, էն ինիմ քու քըռըկընգան խըտտած: Մանկիչ ամին ռուան կուրցընէս չի, ասմա.

- Մանրդի, տի կարէլ չըմ, ամա էրիւշ փօրմէ կըկարիմ:

- Հո՞ւնց:

- Կըկարիմ հանց նըկարիմ, վեր յես էն ինիմ քու կընգանըտ խըտտած, տուք նա քու քըռակէն էլ, կօխկէս վըհը կացած, ծափ տաս:

4(184). ԷԼ ԿՈՒԼՕԽԸ ՀԻՆՉԻՍ Ա՞

Մըհետ մի քանէ մարթ գըրուգալօյէն կուգօվումը ք'իս ըն Ագօխա խիլլմ տիվեր՝ արտերը, գօրծ անին: Հըղէն ծըմակավըն ա ք'իս: Դէ կ'արունք, գօրծը՝ շատ, խուսէլի պէնը՝ բօլ: Ծըմակէն մաչավը անց կընաս վախտը շատերը ճըկըռէս ըն, վըր ծառերը ռուրաց նի չըկ'ա: Հմքի դային ճըկըռէս չի: Մի մարթ ասմա.

- Հմքի դայի, կըռա՛ց, կըռա՛ց, կուլօխըտ նի յըհավ:

Հմքի դային քըմծէծաղ տալավ ասմա.

- Պա հունց ա՞նիմ, նի յա կ'ասս, նի կ'ա, մըհէ էս ինձ ծըռըլիս ա՞. ուռթանան ք'իս ըմ շէնը, նախագան հինչը ըսէս ա, ընէս ըմ, տաննըն էլ կընգանըս ասածըն ըմ ընէս, էլ կուլօխը հինչիս ա՞:

4(185). ԿԱՐՕՂ Ա՞ ԷՆ ՉԸԽԱՆՅ ԻՆԻ

Շաշա մմին ք'իս ա դուխտուրէն կօշտը, թա.

- Դօխտուր, ախեր լ'ավ չըմ է՛, լ'ավ, փօրըս սաղ օրը շանջու յա ընէս:

Դօխտուրըն էլ շուլուղչի մարթ ա ինիս, պարաց ա քըցիս, ըստըղէս հօփ տաս, ընդըղէն հօփ տաս, թա.

- Շաշա մմի, հիմինչիս էլ ըմ, թա ասիմ է՛, հանց ըս պատճառավեր ինիս:

Շաշա մմին սիփիրթնիս ա, ռմնգ'ը շինիս պատէն ռմնգ'ը, թա.

- Դօխտուր, ջանէտ մատաղ, էրիւշ տըհող ասիս վէչ, նէմէցիմ կըռվավը մին ռուսու նըհըհտ մին դալմթ ըմ ըրալ, կարօղ ա՞ էն չըխանց ա:

4(186). ԿԱՐՕՂ ԸՄ ՔՕՄԱՊ ԱՆԻՄ

Մուքին կուճուր տըղէն նըհըհտ ք'իս ա կօխկէ շէնը, թա Սամսօնէն անա կավ իք՝ օնէ: Վեր իք՝ ըն ունէս պըրծընէս, մըթնէս ա, ճըրընէն կըտըրած մընաս ըն կըվատըհընը տանը:

Դէ Սամսօնըն էլ դօնաղ հարգօղ ա՞. հափուռը թակիս՝ կօրէկ չի վեր ընգընէլ, ծէն ա տաս կընգանը, թա.

- Ախճի, դունըղնէն բիզմըմծ կինին, տըղըրնէն վեր քըցի՛, քօն ինիմ:

Մուքուն խօխան տըսնաս ա, վեր տընատարը ռուգիս ա ռուրաց տիւզըն քունավ անէ, յըհտ ա տըռաս, թա.

- Սա՛մսօն դայի, մութ բիզնիսը չըք, թա տութ բիզնիսը ըք, կարող ըմ ք՛ծննձ՝ անիմ՝ հացա-պէնա շինիք՛:

4(187). ՌԱԿԷՏԸ

Քըղաքան մարթ ա կ՛աս շէնը, ժողովուրթէն վըհըքէս կըլուրը, վայէննի տէխնիկին մասին լէկցյա կըրթիս, վէրչըմըն էլ թա.

- Արխա՛յին կացէք՛, մէր Սավէտին ռակէտը հանց շիննձ ա, վէր պէց թողիք՛, ք՛իննկնն ա դ՛նլզ Վաշինգտօնա յըրա վէր ընգընէ, ամնա ռուրացը միշտ էլ ծօռ ա ք՛իննկնն:

Կարօ դային տը՛ղան լօք ա տաս, թա.

- Էտ շատ փիս ա, ջա՛ն մէր օր:

- Խէ՞, Կա՛րօ դայի:

- Ընդըրա հէտէ, վէր Ամէրիկան ռակէտը թուշ ա ընական Մասկվէն յըրա, կ՛ըլական ա թուշ մէր շէնըմը վէր ընգընէ, չէ՛, էտ պէն չի՛, ջա՛ն մէր օր:

ՄԱՐՏՈՒՆԵՅՈՒՅ ԱՉԱՆՆԻ-ՄԱՉԱՆՆԻ ՊԻՆԷՐԱՆ

4(188). ՄԸՂԱՓՈՒՆ ԷՏ ՄԱՐԹ

Սուրէն դնյին հիվընդանում ա, ընգընում տըղըպէրց: Հըրէվանըն էլ քառ ա իննւմ, մին էրկու օրանը յէտը վէր ըսկանում ա, ծէն ա տամ Սուրէնին կընգանը, թա.

- Մարյա՛ն, ախչի հունց ա՞ Սուրէնը:

- Վէ՛չինչ, Սօ՛նի, քըրթընըքալ ա, անջախ-անջախ լ՛ըվացալ, սօր ք՛էցալ ա հօնձ:

- Մըղափի՛ն, մըղափի՛ն էտ մարթ, պա ծէր հօնձը հու կա՞նէ:

4(189). ՅԸՒՍ ԷԼ ԱՍԻՄ՝ ԽԷ ԸՍՏԻ ԼԸՂԱՐ Ա

Շինըմաչումը հըվաքված՝ նախէրը կ՛ամ ա, նըխէրին մաչին էլ՝ մին հինըրսըզ դօչ:

Ալիսան դնյին յէշնւմ ա, թա.

- Պա՛, ըստըրա տը՛ռնը հօրը գ՛օռը, յննի ըստի դօչ կինի՞, մին յէզնան մընչանք կա, տըմակը կարում չի, թա հը՛տան քաշ անէ:

Ձիհիլնէն ծիծնողում ըն, թա.

- Ալիսան դնյի, էտ ծէր դօչըն ա:

Ալիսան դնյին իրիհնւմըս խօսկը փօխում ա, թա.

- Չար աշկը փուչանա, յէս էլ ասիմ՝ խէ ըստի լըղար ա, հանց ա մին թնձի, տըմակըն էլ շատ ռուրնն ըսպանէ՝ մին հափռու մընչանք:

4(190). ՀԷՅՎԱՆԸ ՀԷՅՎԱՆ Ա

Մարթը հնկնկուկուշ կըտըրած կ՛ամ ա տօն, կընգանը թա.

- Ձէ՛յրան, մին մօք չայ քըցի՛, խըմիք՛:

Արցախի բանահյուսությունը

- Ինձ մատաղ քի՛նիս, ջէյրան չըմ է՛, մարալ ըմ, մարալ:
- Շան տըղու քա՛ծ, հէյվանը հէյվան ա, լի՞, հինչ թա՞փաղութ կա՛ ջէյրան իլնձ, մարալ իլնձ:

4(191). ՎԱՌԻ ԲԱՆՉԻՆ ԳՐՈՒԹՈՒՆԸ

Շէնին պառավ կընանէք՛ը նըստած իլիզ՛ ին մանում, նըհը՛տըն էլ զնըրնըց անում: Մինը թա.

- Խա՛նում, տու հարուստ Դ-ծրնըց ախչիզ՛ըն իր, Օսէփըն էլ՛ քիսիքու տըղա, էտ հունց յը՞կէր Օսէփին:

- Պա հինչ ընի՞, տըսընվէց տըրէկան քավթառ ախչիզ՛ի՝ տանը մընացած, իմ հնըր ըստիպից, քէցէ:

Էն դօլան Վառի բննջին գըռանում ա, թա.

- Դէ տի ասէ, լի՞, ամնա յը՛ս վէր յէկալ ում Բախշնըն, իննը տըրէկան ըմ իլնը, հացը պէրանըս տընէլին տը՛ղ՝ անջուկըս ըմ իլնը տընէլիս: Վէր փըսակվալ ընք, Բախշին իրը՛ք տըռնավ քէցալ ա Բաքու, չըքէլնըն իմ ըսկէտուր ինձ ամսէն հինչ սըվըրցըրալ ա, յը՛տնան յը՛կալ ա, մըրթըկընէզ՛ ընք տը՛ռալ: Էն էլ ասիմ, վէր էտ իրը՛ք տարէն իմ ըսկըսվօր ծօցըն նում քօն իլնը:

4(192). ԸՇՏԱՆՔԸՍ ՔԱՅԱԽ

Արփէնիկի՛ն մարթը հծնձին վախտը ընգնում ա կօմբայնին ոը՛խը, մը՛ռնում: Բըրիգաղիըր կօխկէ շէնան մինին դարկում ա, վէր կա՛ Արփէնիկի՛ն դույուղ անէ, համ էլ թա.

- Յէշի հա՛, բնըրդանանց չասիս, կասիս՝ յարալու յա տը՛ռալ, վը՛ննըն ա կօտրալ, տի կըլխու կըքըցիս, վէր մը՛ռալ ա:

Էս տընաշինը կա՛մ ա շինըմաչումը վը՛ննը կէննըն, պիցըրծէնում.

- Հէ՛ իրփըվէրէ Արփէնի՛կ՛, հէ՛ իրփըվէրէ Արփէնի՛կ՛:

Արփէնիկը տնու ա կա՛մ, թա.

- Բա՛լա, էտ թա ինձ ըս ծէն տամ, յէս իրփըվէրէ չում, մին մարթօ օնիմ՝ Քիքսա սարը քէզ ըրէնակ:

Էս դնըլին վէ՛չ տանում ա, վէ՛չ պիբում, թա.

- Ըշտննըրտ քացախ, հընէ՛, կըլծիսը կըտրած, պիբնըն ըն:

4(193). ԻՄ ԴԸԿԱՏԷՍ ԼԻՎԱՆՆԻ ՏԻ ՅԱ՞ ԿԻՐԱՆ

Մուխան նմին հծնձ ար անում: Կընէզը մին հավու տծիս ա իփնըն, տէսան-տէնան շիննըն, քիսծրէն յեր օնում, քի՛ննըն:

Մուխան նմին վէր սունկան պէննըն ա իփննձ տծիսը տը՛սնում, սունկավը շըպըրտում ա քըցնըն քօլէն քամակը: Կընէզը ծըկըրթամ ա, թա.

- Ա՛դն, հինչ ա՞ պըտահալ, հինչ ը՞ս պըլըհնըշտըրի կըտըրալ:

- Պա հինչ ա՞նիմ, մին կընէզ՛ օնիմ՝ քած, չօրք խօխա օնիմ՝ քած, մին էշ օնիմ՝ քած, հէրիք՛ չի, մին հավ ըս պէրալ, հնըն էն էլ քած, իէ իմ ճըկատէս լիհն տի յա՞ կիբննձ:

4(194). ՔԱՆԷ ԴԱՅԻՆ ՍԱՂ Ա

Մանասը քիմում ա քրվորը տօնը, քրվորը խօխեքը վագ տալավ կ'ամ ըն.

- Դան'յի, հինչ ը՞ս պերալ, դան'յի, հինչ ը՞ս պերալ:

Ասում ա.

- Դան'յին ծեգ մատտաղ, մագագինը կապ ա իլնլ, էմին դծնձնը վեր կ'ամ, շագալաթ ըմ պիրլմն:

Քուրը դրդան, թա.

- Անն, լ'ավ, փօղերըտ խարջիս վեչ, մին հափուռ մաչը բնք'մնագ կամփետ կըպիրիս, բօլ ա:

Ախպերըն էլ յը՛տ ա տը՛ռնում, թա.

- Տու տու ըրա, քանէ դան'յին սաղ ա, խօխեքը բիդի մինակ շագալաթ օտին:

4(195). ԴԷ ՊԱՐ ՅԸ՛Ք, ՊԱՐ ԿՎԱՆՔ

Ղազմը դան'յին պըռաված, հնլը-պենը ք'եցած, օրվա կերածըն էլ չար մը՛ննը պահում: Մին օր էլ թօռանը հըրսանեք'ըն ա ինձն, մուտանում ա կընգանը, թա.

- Ախչի, էս ժուղօվուրթը խէ ըստի օտում ըն-խըմում, պար կ'ա՞մ:

Սօնյա աքան ասում ա.

- Կըլխէտ քար չի ընգընէ, Ղազմը, մէխկ ըս, մըննատ ընգալ ա՞, վեր թօռանըտ հըրսանեք'ըն ա:

- Հա՞, դէ պար յը՛ք, պար կ'անք, ա՛ կընէզ'.

Մին էրկու մունուտանը յը՛տը նօրից ա մըննան ընգընում, էլիս յա հըրցընում,

- Էս հինչ ք'էփ ա՞, էս ժուղօվուրթը խէ հըրվաքվալ ը՞ն:

Տի սըհաքանմընուտ հըրցընում ա, գ'իղձն, վեր թօռանը հըրսանեք'ըն ա, ծերքերը յէտ ա տանում, թա.

- Հա՞, դէ պար յը՛ք, պար կ'անք:

4(196). ՎԷՉ ԻՆԻ

Ամալ'ան միշտ ք'իմնում ա հըրեվանէն տօնը, տէս-տէն օզ'նում: Հըրեվանըն էլ պարի կընէզ' ա ինձն, հինչու տանը ինձն ա, տամ ա՛ ալլեր, պանէր, ծնլ, յէղ, կուրկուտ...

Մին օր էլ ք'իմնում ա յէղ օզ'նում, հըրեվանը ասում ա.

- Ամալ', պա յէղ չօնինք':

Ամալ'ան տանում ա պիրում, թա.

- Վէ՛չ ինի, վէ՛չ ինի, պա միհէտ հիք ա՞ քեզ պէն իննան:

4(197). ԹՕՂ ՄԷՐ ՀԸՐԷՎԱՆՕԹՈՒՆԸ ՀԱԼԱԼ ԿԷՆԱ

Մաքսիմըն ա Մելիքը լ'ավ հըրեվանէր ըն ինձն՝ միմը միմին հըրեյին հըսնօղ: Մին օր ըստըրանք պայման ըն կապում, վեր ձերանց տըղան ու ախճիզ'ը ձերձեր նըհէտ փըսակին, խընամէ տը՛ռնան: Էրկու շէփտանը յէտը՝ մին թօռ օր, Մելիքը կ'ամ ա Մաքսիմին կօխկը, թա.

- Տու ինիս, էն Աստուծը, յէ՛ք էտ պայմանը փօղմիշ անինք':

Մաքսիմին ք'եփեննի յա կ'ամ, ասում ա.

- Խէ՞, Մէ'իք, կարող ա՞ իմ տղասս փիս տղա յա:

Մէ'իքը ասում ա.

- Չէ', Մա'քսիմ, քու տղղետ նրման տղղա չի կա, ամհա դէ խընըմօթուն ա, հունց էլ ինի, մին խօսկուգոնրոնց իննմկանն ա, յէ՞ք էտ պայմանը փօղմիշ անինք', թող մէր հըրէվանօթունը հալալ կէնա:

4(198). ՀԱՄՈՒԹ Ա, ՀԱՄՈՒԹ

Մը'հը'տ մին կընէգ' մարթին սիրականէն յիրա յա պըրծընում.

- Ախճի, հինչ ը՞ս օգ'ում մարթիս անա:

Էտ կընէգ'ը ասում ա.

- Ախճի, վէր իմ մարթըս կըմվումը ըսպանվալ ա, մինակ ինձը'տէ յա՞ ըսպանվալ, յա քու մարթըտ վէր սաղ-սըլմաթ յը'կալ ա, մինակ ք'ըզը'տէ յա՞ յը'կալ: Դէ ծէնըտ կըտըրէ', համութ ա, համութ:

4(199). ԱԿՈՒՓ ԱՄՈՒՆ ԶՕՂԱԲԸ

Սըխտուրչինացէ Ակուփ աննն էշը լափ պէնին փիս վախտը ըստակում ա: Խը'դն Ակուփ աննն սօրաղ ա անում, վէր մին էշ քըթէնա, կարում չի, ճարը կըտրած՝ հըղէ յա իննն բիդի հըրէվան շէնը: Հըղէննի Խաչին պըտահում ա, օգ'ում ա Ակուփ աննն խուսցունէ, ծէրք քըցի, ասում ա.

- Ակուփ աննի, էշըտ ըստակալ ա՞:

- Հա', Խա'չի, էս նըղ դանննըս ըստակալ ա, ինձ թօղալ տըրըտօտ ընգած:

- Էտ լնվ չի, պա ըստըկէլան առաչ հինչ վըսյաթ ա՞ ըրալ:

Ըստը'դ Ակուփ աննն էլ տէն չի կէնում, կըզնըվում ա, թա.

- Ըտի քու ասած պէն չի թօղալ, Խա'չի, լիհն կ'իրնալ ա, թա՝ փալանըս կըտինիս Խաչուն մաշկէն պինըցընիս, չըթօրանը թննզան էշ քըթէնա:

4(200). ՀԱՐԱՆՈՒՆ ՌՕՆՕՅՈՒՄԸ ՎԱՐԻՉ ՉԻ ԿԱ

Ռօնօյէն վարիչը ք'ննննն ա՝ Թըղըվարթա ըշկօլը ըստուգէ: Վէր պըրծընում ըն, ըշկօլէն դիտէքտըրը տանում ա տօն՝ դօնաղ անէ: Մին էլ յէշում ա տը'սնում՝ վարիչը, բըլկօնէն վը'ննը կացած, քընէնք' ա անում, համ էլ հըյաթումը թուփ տը'ռած հննըղնըկը'ցը յէշում: Մուտանում ա, թա.

- Էտ հինչ ա՞ իլնալ, հընգէր վարիչ, էտ հինչ ը՞ս քընէնք' անում:

Վարիչը յը'տ ա տը'սնում, թա.

- Հինչ վա՞րիչ, վարիչ չի կա, վէր ռօնօյումը վարիչ ինի, ըշկօլէն դիտէքտըրէն հըյաթումը էսչանք հննըղնըկա կինի՞:

4(201). ՄԻՆ ԸՍՏԱՔԱՆ ԿԱԹ՝ԿԱԹ՝ ԱԾԷ

Հանդոնն յա մընում մաղազինը, թա.

- Արտօ, մին բօթուլ արաղը քանէ յա՞:

- Տասը մանէթ':

- Պա մին ըստա՞քանը:

- Էրկու մանեթ:
- Պա մին կա՞թը:
- Հանդձ, դե մին կաթին իլնծը հինչ ա՞, վեր փուլավ ինի, մին կաթը ծըրի յա:
- Ղօրմի քա հօր, Արսո, վեր ըտի յա, մին ըստաքան կաթ-կաթ ա՞ծէ:

4(202). ՀԱՆՑՈՒ ՅԸՒՍ ԷԼ ՍԱՂ ՕՐԸ ԹԱԽՏԷՆ ՊԱՐԱՅ ԸՆԳԻՄ

Մակիչ նմին՝ լօղուռ մարթ, լրհա մին խըրեգ՝ կօրծ ա անում, մաշկան փրոնում, կ'ամ թախտեն թէյնը տամ:

- Մին օր էլ թօնը կ'ամ ա, թա.
- Ա'պա, օգ'ում ըմ յը՛ս էլ ապա տը՛ռնամ:
- Խէ՞:
- Հանցու յը՛ս էլ սաղ օրը թախտեն պարաց ընգիմ:

4(203). ԼՕԽ ՏՈՒ ՎԸՍ ՄԷՂԱՎԷՐ

Դէքտեմբերան սրկըսած՝ շէնին սաղ կըվերը ծընօտում ըն, մընամ ա Վաննին կավը:

- Կընեգ՝ը վախ-վիշ ա անում, Վանին էլ սըրտ ա տամ.
- Վէ չինչ, ա՛ կընեգ՝, մարտումը ծընալ չի, ապրելումը կըծընէ:
- Ախըրը, ապրելըն էլ ա ընցընում՝ հալն կավը ծընելի՛ն: Կընեգ՝ը Վաննին յըխան փրոնում ա, լիցըկումում, թա.
- Լօխ տու վըս մեղավեր:
- Ա կընեգ՝, կավը ծընում չի, յը՛ս ու՞մ մեղավեր:
- Հա՛, տու վըս մեղավեր, վեր վըխտեն չուբանէն ջուրը մին պէն քըցնծ ինիս, մեր կավըն էլ դէքտեմբերումը ծընած կիննը, մունք էլ թըցընատար կընիմք՝, լօխ տու վըս մեղավեր:

4(204). ԼՂՎ Ա, ՀԱՎԱՆ ԹԸՔԱՅԱԼ Ա

Մին ծըմըմվա սուրխնըկալնծ ուռթանա Հակուփ դայուն տըղան յեր ա իննւմ էշը, քի՛ննւմ փննի՛ն: Հակուփ դային քի՛ննւմ ա հըրիվանէն տօնը, թա.

- Բա՛լամ, էս ցօրտ հըվավը մեր Աշօտը ք'էցալ ա ծըմակը, վախում ում սըթըրջամ տը՛ռնա:
- Վեր պատառ խօսում ըն, հըրեվանը համեցիք՝ ա անում հացու: Հակուփ դային հէնգ՝ ըստաքան թըթու արաղ ա խըմում, իրէք թընըխարավ օտում, տնւ կ'ամ հայաթը, թա.
- Լ'ավ ա, հավան թըքացալ ա, Աշօտը մըրսէլ չի:

4(205). ՕԽՏԸ ՊՕՐՏԷՆ ՀԷՐԻՔ՝ Ա

Կարօ դայուն տըղան հօրը տեմ ա տիննւմ, թա.

- Չէ՛, վեր չէ՛, ինձը՛տէ երկու կընեգ՝ բեղմա օգիս:
- Խըրդճ Կարօ դային ճարը կըտըրած ասում ա.
- Ապան մատաղ, լ'ավ կինի, քի՛նիմք՝ մինը ըսօր պիրիմք՝, մինը՝ էք՝նւծ:

Ախրը, քիմիան ըն կօխկէ շէնան մին ախճիզ՝ օզնում պիրնում, հըրսանէք՝ անում: Ոռթանան Կարօ դային նի յա մընում տըղէն կօշտը, տըսնում՝ հարթնը իւրան հըտէտը յըրք ըսելավ մազէրը սանդըրում ա, ամմա տըղան, լիհն ընդի հննն ընգած, էն ա պըրանած:

Մուտանում ա, թա.

- Ապան մատաղ, դէ յըր կաց է՛, լիւսացալ ա, յըր կաց՝ քիմիք՝ քըզըտէտէ մին կընէզ՝ էլ օզիք:

Տըղան մին թնիրավ աշկերը պէննում ա, թա.

- Ապա, տու ինիս,էն յըրէ կ'ննպիւտը, հնննն չի, էս մինը մէր օխտը պօրտէն հէրիք՝ ա:

4(206). ՏԱԿԷՆ ՇՕՐ ՉԻ ԿԱ

Բախշի դային էզզաննն յէշնում ա տըսնում՝ կընէզը, շինըմաչումը նըստած, վըննէրը չըռած, իլիզ՝ ա մանում, տակէ շՕրէրն էլ վըննըղթէրավը ըրվամ ա: Կըզըրվում ա, թա.

- Մըհէնզ'աց տէնը վէր նըստիս, վըննէրըտ պատառ հավաք պահէ, քիմօղ-կըվօղ տակէ շՕրէտ ըն յէշում:

Էք'սը էլիմ վէր տըսնում ա՝ կընէզը վըննէրը չըռած, մուտանում ա թըրը-թՕհննն տամ, թա.

- Շան քա՛ծ, պա քըր՛զ հինչ ը՞մ ասալ:

Մարյան աքէրը յըտ ա տըննում, թա.

- Ա՛դն, խըտուրու-մըտուրու խօսէլ մէր, ասալ ըս՝ տակէ շՕրըտ ըրվամ ա, հանալ ըմ թօղալ տանը, տակէն շՕր չի կա, էլ հինչ ը՞ս օզնում:

4(207). ՄԷԼԻՔԻ ԳԱՅՈՒՆ ԷՇԸ

Քըրթը՛ցէ Մէլիքը էշը տանում ա Մըշկապատ՝ ծախէ: Էշ ինք՝ օնօղը էշին կըրթը՛նէրէն յէշնում ա, թա.

- Մէլիք՛, էշըտ հանց ա քավթառ ինի:

Մէլիք՛ դային ասում ա.

- Տա տըննը հննը վէր քիմի, իցցուն տարէ յա՝ մէր կ'ումումըն ա, քավթառ չի, յէկավ Մըշկապատ, քըվթա՞նից:

4(208). ԳՆԻՉ ՉԸՔ ԱՆՈՒՄ

Մըհըտ անգակօն քըրթը՛ցէք՝ մըսըրիհաթ ըն անում, վէր նախագան փօխին: Նի յըն մընում կանցըլարը, թա.

- Նախագա, մին տարէ նախագօթուն ըս ըրալ, բօլ ա, օզնում ընք քըր՛զ վէր պիրիք:

Էս նախագան էլ ժնլիզ՝ ա իննում, ասում ա.

- Գ՛նիզ չըք անում, յըտ էս մին տընումը հըսըրալ ըմ կըլխօզէն տէսը-տէնը ծախալ, հըրուստացալ, միհէնզ'անց տէնը ծըզըտէտէ յըմ մըտըծըլական, ամա թննզգա նախագան հննն իւրան դադիրըն ա քըշիլնկան, մինչը՛վ հըրուստանա:

Քրոթը՛ցեք՝ ձեր իրերը՛սե՛ յե՛շնում ըն, թա.

- Շան տրղաս հանց ա դ՛հեզ ա ասում, յը՛կեք՝ թայդի չի ընգնինք՝:

4(209). ՅԵՐԷՍՍՈՒՆ ՄԱՆԷԹ ԷԼ ՏՕ՛

- Մն՛թօս, ըղօրմի քա հօր, էրկու տարե՛ յա, ուխտունասուն մանեթ ըս պարթք, հիբ ը՛ս տըլական:

- Թն՛թօս, միհե՛նգ՝ հնլն հնլրը հնրնը մանեթ ըմ պարթք, դրա պարթքըն ըմ տամ: Թա օգ՛ում ըս՝ քուն նել քըցիմ առաչի հերթ, յեթսուն մանեթ էլ սօ՛ տը՛ռնա հնրնը:

4(210). ԽՕՍՐՕՎ ԳԱՅԻՆ ԷՐԿՈՒ ԸՍՏԸՔԱՆԱ ԱՎԻԼ ԽԸՄՈՒՄ ՉԻ

Շենին ջիհիլնեն պայման ըն կապալ, վեր Խօսրօվ դայուն հիրփըցընին: Մարթն մին բօթուլ թութու արադ ըն յեր կալնլ, աղտըրնմ-գատ, ք՛եցալ մին ըխայիրու դըրադե նըստալ, Խօսրօվ դայուն էլ համեցիք՝ ըրալ:

Խօսրօվ դային մին ըստաքան մինչը՛վ վերչ խըմալ ա, դանա յետը ըսըկըսալ կէսան-կէսան խըմելը: Խըմալ ա, խըմալ, վեր հըսալ ա քըսանընջի ըստըքանեն, էտ էլ ա մինչը՛վ վերչ խըմալ, յեր կացալ:

Ջիհիլնեթան մինը ասալ ա.

- Խօսրօվ դայ՛յի, մին ըստաքան ա մընացալ, էս էլ խըմե՛, պըրծընինք՝:

Խօսրօվ դային էլ յետ ա տը՛ռալ, թա.

- Չե՛, ք՛ը մատաղ, Խօսրօվ դային էրկու ըստըքանա նմիլ խըմում չի:

4(211). ԳԱՐՏԻՅԱԿԱՆ ԱԽԾԻԳԸ

Կըլխօզեն պարթկօմը տըվարեն փիրմումը գօրծ անօղ մին ըխճըկա նըրե՛տ սիլի-բիլի յա անում, պենը պենան ընցընում ա, էտ ախճիգ՛ը մընամ ա խուխալ: Գօրծը ընգում ա սուղը, սուղ՛ան էտ ըխճըկանը յեր ա կըցընում, թա.

- Լ՛ա՛վ, ասինք՝ թա պարթկօմը ըխմըղօթուն ա ըրալ, պա տու հըսած-փըսած ախճիգ՛, բաշբօրտ ըստացած, խե դըրա ասածը ըրալ ը՛ս:

Էս ախճիգ՛ը կ՛իրմնըրնում ա, թա.

- Ընկե՛ր սուղյա, յը՛ս պարտիյական ախճիգ՛ ըմ, պա վեր պարթկօմեն ասածը անին վուչ, պա հնլը ասած ա՞նին:

4(212). ԴԱՐԸ ԿԸՏՐԱԾ

Մին տըղա ք՛նննում ա նըշան: Հըրթնըցուվեն հնրը խըրըվածեն հը՛տե կըրակ ա անում, համ էլ էտ տըղեն հըրցըփօրց անում: Վեր պատառ ընցնում ա, էտ տըղան պնպըծսը տնիս ա օնում, շըփիշկան թափ տամ նի կըցնում:

Հաները էտ վեր տը՛սնում ա, կըտաղում ա, թա.

- Յէս ք՛եզ ախճիգ՛ տըվօղը չըմ, տու վեր կըրակեն քըշտին շըփիշկատ հիթիյաթ չըս անում, տու կարե՛լ չըս տօն տը՛ռնաս:

Էտ տըղան քօռ ու փեշման, կըլծխը վեր թըկելնլ, կ՛ամ ա տօն:

Մին տըղանը յետը էլիս ք՛նննում ա նըշան՝ էրնլ շեն: Էլիս հաները կըրակ

ա անում, նրհրտըն էլ գնրնըց անում: Էս տըղան պնայրծսը տնև ա օնում, քա նի կըցնէ, դնստի մըննըն ա ընգնում կըխսավը ընցածը, կըռանում ա կըրական մին պօղ յօր օնում, պնայրծսը նի կըցնում:

Հանէրը էտ վէր տընում ա, կոռնան փըռնում ա դըրքըզավը տնև քըցնւմ, քա.

- Ասըդ մաշկօղ շան տըղա՛, տու վէր մին շըփիշկին չօփըն էլ ըս հիթիյաթ անում, տու հինչ կընէգ՛ բի՞ղի պահիս, յէս ք՛էգ ախճիգ՛ տըվօղը չըմ:

Ասում ըն՝ տըրանա յէտը էտ տըղան ճարը կըտրած պնայրծս քաշիը քօբա յա անում:

4(213). ՎԷՐ ՅԻՇԻԼԱՎ ՍԸՎԸՐԷԼԱՆ ԸՆԻ

Շնգ՛էրդը վէր էրկու օր քար, ցըխ ա կըրում, նըղանում ա, քա.

- Ու՛ստա, ըստի պէն չըմ սըվէրում, քօղէ մին դըրաղ տըդ նըստին յէշիմ, պատ տինիը սըվէրիմ:

Ուստան խըզ՛ըտակէն նի յա կապում, քա.

- Շան տըղա՛, վէր յիշիլավ սըվըրէլան ընի, միհէ մէս ծախօղ Շըհէնին շընէրը կանօխ ին դասաբ տը՛ռալ:

4(214). ՎԱՆԷՍԻՆ ՓՆՆՊԸ

Վանէսին էշը նասազ ա իննւմ, ծըմական կ՛անյիս օգում ա նըստէ: Վանէս, տու Վանէս, պնրնւմ ա կըծօ տմխտէղ քըսում էշին քամակը, էշը տնև ա պըր-ծընում, վազ տամ: Տընում ա, վէր հընտան հըսնում չի, տըխտէղան պատառ էլ քըսում ա նըրան քամակը, սըքըսում վազ տալը: Վէր հըսնում ըն հայաթը, Վանէսը կարում չի, քա տըդը վըննը կէնա, ծէն ա տամ կընգանը, քա.

- Ա՛ կընէգ՛, էշը կա՛պէ, պէռընը վէր կալ՛, յէս մին էրկու կըրուզ տամ, կ՛ամ:

4(215). ԹԱՄԱՂԱՆ ՀԻՆՉ ԲԻՊԻ ԱՍԷ, ՎԷՐ ՅԷՍ ԸՍԿԱՅԱԾ ՉԻՆԻՄ

Հիրհըրըգէ Ժօրթիկը հըրսընըմընը քամադան խուսէյիս ըրգաննն խընգա-րում ա: Մըհըտ էլ, վէր էլիա սըկըսում ա խընգարէլը, մինը կօխկան ասում ա.

- Ա քընիծն՛հնը, քամադան խօսում ա, լի՞, սու՛ս ըրա, տընանընք՝ հինչ ա ասում:

Ժօրթիկըն էլ յէտ ա տընում, քա.

- Ա՛յ մատաղ, քամադան հինչ բի՞ղի ասէ, վէր յէս ըսկացած չինիմ:

4(216). ՔՐԶ ԷԼ ՄԱՏԱՂ, ՊԷՐԱԾ ԽՈՒՄԷՏ ԷԼ

Վադարշակ դային էրկու խուխատար ա իննւմ, վէր նիմէցին կըռը՛վը սը-կըսում ա, ք՛նննւմ ա կըռը՛վ:

Վէր կըռը՛վը պըրծընում ա, մին ռուսու նըհըտ հինչ ա անում, ախըրը, տըղա-մարթ ա, լի՞, մին խօխա յա նննն կ՛ամ, էտ խօխան յօր ա օնում, կ՛ամ շէնը:

Կ՛ամ ա նըրննց տանը տակէն վըննը կէնում, կընգանը ծէն տամ, քա.

- Զընա՛րիկ, դէ մին խօխա յըմ իզ նըհըտ պէրալ, կունթունիս՝ կըկ՛ամ, ունթունէլ չըս՝ յէտ կըք՛ինիմ:

4(220). ԲՕԼ-ԲՕԼ ԱԾԷ

Քիրամանց Խաչին ք'նննում ա հրքսանէք': Սաղին արաղ ա պիժէնում: Վէր ձերան անա հրէնէ յա իննում, ասում ա.

- Հիթիյաթավ ա՛ծէ՝ հէրիք' անէ:
- Վէր մուտանում ա ձերան անա, ասում ա.
- Բօլ-բօլ ա՛ծէ՝ էս ժրղօվուրթը խըմին:

4(221). ԽԷ՞, ԳԱԳԱՅԸ ՄԸ՛ՌԱՃ Ա՞

Քիրամանց Վաղարշակէն քըվօրը խօխէք'ը կ'ամ ըն Վաղարշակէն տօնը, թա.

- Դա՛ղայ, տանը արա՞ղ կա:
- Խէ՞, դաղայը մը՛ռած ա՞, վէր տանը արաղ ինի:

4(222). ԹՈՒՇԻՆ ԿԸՏԲԱԾ ՏԸ՛ՂԸ

Վըսկանանց Ալէքսանը խըմօղ մարթ ա իլնլ, մըհը՛տ կացնավ թըխալ ա վը՛ննը լափում ըրալ, թա.

- Ախճի, Անինկա, արաղ պէ՛ր:
- Անինկան մին չայու ըստաքան թութու արաղ ա պի՛րնում: Ալէքսանը վէր տը՛սնում ա ժէվէրը յըրա պըժի-պաժի արաղը, տըմանում չի, կըլխէն ա քաշնում, թա.
- Փը՛շտ, Անինկա, թուշին կըտրած տը՛ղը:

4(223). Լ՛ԱՎ Ա ՊԸՐԾԱԼ

Մին շէնում մին մարթ ա իննում, էտ մարթը հինը հինչ պըտահում ա, սը՛րտ ա տամ, թա.

- Լ՛ավ ա պըրժալ:
- Միհէտ էլ խաբար ա ըսկանում, թա հըրէվանը ծառան վէր ա ընգալ, մը՛ռալ: Ք'նննում ա տը՛սնում՝ դի՛ղ վէր հըրէվանը մը՛ռած, կընէգ'ը, նըստած կօխկէն, սծք' ա ասում:
- Էս մարթը էտ կընգանը ծէրքան փըռնում ա, թա.
- Սու՛ն ըրա, սո՛ւս, լ՛ավ ա պըրժալ, պա վէր կըլժիսը թըխած իննը մին քարու, ցըրը՛վ յէկած, էն վախտը հինչ կընի՞ր:

4(224). ԽԸՐԻՆԸՆԸ՛ՑՈՒՆ ԿԸՈՒՔ' ՏՈՒՄ ՕՆԷԼԸ

Խըրխընը՛ցէ մին մարթ ք'նննում ա Բաքու: Էս մարթը ծըրավում ա, հիշքան ճի՛ր ա խըմում, սը՛րտը հուվանում չի, յէշնում ա տը՛սնում՝ մարօժնի յըն ծախում, ինք' ա օնում օտում, տուր ա կ'ամ: Ուրնը հը՛տա մին քանէսը օտում ա, վէր սը՛րտը հուվանա: Տու մէր ասէլ՝ տըրա մին փօշ կըռէք' ա ձննում, ցավը փըռնում ա, սըկըսում ա դուխտուրու շօռ կ'անը:

- Ք'նննում ա տը՛սնում՝ մին սապօժնիգ'ու բութկա: Մա գ'ննում ա, թա բալնիցա յա, ք'նննում ա մըղակէն քըշտէն վը՛նը կացած տըղօրանցը ասում.
- Բա՛լա, սա բալնիցա յա՞:

Էս տրդէրքը տր՛սնում ըն, վէր սա խամ ա, ասում ըն՝ հա: Էս մարթը մըղակը պէնում ա տր՛սնում՝ մին մարթ նըստած, ասում ա.

- Դօխտուր, կըռէք՛ըս ըսպանում ա, մին քննիրը ըրա՛:

Սապօժնիգ՛ը մին վիշ ա կապում, յետնան բիզը յօր օնում: Վէր բիզավ էս մարթին կուխկըճաղէն ա կ՛ամ, բ՛նլըղնն կըռացած տըղան պիցըրանում ա, կըռէք՛ը պուք ա կ՛ամ:

Վէր դինջանում ա, ասում ա.

- Վա՛, դօխտուր, էսքան տարվա մարթ ում, հննլնն նօր ում գ՛նլըղնն, վէր կըռէքն տակըռէն կուխկուճաղումըն ա իննում:

4(225). ՊԷՐՅԸ ՓՕԽԵԼԸ

Մինը փըսակվում ա: Անց ա կէնում էրկու տարէ, ամնա էտ հարթնը խօխա չի պիրնում: Հիրըվանէրը կ՛ամ ըն, թա.

- Մատաղ անիմ, պէրցըտ փօխէ, մին փափուկ պէրց տի՛ր, կարօղ ա տըրանա յա:

Հարթնը յը՛տ ա տը՛ռնում, թա.

- Մը՛ռէ պէրցըս փուխէլան, մին ա՛ նննլ չի կ՛ամ:

4(226). ԹՈՒՂԸՆՑԷՔ՝ ԻՆՔ՛Ը ՎՕՐՕՇԷ

Նախշուն արան տը՛ռնում ա հննրնը տիրէկան, մին օր էլ նի մընում տըղը, թա՛ մը՛ռնում ըմ: Հացա-ճիրա կըտըրվում ա, վէշ մին պէն խօսում չի, լ՛րհա մին փուռ ա՛ քի՛ննում ա-կ՛ամ: Ըխճըկէրքը, փըսօտէնք՛ը քըղըքնէրան կ՛ամ ըն, կուր-կուտը-գատը հըզըրում, մըսէն տըղը անում, յէշնում, թա հիբ կըմը՛ռնէ: Մին շէբէթ ա ընցընում, էրկու շէբէթ, սննա չի կա: Լ՛րհա օգ՛ում ա, թա աշկէրը կօլ քի՛նի, ըխճըկէրքը ծուվծուվամ ըն, յը՛տ պիրնում.

- Ա՛յա, մը՛ռնու մէ՛ր, ա՛յա, մը՛ռնու մէ՛ր:

Ախըրը, վէր մին հէնգ՛-վէց հը՛տ տի յը՛տ ըն պիրնում, մը՛ծ փըսան մուտանում ա, թա.

- Գ՛նլըղնն ը՞ք հիշ կա, մը՛ծ կընէգ՛ ա, աշխարք տը՛սած, լուխճիտ անա յէլ խէլունք, թուղը՛ցէք՛ ինք՛ը վօրօշէ՛ մը՛ռնէ, թա սաղ կէ՞նա:

4(227). ՊԱ ԷՍ ՅԷՐԳԻՐ Ա՞

Արշակ դային մին շէփտավ քի՛ննում ա Իրէվան՝ խընամուն տօնը: Վէր կ՛ամ ա շէնը, հիրըվանէրը կըլխէն ըն տը՛ռնում, թա.

- Հը՞, Արշակ, պա՛տմէ՛ տը՛սնանք՝ հիշ կա, հիշ չի կա դը՛ղէք՛:

Արշակ դային ծէրքը ըստօլէն ա կ՛ամ, թա.

- Ա՛րա, պա էս յէրգ՛իր ա՞, պա էս ապրուստ ա՞, վէր մունք ընք ապրում:

- Ա՛րշակ, հինչ ա լա՞լ, ա՛սէ՛ տը՛սնանք՝ դը՛ղ հիշ կա, վէր մունք օնիք՛ վէչ:

- Ա՛րա, հիշ բի՞ղի ինի, դըրանք սաղ օրը Ամէրիկա քի՛նիլնն ըն խօսում, մունք էլ քընէք՛ ընք անում, թա հունց քի՛նիք՛ Աղղամ, պատառ մատըրյալա-գատա պիրիք՛, պա էս յէրգ՛իր ա՞:

4(228). ՆԱԽՇՈՒՆ ԱՔՈՒՆ ՔԱԹԸ

Խօխա-րախա հրվաքվում ըն Նախշուն աքուն կօշտը, թա.

- Նախշուն աքա, մին քաթ ա՛սէ, ըսկանանք:

Աքան սըկըսում ա.

- Իմ ըսկէտուր ինձ աշկ ա տըվալ, իշը՛դ չի տըվալ:

- Նախշուն աքա, քաթ ընք ասում է՛, քա՛թ:

Աքան աշկէրը սիրփնում ա, թա.

- Իմ ըսկըսվօր էլիա մին յօն իլմլ ա, իմ տիք՛իրկընանէք՛ լ՛ըհա ինձ դանձմտ ըն ըրալ:

4(229). ՄԻՎԷՆԳ՝ ՅԸ՛Ս ՀԻՆՉ Ա՞ՆԻՄ

Ալիսան դայուն մին խը՛քը պակաս տըղա յա ինձում՝ անըմը Մամսօն: Մին օր ք՛իննում ըն՝ մին հը՛ռէ շէնա էս սմրսմողին հը՛տէ ախճիգ՛ օգ՛ին, Ալիսան դային տըղէն սըվըրցընում ա, վէր հանօրը տանը վէշ մին պէն խօսէ վէչ: Ախըրը, վէր տը՛դ ըն հըսնում, կօրծը մմմլ պիրնում, ըխճըգ՛անը հմրը յը՛տ ա տը՛ռնում, թա.

- Ալի՛սան, տըղատ ըսկի խօսում չի, բնլի լալէգ՛ա՞:

Մամսօնը ըսկանում ա, ք՛ը՛փէն նի կ՛ամ, ծէրքը մը՛կնում ա մին հափուռ հնձնավ վարէննի հափըռում, թա.

- Հանէր, թա գ՛իդա՞ս, ճօխտ ա՞, թա կը՞նդ:

Հանէրը մընամ ա մաթ մընացած, համ էլ թա.

- Ալի՛սան, էս սմրսմող ա:

Մամսօնը նօրիցան ա ք՛ը՛փէն նի կ՛ամ, յումբուրուրը ըստօլէն ա կ՛ամ, թա.

- Ծէր միննմթը մըգօված, սուս ըմ անում, ասում ըք՝ լալէգ՛ ա, խօսում ըմ, ասում ըք՝ սմրսմող ա, միհէնգ՛ յը՛ս հինչ ա՞նիմ:

4(230). ՍՕԼ ՅԷ՞Ս

Մանասըն ա Հմբին հծնձ ըն անում: Ք՛իսծրէն Մանասը ք՛ննում ա, վէր ծառէն տակէն տիրմծ հացը-գատը պիրի, վէր ըխպիրին դըրաղէն օտին: Մին էլ տը՛սնում ա՝ մին ըլըբաստըրակ կուչօր ըրած: Էս տընաշինը չըքէլանը ըլըբաստըրակը փըռնէլը ծէն ա տամ.

- Հմբի՛, սօլ յէ՞ստ:

Ըլըբաստըրակը սմսին յըրա գնրթնանում ա, փախչնում: Հմբին թըք՛ըթծի-մնթ ա տամ Մանասէն.

- Ա ախմախ, կարում չը՞ս անսմս խօսիս:

Մանասը ասմա.

- Հմբի, դէ յը՛ս հինչ գ՛ի՞դմմ, թա շան տըղէտ անդարը ռուսօվուր էլ ա գ՛նլընում:

4(231). ԸՇՏԸՂԱՆ ՀԸՐՈՒՍՏԱ՞ՆԱՆՔ

Սուսըցէ Սումբաթ դային օտօղ-խըմօղ մարթ, Սօնիշկա հմսին էլ նըմուք՛էշ կընէգ՛, ըստըրանց մինը ըսկի էրկու չի տը՛ռնում: Հիրիվընթունումըն էլ մինը իննում ա՝ մին ասը՛դ մաշկօղ, կընէգ՛ըն էլ օխտըլիչըկանէ, տըրանք էլ լ՛ըհա օր

օրու հրրուստանում ըն: Մին օր էլ, վեր Սումբաթ դային ք'էփը ք'օք կ'ամ ա տօն, Սօնիշկա հնսին ասում ա:

- Ադա Սումբաթ, էս մունք ըսկի հրրուստանում չընք, ամնա փըլանք'անսը հանէ բնգ' ա տը'ռալ:

Սումբաթ դային մին կ'էվաթ կինի յա կըլխէն քաշնում, թա:

- Ա կընէ'գ', տու փուխանէտ քօղըն ըս դային փըռնալ, յը'ս էլ կինուն կ'էվաթը, ըշտըղան հրրուստա'նանք:

4(232). ՅԸՄ ԼՔՀԱ ԷՇԱՆ ՎԷՐ ԿՐԱԿ ԶԸՄ ԻԼԱՆ

Սուսըցէ Սէտրակ դային, էշին յըրա նըստած, ք'իննում ար հանդը, բնլըղան Արգումանը ըռաչան տնու ա կ'ամ: Դէ Արգումանէն աշկըն էլ ճօկ աշկ ա: Լ'ըհա տը'սածը փըռնում ա: Էս վեր մէհէտ յէշում ա, Սէտրակ դային, թը'մփ, էշան կըլօլվում ա, վեր ընգնում տափը: Արգումանը մուտանում ա, քըթէն տակէն ծիծաղում, թա:

- Հը', Սէտրակ, հանց ըս էշան վեր ընգա'ծ:

Սէտրակ դային գ'նըղնում չի' հինչ ասէ, ասում ա:

- Չէ', վեր չում ընգալ, Արգուման, յը'ս լ'ըհա էշան վեր կ'անլի յըմ իլնլ:

4(233). ԷԼ ՀԻՆՉ ԸՄ ԱՆՈՒՄ ԹԱՄԱՐԱՆ

Մաճկալաշիննցէ Յէղի դային խըռավկուտ մարթ ա իլնլ: Մըհը'տէ յէլ կընգանը՝ Թամարէն նըհը'տ կըռվում ա, խըռավում, թա:

- Տա հօր գ'օռը, յը'ս տըրա նըհը'տ էլ ապրօղը չում:

Յէղի դայուն էլ մին լ'ավ էշ ա իննում՝ անումը Բարխուդար, ամմէն օր նըստում ա էտ էշը ք'իննում ծըմակը, փնդն-գատա անում, պիտում կըլծխը պահում: Էտ էշըտ էնքան խէլինըք ա իննում, վեր կ'ուսումը թըրքում չի, հինչ ընէլի յա, չծլնումըն ա անում: Մըհը'տէ յէլ վեր էլիա տնու ա կ'ամ չծլնումը թըրքում, Յէղի դային ճըկատան պաչնում ա, թա:

- Խէլինըք ջանէտ մատաղ, Բարխուդար, վեր մին խօրնգ' իփիլըն էլ գ'իղնս է', էլ հինչ ը'մ անում Թամարան:

4(234). ԱՆԸՄԸՍ ՇԱՆ ՏԸՂԱ ՅԱ

Յէղի դային լ'ավ խըմօղ ա իլնլ: Մին օրէ, էշը նըստած, էն ա իլնլ Մըսնընան կ'անլիս տօն, հըղէննի մին քանէ ջննիլ էն ըն իլնլ ք'ը'փ ընէլիս, հնմէցիք' ըն ըրալ: Վեր մին էրկու ըստաքան խըմալ ըն, ջիհիլնան մինը յը'տ ա տը'ռալ, թա:

- Դա'յի, ասում ըն՝ ծեր շէնումը մին շան տըղա կա, խըմէլան քուշտանում չի, դնլգ ա'օ:

Յէղի դային կըլխավ ա ըրալ: Ախըրը, ջիհիլնէն հնրփնլ ըն, ամնա դայուն վէջը չի. ըտահանց սաղ ըրըղնէն պըրծըցըրալ ա, յեր իլնլ էշը հըղէ իլնլ: Մինը հը'տան ծէն ա տուվալ, թա:

- Դա'յի, անըմըտ ըսէցէր վէչ, անըմըտ հինչ ա'օ:

- Անըմըտ շան տըղա յա', շան տըղա':

4(235). ԻՐԸՒՍ Ա, ԼԻ՞, ՎԷՐ ԿԱՆԻՆՔ՝

Մըհրէտ Յէղի դային քիւննում ա նըրան հընգէր Սախանէն կօշտը, վեր իրը՛սը վեր անէ: Դէ Սախանըն էլ էն ա ըտի մին պէնու մնթնայ. ինքը՛ խըմօղ, Յէղին՝ նըրան անա բէթնը: Ասում ա.

- Յէղի, մին բօթուլ բօթու արաղ կա, խըմինքը՛ յը՛տնան իրը՛սըտ վեր ա՞նիմ, թա վեր անիմ՝ յը՛տնան խըմինքը՛:

Յէղի դային բըքըթօհմնթ ա տամ, թա.

- Սախան, խօխա-խօխա պէնէր ըս ասում, յննի նաղղը թուղըլական ընք, նիսյին հը՛տան ընգընի՞ք՛, իրը՛ս ա, լի՞, վեր կանիմք՛:

4(236). ՍԱԽԱՆԷՆ ԸՍԿՈՒՊՅ ՏԸՂԱՆ

Մի օրէ Յէղի դային քիւննում ա Կըրասնի Բագար, պըտահում Սըխանէն տըղէն՝ Սիխայիլին: Սիխայիլըն էլ վինգավօղումըն ա իլնայ կօթ ընէլիս, Յէղի դայուն տանում ա զավօղը, ամմէն պուժկա մին կը՛վաթ կի՛նի տամ, հիրփը-ցընում:

Յէղի դային լնլ տը՛ռած կ'ամ ա Մաճկալ, Սըխանէն ջիհնում, թա.

- Արա, Սախան, յը՛ս գի՛ղնցնայ ըմ, թա տըղատ քը՛ղգ նըման կարքէն մարք ա, տու մէլ ասէլ՝ ըսկուպօյ, հափուռը կապէն մինըն ա. ամմէն պուժկա մին կը՛վաթ կի՛նի յա տուվալ, թա՝ համը կա՛լ, ա քու տօնը շինվի, մին ասէ՝ Յէղի դայի, նի՛ մը՛տ պօժկան, խըմէ քուշտաց, լի՞:

4(237). ԳՆՐԳԸՏ ԳՆԻԳՆԻՄ ԸՄ

Յէղի դային ա Բագրատ դային կընօխանց հընգէրունք ըն իլնայ, մին տը՛ղ քը՛ղփ ըն իլնայ ընէլիս, հիրփիլիս, նըրնըր թնրիփ ընէլիս: Բագրատ դայուն աշկէրըն էլ էրված ա իլնայ. ճիբէրը էզգաննան քիւննում ար:

Մըհրէտ էլ վեր լ'ավ խըմալ ըն, Յէղի դային Բագրատ դայուն ըշկէրէն յէշնայ ա, թա.

- Բագրատ, դնրղըտ գ'նըղնում ում. օգ'ում ըս էլիս խըմիս, էլ տը՛ղ չի կա, ըշկէրավըտ արաղը վեր ա տը՛ռնում:

4(238). ՔԸՁԱՆԱ ՅԸՐԸ ԼՒՎ ՇԱՆ ՏԸՂԱ՞

Յէղի դային էզգաննան մին մահնա յա իլնայ քըթինայիս, կընգանը նըհը՛տ կըռը՛վ ընէլիս, նըստա խըռըվէլիս: Մըհրէտ էլ՝ կըլօխը լըվընայիս, կընէգը կած՝ կած՝ ճնըրը ամալ ա կըլխէն, Յէղի դային կըզընվալ ա, թա.

- Արա, պա մին շան տըղա չինի՞, ասէ՝ էտ մարթին կըլօխը խէ էրում ը՞ս:

Կընէգը ծիծնողում ա, թա.

- Կըլխավըս շօռ տաս, քըզանա յը՛րը լ'ավ շան տըղա՞:

4(239). ԱՆՆԻԹՆԻ ԱՍՏՈՒԾ

Յէղի դայուն մին լ'ավ էշ ա իննում, էտ էշիտ խէ լ'ավ պահում ա. կ'անրին էզգաննան ըխօռան անպակաս ա իննում: Մին ծըմըռըվա ուռթանա յէլ Յէղի

դային նի յա մընում կ'ումը, տը'սնում` էշը սառչանծ: Դէ էլ հինչ ա՞նէ, կ'անրին հափռում ա, թա.

- Աննրթնր Աստուծ, պա էս պէն ա՞ր, վեր տու ըրեր, ըստըրա կերածէն յէշի, ըստըրա սըռչիլին:

4(240). ԷՇԸՆ ԷԼ ՄԱՇՏԸՎ ԿԸՊԻՆԸՅԸՆԻՆՔՅ

Մին մարթ մը'ռնում ա, քըմըկին թողում էրկու տըղա, մին տօն, մին կավ, մին էշ: Վեր քըռասունքը տամ ըն, կուծի տըղան մը'ծէն ասում ա.

- Ախպէր, մը'ծը տուվ ըս, մեր հօր թողածը ըստուծվարի կէ'ս ըրա:

Մը'ծ ախպէրը սուս ա անում, սուս, թա.

- Պի'ծ ախպէր, հինչ կէս ա՞նիմ, Աստուծ ա կէս ըրալ. տօնը` ինձ, կավը` ինձ, դէ էշըն էլ մեր հօր էշըն ա, լի՞, մաշտը'ղ կըպինըցընիմք':

4(241). ՀԱՏԷ ԱՍՈՒՄ ԸՄ

Մաճկալաշինանցէ Կօստի դային կուծի տըղէն փըսակում ա: Դէ Կօստի դայուն հու չի՞ ճինննչ'նում. իրը'ք խուսկանը էրկունը ուշունց ա: Ճարը կըտըրած` մը'ծ տըղան օրավ-առաչ հօրը պըղրաստում ա, թա.

- Ա՛ հնր, յէշի հա՛, հըրսընքէն վախտը ուշունց չի տաս, համօթ ա, խայ-տառակ կըտը'ռնանք:

Կօստի դային ռազի յա կէնում.

- Դէ հինչ ը՞մ ասում, ըսօր էլ ըտի կանիմ, թօ ծէր ասածը ինի:

Ախըրը, վեր հըրսանէք'ը ըսքըսում ըն, Կօստի դային ըրաղէն ըստաքանը յը'եր ա օնում, թա.

- Ա՛ ժըղօվուրթ, ըսօր ուշունց չըմ տըլական, ամնա հատէ ասում ում. հու վեր ըստըղաս խըմած, լի՛լ տը'ռած չի ք'ինի ձը'անց տօն, ընդրա մարըն էլ, կընէգ'ըն էլ...: Դէ ք'ը'փի ըրէք':

4(242). ԶԱՏՕ ԼԱՉԱՆԹ Ա ԻՆՈՒՄ

Ճըրտըրէցէ Սապօժնիգ՝ Վաղօն Ըշօտէն հը'տէ մին ճօխտ վըննաման ա կարում: Ամնա վըննամանը կուծի յա ին'ում, էտ խը'ղճէտ վը'ննը թակում ա յըրըփարա անում: Վեր մին էրկու օր կ'էն'ում ա, տը'սնում ա՛ պէնվում չի, կ'ամ ա, թա.

- Վաղօ դա՛յի, վըննամանը կուծի յա, հասէ տը'ս վը'ննէրըս հինչ ա ըրալ:

Վաղօն յէշ'ում ա, յէշ'ում, թա.

- Աշօ՛տ, էտ տէրտակ ա, գատօ վեր վը'ննըտ մաչան տ'նու ըս օնում, լննանք ա ինու՞մ:

4(243). ԽԷ՞, ՏՈՒ ՀՈՒՐ ՕԶՈՒՄ ԸՄ, ԸՆԴԸՐԱ ՉԸՍ ՏԱՄ

Վաղօն Ճարտար մէս ա ծախում, էտ էլ էն փիս վախտէրքըն ա ին'ում, օշրէղը ձը'րիւր կըտօրում ա: Մին ջննիլ հարթըն տը'սնում ա, վեր Վաղօն ձը'անն ծանօթէրէն քէգօշրէղ պէց ա թողում, ասում ա.

- Վաղօ դահայ, դիւզ չըս անում, հիւրը օգնւմ ըս, ընդըրա յըս տամ:
- Վաղօն ծիծնդում ա, թա.
- Խէ՞, տու հիւրը օգնւմ ըս, ընդըրա չը՞ս տամ, լիհա բաշաբաշ պիժէնում ը՞ս:

4(244). ՎԱՂՕՆ Ա ՊԵՐՃԻԿԸ

Սապօժնիզ՝ Վաղօն Պերճիկին շնգ՛երդ ա յօր օնում: Գօրծ ընէյիս կ՛ամ ա մըթնում: Վաղօն ասում ա՝ յէր կաց լիւսը նի կըցըրու: Պերճիկը ըսկանում չի, ըստի մին քանէ հէտ: Վաղօն սնար կըլծխըն ա քըցնւմ, ծէն տամ.

- Պերճի՛կ, հէ՛ Պերճիկ, քի՛նի հըրըվանէն ա՛սէ՛ կ՛ա լիւսը նի կըցընէ:
- Պերճիկը յէր ա կէնում քի՛ննիւմ, հըրըցէն կէսնւմը յէտ ա տը՛ռնում կ՛ամ, թա.
- Վաղօ դահայ, խէ՞, յէս կարէլ չու՞մ նի կըցընիմ:

4(245). ԽԷ՞, ԷԼ ՈՒՐԿՈՒՆԵՐԷԹ ՉԻ ԿԱ՞

Վաղօն մին խոխու ասում ա.

- Ուրկո՛ւնէրթէ կըկ՛աս, վընըմաներըտ պաղրաստ ա իննւն, տանիս: Էս խօխան կ՛ամ ա, թա.
- Վաղօ դահայ, վըննամանը կարալ ը՞ս:
- Վաղօն ասում ա.
- Չէ հալն:
- Էս խօխան թա.
- Վաղօ դահայ, պա ասալ չը՞ս՝ ուրկո՛ւնէրթէ կըկ՛աս:
- Վաղօն ասում ա.
- Մատաղ անիմ, խէ՞, էլ ուրկո՛ւնէրթէ չի կա՞:

4(246). ՄԵ՛ՌԱՆԸ ԾԸՉԱՆԱ, ՂՈՒԹԻՆ՝ ԻՆՉԱՆԱ

Վաղօն մին թօրքու, մին էլ մին գըրուզիննու նըհէտ պօյէզղալ քի՛ննում ա: Սահանք օգնւմ ըն Վաղօվէն ծերք քըցին: Թօրքը ասում ա՝ Ղարաբաղը մերն ա, գըրուզինը թա՛ չէ՛, մէրըն ա:

- Վաղօն ասում ա.
- Յէս ուստա մարթ ում, ծէր ճօխտ ազգէն էլ կըծառայիմ:
- Սահանք ասում ըն.
- Ափնրի՛ն Վաղօ, պա տու հինչու ուստա յը՞ս:
- Վաղօն թա.
- Յէս մըռալու դութի շինծղ ում, մըռալը՝ ծըզանա, դութին՝ ինճանա:

4(247). ՀԱՓՈՒՌԵՏ ՊԷՑ ՊԱ՛ՅԷ

Վաղօն օտօղ-խըմօղ մարթ ա իլնի, ամնա ուրնն մարը ուխտըպատիզ՝ ըսկուպօյ, հափուռը կապ կընէզ՝ ա իլնի:

- Մին օրէ Վաղօն տէմ չի կէնում, ասում ա.
- Այա՛, հափուռըտ պէց պահէ՛, յէ՛, պէ՛ց:
- Պէց պահիմ հինչ ա՞նիմ, պա հունց յօ՞լլա քի՛նիմք՛:

- Այա՛, յոլլա քի՛նիլը յոլլա յընք քի՛ննանկան, տու հափուռըտ պէց պահէ, բնիլի Աստուծ տիյէրան մին պէն ա վէր քըցնում, հանցու ընգընէ հափուռըտ:

4(248). ՄԻՆԱԿ ԹԱ ԿԸՌԱՆԸ ԿԱՊԷ

Կըռվէն էն քիժ վախտը Վաղօվէն տըղէրքը պօստ քի՛նիյիս չըն իլնիլ: Էտ վախտը շէնու՛նը կի՛նի, արաղ ծախէլըն էլ արգէլալ ըն: Վաղօն քաքուն կի՛նի յա իլնիլ ծըխէյիս: Ավօն տըրա մասին գի՛նդնում ա, կ'ամ Վաղօվանց տօն, տընսնում՝ չանը կի՛ննավ լըցցած, փըռնում ա կի՛ննում կըռանը պէց թօղում, կի՛նին սըքսում ա վէր տընննիլը: Վաղօն դանչանք ա անում Ավօյէն, թա.

- Մէր տըղէրքըն էլ ըն կիլնն պօստ, հալն յըս էլ ում կիլնն, մինակ թա էտ կըռանը կա՛պէ:

4(249). ՊԱ ՅԷՍ ՀԻՆՔԻՊԻՊՄ

Ավօն՝ Մօնթէ Մէլքօնյանը, պըրիկազ ա տնու կալնիլ, թա հնըրը տըղա փախած ա իլնիլ կըռըվնէրան, նահանց տընէրան յօրդան-դծշակ տանին, կազարմա սարքին, վէր սալդաթնէն քօն ինին: Ավօն մին քանէ հօքավ քի՛ննում ա սապօժնիզ՝ Վաղօյանց տօն, վէր յօրդան-դծշակ տանին: Ավօն Վաղօյէն հըրցընում ա, թա.

- Ո՞ր ա տըղատ:
- Վաղօն ասում ա.
- Ավօ՛, քու ապէր քու տընըրտ գի՛նդնում ա՞:
- Չէ՛:
- Պա վէր չէ, յես հինգի՛ննում՝ տըղաս ըշտէղ ա:

4(250). ՎԸՂԸ ԸՇՏԸՂ ԱԾԻՄ

Վաղօն տըղէն ասում ա.

- Քի՛նի բըխճումը մին փօս կըտըրէ՛, պիրիմ, մին ծառ կա, վարիմ:
- Տըղան քի՛ննում ա կ'ամ, թա.
- Պապա՛, պա վընը ըշտընէղ ա՞ծիմ:
- Հնըրըն էլ ասում ա.
- Կօխկէն մին փօս կըտըրէ՛, ա՛ծէ մաչը:

4(251). ՔԻՆԻ ՅԷՔ, ՔԷՉ ՈՒՄ ՏԸԼԱՆ

Վաղօվէն տըղան քի՛ննում ա հօրը ասում.

- Պապա՛, փուլ տօ՛, քի՛նիմ կինօ:
- Վաղօն էլ ասում ա.
- Քի՛նի յէ՛ք, քէզ ում տըլան:

4(252). ԿԸՌՎԷՆ ՎԷՐՉԸ

Ղարաբաղա կըռվէն քննդ մամէնտըն ա, գըրաղը շօմփաշօմփի վէր ա թակում: Սապօժնիզ՝ Վաղօն ա նըրնն տըղան էն ըն իննում բըլինդաժումը կ'օլըր կացած:

Տըղան հօրը ասում ա.

- Պապա՛, մըռնելան վախում ը՞ս:

Վաղօն էլ թա.

- Մը՛ռնելը ի՛նչն առը՛ղը, օգն՛ւմ ըմ սաղ կէնամ, տը՛սնամ՝ էս կըռվէն վերչը հինչ ա տըռնըլան:

4(253). ՎԵՐԸ ՔԻՂԻ ԻՆԻ՞

Վաղօն Ըստեփանակէրտ նըստում ա մին տաքսի: Տաքսիստին ասում ա.

- Շօ՛փէր, քըչի՛ մէր շէնը:

- Ախալէր, ծէր շէնը վէրըն ա՞:

- Դէ սաղ Ղարաբաղ մին շան կա, լի՞, Ճարտարըն ա, էլ վերը բիղի ինի՞:

4(254). ՀԻՆՉ ՊԻՂԱ՞ՑԷՐ

Ճըրտըրեցէ Վաղօն մին օրէ տըղէն մըշինավը քիցիյիս ա ինն՛ւմ Ըստեփանակէրտ: Հըղէննի միլիցան վը՛նն ա կըցընում, թա՛ խէ մաշինին ռէմէննէ չօ՞նէ: Վաղօն ասում ա.

- Պօ՛, պա էտ հինչ գիղա՞ցէր, թա լըհա քի՛ննն՛ւմ ընք ռէմէն ինք՛ օնինք՛:

4(255). ԽԸԼԸՁՆԸՀԱ՞ՔԻ

Ճըրտարա Վաղօն մին մարթնու անա հըրցընում ա.

- Ախալէր, ըշտըղացէ յը՞ս:

- Քարէն տական:

- Պա դէ ասէ՛ խըլըզնըհաքի յն՛ւմ, լի՞:

4(256). Լ՛ԱՎ ՀԱՑ ԸՆՔ ԿԵՐԱԼ, ԱՄՀԱ...

Արտաշ դային հըրսընքա լն՛լ տը՛ռած կիամ ա տօն: Շն՛ւննիզ՛ հմսին ասում ա.

- Էտ ըշտըղա յը՞ս կիամ:

Դէ պա Արտաշ դայուն մը՛ննըն ա՞, թա ըշտըղա յա կիամ, ասում ա.

- Ա՛ կընէզ՛, լ՛ավ հաց ընք կէրալ, ամհա ասալ չըն, թա քըռասունքը հիբ ա:

4(257). ԻՉ ՄԱՏՏԱՂ ՔԻՆԻՔ՝ ՏՈՒՔ

Կըռվէն թն՛ւնը վախտը մին գըրադու մաշին կիամ ա Ճըրտարավ անց կէնն՛ւմ, վէր քիցի յէրէ յալան թուրքէրէն բամբիտ անէ: Մընէշակ հմսին տն՛ւս ա կիամ բալկօնը, հէտան կա յէ անում, թա.

- Իզ մատտաղ քիցիք՛ տուք, խալխէրը կըռը՛վ ըն անում, սահանք էլ դուրբա յըն ծախում:

4(258). ՃՈՒՐԸ ՏՈՒՍ ՉԻ ՔԸՅՈՒՍ

Ճըրտըրօցուց վըհաքում ըն կանցիլարը, թա.

- Բիղի կազէթ կի՛րվիք՛, ինք՛ըն էլ «Պըրավղա», մէկէլ «Կամունիստ»:

Տըրանցա մինը վը՛ննէրը մին չըմըշկում ա տինում, թա.

- Չէ՛, վեր չէ՛, յէս վէ՛չ «Պըրավղա» յըմ կի՛րվում, վէ՛չ էլ «Կամունիստ», յէս «Ազանյօկ» ժուրնալ ըմ կի՛րվում:

Ախրրը, վեր շատ ըստիպում ըն, ասում ա.

- Այ ծը՛գ մատտաղ, ախեր աղտիրնձ պամիդորը վեր «Ագանյօկէն» թուխտումը պըտատում ում տանում բաղը, ճնէրը տոնս չի քըցոնւմ, ամմա վեր ծը՛ր ասած կըզիթնէրումըն ըմ պըտատում, սունկաս ծըփծըփան ա ինոն:

4(259). ՍՕՂԱՆԸ

Էրկու ճըրտըրէցէ գոնրոնց ըն անում: Սիներ թա.

- Գուրգէ՛ն, մին լ՛ավ պէն ա՛նէ:
- Սօ՛ղան:
- Փա՛հ, փա՛հ, փա՛հ:
- Դէ մին լ՛ավ պէն էլ տու ա՛նէ:
- Ա քընծանհնր, էլ լ՛ավ պէն թուղէ՛ցեր, վեր ասիմ:

4(260). ԽԷ՞՞, ԳՕՆԳԻ ՅՈՒ՞Մ

Ճըրտըրէցէ Ծատօրը կըլխօզէն խօրթնը կըրէլիս մին դոնւ տը՛ղ ըրբան կօխկէն ա ընգընում: Նախագան կ՛ամ ա ջիհոնւմ, թա.

- Ա քընծանհնր, էս դոնւ տը՛ղը էտ ըրբան խէ պարան ը՞ս տուվալ:
- Ծատօրը ոնրնն կուրցընում չի, ասում ա.
- Պա ըշտէղ պարան տա՞մ, հու տըննական չու՞մ յըմանջումը պարան տամ, ըրբան փըշըրթիք՛ն անիմ, խէ՞, դօնգի յու՞մ:

4(261). ԼՈՒԽՃԻՆ ՄԻՆ ԱՇԿԱՎ ԿԸՅԷՇԻ

Ճարտար մին ըշկօլու դիրէքտըր ա ինոնւմ: Էտ դիրէքտըրը լօխ դասա-տըվօրցը մին աշկավ չի յէշոնւմ, էզզաննն մինին յէղում ա, մինին՝ դաղում:

Մին օր էլ խաբարը կ՛ամ ա ըշկօլը, թա դիրէքտըրէն քըշերը տարալ ըն բալնի-ցան ապլէցն ըրալ, աշկէն մինը տոնս կալնլ: Դասատըվէրքը մարթա մին պէն ըն ասում, տահանց մաշին մին դաղվածը ինոնւմ ա, էն էլ յէտ ա տը՛ռնում, թա.

- Էտ լ՛րհա լ՛ավ ա, միհէնգ՛անց տէնը լուխճին մին աշկավ կըլէշի:

4(262). ՀԻՇՔԱՆ Ը՞Ս ԸՇԽԱՐՔԱՍ ԲԷՅԽԱՔԱՐ

Մին ճըրտըրէցէ ըշտիհնլի դըղան ա օտում: Մին իրէվանցէ մուտանում ա, թա.

- Էտ հինչ ը՞ս օտում:
- Ճըրտըրէցէն ծիծաղում ա, թա.
- Քա հօր տօնը շինվի, տու ըշխարքաս հիշքան ը՞ս բէլխաբար, վեր միշէվ միհէնգ՛ Դարաբաղու բանան չըս տը՛սալ:

4(263). ԹԱՂԻՄ ԾԸ՛Զ

Մարգուշա հնսոն դանան քըշերը մընամ ա հննդին, չըղընէն գիրավ ըն տը՛ռնում, փօրը տոնս տամ: Հնսին կ՛ամ ա տի տը՛սնում, թա.

- Թաղիմ ծը՛գ, էտ դընէն փօրումը հինչ ը՞ք կուրցըրալ, վեր շօռ ըք յէկալ:

4(264). ՏԸՎ ԹՈՒՐՔԷՐՈՒՄԸ ՀԻՆՉ ԿԻՆԻ ԸՐԱԾ, Է՛

Օմօնը նի յա մըտնում Ճարտար, վեր ժողովուրթէն գէնքերը-գատը տնու տա: Մանիշակ հնանն տանը մին գրրանատ ա ինում, տանում ա փիչին մաչին կ'էղում, տի յէլ մըննան քըցնում ա: Մին էրկու շէփտանը յետը վեր փիչը նի յա կըցընում, գրրանատը տըրաքում ա, տօնը թծգավ լըսնում: Մանիշակ հնսին տնու ա կ'ամ շինմնաչ, թա.

- Ա կընանէք՛, էս վեր ըստը՛դ ըստի թծգ ա միլըցըրալ, տը՛ս՝ թուրքերումը հինչ կինի ըրած, է՛:

4(265). ՅԷ՛Ք ՏԸՎՍ ԶԱՎ Ա՞ ՏՈՒՎԱԼ

Սալան դային յեր ա իննում, թա ճըղպօրէն շըղըհարէ, հունց ա տը՛ռնում՝ տնլը կօտրում ա, վեր ա ընգընում տափը: Վեր օյամիշ ա ինում, ծէն ա տամ կընգանը, թա.

- Մարօ՛, հէ՛ Մարօ:
- Ադն՛, հինչ ա՞:
- Ախճի, ճողպըրան վեր ըմ ընգալ է՛, յէք տը՛ս՝ ցավ ա՞ տուվալ:

4(266). ՉԱՐԱՆՉ ԸՐԷ՛Ք, ՄԻՆՉԷՎ...

Մարտակերտցէք՛ ք'ննում ըն Ճարտար՝ նըշան: Վեր տը՛ղ ըն հըսնում, տընատարը էն ա իննում բըղէրումը: Թննգան հըրթնացուն չննմիշ ա ընգընում, գ'նղնում չի, թա հինչ անէ: Ախըրը, մին սինի քըչըված սօղան ա պ'նըրնում տինում ըստօլէն, թա.

- Չնրննգ ըրէ՛ք՛, մինչէվ պապան կ'ա:

4(267). ՊԱ ԿԱՎԸ ՄԸՀԱՍՈՒՐ ԿՕՏԷ՞

Ճըրտըրէցէ մին ջննիլ խօխա հըրցընում ա Նիկալայ դայուն, թա.

- Նիկալայ դայի, կավը մըհասուր կօտէ՞:
- Նիկալայ դային թա.
- Կօտէ, ք'ըմատտաղ, կօտէ, խէ չօ՞տէլ:
- Պա, Նիկալայ դայի, տուվալ ում, կերալ չի:
- Նիկալայ դային ասում ա.
- Պա ք'ըմատտաղ, կավը մըհասուր կօտէ՞:

4(268). ԲԱԼ ԿՕՆԸՆ ԷԼ Ա ԻՄԸՍ

Ռուրէն դայունց տօնը դօնաղ ա կ'ամ: Ղօնաղը կինացավը ասում ա.

- Ռուրէ՛ն, էս տօնը քունըն ա, տանը տարը տու վըս..
- Ռուրէն դային վէ՛չ տանում ա, վէ՛չ պ'նըրնում, թա.
- Այ ախպէր, մինակ տօնըն ա՞ իմըս, հնլն բալկօնըն էլ ա իմըս:

4(269). ԷՆ ՄԷՐ ՇԻՆԱՅԷ ՉԻ

Ռուրէնին կընէգ'ը ծանդըր հիվընդանում ա, խօխէք'ը սըքըսում ըն լնց ինիլը:

- Ռուրէնը տնու ա կ'ամ խօխօցը ասում.
- Էս խէ լնց ը՞ք իննում:
- Խօխէք'ը թա.

- Վախում ընթ' մաման մրճնէ:
- Ռուբէնըն էլ խօխօցը սուսավ ընէլի հէտէ ասում ա.
- Պա մրճնում ա, մրճնէ, էն ըսկի մէր շինացէ յէլ չի:

4(270). ԽԷ ՀԻՔՈՒ ԿԱՄ ԸՍ, ԱՍԱՆ Ա՞ ԿԱՍ

Ռուբէն դայուն ծընված օրըն ա ինում, լօխ նըստօտած օտում ըն- խընում, հըրէվանը միկա յէտէ յա կ'ամ: Ռուբէն դային ասում ա.

- Էտ խէ հիբու կ'ամ ըս, Աննալ ա՞ կ'ամ:
- Էտ օրվանից հուվէր ըշտըղա յըտանում ա, ասում ըն՝ Ռուբէն դային հինչ ա՞ ասալ:

4(271). ՊԱՄԻՊՕՐԱՎ ՅՈՒՂՈՒԾՈՒՆ

Ռուբէն դային հըրիվանէն տօնը դօնաղ ա ք'ոննոն, հըրէվանը պ'ոննոն ա, թա պամիդօրավ յուղուծոն անէ, ամհա ծոն չինում՝ քըցի: Նըստում ըն, թա հաց օտին, Ռուբէն դային ասում ա.

- Հըրէվան, էս հինչ խօրնա՞լ ա՞:
- Հըրէվանը ասում ա.
- Պամիդօրավ յուղուծոն վա:
- Պա ըսկի ծոնը ըրվամ չի:
- Պա մաչին ծոն կա՞, վէր ըրվա:

4(272). ՀԱՄ ԿԸԿԱ, ՀԱՄ ԿԸՔԻՆԻ

Ափօվանց պարիկամէրը դօնաղ ըն կ'ամ: Ափօն տըճնում ա, վէր դունուղնէն մըտաղիբ չըն յէր կէնան, ասում ա.

- Պարիկամօթունը հա՛մ կըկ'ա, հա՛մ էլ վախտէն կըք'ինի:

4(273). ՊՕ՞, ՅԱՂՈՒՉ ԿԱՐԷԼ ՉՈ՞ՒՄ

Մին մարթ մին ճըրտըրէցու ասում ա.

- Կըկարի՞ս մին խօսկ ասիս, վէր մաչին վէ՛չ «պօ» ինի, վէ՛չ «յաղուզ»:
- Ասում ա.
- Պօ՞, յաղուզ կարէլ չո՞ւմ:

4(274). ԱՇԿԸՏ ԷԼ ՉՈ՞ՒՄ ՀԱՆԷԼ

Մին մարտակէրտցէ տըղա մին ճրտըրէցէ ըխճըկա ասում ա.

- Քո՛ւյրիկ, վար քը՛գ օզէմ, կըկ'ա՞ս:
- Էտ ճըրտըրէցէն էլ ասում ա.
- Աշկըտ էլ չո՞ւմ հանէլ:

4(275). ԽԷ՞, ԷՇ Ը՞Ս

Ճըրտըրէցէ մին տըղա մին ըխճըկա նըհէտ օզնլ ա խօսէ, գ'իդննցալ չի՝ հինչ խօսէ: Վէ՛րչը, միհէտէ ք'էցալ ա տը՛սալ՝ Էտ ախճիզը հայաթը սիրփիյիս, ասալ ա՝ էվնլըտ օտիմ: Էտ ախճիզըն էլ յէտ ա տը՛նալ, թա.

- Խէ՞, էշ ը՞ս:

4(276). ԷԼ ՀԱՉԱՆԹ ՉԻ

Մին ճրրտըրեցե մին հնդրոնթեցու ասում ա.

- Քույրիկ, ըտըղացե յը՞ս:

Էտ ախճիզըն ասում ա.

- Ըսես չըմ:

Էտ տըղան էլ թա.

- Լ՛ա՛վ, ըսեցեր, էլ հնչնթ չի:

4(277). ՇՈՒՇԱՆԻՆԻՆԻ

Խընուշիննկ ըռըչի դժնհնը ախտարուս ա կ՛ամ, էտ էլ իննում ա մին քամե օր, կընանեքըն էլ էն ըն իննում մին պատու տակե քաթ ընեյիս: Մարգուշա աքերը ծերքը տնննում ա ճրկատեն, թա.

- Վըյախչի՛, տընսնաս էս հնր շուշնթննդ ա՞ քամեն քըշնկ, ախճի, դա մըտեք՛ է՛, էն ա մաչին էլ մարթիք՛ կա, վու՛յ, Աստու՛ծ, էս հինչ կըրակ ա՞:

4(278). ՎԷՐ ՊԱՃՃԱՆ ԻՆՆԻ, ԿԸՄՈՒՐԹԻ

Բախշի դային փըռնում ա կընգանը մին լ՛ավ տըմբըզում: Հըրեվանը սմսին յըրա կ՛ամ ա, թա.

- Բախշի, էտ խե թակում ը՞ս, պաճճառը վերըն ա՞:

Բախշին ասմա.

- Ծա՛տօր, հինչ պա՞ճճառ, պաճճառ չի կա, վեր պաճճառ իննր, կըմուրթի:

4(279). ՀՕ ՔԸՂԸՔԸՅԷ ՉԻ՞

Մին կընեզ՛ թըրթամնած կ՛ամ ա, թա.

- Ջա՛վադ, վե՛չ մըխթարիս, խօզ՛րտ նի յա մըտալ բօստանըս շօռ յը՛կալ, լօխ կօխ տըվալ, ախտերըս մադրուն ըրալ:

Ջավադը ասմա.

- Պա հինչ ըս գ՛իդն՞ցալ, շիննցե խօզ՛ ա՛ վը՛ղան մօտե, հօ քըղըքը՛ցե չի՞, վեր տըրամվալավ շօռ կ՛ա:

4(280). ՁԷՄՔՈՒՉԸՍ ՄԸ՛ՌԱՃ Ա

Մնրդիրօսը նի յա մընում հըրսանեք՛, մին հեճգ՛հնրոնրանուց տամ մուզը-կանտեն, թա.

- Ու՛ստա, մին դիխօր պըրըհավա ա՛ծե՛ պար կ՛ամ:

Մուզըկանտը ասմա.

- Խե՞, թօղե մին լափ ուրախ հավա ածիմ:

Մնրդիրօսը թա.

- Չե՛, ախտեր, տըխուր ա՛ծե՛ մին լ՛ավ պար կ՛ամ. գեմքուշըս մը՛ռած ա:

4(281). ԽՕՁԻԸ ՅԷՍ ԸՄ, ՎԸՐԹ՛ՆՏՈՒՄ ԸՄ

Կըլխօզեն ժօղօվումը խօզ՛ին փիրմին վարիչը հաշվետըվութնն ա տամ.

- Էս տարե քըսան խօզ՛ու մարուն օնինք՛՛ լօխ էլ յըղե, խօսկ ըմ տամ՝ ամմեն մըրունա տասսը ճօտ ըստանամ:

Խուզակահր ծերք ա պիցրըրնում, յրէր կէնում, թա.

- Ընգէր վարիչ, խօզը յէս ըմ, վրթթմտում ըմ, տասսը ճօտը ըշտըղան ը՞ս
ւննւ պիւրնում:

4(282). ՊԱ ԱՍԷԼԸՏ ՀԻՆՉ Ա՞

Իվան դային ինննսնուչծրք՝ տըրըկանումը ք՛ննումն ա հինգ՛իստումը իւրնն
հրէտէ փօս կըտրում, ուտա Պըղօտէն հախըն էլ տամ, մին լ՛ավ քար շննումն,
պիւրնում քըցում: Տըղան ըսկանում ա, քըղաքան կ՛ամ, թա.

- Ա՛ հնր, համօթ չի՞, էս հինչ ը՞ս ըրալ:

Իվան դային ասմա.

- Պա ասէլըտ հինչ ա՞, շան տըղա՛, ըսօր-էք՛ուծ մըռնըլական ում, իմ հնն-
գ՛իստըս տը՛սնամ վէ՞չ, յրէտնան մը՛ռնիմ:

4(283). ՄԻՆԸ ՊԸԿԱՍԱԼ Ա

Սուրէնին կընէզը մը՛ռնում ա, զանգ ա տամ տըղէն, ամմա հունցը անում ա,
կարում չի կըլծիս քըցի: Ճարը կըտըրած՝ ասում ա.

- Մատաղ անիմ, վէր տուք նա քու քուր խօխա յըք իլնւ, մէր տանը քանէ հօքի
յա՞ իլնւ:

- Չօրս:

- Մալլադէ՛ց, դէ միհէնգ՛ տուք նա քու քուր էն ըք քըղաքումը, յրէս էլ վըն-
նըծէրքըս սաղ, հասէ էն ում քիզ նըրէտ խուսէյիս, էտ իրը՛ք, դէ չօրսան իրը՛քըն
ընք մընացալ, լի՞, մինը պըկասալ ա:

Տըղան էլըհնն չի կըլծիս ընգնում, թա.

- Պա՛պա, պա մա՞ման, մաման հօր ա՞:

Սուրէնը էլ հծսնւլնն չի անում, ասում ա.

- Շան տըղա՛, դէ վէր մաման սաղ իննր, էլ հօր ու՞մ էսքան քափ-խըռընօցըրս
կօխած խօսում, մաման կա վէչ, օզ՛ում ը՞ս դիւզը գ՛իդնս՝ մը՛ռալ ա, մը՛ռալ, ճէլի
յէ կէք՛:

4(284). Ա՞ԳՆՆ ՇՈՒՎՎԸՅԸԲԷ՞Ր

Ջիհիլնէն Մակիչ նմնն խընըրնում ըն, սըքըսում խուսընէլը: Մին դնւլն-
դիւզըն էլ հըրըրնում ա.

- Մակիչ նմնի, վէր քըշէրը օզ՛ում ըս՝ Սիրան տծտան կ՛ա կօշտըտ, հունց ըս
ա՞սում.

- Ծը՛գ մատաղ, տի կընդըմընդ ա ին՛ում, շուվըրըրնում ում, գ՛իդնում ա՝ հինչ
ում օզ՛ում, կ՛ամ ա նի մընում ծօցըս, ամմա ամմէն քըշէր ինք՛ը յէր ա կէնում,
ծէրքը տիմում ճըկատէն, թա.

- Մա՛կիչ, նննն շուվըրըրէ՞ր:

4(285). ԷՆՔԱՆ ԽԸՌՆԸԽԱՌՆԸ ՊԷՆԷՐ ԿԷՐԷՆՔ...

Մարտունը՛ցէ մին քանէ կընէզ՛ խուխօցավը էն ըն իննում պըղվալումը, դէ էն
փիս վախատէրքըն ա, լի՞, էն վէր թօրթէրը հա քամբիտ ըն անում Մարտունին: Վէր

կ'ամ ա քըշէրը, դէ լօխ տուզն ըն, լի՞, մինը ասմա՝ կուրկուտ բիդնը՝ օտինք՝, մինը՝ սնլծթկա, մինը՝ խըրաված, հու հինչ սիրում ա, լի՞:

Ախըրը, վէր պըրանվում ըն, թա քօն ինին, սահանց անա մինին քօնը տանում չի, սըքըսում ա տըհումը շուտումօտէ անէլը: Վէր հըրցընում ըն, թա խէ տի յա անում, ասում ա.

- Պա հինչ ա՞նիմ, էնքան խըռըխառնը պէնէր կէրէնք՝, փօրըս սանջու վա անում:

4(286). ԷՍ ԷԼ ԻՄ Ք՝ԱՐԸՍ Ա

Քընարիկ տօտնին ախպէրը բազարկօսմ ա իննւմ, քըվօրը տանում ա կօշտը, տինում մին բութկում, թա.

- Ա՛ քուր, սօղան ըս ծըխըլական, կարտօշկա, կէզնը, տի պէնէր, լի՞, հինչու քըշիս, կըլխան մինը յէր կալ՝ քըցի կարզինկատ, քու ք՝նրըտ էտ ա իննանկան:

Քընարիկ տօտնն տի յէլ անում ա:

Մըհըտ էլ մին մարթ ա կ'ամ, էրկու ք՝նլնն օզնւմ: Քընարիկ տօտնն քըշում ա, համ էլ էտ էրկու ք՝նլննան մինը քըցնւմ իննն կարզինկան:

Ինք՝ օնօղը կըզնըվում ա, թա.

- Էտ հինչ ըս ա՞նում:

Քընարիկ տօտնն խուսկու տակէ չի մընամ, ասում ա.

- Հինչ բիդի ա՞նիմ, ըռթունանց իննլօ՞նն ըստըհ վըհնը կացած, էս էլ իմ ք՝նրըս ա:

4(287). ԼՆՎ Ա ՔՈՒՆ ՆԱ

Սուրիկը քըշէրը նի յա մընում մինին բօստանը, սըքըսում կարտօշկան քանդիլը: Տարը կըլծի ա ընգում, կ'ամ կըլխանը յէրը վըհնը կէնում, թա.

- Ա շան տըղա՛, էտ հինչ ըս ա՞նում:

Սուրիկը իննն կուրցընում չի, յէտ ա տըհնում, թա.

- Պա՛, խէ էս քու բօստանըտ ա՞, սու՛ս ըրա, սու՛ս, լնվ ա քունըն ա, թա չէ խայտառակ ինք՝ տըռըլական:

Գէ խէդճ տարը էլ հինչ ա՞նէ, սուս ա անում:

4(288). ԻՇՇԱ՛ՆՆ՛

- Մնրդի տնննճը սիրում ը՞ս:

- Հա՛:

- Պա խնճճ՞րը:

- Հա՛:

- Պա ծէրա՞նը:

- Հա՛:

- Ա շան տըղա՛, պա շն՞վթնը:

- Իշշն՛նն՛:

4(289). ԻՆՉ ԲԸԲԸԲԱՐ ՃԻՆԱՆՉՈՒՄ Ա

Մինին կրնե՞զ շօռ կ'ըվօղ ա ինում, սիրըկանէն նըհը՛տ փըռնըվում ա, մարթը գօրծը տամ ա սուղէն: Սուղյան էտ կընգանը սիրըկանէն յէր ա կըցնում, թա.

- Ասէ, տը՛սնամ՝ էս մարթին կընգանը քանէ տարէ յա, վէր ճինանչո՛ւմ ըս:

Էս սիրականը ասում ա.

- Խէ չըմ ասէլ, հընգէ՛ր սուղյա, օթ տարէ յա՝ ճինանչո՛ւմ ում:

Ըստը՛ղ էս կընգանը մարթը յէր ա կէնում, թա.

- Շան տըղէս յէ՜ի է՛, իմ կընգանըս ինձ բըրըբար ճինանչո՛ւմ ա:

4(290). ԷՆ Ա ՄԻՆ ԿԸՆԵՊ՝ ԷԼ Ա ԿՎԱՄ

Արփիգ՛ տծտանն սիրում ար ըստո՛ւր-ո՛ննղո՛ւր նըհէտ քաթ անէլը: Մըհը՛տէ, խուխէն կուռնան փըռնած, ք՛իմամ ա բօստանը, մին կընէգ՛ ա պըտահում, վը՛նն ա կէնում, սըքըսում քաթ անէլը, խօխան նը՛ղվում ա, թա.

- Մա՛նա, բօ՛լ ա, յէ՛ք ք՛իմանք:

Ախըրը, վէր քաթ անէլը պըրծընում ա, ք՛իմամ ըն, մին էլ խօխան սըքըսում ա լննց ինիլը:

Արփիգ՛ տծտանն հըրցընում ա, թա խէ լննց ա ինում, խօխան ասում ա.

- Պա հինչ ա՞նիմ, հընէ՛, էն ա մին կընէգ՛ էլ ա կ՛ամ:

4(291). ՀԱՆԸՆԹ՝ ՎԸՆԱՆՆԸՍ ՄԻՆԸ ԿԱՐԾ Ա, ՄԻՆԸ՝ ԷՐԿԱՆ

Յէսնյ դնյին ննգնի՛ն-մնգնի՛ն մարթ ար: Միրում ար ասէլ-խօսէլը, օտէլ-խըմէլը, շուլող անէլը, խօրուրթ տալը: Մըհը՛տէ մին շալվար ա ինք՛ օնում, պիրում կէնում, տը՛սնում՝ փօխկէրքը էրկան, տամ ա կընգանը, վէր պատառ կըրծըցնէ: Կըր-ճըցնէլանը յէտը կէնում ա, տը՛սնում՝ փօխկէն մինը կարճ, մինը՝ էրկան: Ասում ա.

- Ա կընէ՛գ՛, փօխկէն մինը կարճ ա, մինը էրկան:

Կընէգ՛ըն էլ կօխկի չի ընգնում, ասում ա.

- Չէ, վէր չէ՛, ճօխտ փօխկըն էլ հավասար ա:

Յէսնյ դնյին տը՛սնում ա, վէր կարում չի կընգանը համօգէ, յէտ ա տը՛նում, թա.

- Դէ լննվ, Արփի՛գ՛, նէրօղ կինիս, հննրննք վը՛նաննըս մինը կարճ ա, մինը՝ էրկան:

4(292). ԻՆՉ ՏՕ՛, ՄԻՆ ՊԱՏԱՌ ԾԷՐՔԷՍ ՊԱՀԻՄ

Մարտունը՛ցէ մին մարթ կըռվէն վախտը պասիկա յա ըստանում Յէրէվանա, պիրում տօն, տը՛սնում՝ մաչին կալբաս, կամփէտ, տէս-տէն, լի՞. քուրըն ա դար-կալ: Ըստըրան խօխան, դէ հինչ ա՞ գ՛իղո՛ւմ՝ կալբասը հինչ ա, էն վախտը Ղա-րաբաղ ըշտըղան ա՞ լնն կալբասը, պատառ օտում ա, ք՛էփը կ՛ամ ա, մին մը՛ծ կուսօկ էլ յէր ա օնում, տո՛ւս կ՛ամ ք՛ո՛ւչնն, սըքըսում խօխօցը դըջի տալը:

Մին խօխա մուտանում ա, թա.

- Մին պատառ ինձ տօ՛, օտիմ, տը՛սնամ՝ էտ հինչ ա:

Ախըրը, վէր տը՛սնում ա՝ տամ չի, ասում ա.

- Լննվ է՛, լրինն ինձ տօ՛, մին պատառ ծէրքէս պահիմ, էլլրինն ք՛ը՛գ տամ:

4(293). ՔՈՒՆԸ ՇԱՏ ԼՊՎԸՆ Ա

Թանթալը կրնա գանը նրհրէտ էն ա իննէն բուստանունը, դէրը տըղավ անց ա կէնուն: Համէցիք՝ ա անուն, թա կ՛ա արաղ խըմէ, մին էլ մընննըն ա ընգնուն, վէր տանը արաղ չըկա: Դէրըն էլ անհիրէս ըրած, կ՛ամ ա, խընդ թանթալէն կընէգ՛ը ճարը կըտրած ք՛ինուն ա Մանթաանց տօն, մին սուրէհի թըթու արաղ փօխ օնուն պիրուն: Դէրը, վէր արաղը պըրծըցնուն ա, յըտ ա տըննուն, թա.

- Թանթա, էն օրը ծէր հըրէվան Մանթաանց տանը արաղ ում խըմալ, նըտտա շընավըտ ա կ՛ամ, քունը շատ լ՛ավըն ա, մին սուրէհի ա՛ծէ, տանին վարթաբէդին հըտէ:

4(294). ԽԸՆՈՒՇՆԸԿՕՑՈՒՑ ԼԱՄԲՈՒՇԿԱ ՓՕԽԷԼԸ

- Պուղուս, լամբուշկան վէր էրվուն ա, հունց ը՞ն փօխուն:
- Յէշմծ հու:
- Ասինք՝ թա խընուշըկըտէք՛:
- Խընուշըկըտէք՛ ճօկ փօքմի յըն անուն. մինը պիցրանուն ա դանբրէկան, լամբուշկան տընը տինուն, էն մինը դանբրէկան շօռ ա տամ:

4(295). ՓՈՒՀ Ա ԸԲԱԼ, ՄԸ՛ՌԱԼ

Էրկու ախալէր ք՛իսծրէն նըստուն ըն, թա փըրթնը օտին: Կուճինը ժուլիգ՛ ա իննէն, ասուն ա.

- Ախալէր, վէր ապան մըտալ ա, յէս կուճուր ըմ իլնը, մըտըս չի, մին պա՛տմէ, տըտնամ՝ հունց ա իլնը:

Չըքէլննը մըտ ախալէրը իրկընցընէլավ պատմէլը, կուճուր ախալէրը փըրթնը լօխ օտուն ա:

Էք՛սը էլլըհն նըստուն ըն , վէր փըրթնը օտին, կուճի ախալէրը ասուն ա.

- Ախալէր, յէս կուճի յըմ իլնը, մըտըս չի, մին պա՛տմէ, տըտնամ՝ ալան հունց ա մըտալ:

Մըտ ախալէրը փըրթնըն ամանը քաշնէն ա առաշը, թա.

- Պըտմէլի պէն չի կա, ախալէր, փուտ ա ըրալ, մըտալ:

4(296). ԳՆԻԳՆԻՄ ՈՒՄ, ԹԱ ՆԻՐՆԻԳՆԻՆ Ա

Մէրօփ դային օրվա վէր վախտը Սումբաթ դայուն ջիհնէն ա, ասուն ա.

- Պարնը՛գ՛ուն, Սումբաթ:

Ըստի մին ամէս, էրկու ամէս, մին օր էլ Սումբաթ դային վընն ա կըցնուն, թա.

- Մէրօփ, քա հօր տօնը շինվի, ութանան ըս ջիհնէն՝ պարնը՛գ՛ուն, ըրգ՛օնէն ըս ջիհնէն՝ պարնը՛գ՛ուն, էտ հինչ պէն ա՞:

Մէրօփ դային էլ կարուն չի նըրնն պահէ, ասուն ա.

- Սումբաթ, քա հօր գ՛օրը, էնքան փիս մարթ ըս, վէր ամնէն ք՛էգ տըսնալավ ըշկերիս առաշը մըթընըվուն ա, գ՛նընն ում, թա նըրնը՛գ՛ուն ա:

4(297). ԱՇԿԵՐԸՏ Ա ԽԵՐԸԲԱՅԱԼ

Սիրան աքորը քրսան հավ ա ինձում: Աքերը ամսէն ձերձեղձին, ամսէն ուռ-թանա հավերը հրմբարում ա, ամսա վէշ թա սերուն հրմբարում ա, լ՛րհն՝ ճօխտ-ճօխտ ա անում, յանի ք՛ի վեր ճօխտ ըն, լօխ տը՛ղըն ըն: Դէ հրեղեղան Սինասէն լրկուտնէն էլ, Աստուծ ա տուվալ, մօր ծէծ կըտըրօղ ըն, էտքանը գ՛նդնում ըն, ամսէն կ՛իբէկ՛ի աքորը հրվերան էրկունը կ՛ուղանում: Վեր մընամ ա վէց հավ, մին օր էլ Սիրան աքերը մարթին ասում ա.

- Սու՛մբաթ, կօզ՛ի ճօխտ ըն, ամա աշկէս հավերը նուստըրալ ըն, թա լ՛րհն՝ ծըմը՛ռն ա, կօշ ըն յը՛կալ, տի յը՞ն քրվամ:

Սու՛մբաթ դային էլ տըրանա բէշ-բէթմար ա ինձում, ասում ա.

- Ախճի, նուստըրալ չըն է՛, աշկէրտ ա խըրըբացալ, պըռավալ ը՛ս, պըռավալ՛:

4(298). ՎԷՐ ՏԻ ՅԱ, ՏԻ

Մին մարթ քըշերը դօնաղ ա ընգում մին ըսկըպօյ ճըրտըրը՛ցու տօն: Վեր տը՛սնում ա հացու-գատու պաղրաստութձն չըն տը՛սնում, իրը՛սը սըվըցընում ա, թա.

- Էս տուք ձերձեղձինը հաց չը՞ք օտում:

Տընատը՛ռնը կընէգ՛ը վէ՛շ տանում ա, վէ՛շ պիրում, թա.

- Չէ՛, մունք մինակ ճճիր ընք խըմում:

Էս դօնաղը խտրջինը ջընաղավըն ա քըցձում, սուս-փուս տանան տձնս կ՛ամ, թա.

- Վեր տի յա, տի, ք՛ինին ըխպիրին դըրաղէն պըրանին:

4(299). ԱՉՈՒՆՑ ԱՓԻՆ

Սիպտակ շէն կընօխէ մին մարթ ա իլնն՝ անումը Ափի: Էս մարթը Ազննց անա յա իլնն, տա հը՛տէ յէլ ասալ ըն Ազննց Ափի: Մին ծըմըռնան օր Ափին ք՛նունում ա ծըմակը, վեր փնդ պիրի: Հըսնում ա տը՛ղ, մին բաբաթ կաղնէ յա տը՛սնում՝ ծըտէրավ ճըռնքված: Մըտկումը ասում ա.

- Էս լ՛րհա լ՛ավ ա, փնդը կըտրիմ, տանիմ էրիմք՛, խօխէնք՛ըն էլ ծըտէրավը խաղ կանին, վէրչումըն էլ խըրաված անին օտին: Ծառը կըտրում ա շիլնկում, հըղէ ինձում շէնը: Վեր հըսնում ա տօն, խօնցը ծէն ա տամ, թա.

- Մին յէկէք՛ տը՛սէ՛ք՛՛ հինչքան ծը՛տ ըմ պէրալ, լ՛րհա տըղա յըք՛ փըռ-նուտը՛ցէք տա՛րէք՛: Սահանք յէշում ըն, յէշում, տը՛սնում՝ ծը՛տ չի կա, ասում ըն.

- Ա՛պա, հօր ա՞ ծը՛տը:

Ափին յէտ ա տը՛ռնում տը՛սնում՝ ծը՛տ-գատ չի կա ծառէն յըրան, կըզնըվում ա, խօնցը ուշունց տամ, թա.

- Շան թուլէ՛ք՛, հննրննք դըլմըղալ ըք ըրալ, ծըտէրը խըրթնալ ըն, փախալ:

4(300). ՄԻՆԱԿ ԹԱ...

Շէնը ցիրկ ա կ՛ամ, ցիրկումը մին դաշննգ՛ ախճիգ՛ պարաց ա ընգում, արչը ըռըչի թաթերը ծննում ա, կըռանում, էտ ըխճըկանը թօշան պաչնում:

Ցիրկին կօրծ անօղը տոնս ա կ'ամ, քա.

